

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1889

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1889 № 9

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

| | Երև | |
|--|------|---------------------------------|
| 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՆ ԱԻՏԻԲ. | 1285 | Հողալին խնդիրը Անգրիտիկասում: |
| 2 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՆ ԼԵՒՈՆ | 1300 | Միտի ճանապարհ (բանաստեղծութ.): |
| 3 ԼԷՓ. | 1301 | Կարածներ (վէպ): |
| 4 ՄԻԻԹԱՐԵԱՆՆ ԱՐՇԱՂՈՅՍ | 1346 | Պօղա (բանաստեղծութիւն): |
| 5 ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ | 1347 | Խե Կարապետ (վերջ): |
| 6 ՄԻԻԹԱՐԵԱՆՆ ԱՐՇԱՂՈՅՍ | 1409 | Մի՛ զարմանար (բանաստեղծութ.): |
| 7 ՀԱՅՆԷ-ԻՅ՝ ԱՐԻԻԵԱՆ | 1410 | Երգեր (բանաստեղծութիւն): |
| 8 ՏԷՐ-ՄԻՐՍՐԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ | 1412 | Ուսումնարանական գիտելիքներ: |
| 9 ՍԱՐԳՍԵԱՆՆ ԼԵՒՈՆ | 1428 | Այց թիւրքաց-Հաղտտամին (չար.): |
| 10 ԲԱՂՈՒԳԵԱՆՆ ՋԱԲՈՎ-ԲԵՎ. | 1449 | Նուր Լ. Մանուկիանցին (բանաստ.): |
| 11 ՆԱԿՍՈՆ-ԻՅ՝ ԲԱՂՈՒԳԵԱՆՆ Ջ. | 1450 | Եթէ սիրում ես... (բանաստեղծ.): |
| 12 ԲՅՇԷ ԳՐ. Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆՆ (Վ.Գ.) | 1452 | Մանուկների հիւանդութիւնները: |
| 13 Լ. Ս. | 1459 | Գրախօսութիւն. — «Կառիթիկ Մհեր»: |
| 14 Մ. ԱՍ. | 1463 | «Ռուչան և Հիւրիդար»: |
| 15 ԼՈՒՍԻՆԻ | 1467 | Ամուսն Քրօնիկ: |
| 16 Շ. | 1474 | Քաղաքական Տետութիւն: |
| 17 ԻՄԻ. | 1485 | «Մուրճ»-ի նամակազրուութիւնը: |


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротшианда, на Гол. просп. соб. д. № 41.

1889



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1889

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1889 № 9

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵՍՆՆՈՒ

1889

Дозволено цензурою Тифлисъ. 12-го Августа, 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. пресн. домъ № 41.

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Բոլորովին անկասկած է, որ մեր երկրի ամենաառաջնակարգ նշանակութիւն ունեցող խնդիրների շարքում պէտք է դասեն նոքա, որոնք վերաբերում են հողի սեպհականութեան, տիրապետութեան, հողից և ջրից օգտւելու իրաւունքներին մեր երկրի գիւղական ազգաբնակութեան կողմից:

Այն բոլորը, ինչ վերաբերում է հողից օգտւելու իրաւունքներին, կազմում է այն, ինչ արդէն պատմութիւնից նւիրազործւած ազրարական կամ հողային խնդրի անունն է ստացել:

Հողային խնդիրը, բոլոր լուսաւորւած և յառաջադիմութեան շաւղի վերայ կանգնած ազգերի և պետութիւնների կեանքում, կազմել է քաղաքական, սօցիալական և տնտեսական զարգացման զրժւար լուծելի հանգոյցներից ամենակարեւորը: Հողային պայմանների օրէնսդրական կերպով կանոնաւորելու տարիները ամեն երկրում, ամեն մի պետութեան մէջ և ամեն ազգի համար՝ կազմել են նոյն այդ երկիրների, պետութիւնների և ազգերի պատմութեան մեծ էպօքները: Հռովմայեցոց ազրարական խնդիրները նոցա քաղաքական պատմութեան էջերի մէջ կարեւորագոյն տեղն են բռնում և մինչև անգամ միջնակարգ զպրոցների պատմութեան դասերին՝ մանուկներին յիշեցնում են Լիցինիուսի և Պրագքեան եղբայրների անունները՝ կից ազրարական կատաղի կռիւների հետ: Այն ազգերի պատմութիւնները, որոնք հետազօտւած են և գրւած, եւրոպացի ազգերի Միջին կուած դարերի պատմութիւնները, անհասկանալի կը լինէին առանց հողային հանգամանքների նոր կազմակերպութեան բացատրութեան: Մեզ աւելի մօտ ժամանակները, այն, ինչ կոչւում է նորագոյն դար, սկսեց յառաջադէմ ազգերի համար հողային կնճռոտ, բարդ, նոյն

իսկ վտանգաւոր խնդրի հրապարակ հանելովք և լուծելովք: Դորա համար պահանջեց մի ամբողջ գրականութիւն, մի ամբողջ նոր սերունդ, ընդունակ այդ խնդիրները բարձր տեսակէտից ըմբռնելու և վերջապէս, տէրութիւնների բուռն միջամտութիւնը՝ կարող և հեղինակաւոր ձեռքով անքակտելի համարւած հին կապերը քակելու, բացելու և նորը շինելու, նոր կազմակերպութիւն ստեղծելու համար:

Նոր հասարակութիւնները, այն, ինչ անուանուում է դարուս ուզին—իրանց ծնունդը առնուում են հողային օրէնքների և նոցա հետ սերտ կապւած հասարակական կարգերի փոփոխելուց: Դոցա ամենքի մայրն է Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը 1789 թւականի, որի ուժգին զարկերից սթափւեց Եւրոպան և որի ողին մտաւ ու կերպարանափոխեց և՛ կարգ և՛ սովորութիւններ և՛ գաղափարներ: Այդ թւականին, օգոստոսի 4-ի զիշերը, որի մեծ յիշատակն է տօնուում այս տարի Պարիզում չնաշխարհիկաշխարհահանդէսով, մեծակրչիւս բեֆորմների շարքում հրատարակեցին սկզբունքներ, որոնց զօրութիւնով վերացւեց զիւղացիների ճորտութիւնը, հողը ազատւեց կապանքներից՝ դառնալով մշակողների և պետութեան սեպհականութիւն, զիւղացին ազատւեց այն կապանքներից, որոնցով դարերը կապել էին նորան հողի և հողատէրերի հետ, ազատւեց մենաշնորհւած դասակարգերի իշխանութիւնից. և այդ ազատութիւնը կայանում էր նորանում, որ զիւղացին այնուհետև ճանաչեց հպատակ միայն և միմիայն պետութեան: Դորանով է որ նա ձեռք բերեց քաղաքացիութիւն և դորանով իսկ՝ քաղաքացիական ամեն տեսակ իրաւունքներ, մի խօսքով՝ ազատութիւն:

Բայց այն, ինչ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը կատարեց մի զիշերում, նոյնը կատարւեց բոլոր եւրոպական երկիրներում 19-րդ դարու ընթացքում, սխաժ ներկայ դարուս առաջին տասնեակից, կամաց-կամաց, առանց մեծ ցնցումների: Դերմանիայում, Աւստրիայում, Իտալիայում, Իսպանիայում և այլն, հողային նոր կազմակերպութիւնը պետական ամենաառաջնակարգ խնդիրն էր դարուս առաջին քաւորում. նա էր կազմում կենդրոնը բոլոր սօցիալական խնդիրների:

Նման շարժման հետեւեց Ռուսիան՝ բարձրացնելով ճորտութեան

վերացման և զիւղացիական հողատիրութեան խնդիրները, մինչև որ հողային խնդիրը հասունացաւ մինչ պետական ամենաառաջնակարգ խնդրի աստիճանը և, վերջապէս, իւր արժանաւոր լուծումն ստացաւ 1861 թւականի փետրւարի 19-ի առ միշտ յիշելի օրւայ օրէնքով, որի հրատարակումը նոր էպօք բացեց Ռուսիայի ներքին կեանքի և առհասարակ Ռուսիայի նոր հասարակական կեանքի համար:

Ռուսիայում տիրապետող գաղափարները զիւղացու, ազնւական կալւածատիրութեան և հողի տիրապետութեան և սեպհականութեան մասին—թէ փետրւարի 19-ից տասնեակ տարիներ առաջ և թէ այդ թւականից դէպք՝ իրանց անմիջական ազդեցութիւնը ունեցան Կովկասի և յատկապէս Անդրկովկասի, դորա հետ ուրեմն մեր երկրի հայկական-թուրքական նահանգների հողային խնդիրների վերայ: Այն օրէնքները, որ արեւել են հողային պայմանները Անդրկովկասում կանոնաւորելու համար, արդիւնք են երկու տեսակ հոսանքների, որոնք տիրապետող էին Ռուսիայի կառավարչական շրջաններում: Կոցանից մէկը՝ բուն ռուսական հայեացքն էր, միւսը՝ նոր եւրոպական հայեացքն էր. և այդ երկու իրար հակասող հայեացքները իրանց ներկայացուցիչները ունեցան, բարձր կառավարչական շրջաններում, մեր երկրի հողային օրէնքները մշակելիս: Ընդհանուր եւրոպական հոսանքը այդպիսով միջոց դուռ Ռուսիայի միջոցով իւր ալիքները ծփել նաև Անդրկովկասի եզրները և դորանով իսկ Անդրկովկասի հողային խնդիրը կապել ընդհանուր եւրոպական պատմութեան հետ:

Բայց արդեօք Կովկասում և յատկապէս Անդրկովկասում, որը մեր սրտին աւելի մօտ է, հողային խնդիրը լուծւե՞լ է նոյն պրինցիպներով, նոյն ձևերով, որպէս սկզբում Յրանսիայում, ապա Եւրոպայի միւս երկիրներում և վերջերս Ռուսիայում: Պատասխանը սա է: Մեր երկրի այն մասում, որտեղ հողային հանգամանքները, զիւղացու դրութիւնը, հողատէրերի դասակարգը նման էին եւրոպականին և ռուսականին, — այնտեղ նաև հողային բեֆօրմը նման օրէնքներով կատարւեց: Դա է Վրաստանը, որտեղ կար ճորտութիւն, նման ռուսականին և որտեղ կար կալւածատիրութիւն, նման ռուսականին: Բայց մեր երկրի բոլոր մնացած նահանգներում, որտեղ դասա-

կարգերը և հողատիրութիւնը ներկայացնում էին ուրիշ պատկեր, այդտեղ հողային խնդիրը և դոցա հետ կից հողային ընթացիկները հեռակեցին այլ սկզբունքների, մէկը միւսին հակասող, անհաստատ, գրեթէ առանց որոշ ծրագրի, առանց կատարեալ զիտակցութեան, որպէս մի մուծ աշխարհում, ուր միայն շոշափելով կարելի է մի որ և իցէ ձանապարհ գտնել:

Գիւղական կամ հողային այդ ընթացիկների էութիւնը մենք մի այլ անգամ կը ներկայացնենք մեր ընթերցողներին. բայց մի առժամանակ կանգ առնենք մի հանգամանքի վերայ, որի հասարակական կարևորութիւնը ամենքը կը զգան:

Ահա այդ խոշոր հանգամանքը: — Նրբ մի որ և իցէ կարգի ընթացիկներ մտցնում են մի երկրում, նամանաւանդ ընթացիկներ, որոնք հիմնադրուած կերպով յեղափոխում են հասարակական կարգը և շոշափում մարդուս կարևոր իրաւունքները, փոփոխում զանազան դասակարգերի աւանդական փոխադարձ յարաբերութիւնները, այդ դէպքերում, ամէն երկրում, որտեղ կայ հասարակաց կարծիք, որտեղ կայ կատարեալ զիտակցութիւն լինելիք ընթացիկների համար, — այդ ընթացիկների նախապատրաստողը լինում է ինքը հասարակութիւնը, որի լուսաւոր ներկայացուցիչն է մամուլը: Ահա թէ ինչպէս Փրանսիական հողային և նորա հետ կից ուրիշ կարևոր ընթացիկները կապուած են ոչ միայն 1789 թւականի Ազգային ժողովի ներկայացուցիչների անունների հետ, այլ և 18 -րդ դարու Փիլոսոֆայական, դրական և նորաբողբոջ քաղաքա-տնտեսական գրականութեան և նոցա երկարաշար փալլուն ներկայացուցիչների անունների հետ: Իոցա ջանքերովն է, որ լինելիք ընթացիկների ոգին, այսպէս ասած, դուրս կարգուեց ամբողջի քողով ծածկուած մրմունջներից, և տուեց նրանց կենդանութիւն նաև բարձր հասարակութեան և կառավարչական շրջաններում, դառնալով նոյն ինքը «հասարակական լսողմանք»: Նոյնը կատարուեց նաև Գերմանիայում, Աւստրիայում, թէպէտ և այդ երկիրներում կառավարիչները հասարակաց կարծիքից աւելի առաջ գնացին Ռուսիայում, 1861 թ. 19 փետրւարի մեծ օրէնքից առաջ, դրականութիւնը նախապատրաստել էր հասարակաց կարծիքը այդ մեծ

րեֆորմները ընդունելու համար: Նոյն այդ գրականութիւնն է՝ պուր-
լիցիտական, քաղաքա-անտեսական և գրական, որ հասարակական
կազմակերպութեան նոր իդէալներ ստեղծեց, ստեղծեց մի նոր սե-
րունդ, որից և դուրս եկան ապագայ ռեֆորմի ծրագիրը մշակողներ,
երբ արդէն վաղուց և անդադար յայտնւած զաղափարները դար-
ձան ընդհանուր, մտան կառավարչական շրջանները և, շնորհիւ կայսր
Ալեքսանդր II.-ի, սոացան պետական օրէնքի ոյժ և զօրութիւն:

Բայց այդպէ՞ս էր արդեօք մեզանում, Կովկասում, մասնաւորա-
պէս Անդրկովկասում և այն էլ հայկական-թուրքական նահանգնե-
րում, երբ հողատիրութիւնը կանոնաւորելու ինդիքը տեղական
բարձր կառավարչութեան ուշադրութիւնը զրաւեց և երբ, բառաս-
նական թւականներից սկսած, կենդրոնական կայսերական կառավա-
րութիւնը օրէնքներ սահմանեց մեր երկրի հողատիրութեան վերա-
բերեալ: Պատասխանու — Ոչ, ոչ և ոչ: Մի այնպիսի ժամանակ, երբ
վճուում էին մեր երկրի ազգաբնակչութեան կենսական շահերին ա-
մենամօտ ինդիքները հողի սեպհականութեան, տիրապետութեան և
օգտւելու իրաւունքների ինդիքները, հողատիրական և ոչ-հողատի-
րական, բայց երկրագործ զիւղացի ազգաբնակչութեան իրար հետ
ունենալիք յարաբերութիւնների արդարեւ ծանրակշիռ, գրեթէ մահի
և կեանքի ինդիքները, — այդ ժամանակ մեզանում հասարակական
կարծիք ասած բանը քնած էր, քնած խորը մթութեան մէջ: Եւ
ոչ միայն հասարակական կարծիք չը կար, այլ չը կային հասարա-
կութիւնից դուրս եկած անհատներ անդամ, որոնք մեր երկրի հո-
ղային հանգամանքները ուսումնասիրութեան առարկայ դարձրած
լինէին և, որպէս այդպիսիներ, պաշտպան հանդիսանալին զիւղա-
կան ազգաբնակչութեան ամենքի սրտին մօտ շահերին:

Մեզանում հողային ինդիք կար միայն կառավարչական շրջան-
ների մէջ, բայց նա չը կար մասսայի ինքնաձանաչութեան մէջ: Այն
օրէնքները, որ տրւեցին հողատիրութեան նկատմամբ, օրէնքները
1818, 1841, 1846, 1847 կամ 1852, 1861, 1867 և 1870
թւականներին, զոքա բղխած չէին ոչ զիւղացիների պահանջ-
մունքներից և ոչ էլ արդիւնք էին հասունացած հասարակաց
կարծիքի: Հայկական-թուրքական նահանգների նկատմամբ, հողա-
յին հանգամանքները ճանաչելու, բայց մանաւանդ նոցա վերա-

ստեղծելու ու կանոնաւորութիւն տալու խնդիրը յարուցեցին կառավարչական շրջանների մէջ: Հողային պայմանները վատ էին, անկանոն, և մութը մասսան այդ զգում էր, դիտէր. բաց նա, քաղաքացիական զղացումից զուրկացող մասսան, չը դիտէր թէ զորանից կարող էր խնդիր ծագել: Ուրեմն խնդիր ծագեցնելու բոլոր անհրաժեշտ պայմանները կաշին, բաց խնդիրը ինքը չը կար մասսայի ինքնաձանաչութեան մէջ: Ահա՛ ինչու մենք կարող ենք պնդել, որ այն օրէնքները որ արեցին հայկական-թուրքական նահանգներին հողատիրութեան վերաբերեալ, հողային ընթացիկները ոչ թէ մասսայի պահանջն էր, այլ տէրութեան: Հողատիրութեան վերաբերեալ բազմաթիւ խնդիրների մասին մեզանում չը կար ոչ միայն հասունացած, այլ և առհասարակ ոչ մի հասարակաց կարծիք: Կատարւած ընթացիկները արդիւնք էին տէրութեան բոլորովին հասկանալի, իրաւացի և բնական պահանջին՝ մի այնպիսի խնդիր, որպիսին է հողի խնդիրը, պարզւած, կանոնաւորւած և, վերջապէս, մի որ և է օրէնսդրական կարգի տակ մտցրած տեսնել:

Այն ժամանակից ի վեր, այն է 1841-ից, երբ ուսաց կառավարութիւնը մտցրեց քաղաքացիական կառավարչութիւնը Անդրկովկասում, բնականաբար պէտք զգացւեց նաև հողատիրութիւնը հաստատել օրէնսդրական կերպով: Այդ մի պահանջ է, որ ամեն մի բարեկարգ տէրութիւն պէտք է զգար, սրովհետև անձանօթ հանգամանքների մէջ երկիր կառավարել և գործունէութիւն սկսել անհնարին է մի սեռութեան համար, որը ուզում է դիտակցութիւն մտցնել կառավարչական գործի մէջ:

Բաց մեր մատնանիշ արած հանգամանքը սա է, որ կառավարութեան այդ ցանկալի ընթացիկների գործի համար տեղային ազգաբնակչութիւնը ոչ մի օգնութիւն չարու կառավարութեան: Խնդիրը ուսումնասիրելու համար, կառավարութիւնը չէր կարող դիմել ոչ տեղային գրականութեան և ոչ էլ տեղային մարդկանց, որոնք յայտնի և հեղինակաւոր կարծիք կարող լինէին յայտնել տեղային հանգամանքների մասին: Այլ կայ և ոչ էլ կար մեզանում, այդ ժամանակները, հասարակական կարծիքի մի որ և է կարևոր և հեղինակաւոր օրգան, որը ունենար որոշ քաղաքականութիւն, որոշ սկզբունքներ և իւր հեղինակութիւնով տար կառավարչական դարձին որ և է ուղ-

ղութիւն՝ առանց փաստաբանների մնացած ազգաբնակութեան մեծամասնութեան շահերի օգտին:

Ահա ինչու, երբ հողային բեֆօրմները մտցնում էին մեր երկրում, նոցա էութեան և բնաւորութեան մասին ոչ ոք ոչինչ չը գիտէր, և նոյն իսկ կառավարութիւնը, որի միակ նախաձեռնութիւնով և զրդեցին ու յարուցեցին և քննեցին ու օրէնքի տակ մտցըրեցին այդ խնդիրները, ինքն ևս որոշ ծրագիր չ'ունէր բեֆօրմներ մտցնելու ժամանակ: Բոլոր վիճաբանութիւնները, որ տեղի ունեցան թէ ստորին և թէ բարձրագոյն կառավարչական շրջաններում մեր երկրում հողային բեֆօրմները մտցնելու համար, մնացին անյայտ ընդհանրութիւնից, և ոչ միայն ընդհանրութիւնից, այլ և նոյն իսկ մեր երկրի ինտելիգենտ դասակարգից: Բայց փաստ է, որ այն ինտելիգենտ դասակարգն էլ չը կար մեզանում, որին մատչելի լինէին այդքան առաջնակարգ բեֆօրմների բարձր պետական նշանակութիւնը:

Դորա մէջ է թաղնւած այն տարօրինակ երևոյթի դաղտնիքը՝ թէ ինչու հողային բեֆօրմները ամեն առաջագէտ երկրում կազմուէն առ միշտ յիշելի թւականներ, մինչդեռ մեզանում հողային օրէնքները, որ տրեցին այս դարու ընթացքում, ռուսաց տիրապետութիւնից յետոյ, այդ օրէնքները, ասում ենք, մասսայի ճանաչութեան մէջ ոչ միայն պատմական էպօքների տպաւորութիւնը չեն թողած, այլ նոյն իսկ լուսաւոր դասակարգից մնացած են զրեթէ անյայտ: Դա մի փաստ է, անհերքելի փաստ, որ Անդրկովկասեան հողային օրէնքների, ուրեմն և հողային խնդիրների հետ մեր նոյն իսկ ընթերցող հասարակութիւնը ծանօթութիւն չ'ունի, իսկ շատերը, շատ շատերը չը գիտեն անգամ թէ այդպիսի օրէնքներ կան և թէ ինչու՞ն են նոքա կայանում:

Ի՞նչ է մեր ասածը: Մեր ասածը այն է, որ հողային օրէնքները, որ տրեցին հայկական-թուրքական նահանգների համար, չը բղիտեցին ոչ մի ընդհանուր հոսանքից և չը հիմնեցին զրական-ուսումնական հետազօտութիւնների վերայ. զիւղացիները չ'ունեցան տեղական օրգաններ իրանց դատը պաշտպանելու համար, և եթէ, որպէս մենք ներքև կը տեսնենք, ունեցան իրանց դատը զօրեղ կերպով պաշտպանողներ, այդ վերջիններն էլ նոյն բարձր կառավարչական

շրջաններինցն էին, և ինչ դոքա արել են յօգուտ հողային բարեկարգութեան, յօգուտ երկրիս բարձր շահերին, այդ բոլորի համար մենք պարտական ենք նոցա բարձր մարդկայնութեան, նոցա ուրոյն ըմբռնողութեան պետական շահերի, բայց ոչ մեր հասարակաց կարծիքի ոյժին: Այդ ոյժը չը կար:

Բայց բանը սորանումն է, որ հողային օրէնքները մեր երկրի վերաբերեալ, հիմնւած լինելով լոկ կառավարչական կարգադրութիւնների վերայ, չ'ունին այն անդրդեկութեան յատկանիշները, որոնցով բնատրոշուած են Ռուսիայի և Արեւմտեան Եւրոպայի հողային օրէնքները: Այս վերջին երկիրներում հողային ընթացքները, կրելով պատմական բնաւորութիւն, կրում են նաև յարատեւութեան կնիքը, և նոցա փոփոխելու համար կամ հարկաւոր է որ ժամանակը բոլոր ներկայ հանգամանքները փոփոխէ և կամ պէտք է բունի կործանումն բոլոր ներկայ հասարակական պայմանների. իսկ դորա համար պէտք է, որ կառավարութիւնները վճռեն պատերազմ յայտնել բոլոր այժմ իշխող զաղափարների դէմ:

Այդ աստիճանի անդրդեկութեան դրոշմը չեն կրում Անդրկովկասեան հողային օրէնքները, որոնք, կրկնում ենք, պատմական զօրեղ հոսանքների արդիւնք չեն ներկայացնում, և կրում են շատ թէքիչ քաղաքական օրէնքների բնաւորութիւն: Տւած լինելով աւելի քաղաքական հաշիւներով, այդ օրէնքները մեծ արմատներ չ'ունին հողի մէջ և վերափոխելութեան անհամեմատ աւելի մատչելի են, քան յիշւած երկիրների հողային օրէնքները: Ահա ինչու մենք իրաւունք ունինք յայտնելու մի այսպիսի միտք. մեզանում կայ դեռ ևս հողային խնդիր, չը նայած որ արդէն երկուերեք ընթացքներ ենք անցկացրել, մինչդեռ Արեւմտեան Եւրոպայում, բացի Երլանդիայից, և Ռուսիայում այդպիսի խնդիր այս րոպէին չը կայ և դեռ երկար ժամանակ չի լինելու, եթէ միայն հողային խնդրի զաղափարի հետ չը կապենք ամեն մի նոր խնդիր դիւզացիական կեանքից: Ռուսիայում, օրինակ, կայ մինչ օրս էլ օգիւղացիական խնդիր, բայց չը կայ «հողային, ագրարական խնդիր» խօսքիս նեղ նշանակութեամբ: Իսկ մեր խօսքը բուն հողային խնդրի մասին է:

Իսկ եթէ այդ այդպէս է, եթէ ճիշդ է որ հողային ընթացքների շրջանը մեզանում դեռ ևս վերջացրած չէ և որ կառավարչական շրջանները այս

րոպէին զբաղած են գոյութիւն ունեցող օրէնքների շատ թէ քիչ հիմնաւոր փոփոխութիւնների ծրագրով, 40-ական, 50-ական, 60-ական և 70-ական թւականներից շատ է տարբեր արդեօք մեր ներկայ սերունդների ձեռնհասութիւնը՝ այժմ քննող խնդիրների մէջ միջամտել և իւրովսանն կատարել իրանց պարտականութիւնը՝ հողային այժմ առկախ խնդիրների լուծելուն օգնելու համար: Այս րոպէին եթէ տէրութիւնը ուղենալու լինի դիմել տեղական հասարակաց կարծիքին, ասենք՝ գրականութեան, մամուլին, իմանալու համար նախկին օրէնքների թերութիւնները, արդեօք նա կը դանի՞ որ և է պատասխան այդ հարցին:

Ամեն օրէնսդրութեան մէջ կայ մի ոգի, մի նպատակ, մի ուղղութիւն: Կա՞յ արդեօք մեզանում մշակած, լաւ մշակած մի ուղղութիւն, որը իւր ներկայացուցիչները ունենայ հասարակութեան և մամուլի մէջ և որի հետ օրէնսդիրները պարտաւորութիւն զգան կամ բարոյապէս հարկադրւած լինեն «հաշիւ տեսնել» հողային օրէնքները վերաքննելիս, որպէս այդ անում է կառավարութիւնը ամեն անգամ, երբ նա մի խնդիր, նախ քան իւր ձեռք առնելը, մամուլի կողմից յարուցւած, քննւած և մշակւած է տեսնում:

Պատասխանը մեր ընթերցողները արդէն գուշակեցին: Հողային խնդիրները մեզանում խօսակցութեան առարկայ չեն ոչ ընկերութիւնների մէջ և ոչ մամուլի մէջ: Կատակները պէտք է թողած: Այն, ինչ ժամանակ առ ժամանակ մեր հացոց թերթերի մէջ լոյս է տեսնում հողացին խնդիր խորագրով, դոքա իսկապէս չեն շօշափում հողային խնդիրը. իսկ երբեմն անշնորհքների ձեռքով մինչև անգամ այդ խորագրով յօդւածներում հերքում է խնդրի գոյութիւնն անգամ:

Մի-մի անգամ, արդարև, փորձեր եղան խնդրին լուրջ ու պատշաճ ուղղութիւն տալու, բայց յաջողութիւն չ'ունեցան. ընդհանրութեան ուշադրութիւնը դրոցանով չ'արթնացաւ, խնդիրը մոռացւեց, փորձերը մնացին առանձնացած:

Բայց միմիայն հայկական մամուլի ուշադրութեան առնելը մի խնդրի մէջ, որը հանրա-կովկասեան խնդիր է, անարդարացի է: Այդպիսի ընդհանուր խնդիրներում, մանաւանդ ուռսաց մամուլը, կոչւած է նշանաւոր դեր կատարելու: Հանգամանքները այնպէս են, որ ինչ

ուղղութիւն որ կարողանայ տալ հայկական մամուլը մեր խնդրին, ընդհանրութեան ուշադրութեանը պէտք է հասնէ նոյն ուուսաց մամուլի միջոցով: Բայց ուուսաց տեղական մամուլը այդ խնդրում կարող է գործել նաև անկախ հայկական մամուլից, որովհետև ոչ-հայկական գրողների համար խնդիրը նոյնչափ թանգ է և կամ պէտք է լինի, որքան և հայերի համար: Եւ մենք աւելին կ'ասենք. եթէ այդ խնդրով կան զբաղւած մարդիկ, եթէ կան բաւականաչափ հետաքրքրութիւն ունեցողներ այդպիսի առաջնակարգ խնդիրների համար, -- դոքա մեր հայկական շարքերումը չեն: Յաւալի է, բայց իրողութիւն է այդ:

Հողային խնդիրները բազմաթիւ են: Գոցա ճանաչելու համար մենք պէտք է դիմենք անցեալին, որովհետև այժմ իշխող հողատիրութեան պայմանները այս դարում զանազան տարիներում մտքբարձ հողային բեփօրմների արդիւնք են: Բայց ահա՛ մի դժւարութիւն: Հայկական-թուրքական նահանգների հողային պայմանները ամենուրեք միատեսակ չեն: Նոքա իրարից տարբեր պատմութիւններ ունին: Բայց մեր նպատակը չէ այստեղ ամեն մի հանգամանքի սկզբնապատճառները քննել. ինչ ծագումն էլ որ նոքա ունենան, բոլորը այժմ ենթարկւած են ուուսաց օրէնսդրութեան, որը նրանց շատ թէ քիչ միատեսակ կերպարանք է տւել: Հէնց այդ օրէնսդրութեան պատմութեան մէջն է, որ մենք դռնում ենք հողային խնդրի մի քանի տարրերը և առկալս մնացած կէտերը, թէպէտ և խնդիրներ կան, որոնք դուրս են ներկայ օրէնսդրութիւնից և որոնց համար ուրիշ տեսակ ուսումնասիրութիւնների պէտք է դիմել:

Հողային պայմանները, սեպհականութեան և նորանից օգուելու իրաւունքները մեզանում տարբեր տեսակների են: Կան սեպհական և տէրունական կոչւած հողեր և կան կալւածատիրական կոչւած հողեր և, զոցա համեմատ, կան սեպհականատէր զիւղացիներ, տէրունական կոչւած զիւղացիներ և կալւածատիրական կոչւած զիւղացիներ. էլ չենք խօսում մի քանի այլ կատեգորիաների մասին, որոնք ընդհանուրից առանձին դիրք են բռնում:

Մեր դիտաւորութիւնը չէ մի հատիկ յօղածու՛մ սպառել այն բոլոր խնդիրները, որոնք կապւած են այդքան տարբեր կատեգորիաների զիւղական հողատիրութեան պայմանների հետ: Իոցանից իւրաքանչիւրը պահանջու՛մ է խորաղնին քննութիւն, բաղմակողմանի ուսումնասիրութիւն: Մեր ջանքը սա կը լինի՝ բացել հողային խնդրի ուսումնասիրութեան էրան, զարձնել այդ խնդիրը հայկական գրականութեան սեպհականութիւն, միջոց տալով, որ ընթերցող հասարակութիւնը մտերմանայ այն խնդիրների հետ, որոնք մեր ազգաբնակութեան մեծագոյն և ամենահետաքրքրական մասի վիճակին է վերաբերում:

Անդրկովկասի նահանգները ամենից առաջ պէտք է, վարչական սեռակէտից, բաժանել երկուսի. — նահանգներ, ուր հողերը կառավարւում են քաղաքացիական օրէնքներով և նահանգներ, ուր հողերը դուրս են սովորական վարչութիւնների ձեռնհասութիւնից: Այս վերջիններին պատկանում են՝ Ձաքաթալի, Դաղստանի, Կարսի ու Բաթումի շրջանները, որոնց նկատմամբ ընդհանուր հողային օրէնքները զօրութիւն չ'ունին և որոնք դուրս են պետական հողերի միխտորութեան ձեռնհասութիւնից: Այդ տեղերում տիրապետում են բացառիկ օրէնքներ: Իսկ ուր մտած է կանոնաւորութիւն հողերի նըկատմամբ և հողերը ենթարկւած են որոշ օրէնքների դոքա են՝ Քիֆլիսի, Փութայիսի, Երևանի, Գանձակի և Բաքուայ նահանգները:

Այդ նահանգներում գոյութիւն ունի երեք տեսակ հողատիրութիւն: Երկրիս հողերի մի մեծ մասը պետութեան սեպհականութիւն է, մի նմանապէս խոշոր մասը՝ կալւածատէր դասակարգի սեպհականութիւն, իսկ համեմատապէս մի փոքրիկ մասը՝ զիւղացիների սեպհականութիւն է:

Համեմատ այդ երեք կարգի սեպհականութեան, զիւղացիները կենում են կամ պետական հողերի վերայ կամ՝ կալւածատէրերի և կամ սեպհական հողերի վերայ:

Այն զիւղացիները, որոնք կենում են պետական հողերի և կալւածատէրերի հողերի վերայ, ձանաչւած են, որպէս պետական զիւղացիներ (государственные крестьяне): Բաց անխտիր կերպով նոքա

այդ անունով չեն կոչուում սովորական լեզուով և նոյն իսկ գրականութեան ու պաշտօնական թղթերի մէջ: Պետական ընդունւած է անուանել միմիայն այն գիւղացիներին, որոնք կենում են պետական սեպհականութիւն համարուող հողերի վերայ: Գօսուղարսուէննի կամ այլապէս՝ կազեօննի գիւղացիներ ասուած ժամանակ, պէտք է այդ գիւղացիներին հասկանալ, թէպէտ և, կրկնում ենք, օրէնսդրութեան առջև թէ այդ և թէ միւս գիւղացիները հաւասարապէս պետական գիւղացիներ են ճանաչուած: Այդ միւս գիւղացիները, նոքա ուրեմն, որոնք բնակոււմ են ազնւական կալածատէրերի հողերի վերայ, սովորական լեզուով կոչոււմ են կալւածատիրական գիւղացիներ, վլադէ՛յչեսկիե կրեստիեա՛նե (владѣльческіе крестьяне):

Որ այդ երկու կարգի գիւղացիները, որոնց սովորական լեզուն տարբեր անուններ է ստալիս, հաւասարապէս պետական գիւղացիներ են, — այդ երբէք մոռանալու չէ: «Պետական գիւղացի» խօսքի հետ կապուած է գիւղացու որոշ զիրքի գաղափարը: Սրէնսդինն է ուզեցել, որ կալւածատիրական գիւղացիներն ևս կոչեն պետական գիւղացիներ, ուզելով դորանով ասել, թէ այդ գիւղացիները կալւածատէրերի ճորտերը չեն, այլ ազատ գիւղացիներ են, որ նոքա նոյն զիրքն են բռնում օրէնքի առջև, որպէս պետական հողերի վերայ բնակւողները: Այժմ, երբ ճորտութիւնը վերացուած է Ռուսիայում և Կովկասի այն տեղերում, ուր նա զոյութիւն ունէր, այժմ, ասում ենք, երբ ազատ և ոչ-ազատ խօսքերը այն նշանակութիւնը չ'ունին, ինչ նոքա ունէին ճորտութեան ժամանակները, — «կալւածատիրական գիւղացիներ» խօսքն էլ կորցրել է իւր, այսպէս ասած, քաղաքական նշանակութիւնը: Բայց և այնպէս այդ բացատրութիւնը հարկաւոր էր, քանի որ հողային խնդիրը մեզանում դեռ ևս չը շօշափուած խնդիր է, քանի որ գիւղացիների մասին մեզանում դեռ ևս չափազանց աղօտ գաղափար ունին ոչ միայն ընթերցող հասարակութիւնը առհասարակ, այլ նոյն իսկ գրողները: Ուրեմն, կալւածատիրական գիւղացիներ ասելով, պէտք է հասկանալ՝ գիւղացիներ, որոնք բնակութիւն են հաստատած ազնւական դասակարգի հողերի վերայ, բայց որ կալւածատէրերը իշխանութիւն չեն բանեցնում այդ գիւղացիների վերայ՝ ոչ դատաստանական և ոչ օտոխնանական և որ

այդ զիւղացիներն էլ պատկանում են պետական զիւղացիների կատեգորիային:

Գորանից արդէն պետք է եզրակացնել, որ «պետական զիւղացիներ» անունը որոշում է ոչ թէ այն, թէ ո՞ւմ հողերի վերայ են բնակւում զիւղացիները, պետական թէ ազնւական կալաճատէրերի, այլ այն, թէ ո՞ւմ իրաւասութեան ներքոյ են գտնւում զիւղացիները՝ տէրութեան անմիջական իրաւասութեան ներքոյ, թէ կալաճատէրերի իշխանութեան ներքոյ:

Այդ եզրակացութիւնը մենք դուրս ենք բերում լոգիկաբար և մենք կարծում ենք, թէ չենք սխալուում: Եթէ այդ եզրակացութիւնը սխալ լինէր, այն ժամանակ անմիտ բան կը լինէր կալաճատէրերի հողերի վերայ բնակւող զիւղացիներին անուանել՝ պետական զիւղացիներ: Բայց թէ նոքա այդպէս են կոչւում, այդ օրէնքը ինքըն է ասում:

Բայց այն ժամանակ ինչո՞ւ սեպհականատէր զիւղացիները չեն կոչւում պետական զիւղացիներ, չէ՞ որ հողի ում պատկանելը կարևոր պայման չէ պետական զիւղացի անունը կրելու համար:

Այդ, որքան մենք ենք հասկանում, նորանից է, որ «պետական զիւղացի» անունի մէջ կար և կայ մի տենդենցիա, որը տէրութիւնը ոչ մի կերպով չէր կարող տարածել նաև սեպհականատէր զիւղացիների վերայ:

Պետական զիւղացիներ կոչւում են կալաճատիրական զիւղացիները նորա համար, որ դոքա ազատ զիւղացիներ են. բայց ի՞նչ կասկած կարող է լինել, որ սեպհականատէր զիւղացիները ազատ են: Այնտեղ կարող էր կասկած լինել, վերջին զէպքում՝ կասկած ոչ կարող է և ոչ կարող էր լինել:

Յետոյ, որպէս մենք առիթ կ'ունենանք ցոյց տալու, տէրութիւնը ձգտել է թէ պետական հողերի և թէ կալաճատէրերի հողերի զիւղացիների տուրքերը հաւասարացնել, որպէս զի դոքա հաւասար լինին նաև հարկերի վերաբերեալ, այսինքն՝ որ կալաճատիրական զիւղացու երկու հարկերը՝ տէրութեան և կալաճատիրոջ՝ հաւասար լինին պետական զիւղացու այն միակ հարկին, որ նա տալիս է տէրութեան: Բայց սեպհականատէր զիւղացիները չ'օգուտելով ոչ պետական և ոչ կալաճատէրերի հողերից, բնական է, որ

աւելի քիչ հողահարկ և դորանով իսկ առհասարակ աւելի քիչ հարկ պէտք է վճարէին: Եւ իրօք, նոքա աւելի քիչ են վրձարում: Ուրեմն դորանով էլ դոքա տարբերում են առաջիններից:

Պետական զիւղացի խօսքը, ուրեմն, չը պէտք է հասկանալ բառացի կերպով. այդ խօսքի մէջ կայ տենդենցիա և, որպէս արդէն բաւականաչափ պարզեց, համակրելի տենդենցիա: Արպէս մենք ենք հասկանում, «պետական» խօսքի մէջ օրէնսդիրը կամեցել է ամփոփել ազատութեան և հաւասարութեան գաղափարները մի այնպիսի ժամանակ, երբ կալաճատերերի հողերի վերայ բնակող զիւղացիները, նման Ռուսիայում և Վրաստանում մի ժամանակ տիրապետող վիճակին, ճորտ կամ առհասարակ ոչ-ազատ զիւղացիներ կարող էին ձանաչել: Այդ վտանգը սպառնում էր երկու կողմերին էլ՝ թէ օրէնսդրութեան կողմից և թէ տեղական կալաճատերերի կողմից: Վերջիններս շահ ունէին, որ զիւղացիները կատարեալ կախման մէջ լինէին իրանց, կալաճատերերի, իշխանութիւնից: Այդ ձգտումը, որ ինքն ըստ ինքեան բնական էր կալաճատերերի կողմից, անունը էր առնում Ռուսիայում մինչ 60-ական թւականները դեռ ևս զօրեղապէս տիրապետող տրամադրութիւնից՝ ամեն զիւղացու ճորտ և առհասարակ ոչ-ազատ համարել և ամեն կալաճատիրոջ համարել իշխանաւոր՝ զիւղացիների վերայ ոստիկանական և դատաստանական իշխանութիւն ունեցող: Մեր երկրում տեղական զիւղացիների շահերին այդ բացարձակապէս հակառակ ուղղութեան զլիսաւոր ներկայացուցիչն էր թէ անձնական մեծ հեղինակութիւն և թէ պաշտօնական իշխանութիւն վայելող նախկին փոխարքայ (1846—1856 թ.) իշխան Սիմէօն Վօրօնցօւր: Վերջինս նամանաւանդ զօրեղ կերպով առաջ էր տանում իւր հայեացքները, որ կայսր Նիկողայոսի անձնական հալումներին այդ քաղաքականութիւնը համապատասխանում էր: Այդ ուղղութեան ներկայացուցիչների համար, մեր երկրի հողային պայմանները կանոնաւորելու խնդիրը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ազնւական կալաճատերերի դրութիւնը բարոքելու և եղածից աւելի բարձրացնելու խնդիր: Բարեբաղդաբար օրէնսդրական շրջաններում կային նաև հակառակ ուղղութեան ներկայացուցիչներ, մարգիկ, որոնք հողի խնդրում ամենից առաջ զիւղացուն էին տեսնում: Եւ այդ ուղղութիւնը, առաջին հակառակ, արտա իւր ներդործու-

Թիւնը զեռ ևս նախկին օրէնսդրութեան վերայ, որպէս զի յետոյ զառնայ գերակշիռ ուղղութիւն Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեւիչի փոխարքայութեան օրերով և մանաւանդ այժմ, երբ այդ խնդիրներում պետական կառավարութիւնները, կալաճատիրական զիւղացիների նկատմամբ, անհամեմատ աւելի ժողովրդական ուղղութեան հետևող են, քան երբ և իցէ առաջ:

Այս անգամ, որպէս սկիզբ, շատանանք այսքանով: Մենք կը շարունակենք այս ուսումնասիրութիւնը, աշխատելով զորանից դուրս բերել հողային խնդրի տարրերը:

ԱԻՆՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՅ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Արդէն որոշուած է իմ ճանապարհ,
Որով գընում եմ աներկբայ հողով,
Որքան էլ գըժուար լինի ինձ համար,
Ես պիտի երթամ իմ ընտրած շաւղով:

—Անփորձ սպտանի,—մի ձայն եմ լըսում,—
Փոխիր տատասկոտ փըշոտ այդ ուղին,
Շուտով քո առջև անդունդ է բացուում,
Ուսից վերադարձ չը կայ անցորդին:—

Ես պէտք է երթամ, թէկուզ և իմ բեռը
Սուրբ խաչի նըման ծանրանայ մէջքիս.
Ես պէտք է երթամ, ուր որ իմ քայլերը
Տանելու լինին թըշուապանիս:

Մօսկւա. 1886 թ.:

Կ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր

Լ Է Օ Ի

Ա.

Մենակ էր մնացել Աննան: Մենակ մի ծուլած, մաշուած տան անկիւնում, մարդկանցից հեռու. դուռը երեսին փակուած էր, ոչ մի տեղից լոյս, չոյս չէր գալիս նորա համար, որ մենակութիւնը չը խեղդէր: Ո՛չ մի տեղից: Ո՛վ էր եղել նորա մխիթարութիւնն ու յոյսը: Ե՞րբ է նա տեսել, որ պակասութիւնը, ցաւը, որ ժամանակ առժամանակ գալիս է, ինքն ու ինքը հեռանայ, չը ցաւացնէ, թողնէ մարդու օձիքը: Զը կայ, ոչ ոք չը կայ: Մարդ կ'ապրի էլ, կը մեռնի էլ, այդ աշխարհի կարգն է. բայց մարդ պիտի ունենայ մի բարեկամ, մի ճանօթ, վերջապէս մի աստուածասէր հարեան: Իրանցից ոչ մինը աշխարհ չի եկել նորա համար. ոչ մինին չէր տեսել, չէր ճանաչում այն օրից, երբ բովանդակ աշխարհը սեւացաւ, ջահելին տուած Աստուծու բարի օրը կուչ եկաւ, պղտորեց, կրակ դառաւ նորա գլխին: Այդ օրը հինգ մարդ, մի քահանայ և մի ժամկոչ տարել, թաղել էին նորա մարդուն՝ անբազղ Մարութին:

Այն օրից մենակ է Աննան: Եւ թշուա՛ն...

Ի՞նչպէս էր անցկացրել օրերը. ոչ միայն օրեր, այլ ամիսներ, մինչև անգամ մի ամբողջ տարի էր մթնացրել: — Նա չը գիտէ, նա մոռացել է: Մոռացել է իւր խօսքերը, որ այնքան շուտ շուտ լսում էին սգաւորի տանը հաւաքուած մխիթարող կանանց շրջանում: — Ես ապրել չե՛մ կարող. ես պիտի սպանեմ ինձ. Սե գետը եկե՛լ է, ինձ տարել. ձեզ մատա՛ղ, ցաւիս ցաւ չը կայ նման, պիտի մեռնե՛մ: Ուրիշ էր այդ ժամանակը: Այդ խօս-

քերը բերանն էին զալիս, և այդ խօսքերից էլ ինչ ճշմարիտ բան աշխարհիս երեսին... Նա առաջին օրերը այդ մտքին էր. ասում էր, կրկնում, պատրաստում էր, շատ լաց լինում: Կարծում էր, ո՛չ— սպասում էր թէ մահն ինքն էլ այդ գիտէ, գիտէ որ Աննան մենակ չի կարող ապրել, որովհետև անձար է, կը գայ, իրան էլ կը տանէ: Եւ ոչինչ չէր անում, հէնց այն պատճառով, որ սպասում էր... Եւ աչքից զցել էր տունը, չէր աւելում ծուած, կողքի վրայ եկած պուճախները, շորերը չէր դարսում, ջուր չ'ունէր, հաց չ'ունէր: Եւ չէր վախում, որ հաց չ'ունէր. աւելորդ է, ասում էր, ինչի՞ս է:

Բայց սուգի առաջին օրերը որքան երկար, անվերջ լինեն, էլի անցնում են: Անցան նրանք, անդադար այրող սիրտը սկսեց քիչ-քիչ հանդարտել, խելքը յետ եկաւ, միաքը կանգնեց և երեխան, չորս տարեկան Սառան, հարեանների դռներից տուն եկաւ, մօր մօտ նստեց: Գորան նա մոռացել էր, բոլորովին մոռացել: Օրը մինչև իրիկուն սուգ ու շիւան էր անում. կուրծքի սախտակը ցաւում էր, այնքան ծեծել էր. մի խօսքով իրան սպանում էր և հարեանները տարել էին փոքրիկ աղջկան, հեռացրել էին, որ խեղճ մայրը գոնէ արտասւելու, հանգիստ լաց լինելու ժամանակ ունենայ:

Էլի եկաւ Սառան, նստեց, վեր կացաւ:— Ամեն օրւայ Սառան... Ոչինչ չը գիտէր: Եւ հաց էր ուտում, ուզում էր, երբ միտն էր զալիս, պահանջում էր, լաց լինում: Իսկ երբ կշտանում էր, էլի առաջ-լաց պէս լեզուն բան էր գցում, խօսում, ծիծաղում, ծիծաղում մինչև արաքւելը. զալիս էր մօր վզովն ընկնում, խօսում և էլի վազում:

Երբ օրը մթնում էր, ձայն ու ծայրտ կարւում էր, Աննան օխտը ու տրտում նստում էր փոքրիկ ճրագի առաջ, դուլսը կախ գցում. նա էլ ոչ ոքին չէր սպասում, էլ ականջ չէր դնում ոտի ձայնի, թրխկոցի. էլ յետ չէր նայում թէ ահա որտեղ որ է՝ Մարութի բարակ հագը կը լսւի, փակւած դուռը կը զրխկաց և ինքն Աննան վեր կը կենայ, բաց կ'անէ դուռը: Ամեն անգամ, այդ չիշելիս, նորա կուրծքը դողդողալով բարձրանում էր, նա դողդողալով սաստիկ ներս էր քաշում օդը և հառաչում:

«Փչանա՛ս դու, ինչպէս որ փչացար», ասում էր նա Մարութի մասին: Եւ ի՛նչպէս շուտ մոռացան մօտիկ հարեանները. եր-

կու-երեք անգամ եկան, տեսան, հարցրին, գլուխները դառնու-
թեամբ ժած տւին, որբին խօսացրին, ուզում էին ուրախացնել:
Բայց էլ չը կան. մոռացան այդբա՛ն շուտա: Եւ նա այդպէս է մնա-
ցել մի երեխայի հետ...

Նստ ծանր բան է մենակ մնալը, մենա՛կ, ինչպէս սև ագուաւ:
Նա վախում էր, նորա սիրտը նեղանում էր: Երեկոն անցնում էր.
դրսում այժմ խաւարի՛է, մութ անապատ. ինչե՛ր կան այդ խաւարի
մէջ. հրաշքներ, դեեր, գազաններ իրարով են ընկել. իսկ ինքը այդ-
պէս մենակ... Հոգին գալիս էր բերանը հաւաքւում, ուսերը ծան-
րանում էին, մէջքը կռանում էր և բուկը հետզհետէ կուչ էր դա-
լիս, կծկւում, մի ինչ որ մոռս սրտի խորքերից բարձրանում էր,
քթին խփում, գլուխը տաքանում էր, այլւում. էլի՛ արտասուք...
Եւ նա ձգւում էր դէպի այն կողմը, ուր բարակ ու թեթև մշշոց
էր լսում: Կարծես նորան շրջապատող օդը սեղմւում էր, վերցնում,
դէպի այդ իսկ կողմը հրում, այդտեղ էր ցոյց տալիս նորա հանգըս-
տութիւնը, նորա ազատութիւնը մաշող մտքերից: Նա գնում էր
մոնում այն վերմակի տակ, որ ծածկում էր երեխային՝ նորա քաղցր
քնի ժամանակ: Այդ իսկ երեխան է այնպէս մշշացնողը, այնպէս դէպի
ինքը ձգողը: Մայրը խտտում էր նորան, այդ գունդ միսը, կրծքին
էր կպցնում այդ փափուկ դէմքը և երբեմն ցածրացնում էր իւր
գլուխը, որ երեխայի բարակ զով շունչը դիպէ իւր դէմքին. և ինքն
էլ հովանում էր, ինքն էլ տաքանում էր. այդ հանգստութիւնը,
քնի այդ անոյշ թմրութիւնը նորան էլ յափշտակում, թուլացնում էր:

Ո՛չ, էլ ինչո՞ւ մեռնել... Աննան այս էլ հասկացաւ մի քանի
այսպիսի երեկոներ: Սառան կ'ապրէ, ինքն էլ կ'ապրէ: Եւ որքան
շա՛տ նա այդպէս վախում էր, նեղանում, որքան շատ վախելուց և
նեղանալուց յետոյ ձգւում էր դէպի այդ զով և անոյշ շունչը, որ-
քան երկար խտտում էր այդ փափուկ մարմինը՝ այնքան նա մեծ և
մեծ էր դառնում. այնքան մեծ, որ մայրը մի ամբողջ տարի նորա
համար այնպիսի օրեր անցկացրեց և այժմ քիչ է համարում այդ
բոլորը, ոչինչ:

Բ.

Ու՛րնչ... Բայց ինչո՞վ էր ապրել: Հէնց այդ է բանը, որ ապ-
րուստն այնպիսի ապրուստ էր, որ նա ինքն էլ չը դիտէր թէ ինչ

էր արել: Մարդկանց դռներ մաշել նա դեռ չէր սովորել. ի՞նչպէս
 գնայ, ո՞ւմն ասէ, խնդրէ, որ գործ, աշխատանք տան: Եւ վայել է
 որ գնայ. հօ ինքը մի հաւի ճուտ չէ՞ր կորցրել: Թաղել էր տղա-
 մարդին, թաղել էր նորան, որ իւր բերանի քաղցրութիւնն էր, նո-
 րան, որ այժմ այդքան ցաւեցնում է նորա սիրտը. նա, այդ թաղ-
 ւածն է եղել այդ տան սիւնը, հաստատութիւնը. նորա հետ է ինքը
 անց կացրել տարիներ... Այո՛, հաւի ճուտ չէր կորցրել, որ մի կէս
 ժամ ափսոսայ, էլի մոռանայ: Եւ ի՞նչպէս նա չը նստէր տանը, գոնէ
 տարին լրացնէր. ի՞նչպէս անպատուէր իւր այդ տղամարդին և դեռ
 սիրտը սգաւոր՝ գնար, դռներն ընկնէր: Նորա թաղի միւս ծայրում
 ապրում էր իւր պէս մի խեղճ կին, որ օրերով տան երես չէր տես-
 նում, ազահի պէս այստեղ ու այնտեղ էր ընկնում, միշտ աշխատում
 էր, արիւն-քրտինք էր չափում, որ իւր երեսաներին ու հիւանդ
 մարդուն պահէ: Ժամանակ էր գալիս, երբ այդ խեղճից անկարելին
 էին պահանջում. տալիս էին այնքան դործ, որ եթէ նստէր գործե-
 լու, պիտի զիշերներն անքուն մնար: Ի հարկէ, քունը քաղցր բան
 է. և նա որքան էլ խեղճ լինէր, որքան տնանկ, իւր քունը չէր ծա-
 խիլ հարիւր մի փողի. բայց ցաւն այն էր, որ եթէ բոլորը չէր ա-
 նում, մնացածից էլ զրկում էին. «Գնա՛, ասում էին, ուրիշին կը ճա-
 րենք, որ ինչ ասենք՝ անէ»: Այդպիսի դէպքերում օգնում էր նորան
 Աննան: Թեթեւ գործերը նա բերում էր տուն և մի մասն էլ ուղար-
 կում էր Աննային. իսկ սա տանը նստած անում էր, վարձի տեղ հա-
 ցից-մացից ստանում: Բայց դորանով ի՞նչ կը լինի: Եւ Աննան
 վաղուց էր աչք ածել իւր տան չորս պուճակները, սկսել էր աւել-
 նորդը որոշել: Մի օր ծախել էր իւր մեծ կաթսան, հերիք չէր արել,
 ծախել էր շորի կտոր, աւելորդ բան: Եւ այժմ ի՞նչ էր մնացել իւր
 անակում:

Կերել էր, կերել, ոչ կերածն էր չայտնի, ոչ մնացածը:

Այդ տունը մի տան նման չէր: Մարութն ինքն էր իւր ձեռքով
 շինել, ի՞նչ կը լինէր. Մարութը մշակ, բեռնակիր, ո՞րտեղի տուն
 շինողն էր: Սև ցիւց ու անտաշ քարերի կտորներից երեք պատ էր
 ձեփել, կանգնացրել քաղաքի ծայրի մի բարձրութեան լանջի վե-
 րայ, երեսը դէպի արևելք, մէջքը դէմ տւած մի մեծ ցից քարի,
 որ չորրորդ պատն էր դառել: Այդ քարը պատի պաշտօն կատարե-

լուց զատ՝ ուրիշ նշանակութիւն էլ ունէր. նա տան մէջ առաջ էր տարել իւր մի բեկորը, որ գետնից քիչ բարձր մնալով մի խոր խոռոչ էր կազմել. և այդ խոռոչն էր տան պահարանը: Պահարանում այժմ մնացել էր մի սևացած, ծումած փոքրիկ կաթսայ, որի մէջ ոչինչ էլ չէր ետևում և այդ պատճառով պղինձը ծաղկել էր, բորբոսնել, գեղին, կանաչ ու բաց կարմիր գոյներ ստացել. մնացել էր մի կոտրած շիշ, մի կաւէ աղաման, երկու փոքրիկ պնակ, մի բաժակ: Եւ էլ համարեա ոչինչ չը կար փոքրիկ սնակում, եթէ չը նայենք մի շորի կտորին, որ ընկած էր մերկ յատակի վերայ, մի անպիսի շորի կտոր, որի գոյնն էլ չէր իմացուում: Իսկ պուճախում դարսած կար մի ձեռք անկողին՝ հազար կտորներով բեռնած կեղտոտ անկողին, որը դուրս տանել, ջրով լւանալ չէր կարելի, խսկոյն ցրիւ կը գար:

Այսպէս էր Աննայի տունը, այդ փոքրիկ, նեղ տեղը, ուր նըստած մարդիկ Ստուճու լոյսը տեսնելու համար աչքները պիտի տնկէին փոքրիկ, հաւաբունի ծակից էլ փոքր լուսամուտին, որի մի ծայրից մինչև միւսը ընկած էին երկու բարակ ու չոր ճիւղոտներ, որոնք, եթէ Ստուած թողնէր, երկաթի վանդակի տեղը պիտի բռնէին: Իսկ այդ լուսամուտի կողքին, նրանից կէս գազ հեռու, կրնկի վերայ շուռ էր դալիս կացնով տաշած մի նեղլիկ ու կոպիտ դուռ, որի չորս տախտակներից մէկի վերայ հաստ և սև գծերով գլխի վայր գծւած էր Յ թւանշանը. և այդ մի ապացոյց էր, որ այդ տախտակները ապրանքի արկղից էր պոկած: Գուռը փակւած դուռթեան մէջ պատի երեք անկիւնին էր միայն կաշոււ, իսկ վերևի կողմից երեք մասնաշափ մի ձեղք էր թողում: Բայց այդ դուռը իւր բազմատեսակ ճռուցներով ու մեծ թւանշանով Սառայի խաղերից մէկն էր: Երբեմն նա կը բռնէր դուռը, բաց ու խուփ կ'անէր, համ ինքը նորա հետ կ'օրօրէր, համ էլ ականջ կը դնէր այդ ճռուցներին, իսկ երբեմն ոտների ծայրերի վերայ կը կանգնէր, ցուցամատը կը դնէր թւանշանի գծի վերայ և կը տանէր այդ ոլորուն գծի վրայով, կը ծիծաղէր, կը քրքջար՝ զարմացած թէ ի՞նչպէս մատը այդպէս գնում էր, պտոյտներ անում, կանգնում ծայրերի վերայ:

Տունը թէև այսպէս, բայց տուն էր:

Ահա՛ լուսացաւ Նաւասարդի առաւօտը: Արևելքը դեռ նոր է հուրհրատել. դեռ կարմիր և ծիրանի շառաւիղները նոր նոր են դեպի երկինք բարձրանում, խառնւում են, տարածւում և կարմրացնում առաւօտեան կիսամթութիւնից դեռ բոլորովին չ'որոշած տներն ու բարձրութիւնները: Ղեռ օդի մէջ ձայն չի բնկել և դեռ նոր մարեց քաղաքի միւս ծայրում արթուն պահապանի երկարածիգ, զգուշացնող ձայնարկութիւնը: Ղեռ, ուրեմն, գիշերը չի բաժանւել: Բայց այդ ժամանակ հայքիտոնեաները կատարում են տարեմուտի տօնակամութիւնը. քունը այսքան շուտ փախել է ամենքի աչքերից և մեծ ու պստիկ վեր են կացել, յօժար և ուրախ խօսում են, լւանում երեսները և բոլորում են կորկոտի կաթասլի շուրջը. շերեփը ամաններ է լցնում, հոտը զրգում է ամենքի ատորժակը: Ամբողջ գիշերն եփել է կորկոտը, ամենքի հոգն ու սպասողութիւնն է եղել. լա՛ւ կ'եփւի, իւղալի՞ կը լինի արդեօք... Եւ ահա՛ այժմ պատրաստ է, մեծ ու պստիկ շտապում են համն առնել և զոչում են. «շորհաւո՛ր Նաւասարդ»:

Աննայի տանը, ի՛նչ խօսք, կորկոտ չը կայ. Սառան քնած է ինչպէս և ամեն հասարակ օր և չի էլ երազում թէ ի՛նչ է համեղ, տաք տաք կորկոտը: Բայց Աննան վեր է կացել այդ ժամին և իւր կարմիր գօտին կախել է դրան ճակատից, արևելքի բոցերի հանդէպ: Պայենական սովորութիւն է, որը կատարելու համար այդքան ջերմեռանդ է եղել և որոշ ժամանակին զարթնել: Կարմիր գոյն նոր տարեմուտի վաղ առաւօտեան, այնպիսի մի ժամանակ, երբ մարդ մարդու երես չի տեսնում դեռ... կարմիր նշան, խնդրւածք, որ տարին «կարմիր» լինի տան համար: Կարմիր լոյս, որ այնպիսի առատութեամբ տարածում է արևելքը և այդ խորհրդաւոր ու զարմանալի կարմրութիւնը գալիս է կարմիր դօտու հետ պաշպալում, զրկախառնւում:

Եւ զարմանալի՛ բան. կորկոտ ուտողները մոռացել են թէ չը գիտեն, որ կորկոտի հետ դրսի կարմիր նշանն էլ հարկաւոր է. ոչ ոքի՛ դրան ճակատին չի երևում ոչինչ կարմիր բան: Եւ մենակ Աննայի տունն է այսպէս զարդարւած: Կ'ասես թէ այս տունն է միայն հասկանում թէ ի՛նչքան գեղեցիկ է կարմիրը. կ'ասես թէ այս տունն է, որ ամենից շատ չարդում է կարմիրը, շատ մտածում է ապ-

րելու և կարմիր ապրելու մասին. և այդպէս զւարթ է, այդպէս քարի գոյնով է ողջունում արշալոյսը:

Այո՛, այդ տունն էլ թէև այնպէս, բայց տուն է:

Առաւօտ է, վաղուց է վեր կացել Սառան: Նա վերցրել է մօր հին հալաւը, փաթաթել է նորա մէջ և վազվզում է և գնում, մտնում է իրանց պահարանը, պառկում է քարի տակ, կոտրած շիշի, ծաղկած բորբոսնած և կաթսայի ուրիշ «աման-չամանի» մօտ թաւալ է տալիս, դէս ու դէն ընկնում: Նա միշտ ծիծաղելու առիթ ունի. նորան ոչ ոք չի ծիծաղեցնում, նորա ծիծաղին ոչ ոք չի մանակցում, բայց նա բերանի վերայ միշտ ունի մի անդուսպ ծիծաղ: Ինքն ու ինքը սկսում է ծիծաղը և հետզհետէ սաստկացնելով, բարձրացնելով երկա՛ր, երկա՛ր քրքջում է, մինչև որ նեղանում և ուրիշ բան սկսում: Աեր է կենում, վազվզում է մօր առաջ, կամ արագ թռչկոտելով պտտում է նորա շուրջը: Այդ կարճիկ և փափիկ երեսան, որ ունէր մի կարմիր ու առողջ դէմք, ամբողջապէս շարժողութիւն էր, եռանդ. համբերել չը գիտէր և իւր վերայ կախ ընկած կարկատաններն ու փոքրիկ գլխի վերայ կոյտ կոյտ դարսած, մինչև վառվառն աչքերը թափւած թուխ մազերը սակաւ էին հանդիստ, անշարժ մնում:

Կամ թէ... այս մէկը շատ անգամ կը պատահէր, շա՛տ... փոքրիկ տնակը միշտ չէր կարող նորան պահել իւր չոր ու սկլոր պատերի մէջ: Նա շուտ շուտ կը վազէր հարևանների տները: Եւ զարմանալի է... հինգ տարեկան խելքն այնպէս էր հասկացնում, որ երբ տեսնում էր հարևաններին հաց ուտելիս կամ թէյ խմելիս, չէր մտնում, կանգնում էր դրան շէմքում, կպչում պատին և երկու աչքերը պլշած տնկում մարդկանց մատների և բերանի վերայ: Իսկ երբ նորան էլ տալիս էին մի կոտոր, իսկոյն առնում էր, շուտ տալիս դէմքը, ուտում էր վիզը ծկած, խզծացած: Միայն ուրիշի տւած պատառը ձեռքին բռնած ժամանակն էր նա խղճանում, որքի կատարեալ տեսք ընդունում: Իսկ երբ պատառը ոչնչանում էր նորա բերանում, նա արձակ—համարձակ գնում էր, տան երեսանների մօտ նստում, կամ թէ էլի թափահարելով իւր բազմաթիւ կարկատաններն ու թուխ մազերը, վազում էր իւր մօր մօտ, բոբիկ ոտները պար էր ածում ու հինգ անգամից աւել ասում, կրկնում:

—Մի՛ս կերայ... Քաղցր, հէ՛նց քաղցր... Մեծ կտոր տւին, ա՛յ որքան:

Մայրը ժպտում էր, իսկ նա երկու ձեռքերը հեռացնում էր միմեանցից, իւր գլխից էլ մեծ կտորի չափն էր ցոյց տալիս:

Գ.

Չմեռն էր, բայց ձիւն չը կար:

Մի խոնաւ, թանձր մառախուղ թափւած էր ամեն բաց տեղ, անշարժացած: Կարծիլի օրը մռայլ էր, հոգի հանող. դեռ չը սկսւած՝ այդ օրը շտապում էր անցնել, վերջը ցոյց տալ, փախչում էր այդ մառախուղից, որ հետզհետէ աւելի և աւելի բարդւում էր, ցրտանում, ծանրանում էր, սառած և թաց շորի մի ահագին կեղտոտ կտորի նման ընկնում ամեն շնչաւորի և անշունչի վերայ: Եւ մի ինչ որ անզօր փոքրիկ քամի երբեմն շարժելով, խառնում, տրորում էր մառախուղի միլիօնաւոր մանրիկ մասերը, չը կարողանալով ամբողջութեան մէջ մի շատ նկատելի հոսանք կազմել, նա տանում, խրփում էր այդ խոնաւ մասնիկները տների պատերին, ցանկապատերի փշերին, փողոցների սառած ցիւխն, մարդկանց դէմքին. նա, կարծես, քամում էր մառախուղի այդ խոնաւութիւնը, սառցնում, կուչ էր ածում, բարակ թելեր և փոքրիկ սպիտակ ոսպեր շինում կպցնում էր ամեն մի բարձր ու սուր ծայրի, շարան-շարան կախ էր անում մերկ ճիւղերից, որ և է պատահական մագից: Այդ գործը քամին աննկատելի կերպով էր կատարում. թանձր և ծանրաշարժ մառախուղը իւր անթափանցելի ծալքերի մէջ էր նորան թող տալիս գործել: Եւ մանրիկ սառուցների այդ կտորները միմեանց կպչելով, միմեանց հետ հիւսւելով կազմում էին զանազան օտարոտի ձևեր, բռնում էին բարակ առարկան ամեն կողմից և մեղմ կերպով օրօրւում էին քամու սուաջ. և օրօրւում էին և թափւում ջանկարծակի, արձակելով մեռած, անկենդան, այս տեսակ մառախուղին միայն յատուկ ծանր լուծեան մէջ բոպէական տխուր յուսահատութեան խրտիւնն:

Յուրտ էր, շա՛տ ցուրտ: Կաշին կապտանում էր, սևանում, ճաքճաքում, մի ծանր, դանդաղ և անգիմադրելի մորմոք տարածում ողջ մարմնի մէջ:

Այդպիսի ժամանակ ո՞վ է ում համար մտածում. ո՞վ գործ ունի գրսի հետ. սեպհական կաշին սաստիկ թանգանում է, մեծ մեծ խնամքներ պահանջում: Եւ ամայի է, անկենդան է քաղաքը, մանաւանդ նորա յետ ընկած, մոռացւած ծայրերը: Մառախուղը հետզհետէ սևանում էր, հետզհետէ մթին և մթին կերպարանք էր ստանում: Թրը անցնելու վրայ էր և կարծես վերջին հառաչանքն էր արձակում, վերջին անգամ փորձում էր դիմանալ դիզւած ծանրութեանը:

Այդ իսկ ժամանակ Սառան դրսումն է, աշխատում է մի ինչ որ բանի վերայ: Իրանց տանից քիչ հեռու, այնտեղ, ուր քաղաքը բոլորովին վերջանում էր և սկսւում դատարկ քարքարոտ լանջիվերը, մի աղբակոյտ կար, որտեղ թափում էին տան և ախոռի անպէտք բաներն ու կեղտերը: Նա կռացած էր այդ կոյտի վերայ և մասնէրով քրքրում էր, ջոկում: Քամին շատ թույլ շարժում էր նորա մէջքից ու կողքերից կախ կախ ընկած կարկատանների ծայրերը, որոնց վերայ արդէն նստել էին սառած փոքրիկ կաթիլները, շարժում էր և նորա խիտ սև մազերը, որոնք անխնամ մնալով, կապւել էին միմեանց, հիւսւել և այդպէս թափւած էին նորա ականջների և ճակատի վերայ: Երբեմն այդ մազերը խիտ էին նորան նեղացնում և այդ ժամանակ նա բարձրացնում էր գլուխը, սաստիկ դէպի յետ էր շարժում և այդպիսով հեռացնում էր մազերը, աչք էր ածում դէս ու դէն, ձեռքերը դէպի բերանն էր տանում, փչում, տաքացնում և էլի կռանում էր, էլի քրքրում:

Նորա մի կողքին դարսած էին փայտի մանր կտորներ, այնքան մանր, որ ոչ ոքին հարկաւոր չեն եղել և ցախաւելի առաջ աննկատելի սրբւել են, աղբի հետ խառնւել: Նա այդ փշրանքներն էր ջոկում, հաւաքում. նորան այդպէս էր պատուիրել մայրը: Բաց ժլատ էին այդտեղ աղբ թափողները. նոյն իսկ այդքան մանր կտորներն էլ քիչ էին բերել և այդ պատճառով փոքրիկ աղջկայ աշխատութիւնը շատ էլ օգուտ չէր տւել: Մասամբ նա ինքն էլ մեղաւոր էր. ամեն անպէտք բանի ուշադրութիւն էր դարձնում, երկար տնտղում էր ամեն մի անպէտք չթի կտոր: Նորա ձեռքն ընկաւ մի կտորած շիշի կտոր. նա իսկոյն վեր առաւ ապակու այդ սև կտորը և կանգնեց:

—Վի', հայելի', հայելի'... գոչեց շորս կողմին ուրախացած նա-

յելով, կարծես որոնելով մի ընկեր, որին կարողանար յայտնել իւր այդ ուրախութիւնը: Եւ ամեն կերպ նայեց ապահուն, սրբեց իւր թււքով, մօտեցրեց դէմքին, բոլորովին մօտեցրեց, քթի ծայրին կպցրեց, հռօացրեց, աչքի մէկը փակեց, միւսը լացն բաց արեց, զլուխը սկսեց դէս ու դէն տանել «հայելու» առաջ, ժպտաց, երկու ձեռքով բռնեց, բարձրացրեց գլխի վերայ և ինքը ներքեւից նայեց. յօնքերն ու շրթունքները միաժամանակ վեր ու վար քաշեց, բերանը ծռւմբուեց, բաց արեց, ատամները առաջ տարաւ, մինչև անդամ մի մատով ներքին շուրթը ցած քաշեց—մի խօսքով՝ ամեն հնարք արեց, որ իւր պատկերը տեսնէ. բաց ապակու կտորը խաւար էր, պղտոր և անզգայ այդ բոլոր շարժածքների զիմաց: Նա չը տեսաւ իւր պատկերը և այդպէս երկար շարշարեց:

Նորա այդ զբաղմունքի ժամանակ Աննան հողէ փոքրիկ սափորը ուսին՝ եկաւ հասաւ տան դրանը, կանչեց աղջկան, ասաց որ հաւաքած «փայտը» բերէ. ու ինքը բաց արեց դուռը, շալակած ջուրը դրեց մի անկիւնում:

—Պա՛-պա՛-պա՛, Ատտուա՛ծ, մրմնջաց նա, մատների ծայրերը բերանը դնելով.— ո՛ւհ, ո՛ւհ, մատներս թափւեցան, Ատտուա՛ծ...

Եւ տեսնելով որ բերանը չի տաքացնում, ձեռքերը դրեց ծոցը, կսկծից քիթը վեր քաշեց, բերանը կիսով չափ բաց թողեց: Նորա աչքերում ջուր էր երևում. արդեօք արտասո՞ւք էր թէ ցրտի դուրս մրզած ջուրը...

Սառան ներս վազեց, փէշից թափեց փայտի փշրանքները:

—Ծամբ կտրա՛ծ, այդ ցրտում ի՛նչպէս ես... ասաց մայրը և էլի մրմնջաց:

—Մի տես է՛, տես ի՛նչ եմ գտել, մօր մօտ վազեց Սառան և ցոյց տւեց իւր «հայելին»:

Մայրը առաւ ձեռքից, իւր ափի մէջ բռնած ինքն էլ մի անդամ իւր երեսին մօտեցրեց և ապա ասաց.

—Լա՛ւ, դնա՛ կրակ բեր, կրակ վառենք, ես կը պահեմ: Յո՛ւրա, ցո՛ւրտ, տունդ քանդւի, աւելացրեց նա մրմնջալով և աջ ձեռքով «ճանդ արաւ» մտռախողին, որի մի քանի մոխրագոյն ծալքերը դէպի իւր տունն էին սողում:

Սառան այդ խօսքերի վերայ ուշադրութեամբ նայեց իւր մօրը,

ուզում էր ինքն էլ այդպէս անէ, բայց յանկարծ նկատեց որ թէև նա մրմնջում էր, բայց միևնոյն ժամանակ նորա բերանը ծանր և աննկատելի կերպով մի բան էր ծամում:

—Է՛յ, այդ ի՞նչ ես ուտում, զոչեց նա այնպէս, ինչպէս գոչում են մէկի վերայ գողութիւն անելիս բռնած ժամանակը:

Մայրը ծիծաղեց, նա էլ ծիծաղեց. բայց այդ ծիծաղը կարճատև էր, մի լացի նախերգանք. և նա կախ ընկաւ մօր փէշից, սկսեց օրօրւել, զժգոհումը եամբ դէպի վեր, դէպի մօր քիթն ու բերանը նայելով:

—Ոչի՞նչ չը կայ, ի՞նչ եմ ուտում:

Աջդիկը լացի ձևով վրայ տւեց.

—Հա՛, հա՛, չե՛ս ուտում... Ինձ է՛լ տուր:

—Սառա՛, գիտե՛ս, Մարտիրոսի մայրը նոր բաղարջ էր թխել, մի կտոր, այսքան, մատիս չափ էլ ինձ տւեց: Գնա՛, վազի՛ր, բաժինդ ստացիր:

Աջդիկն ուղեց երեսը դէպի դուռը դարձնել, որ վազէ, բայց մէկ էլ այդպէս չարեց. էլի նայեց մօր բերանին, մատը բարձրացրեց, մեկնեց դէպի այդ բերանը և էլի ձայնով պահանջեց. «Ինձ է՛լ տուր»...

—Վո՛ւյ, կուրանա՛մ, ասաց մայրը. —բար պիտի կերած լինէի. մի կտոր էր, բերանս դրի, պրծաւ:

—Է՛, չեմ իմանում, տո՛ւր որ յետոյ գնամ, պատասխանեց Սառան այս անգամ բարկացած:

—Զը կայ, Ստուա՛ծ վկայ, հաւատացրեց նա. մի կտոր էր, այն էլ կերայ, տե՛ս, ըհը՛, պրծաւ:

Եւ նա կուլ տալու կերպը ցոյց տւեց:

—Վազի՛ր, վազի՛ր, գնա՛, բաժինդ ուզիր: Կը տայ, ես գիտեմ որ կը տայ: Վազի՛ր, մատա՛ղը լինեմ, մի կրակ էլ կը բերես. գնա՛, ցուրտը մեզ կտորեց, գնա՛:

Սառան զուրս թռաւ:

Մի րոպէ չ՛անցած նա մտաւ հարևանի տունը, աչք ածեց, տեսաւ, որ Մարտիրոսը պառկած է քուրսու տակ. գնաց, ինքն էլ նորա մօտ պառկեց: Մարտիրոսի ձեռքին դեռ մնացել էր մի կտոր բաղարջ և որովհետև այդ կտորը վերջանալու վրայ էր, այդ պատ-

ճառով նա չէր ուտում, այլ ձեռքին բռնած զանազան կերպ խաղացնում էր կտորը և նայում:

— Տուր տեսնեմ, Մարտիրո՛ս, շշնչաց Սառան քաղցր ձայնով:

— Ձէ՛, իմն է. մի տե՛ս... Ինձ համար է թխել: Եւ Մարտիրոսը մատը սկսեց բաղարջի բազմաթիւ ծակերի վրայով տանել:

— Հա՛, շա՛տ լաւն է. սպիտա՛կ... տո՛ւր ձեռքիս բռնեմ՝ էլի քեզ կը տամ:

Եւ Սառան ձեռքը պարզեց դէպի բաղարջի կտորը: Բայց Մարտիրոսը ուտով դէն հրեց այդ ձեռքը և կոշտութեամբ ասաց.

— Է՛, իմն է, չե՛մ տալ...

Նորա մայրը լսեց այդ և վեր կացաւ:

— Որ իմանաս, Սառա՛, խօսեց յանկարծ Մարտիրոսը քաղցր ժպտալով, մեր սնդուկում ի՛նչ լաւերը կան, մեծ մեծ, տե՛ս, մայրս գնում է որ բերէ:

Սառան նստեց, դէպի առաջ թեքեց և արմողշովին ուշադրութիւն դարձրած նայում էր թէ ի՛նչ պիտի անէ Մարտիրոսի մայրը: Իսկ սա. բաց արեց հին, կտորատուած սնդուկը, մի փոքրիկ բաղարջ հանեց և տւեց Սառային: Նա խփոյն սկսեց ուտել: Մարտիրոսն այդ տեսնելով, ինքն էլ իւր կտորը կծեց մի քանի տեղից:

Քիչ անցած, Մարտիրոսի մայրը, մի երկաթի կտորի վերայ երկու կրակ դրած, տւեց Սառային և տուն ուղարկեց: Իսկ այստեղ նորա մայրն արդէն կուտել էր հաւաքած փայտի կտորները. կրակը զրին նրանց տակ, մայր և աղջիկ միմեանց դէմ չոքեցին և, արմունկները չոր գետնին ցցած՝ սկսեցին փչել կրակը: Մի կողմից Աննան էր փռչում. նա տուգացրել էր իւր թշերը, մի փոքրիկ ծակ էր թողել մի տեղ հաւաքած շրթունքների մէջ և գլուխը շարժելով, իւր շունչը մի քանի տեղերով կրակին էր հասցնում: Իսկ Սառան փչում էր առանց որ և է «ուստայութեան». նա իւր գլուխը բոլորովին մօտեցրել էր փայտերին, փչում էր և միևնոյն ժամանակ նայում էր իւր մօրը, որ նրանից սովորէ փչելու կերպը: Բայց կրակը փոքրանում էր հետզհետէ, իսկ փայտի կտորներից դեռ մի քանիսն էին միայն սևացել: Այդ գործը նրանց այնպէս էր յափշտակել, այնպէս էր առաջ քաշում, որ փայտի կտորները մի քանի անգամ դէս ու դէն

քաշենցան նրանց կռների առաջ, մայր ու աղջիկ շուտով գլուխ գլխի տւին, այնքա՛ն միմեանց մօտեցան:

Դ.

Օուխը մլլում էր, մլլում, ոլոր-մոլոր տարածւում էր այդ կրակարանի շուրջը, աւելի և աւելի թանձրանում էր, օղակ-օղակ զալարւում էր և պատում երկու փշողներին, թափւում էր նրանց բերանը, խեղդող հազ առաջացնում, թափւում էր նրանց աչքերը, ջրով լցնում. և փշողները չէին դիմանում այդ կծու ու զորշ ամպիկներին, յետ էին նստում, բռունցքներով տրորում էին իրանց աչքերը, հազում էին և էլի խոնարհւում կրակի վերայ, էլի փչում... Մի փոքրիկ նւազ բոց—երբեմն կապոյտ և երբեմն բաց դեղին—օրօրեւելով, տատանւելով փայտի մի երկու փշրանքներից կպաւ: Փըշողները կանգ առին. նրանց շունչը այժմ կարող էր մեռցնել այդ բարերար բոցը. նրանք նայում էին թէ ի՛նչ կը դառնայ. իո՞վ բոցը թոյլ կարծես սառած լեզուակներով լիզում էր խոնաւ ու կեղտոտ փայտերը, Ֆշշացնում էր յուսահատ, մաքառում էր թանձր ծխի հետ, ցածրանում էր, ցածրանում և յանկարծ կորչում, ծխի մի նոր բերան էր բաց անում: Այն ժամանակ երկու գլուխները իսկոյն խոնարհւում էին և էլի սկսում էին փչել:

Վերջապէս փայտի մանր փշրանքների մեծ մասը բոցավառւեց, գոյացաւ մի փոքրիկ խարոյկ, որ այլում էր դանդաղ, ճարձատիւն հանելով, և այնպիսի դուրեկան ձայներ էր արձակում, որոնց զինը կարելի է իմանալ այդպիսի մի ցուրտ ժամանակ միայն: Մայր ու աղջիկ յետ նստեցին, ձեռքները տարածեցին կրակի վերայ: Երկու մեծ և երկու փոքրիկ ձեռքերը բաւական էին այդ նւազ, բայց մի առ ժամանակ առոյգ կրակը չորս կողմից շրջապատելու համար. կրակն իւր գործն էր անում, ձեռքերը ջերմութիւնը անց էին կացնում դէպի ներս, դէպի սիրտը: Նեղին լոյսը կենդրոնացաւ մօր և աղջկայ դէմքերի վերայ. նա, այդ լոյսը, երբեք, թրթռում էր և մի և նոյն ժամանակ երբեք, թրթռում էին առաստաղի վերայ ընկած երկու ահագին սոււերները:

Նւ մարդկային դէմքերը, որոնք մի բուպէական, աներեւակայելի

կարճ, թուուցիկ երջանկութիւնից էլ զւարթանալ գիտեն, ցոյց էին տալիս մի պատկեր, որ շատ հաշտ ու համաձայն էր այս տան բոլոր պարագաների, այս բոլոր հանգամանքների հետ: Երեխան վայելչութեան վերին աստիճանին էր հասել. նորա աչքերը արագ արագ վաղում էին, դէս ու դէն էին շարժւում, երբեմն կանգ էին առնում կրակի մանրիկ բոցերի վերայ, դիտում էին ծխի բարակ զծերը, որ անընդհատ դուրս էին սողում փայտի փշրանքների դեռ ևս խոնաւ միացած կողմերից, յետոյ անցնում էին մօր դէմքի վերայ և մեղմ, մանկական ժպիտը լուռ խօսում էր մանուկ սրտի բաւականութեան մասին: Նորա ծնկան վերայ դրած էր «հայելին», որ նա էր գտել. երբեմն զլուխը խոնարհեցնում էր, մի կողմի վերայ կուացնում և այդպէս կողմնակի սիրահարական հայեացքով կշռում էր իւր գիւտը, տեսնում էր թէ ի՛նչպէս փոքրիկ խարոյկի բոցերը մանր, մի կէտի չափ մանր կերպարանք ստացած, ցոլում, խաղում էին ապակու կտորի վերայ:

Իսկ մա՞յրը: Նա էլ մի առանձին կերպարանք, մի առանձին արտայայտութիւն չ'ունէր: Կրակը լուսաւորում էր նորա զունաթափ դէմքը մի թոյլ լոյսով, նորա հին և անպէտք կարկատաններով փաթաթած գլուխը: Այդ դէմքը, թէև մաշւած էր, փոքրիկ, բաց զուրկ չէր կանացի սեռին յատուկ ընդհանուր զրաւիչ զծերից: Նա ունէր մի զոյգ շատ թուխ աչքեր, որոնց վերայ նոյնքան թուխ յօնքերը զեղեցիկ շրջաններ էին դծել. այդ աչքերի մէջ դեռ ցոլում էր, թէև արդէն շատ թոյլ, երիտասարդութեան կրակը. դառն աղքատութիւնը մինչև այդ օր չէր կարողացել սպանել Աննայի քսան տարիները: Նա տասն և հինգ տարի էր անցկացրել գիւղում, իւր հօրեղբօր տանը: Հօրեղբայրը նորա միակ սրտացաւ բարեկամն ու ազգականն էր այս աշխարհում. բաց ինքն էլ աղջիկներ ունէր, նոցա հօգսի ու ցաւի տակ ճնշւած, տապակւած էր. այդ պատճառով Աննային ամենից շուտ տանից դուրս անել աշխատեցին: Տասն և հինգ տարի լուսացրած աղջիկը մի այդպիսի ընտանիքում կարող էր իւր գոյութեան օգուտը ցոյց տալ իւր աշխատանքի պտուղներով: Եւ նա խկապէս բոլորովին ծանր բեռ չէր հօրեղբօր համար. նա միշտ աշխատում էր, միշտ հասկանում էր իւր ճակատագիրը: Նա շատ մօտիկ չէր գիւղի կանացի հասարակութեան, որով-

հետև միշտ իւր բանին ու գործին էր: Եւ հինգ տարի էր ահա, որ նա քաղաքացի կին էր: Փոխելով իւր շրջանը, ընկնելով ուրիշ հանգամանքների մէջ, Աննան երկար ժամանակ չէր կարողանում որոշ հասկացողութիւններ կազմել: Առաջին անգամ, երբ նա իւր մարդու հետ զիւզն էր գնում, իւր հօրեղբօր տունը, նորա հետաքրքրութեանը չափ չը կար: Նա տեսնում էր մի անծանօթ բան և իսկոյն, երեսայի նման, հարց ու փորձ էր սկսում. ապա ի՞նչ է, հը՞՞: Մարութի համար մեծ աշխատանք էր հասկացնել նորան թէ ինչե՛ր են քաղաքի քանդած պարիսպների վերայ տեղ տեղ երևացող աշտարակները, որոնք մի ժամանակ պատերազմական մարտիկներ են եղել: Աննան չէր կարողանում հասկանալ թէ այդ ի՞նչ կռիւներ են եղել, չէր կարողանում հաւատալ, որ մարդիկ կը գնան, կը հաւաքեն այն սրածայր, կոլոր ու ցցւած տների մէջ և կը կռեն... Քաղաքի դռների մօտ մի թուրք ծախում էր բատրի՛ջան: Աննան զարմացած նայեց, նայեց և ասլա դառնալով դէպի Մարութը՝ հարցրեց. «ինչո՞ւ են այս վարունգները ներկել»:

Եւ չորս տարի շարունակ Մարութը նորա համար մի ամբողջ աշխարհ էր. Մարութը ծածկում էր նրանից ամեն ինչ իւր հասկացողութիւններով, իւր ամեն ինչ իմանալով: Նրանց տունը, ինչպէս տեսանք, քաղաքի ծայրումն էր. այդ թաղն էլ մի տեսակ քաղաքացին զիւղ էր, ուր զիւղի և քաղաքի սովորութիւնները խառնուած էին անորոշ: Հէնց մի պատճառն էլ այդ էր, որ այժմ էլ Աննան դեռ պահել էր զեղջիւհու հու թարմութիւնը. մի թարմութիւն, որ քնքշութիւն չի նշանակում, այլ աւելի այրական ժրութիւն, անխռով հանգստութիւն, անհոգութիւն:

Ի՞նչ տեսակ զեղեցկութիւն է հնարաւոր աղքատի ցնցոտիների մէջ, երբ այդ ցնցոտիներն իրանք մի այլանդակ տղեղութիւն են մարդկանց աչքում: Ցնցոտիները իրանց յարմար էլ կեանք են պահանջում, և զեղեցիկ զէմքը նիհարանում է, ներս ընկնում, նորա գրաւիչ դժերը ծածկւում են մի տեսակ փոշու տակ, որ կարծես ինքն անհոգութիւնն է, անանկութեան կեղտն է մարմնացած: Այդպէս էր և Աննայի զէմքը: Նա նստած էր իւր աղջկայ դիմաց, նստում էր նորան և այդ հայեացքը, որ երբեմն նորա սրտի արտա-

յայտութիւնն էր, ունէր շատ հասարակ, շատ անմեղ միտք, այնքան հասարակ, որ բացատրել անգամ չ'արժէ:

Նա հանեց հացի կտորը, որ իւր հետ էր բերել և մինչև այդ ժամանակ պահում էր իւր զլխաշորի տակ, տեց Սառային, որը իսկոյն խլեց, ծիծաղեց և ծիծաղելով սկսեց ուտել: Իսկ մայրը մի կտոր միացն կտրեց հացի ծայրից և դրեց իւր բերանը:

—Այս ո՞րտեղից բերիր, նանի՛կ, հարցրեց աղջիկը քաղցրութեամբ ծամծամելով:

—Բարսեղը տեց՝ ճանապարհին ինձ պատահելով:

—Բարսե՞ղը... Բարսեղը շատ հաց ունի, նորա քրսակը միշտ հացով լիքն է լինում... Նա՛տ, այսքան, երկու ձեռքիս չափ:

—Ունի, հա՛, հաւաքում է: Խեղճ մարդ է. խեղճն ինքն ասաց՝ տա՛ր այդ հացը Սառային տուր:

Սառան աւելի ուրախացաւ, ծնօտը կրծքին սեղմեց, թշերը լայն յետ տարաւ. նա հպարտացաւ, որ իւր համար ուրիշները բան են ուղարկում: Մայրը ժպտաց, տեսնելով նորա այդ կերպարանքը, ինքն էլ ուրախացաւ և ձեռքով հանդարտ խփեց նորա մազերին:

—Վե՛ր, վե՛ր կաց, կրակը պրծաւ, հրամայեց նա:

Կրակը իսկ որ շուտ վերջացաւ. վերջին կայծերը շտապով յետ ու յետ էին քաշւում, շտապով մոխրի տակն էին մտնում:

—Սեւանա՛յ, մոխրի՛ աչդպիտի կրակը, որ մեզ պիտի տաքացնէ, շարունակեց Աննան դառնութեամբ լցւած. —էլի սառած ենք, փայտացած. ուտերս կոտրատւում են, ա՛խ Աստուած...:

Կրակի այդ կարճ պաշտօնը, այդ կարճ կեանքը զայրացրել էր նորան:

—Վե՛ր կաց, պառկենք, հողից ականջ դնենք:

Եւ նա վեր կացաւ, սկսեց անկողինը փռել:

Սառան խոնարհւեց կրակի վերայ, մատով մոխիրը յետ ու առաջ տարաւ և յուսահատ կրկնեց մօր խօսքը.

—Պրծա՛ւ:

Բաց մայրն արդէն մոռացել էր իւր զայրոյթը:

—Պրծա՛ւ, պրծա՛ւ, ասաց համարեա երգելով և միւսնոյն ժամանակ տափակ բարձերը զրստելով:

—Կրակը, կրակը պրծա՛ւ... ե՛կ պառկենք, Սառա՛, ականջ դնենք, տեսնենք հողն ի՛նչ է ասում. պառկենք, հա՛մ:

—Ականջ դնենք, հա՛, մա՛յր: Ես հացս անկողնում էլ կ՛ուտեմ, կը վերջացնեմ:

—Բաւական է, որքան կերար, մնացածն էլ պահիր, որ առաւօտն ուտես: Ախր առաւօտը վեր պիտի՛ կենաս թէ չէ՝ հաց պիտի կանչես:

Սառան ուտերը վեր քաշեց, անհամաձայն էր, մի երկու անգամ էլ հացը կծեց: Իսկ մայրը բերեց աւելը, նորա ծայրի չոփերից երկուսը կոտրեց, որ տարածամ վնաս չը գայ այդ տան վերայ, սրբեց կրակի շորս կողմը, իւր մեծ մեծ կօշիկները թափ տւեց, մի քանի անգամ գետնին խփելով նրանցից կպած սառած ցեխը թափեց, այդ ցեխն էլ սրբեց, ապա զրստեց երկու հին, կիսամաշ և ահագին տրեխները, որ Սառայի ոտնամաններն էին: Նա կարգի էր բերում իւր սուներ:

—Անտէ՛ր մնան տրեխներդ, Սառա՛, ասաց նա կես հանաքով և էլի ծիծաղեցրեց ոտնամանների տիրոջը: Նա վազեց եկաւ, ոտնամանները ձեռքն առաւ, տարաւ զրեց անկիւնը, զրստեց: Ապա բերեց հացի մնացած կտորը, ուեց մօրը:

—Պահիր, նանի՛կ, էզուց առաւօտ ինձ կը տաս, հա՛մ:

—Լա՛ւ, լա՛ւ. ասած է՛ իրիկունը կերածը կորած է: Գու իմ խելօք աղջիկն ես, դու շատ խելօք ես, հա՛մ:

—Հա՛, պատասխանեց Սառան գրականապէս:

Անկողինը պատրաստուած էր. Սառան շորերը հանեց՝ մտաւ:

—Յո՛ւրա է, գոչեց փալանների տակից:

Մայրը ինչ որ ձարեց, թափեց վերմակի վերայ և ինքն էլ մտաւ անկողինը:

—Մօտիկ ե՛կ, մօտ, սրտիցս կպի՛ր, քեզ մատաղ: Այդպէս հա՛, այդպէս կը տաքանանք:

Երեխան մօր սրտից կպաւ. շուտով երկուսի դողդողոցը վերջացաւ. նրանք տաքանում էին:

—Սկանա՛ն այսպիսի օրերը, խօսեց մայրը. —գնա՛ն, էլ յետ չը գան:

Եւ նա Սառայի գլուխը գրկած, սկսեց քթի տակ մի ինչ որ

բան մրմուռալ: Նորա բերանը փակ էր, խօսք չէր լսում: լսելի էր միայն ծանր, դանդաղ եղանակի ձայնը: Վիշտ էր արտաշայտում այդ եղանակը, կարծես մռայլ ու մութ գիշերն էր այդպէս երգում թանձր, այժմ սևացած, բայց էլի սառած, խոնաւ մառախուղի միջից, երգում էր մենակութեան, դատարկութեան և սառած, մեռած կեանքի երգը. երգում էր և էլ աւելի ծանրանում, էլ աւելի պինդ կպչում երկրին, կաշկանդում, ճնշում:

Տխուր էր այդ ոնդային թանձր եղանակը, մեւամաղձոտ էր, բայց արտասուելու աստիճանին չէր հասնում: Երեսան լսում էր լուռ և երբ եղանակը ընդհատում էր մի թեթեւ հառաչանքով, նա նոյնպիսի տխուր եղանակով պահանջում էր, որ մայրը շարունակէ: Սա շարունակում էր իւր մատները հանդարտ շարժելով երեխայի խոճճած մազերի մէջ, քորում էր այդ փոքրիկ գլուխը: Այդ գործողութիւնը աւելի և աւելի թմրացնում էր երեխային, մի շատ քաղցր դրութեան մէջ փակել էր տալիս նորա աչքերը: Եւ ահա նա շուտով անշարժացաւ, քնի զիրկն ընկաւ՝ այդ եղանակի մռուոցները իւր ականջները լցրած: Մռուոցը դեռ շարունակում էր, մօր աչքերը դեռ ձգձպում էին: Նա մտածում էր և այդպէս եղանակում. բայց այդ մտածմունքները յուսահատական չէին. այդ եղանակը շատ սովորական էր նորա համար:

— Լաչն օրի՛դ մատաղ, Աստուած. նեղ օրին լաչն օր էլ կը լինի: Նեղ օրի կեանքը կարճ...

Այդպիսի խօսքերով վերջացրեց նա ամեն ինչ և ինքն էլ սկսեց թուլանալ, ցածրանալ, ընկղմել մի անտակ մոռացութեան մէջ...

Ե.

Նեղ օր էր և միւս օրը: Դարձեալ ցուրտ, ձմեռայ օր: Բայց այլ ևս չը կար խոնաւ, ծանր մառախուղը: Ամպամած երկինքն էր տխուր տրտում նայում վերեւից երեկւայ մառախուղի թողած սառցային զարդարանքներին, որոնք դեռ ևս կպած էին ծառերի ճիւղերին և փշերի ծայրերին և այնքան թոյլ, անկենդան էր այդ երկինքը, որ փոքրիկ, բարակ ձիւնեղէն ծոպերը հպարտութեամբ կախ էին ընկած և չէին հալում և չէին թափում: Երկնքի հարաւ-

արևմտեան ծայրում կապտագոյն և դորշ ամպերի մի քանի ծալքերի մէջ ցոլում էր արեգակի՝ լոյսը։ Այդ լոյսը մի կերպ ազատւելով ձմեռուայ անշարժ ու ծանր ամպերի բարակ պարսպից, համարեա մեռած, համարեա զոյնից ընկած հասնում էր երկրին, տարածւում քաղաքի մի քանի մասերի վերայ. իսկ արեգակը երբեմն երբեմն ցոյց էր տալիս իւր բոլորովին սկլոր և ճաղատ դէմքը։ Եւ այդ դէմքին աչք անկած՝ նստած էր իրանց շէմքի մօտ փոքրիկ Սառան։ Նորա մայրը տանը չէր, նա նստել էր տունը պահելու և այդպէս «տաքանում էր» արեգակի առաջ։ Նորա մօտ ընկած էին ոտնամանները, երկու մեծ և բոլորովին տափակած տրեխները, որոնց Սառան նոր էր քերել իւր «հայելու» կտորով և այժմ չորացնում էր. նորա բոբիկ ոտները սառել էին, կապտել, նա իզուր էր իւր կապպի պատառոտած փէշերը ձգում, ոտների վերայ դցում. ծընկները արգելում էին ոտները ծածկել, փէշերը խիստ կարճ էին։ Բայց հագնել ոտնամանները չէր ուզում, այնպէս լաւ էին նրանք երեւում, այնպէս մաքուր, որ մտիկ տալ էր հարկաւոր։

Բայց նեղ օրին լացն օր էլ է լինում։

Իրիկուայ դէմ Աննայի հետ եկաւ մի մարդ, որին ճանաչում էր Սառան։ Այդ մարդը կաղում եր երկու ոտների վերայ, շրջում էր երկու մահակների օգնութեամբ, որոնցից մէկը մեծ էր, երկար, միւսը կարճիկ. մեծը նեցուկ էր տալիս ձախ կռնատակին, կարճը լիկը բռնած էր աջ ձեռքում։ Նորա մէջքը փոս ընկած էր, տաշտ դառած, իսկ կուրծքը ուռած, դուրս ցցւած և այդ կրծքի վերայ երևում էին չորս հատ դեղին, պղնձի կոճակներ, որոնք զինւորի վերարկուից էին պոկած և կպցրած արխալու դի պէս կարկատաններով և անթիւ կարերով հաստացրած մի ինչ որ շորի։ Դէմքը քիչ ծուռ էր, աչքերը խոր ընկած։ Մազերը անկարգ, անկանոն բռնել էին նորա ամբողջ ծնօտները և վերին շրթունքը։ Մեծ, կարծես բահով ճղած բերանը միշտ ցոյց էր տալիս մի քանի հատ մեծ մեծ ու դեղին առամները։ Չը գիտեմ ո՞վ և ի՞նչպէս էր չարմարացրել նորա մարմնին զինւորական հին վերարկուն, որ կախ ընկած էր նորա ուսերից և շարունակ օրօրւում էր, երբ այդ մարդը երկու կաղ ոտների և երկու մահակների օգնութեամբ առաջ էր գնում։ Սովորական ձևով ու չափով կարած շորը նորան շատ անյարմար էր, չէր դալիս.

միակ բացառութիւնը մեծ բրթոտ փափախն էր, որ շատ չարմար նստել էր նորա գլխին, բռնել ականջներն ու ճակատի մեծ մասը:

Այդ մարդն էր Բարսեղը, որի աջ թևից կախ ընկած էր մի բաւական նոր, բայց կոշտ քսակ:

Բարսեղը մուրացկան էր: Նա ամառը մի քանի զիշեր օթեան էր գտել Աննայի տնակի շէմքի մօտ, ծանօթ էր այդ տանը: Այժմ՝ նա առաջարկել էր Աննային թոյլ տալ, որ զիշերները այդ տանը մնայ և Աննան ընդունել էր այդ առաջարկութիւնը:

Վատ բան չէր:

Բարսեղի մեծ գրպանը լցւած էր ածուխով, որ նա հաւաքել էր փողոցներում, բռններից ընկած ժամանակ. դուրս տեց այդ ածուխը, մի փոքրիկ կոյտ շինեց: Մոցից հանեց մի կտոր ճարպի մոմ, որ չը գիտեմ թէ ինչից էր այնքան սևացել: Քսակը զրեց տան վերին անկիւնը:

Կրակ արին, մոմը վառեցին, երեք հոգի նստեցին:

Մեղմ ու խաղաղ էր երեկոն: Աննան խոնարհւած կրակի վերայ, ճրագի լուսով կարկատում էր Սառայի գուլբաները, որ հէնց այդ իրիկունն էր գտել մեծ քարի տակ. նորա դէմքը կարմրել էր, տաքացել. նա յետ էր գցել իւր ճակատի վերայից փալսանների սովորական կտորները և այժմ ճակատի վերի ծայրին երևում էր նորա թուխ մազերի մի փոքրիկ հիւսը, որ մի զեղեցիկ և փոքրիկ կիսաշրջան էր կազմում և էլի մոնում լաչակների տակ: Բարսեղը մի ոտը ձգել էր կրակի մօտով, աջ արմունկի վերայ թիկն էր տւել և նայում էր կրակին, երբեմն և Սառային, որ ծալսպատիկ նստած էր նորա կողքին և զրել էր ծնկան վերայ մի քանի կտոր չոր լաւաշ և ուտում էր խաղ անելով, գլուխը ծոմնելով, հացի կտորի տակին ու գլխին նայելով, ինքն ու ինքը ժպտալով:

Եւ լուռ չէին այդ տնակի բնակիչները: Խօսում էին աշխարհի բաների մասին, պատմում էին քաղաքի նոր ու հին լուրերից, անցքերից:

Մի աղքատ մուրացկանից աւել էլ ո՞վ շատ նորութիւն կ'իմանայ: Եւ Բարսեղը հասարակ մուրացկաններից չէր, այսպէս ասած, անշարժներից, որոնք ամբողջ օրով մի փողոցի կողմն են զբաւում և այդտեղ նստած ձեռք են պարզում անցնողին: Բարսեղը պտտում

էր ամբողջ քաղաքը. չը կար տուն, որի բակը մտած չը լինէր նա և պէտք էր աւելացնել—որի բնակիչները չը ճանաչէին «կաղ Փարսուն», ինչպէս անուանում էին նորան: «Փարսի» անունը շատ ցած, ուսմական-հեգնական անուն էր և Բարսեղը անտարբեր լսում էր միայն այն մարդկանց բերանից, որոնք իւր ծանօթները չէին. ծանօթները, այնպիսիները, որոնք մի քանի անգամ «բարի լոյս» էին ասել նորան, գիտէին որ «Փարսի» ասելիս նա շատ դժւարութեամբ է խօսքի պատասխանը տալիս, ուստի Բարսեղ էին անուանում: Իւրաքանչիւր օրւոյ համար նա քաղաքի մի թաղն ունէր նշանակած. շրջում էր այդ թաղը, ինչպէս իւր կազմւածքն էր ներում, չէր շտապում: Եւ միշտ վարձատրում էր, միշտ նորա քսակը լիքն էր լինում: Նա գիտէր օրհնանքների մի երկար շարք. լաւ լաւ խօսքեր էին, որոնցով նա առաջ օրհնում էր աշխարհը, յետոյ բոլոր ննջեցեալներին, յետոյ զալիս էր տանտիրոջը օրհնում, այդ տանից պակասածներին օրհնում, կենդանիների պայծառ ու կարմիր արեւը օրհնում: Ամեն մի բակում սկզբից մինչև վերջ պիտի ասէր այդ բոլոր օրհնանքները, կ'ասէր, մի բառ անգամ չէր բաց թողիլ. կասէր ծանր ու բարձր ձայնով, երգի պէս և ամեն մի բառ կ'արտասանէր փափուկ, լիաբերան: Այդ պատահէր երբեմն, հացը շուտ կը բերէին. նա չէր ընդունիլ, մինչև չէր վերջացնիլ իւր մաղթանքը: Այդ էր պատճառը, որ բոլոր կանայք ու երեխաներ, մանաւանդ պառաւ կանայք նորան սիրում էին. իսկ յայտնի է, որ սրանք են աղքատի, տնանկի խնամատարները:

Ո՞վ էր Բարսեղը:—Շատերին չէր յայտնի:

Ամենքը, սակայն, գիտէին, որ նա մի հեռաւոր գաւառից է եկել: Եւ գիտէին զլիաւորապէս այն պատճառով, որ Բարսեղը մի առանձին լեզու ունէր: Իւր գաւառի բառերը, հնչիւնները, խօսելու ձևը նա պինդ էր պահում, անխառն, և միշտ էր գործ ածում. քաղաքը, ուր նա ապրում էր արդէն մի քանի տարիներ, ոչինչ ազդեցութիւն չէր արել նորա այդ լեզուի վերայ: Բայց աւելի մօտիկներին, որոնց թուում և Աննային, յայտնի էր որ Բարսեղը այդ հեռաւոր գաւառի մի գիւղում ունի հայրական տուն: Հայրն ու մայրը վաղուց էին մեռած, մնում էին նորա երեք եղբայրները իրանց կնիկների ու որդիների հետ: Բարսեղը չէր կարողացել ապրել նոցա

հետ. և դորա պատճառները մի քանի էին: Նորա եղբայրներն էլ ունևոր չէին, ապրում էին, ինչպէս ասում են, քարին աքացի տալով: Ինքը, Բարսեղը, ի հարկէ, զործելու, նոցա հետ աշխատելու կարողութիւնը չ'ունէր. բնութիւնը ստեղծել էր նորան այդպէս հաշմանդամ, այդպէս խեղճ: Եւ եղբայրները չէին ընդունում, որ նա տանը նստէ և միայն ուտել իմանայ. ուստի մի օր յայտնել էին նորան, որ իրանք թէև եղբայրներ են, ճշմարիտ է, բայց անդամաոյժ պահող չեն, որ առանց այդ էլ՝ նրանց բեռը շատ ծանր է, այնքան որդիներ ունեն: Ասենք որ այս պատճառաբանութիւնները իրանք, տղամարդիկ, չէին հնարել. նրանց գլուխն էին փշել, նրբանց սովորացրել էին կնիկները, որոնք Բարսեղին ատելու շատ պատճառներ ունէին: Բարսեղն էր, որ միշտ տեսնում էր այդ կնիկներին, հսկում էր նրանց. միշտ նստած, անզօր ընկած քննում էր նրանց արածները և երեսներին էր բռնում նրանց պակասութիւնները: Նա ունէր խիստ, կծու լեզու. եթէ մարմինը պակասութիւններ շատ ունէր, լեզուն շատ առաւելութիւններով էր օժտւած. և ամենամեծ առաւելութիւնն այն էր, որ քիչ խօսելով չէր բաւականանում. տան հարսները, երեխաները վախում էին նրանից:

Ինչպէս որ լինի, խօսքը խօսք էր. Բարսեղը բարկացած ոչ ոքին մի խօսք էլ չ'ասեց և նոյն օրը զուրս եկաւ. թողեց հայրական տունը, ամիսներով զիւղից զիւղ շրջելով գնաց քաղաք: Եսկ եղբայրները նրանից յետոյ միասին մնալ չը կարողացան, իրանց կնիկներին աւանջ դնելով՝ բաժանուեցան, հայրական տունը կտոր կտոր արին, առանձին առանձին ծուխ կազմեցին:— Եւ միմեանց թշնամի, անհաշտ վրէժխնդիր ծուխեր: Բարսեղը լսել էր, ինքն էլ զիտէր և ասում էր իւր ծանօթներին, որ այդ բոլորի պատճառը կնիկներն էին. միմեանց արտերն էին կրակ տալիս, մէկը միւսի եզան ոտն էր կտորում, միւսը իւր էջը քշում էր եղբօր բանջարանոցը գցում, աւերում: Այդպէս շարունակւում էր թշնամութիւնը, այդպէս միմեանց միսն էին ուտում:

Երկու թէ երեք տարի առաջ Բարսեղի եղբայրներից մէկը քաղաք էր եկել յատկապէս Բարսեղին տեսնելու և նորա եղածն ու չ'եղածը իմանալու: Նա այնպէս էր կարծել, թէ քաղաքում Բարսեղը անպատճառ փող կը լինի հաւաքած. բայց Բարսեղը չէր էլ

ընդունել նորան, չէր էլ խօսեցել հետը. նա էլ այդ եղբայրներից մէկն էր, վրէժ պահել զիտէր: Երբ եղբայրը սկսել էր զանգատուել իւր բաղդից, պատմել թէ որքան աղքատ է, շլինքը պարտքի տակ մնացած, աղջիկներով շրջապատած, այդ ժամանակ միայն Բարսեղն ասել էր նորան. «Բնացէ՛ք, ձեր կնիկների խօսքը լսեցէք». ու երեսը յետ էր դարձրել:

Այժմ նա մոռացել էր թէ եղբայր, ազգական ունի. ապրում էր բոլորովին մենակ, ապրում էր որտեղ ինքն էր ուզում:

—Այսօր Ներքի-Թաղումն էի, ասաց Բարսեղը իւր տեղը շրտկելով և բեղերը ոլորելով: —Փոքր թաղ է, շուտ ման եկաց, պրծաց: Յետ էի դառնում, մի մեծ կռիւ տեսայ: Ի՞նչ կռիւ ասեմ. հօ միմեանց չէին ծեծում, չէին փշրում, այլ այնպէս բղաւում էին, հայհոյում: Կուրի զուլքը Վանին էր. հօ՛, նա որ սկսեց, Աստուած ազատէ, դիտես էլի՛... Պատճառն ի՞նչ էր, հարցրո՛ւ, տե՛ս: Մի զիւղացի մի բեռն ալիւր էր բերել, ծածուկ ծախել էր փութը 80 կոպէկով: Հիմա արի ու տե՛ս, Վանին իմացել է, զխղացուն էլ, առնողին էլ մէջդան է քաշել, ասում է՝ ինչո՛ւ դու ծախել ես ծածուկ, դու էլ ինչո՛ւ առել ես: Պրծում չը կայ նորա ձեռից. աղաչանք, պաղատանք... բան չի դառնում:

—Ասելն ի՞նչ էր, հարցրեց Աննան, հետաքրքրութեամբ նայելով աղքատի զէմքին:

—Ուրեմն օրէնք է... Ի՛րքը որ դնում են, մէկի, երկուսի համար չէ... հասկանում ես. այսինքն՝ ողջ մէկ է, ողջ աշխարհի համար է: Քաղաքի զէպուտասն կանչել է Վանուն, ձեռքը զրել է նորա կրծքին ու ասել է. տե՛ս, ասում եմ, պրծնում. իրաւունք չը կայ... այսինքն՝ ով ծախում է, թող բերի աշխարաց ծախի դրած դնովը: Ով որ չ'անի՝ դու քօ բանդ իմացիր, ես ինքս պատասխան կը տամ: Այսինքն էժանութիւն լինի, ամեն մարդ էլ առնէ: Հիմա Վանին բռնել էր գողութիւնը, ուզում էր ծախողի, առնողի հոգին հանէ: Ել աղաչանք, պաղատանք չը մնաց. մարդիկ, երեսաներ հաւաքել էին, է՛, մեծ բազմութիւն կար. ամենքն ուզում էին ծախողին ուտեն, ուտեն...

Աննան զարմացած էր. նա դեռ չէր հասկանում թէ ինչո՛ւ այնքան մարդիկ պիտի հաւաքեն մի խեղճ մարդու վերայ. ի՞նչ

կար որ ծախել էր, միւսն էլ առել էր. ի՛նչ զողութիւն է այդ:
— Ուրեմն զօռո՞վ է, հարցրեց նա.— ալիւրատէրը աշխատանքով է ծախել, առնողն էլ, երևի, փող է ունեցել որ առել է. դրանց, այդ փողաւորներին, ի՛նչ ասեմ... մենակ այդ չէ, ինչ որ ուզում են, առնում են: Որ փող չը լինի, չեն էլ առնիլ... էլ ի՛նչ կայ:

Բարսեղը ծիծաղեց:

— Ձե՞ս հասկանում թէ ինչու համար... Բա՛... ասաց ծիծաղելով:

Երբ նա ծիծաղում էր, բերանը երկար և լայն բաց էր լինում, քիթը տափականում, երևում էին նորա բոլոր մեծ մեծ ատամները. իսկ փոքրիկ աչքերը բոլորովին կուլ էին զնում, ծածկւում այս ու այն կողմից հաւաքւած մսի ծալքերի տակ, կէտերի չափ դառնում:

Նորան այդպէս տեսաւ Սառան և չը դիմացաւ, անզուսպ ծիծաղը յանկարծակի պայթեց, բարձրաձայն քրքիջը յորդահոս ջրի պէս դուրս թափւեց. նորան այլ ևս պահել չէր կարելի: Նորա դէմքը կարմրեց, աչքերը մեծացան և ծիծաղն՝ այնքան սաստիկ էր, որ նա չը կարողացաւ նստած մնալ ու որպէս՞ մի կոլոր կճուճ՝ կողքի վերայ ընկաւ: Երեսայի այդ անկեղծ ուրախութիւնը Բարսեղին շարժեց և նա էլ շարունակեց իւր թոյլ և անձայն ծիծաղը:

Բայց Աննայի վերայ ուրիշ տեսակ ազդեց այդ ծիծաղը. նա չարացաւ, մի ակնթարթում բորբոքւեց, նա շատ շուտ հասկացաւ, որ ծիծաղում են իւր անհասկացողութեան վերայ: Մանաւանդ շատ դիպաւ փոքրիկ «լակոտի» ծիծաղը. այն մէկը, մեծը, դեռ իրաւունք ունէր, իսկ սա՞ ինչ է... Եւ նա զայրացած մի քանի անգամ խիեց Սառայի գլխին: Սա աւելի ևս սաստկացրեց ծիծաղը. բայց այս անհամ հարւածները հանաքի համար չէին թափւում թաղիքի պէս խճճւած նորա մազերի վերայ: Եւ ծիծաղը նոյն տեսակ սաստիկ լաց դառաւ:

— Ձորանա՛ս դու, խորովւ՛ս... ասաց մայրը զայրացած, համարեա շրթունքները կճոտելով.— հէնց որ մի խօսք ես հանում բերանից, իսկոյն մէջ է ընկնում, ո՛չ մեծանաս զո՛ւ, ո՛չ... մեծանաս, ով գիտէ ի՛նչ կը բերես գլուխս:

Բարսեղը աղջկան քաշեց, իւր մօտ տարաւ, զրկեց նորա գլուխը

և փաղաքշական խօսքերով վերջ դրեց նորա լացին: Սառան բոլորովին կտրեց իւր ձայնը, երբ մուրացկանը գրպանից հանեց և տւեց նորան կաղամբի կոթի միջուկը, որ մի քանի տեղից կրծոտած էր:

—Աւագենց տանը տւին, մի քանի հատ կոտորում էին, այդ էլ ինձ տւին, հարկաւոր համարեց բացատրել աղքատը:

Բայց Աննան չը նայեց անդամ, չը տեսաւ թէ այդ ի՞նչ էր, որ միանգամից կտրեց Վլակոսիօ ձայնը: Սառան բոլորովին հանգստացած՝ գլուխը դրած էր աղքատի ծնկան ու այդտեղից դէպի վեր էր նայում դէպի աղքատի մազոտ դէմքը, տեսնում էր երկու հատ աչքերը, որոնք ղեռ զարմանք էին արնայայտում և անդադար ճրպուցում էին ծանր, կարմիր կոպերի տակ: Բարսեղը իսկ որ շարունակել էր ուզում ընդհատած խօսակցութիւնը: Աննան ձեռքի գործը վերջացնելով դէն դրեց և տեսնելով իւր աղջկան, հրամայեց որ վեր կենայ, կորչէ:

—Կը նեղացնէ քեզ, ասաց նա Բարսեղին մի տեսակ խուլ, կարծես ակամայ ձայնով:

—Նեղացնէ՞: Ձէ՛, Աննա՛, ուրիշ բան ասա՛: Ասա՛ թէ ուրիշ ես, ուրիշի ծնկան գլուխ դնել չի կարելի...

Եւ Բարսեղը թեթև կերպով հառաչեց: Մի շատ կարճ ժամանակ Աննան չը կարողացաւ պատասխանել այդ խօսքերին. բայց ջանկարծ նորա մէջ մի ինչ որ բան զարթեցաւ և նա շտապեց հերքել այդ մտքը: Այդ պատճառով նա ընդունեց իւր դէմքի վերայ մի շատ քաղցր ժպիտ և իւր թուխ աչքերը մի տեսակ քաղցր վիրաւորանք յայտնեցին:

—Ի՞նչ խօսք է այդ, Բարսե՛ղ: Դու էլ մեզանից մէկն ես, իմ մտքովն էլ չի անցել այդպիսի բան, պարտական մնամ առաջի Աստուծու: Այդ մահաւան բաժինը, հո՛ղը կոխեմ դորան, չը թողեց որ երկու խօսք խօսենք:

—Հա՛, այն էի ասում է՛, դու չէիր հասկանում, շարունակեց Բարսեղը իւր տեղը դրստելով: Ախր դիրք է, մէկի համար չէ, երկուսի համար չէ, բոլոր աշխարհի համար է: Օրինակ, դէպուտատը որ ասում է, ախր իւր օգտի համար չէ ասում, ախր նա խելքը գլխին մարդ է: Ուրեմն ասում է. լա՛ւ, փողաւորը մի մանէթ էլ տւեց, աւել էլ տւեց՝ ախր առաւ. բայց ախր չունևոր էլ կաց,

աղքատ մարդ էլ կայ և աղքատը ունեւորից շատ շատ է՝ նա՞ ինչ անէ: Այսօր ես քսակը կռնատակս եմ առնում, գնում եմ ալիւր բերողի մօտ: Ասում եմ թէ՛ մի փութ ալիւր եմ ուզում: Ինձ իսկի մտիկ էլ չի անում, ասում է՝ բոլորը մի տեղից կը ծախեմ մէկի վերայ, փողերը կը դարսեմ, կը դնեմ գրպանս. թող մեռնի՛ աղքատը, իմ ի՞նչս է կորչում:—Հարուստը, տեսնո՞ւմ ես...

—Օ՛, բացականչեց Աննան, հասկանալով վերջապէս թէ ինչ էր զէպուտատի խելքը:—Աստուած այդ հարուստներին քոս տայ, եղունդ չը տայ որ քորեն: Դէ ի՞նչ ասեմ, քե՛զ մատաղ, մի քանի անգամ առած չեմ, տեսած չեմ: Կրա՛կ թափւի դրանց վերայ:

—Այդ էլ մի՛ ասիր, Աննա՛: Եթէ՛ որ հարուստ չը լինի, մեր քաղաքն էլ քաղաք չի լինիլ. էլ մենք ինչո՞վ կ'ապրենք: Այսինքն՝ որ հարուստը կայ, քաղաքն էլ պայծառ կը լինի: Իսկի չե՛ս տեսնում այն ապրուստը, նստիլ, վեր կենալը: Վա՛հ, այսօր Մարկոսաղան մի մուշտակ էր հագել, էլ ի՞նչ ասեմ. կասես թէ իւղի միջից էր հանած: Խօսում էին, լսեցի, 700 մանէթով է առել:

—Եօ՛թ հարիւր. այդ ո՞ր բաղդաւորն է. այդքան փողն էլ կը համրւի, ո՛ւ...

—Բա՛ս... մենակ մուշտակն է այդքան: Ուտիլ, խմիլը տե՛ս... Երեք օր առաջ նրանց տանը մեծ ճաշ կար: Է՛, որ ասեմ, կը մնաս չորացած: Ի՞նչ մարդիկ կային, բոլորն էլ աղաներ. ինչե՛ր, ինչե՛ր ասես՝ չը կային: Նրանց ծառան—անունը Միկիչ է—ինձ լաւ ճանաչում է, այնպիսի բաներ էր պատմում, որ մնացել էի չորացած: Էլ քանի՛ քանի՛ տեսակ կերակուրներ, անունն էլ չես իմանալ որ ասեմ, Քէհրանից բերած չոր մրգեղէն... Զէ՛, Մարկոսաղայի անունը հեռո՛ւ հեռո՛ւ երկիրներ է գնացել: Դրանք քաղաքի օգուտն են...

—Դէ՛, ի հարկէ որ...

—Գլուխդ մեռնի՛, Մո՛վսէս. կոյր Մովսէսն եմ ասում, այն որ ինձ հետ է նստում: Ասում եմ այսպէս է, ասում է չէ, Աստուծոց հրաման պիտի լինէր, որ մենք ողորմութիւն չը հաւաքենք, մենք էլ ապրենք, ո՞վ գիտէ, ապրենք ինչ կերպ որ լինի: Շատ իւր ասածին մարդ է Մովսէսը: Ասում եմ. եղբա՛յր, այդպէս ո՞նց կը լինի, ամեն մարդ իւր փեշակին է, սա էլ մեր փեշակն է... Է՛, իսկի կարողանո՞ւմ եմ հասկացնել: Խելք չ'ունի մեռածը. կենում է, կենում,

ասում է՝ մրտում եմ, Աստուած, ինձ էլ հարստացրու: Հա՛, ասում եմ՝ ծիտը երազում կորեկ կը տեսնէ: Ասում է՝ զու հէնց այդպէս էլ պիտի մեռնես: Է՛հ, ի՞նչպէս ասես, ի՞նչ հասկացնես. մարդ կայ որ խելք ունի, մարդ կայ որ խելքը հացի ու պանրի հետ կերել է, պրծել: Ինձ մի քանի անգամ հայհոյել է:

—Մի բան հասկանում է, որ խօսում է, հարցրեց Աննան:

—Է՛... Եւ Բարսեղը հեզնաբար քիթը վեր քաշեց, ձեռքը թափ տւեց:

—Դէ՛ ում հետ խօսում է, թող խօսի, Բարսեղի հետ հօ չի՛ կարող գալ, աշխարհս լաւ է ճանաչում Բարսեղին....

Բարսեղի պատասխանը եղաւ լայն ժպիտը, որ դրոշմեց նորա շրթունքների վերայ և անշարժացաւ: Բարսեղը մի քանի անգամ չորս կողմից նայեց, ձեռքը էլի տարաւ դէպի բեղերը: Գուցէ նա ուրիշ բան էր մտածում, բայց տեսնողը կ'ասէր, որ նա պատրաստ է բերանից հանել այս խօսքը. «դէ՛, մի ի՛նձ նայեցէք»:

Նա լուեց: Սառան քնել էր, գլուխը նորա ծնկան վերայ դրած, և մի ձեռքում կաղամբի կոթի մի փոքրիկ կտորը պինդ բռնած:

2.

Այսպէս ամեն իրիկուն: Աննայի տունը, ինչպէս ինքը Աննան էր ասում, առաջւայ համն էր ստանում: Մի ծանր տարին աւելի և աւելի մօռացւում էր: Տունն էր մտել խօսքը դրսի աշխարհի մասին. մարդկանց չարն ու բարին քննւում էր, այլ ևս մենակ չէին որբւայրին և փոքրիկ որբը:

Բարսեղը ամեն օր, զարմանալի ճշգութեամբ, ճրագները վառելու ժամանակ տուն էր հասնում: Նորան արդէն սպասում էին այդ տանը, նորա ճանապարհին էին նայում, թէ՛ և այդ մարդը ոչ մի տեղ ճանապարհ, ուրիշի համար նշանակութիւն ունեցող ճանապարհ չունէր: Գալիս էր, մոնում, ձեռնափայտերը հանդարտ չրկացնելով պատի սակն էր դնում, լիաբերան սփարի իրիկունն էր ասում և նոյնպէս լիաբերան պատասխան ստանում, նստում էր:

Սառան իսկոյն աչք էր տնկում նորա վերայ. նստած տեղն անշարժացած, Սառան զիտում էր նորա ձեռքերը, ի՞նչպէս էր նա

շարժում, ո՞ւր էր տանում, ի՞նչ էր անում: Երեխայի սիրտը լցւում էր անհամբեր սպասողութեամբ, մի տեսակ խաղաղ անհանգստութեամբ և սկսում էր թռթռալ այն ժամանակ, երբ աղքատը իւր ձեռքը պատահաբար դէպի գրպանն էր տանում: Այդ հայեացքը, այդ ուշադրութիւնը հասկացել էր Բարսեղը, մինչև անգամ զնահատել: Նա ինքն էլ նայում էր, ինքն էլ դիտում էր. դիտում էր այդ փոքրիկ, միշտ բաց զլուխը, ցիրուցան թափւած, խճճւած մազերը: Այդ բնական գլխարկի տակից երևում էին երեխայի ականջների ներքին ծայրերը, յետոյ հասալիկ, կարմիր թշերը, փոքրիկ բերանը, որի շրթունքները միմեանց պինդ կպչելով, մի փոքրիկ փոս էին կազմում ծնօտի վերայ. մազերի տակից երևում էին երկու վառ աչքեր, որոնք բոլորից տուրս թռչել էին ուզում, որպէս զի լաւ, է՛լ լաւ տեսնեն նորա, այդ աղքատի ցնցոտիները, որպէս զի մի կերպ իմանան թէ ի՞նչ կայ նորա գրպանում:

Բայց նորա գրպանն ի՞նչ կարող է ունենայ:—Մուրացկանի գըրպանը, խոր ու մեծ գրպանը, կեղտոտ, կոպիտ թելերով կապկապած գրպանը, որ իւր մէջ տեղաւորում է այն միայն, ինչ միւս մարդկանց համար աւելորդ է, այնքան անհարկաւոր, որ կարելի է, առանց երկար մտածելու, առանց ցաւելու տալ օտար, զգզւած մարդուն: Ամբողջ օրերով աղքատն ինքն է հարիւրաւոր գրպանների աչք դըրած. բայց և այդպէս, այս աղջիկն ի՞նչպէս նայում, ի՞նչպիսի ակնկալութիւն ունի այդ իսկ գրպանից: Բարսեղը նայում էր աղջկայ այդ քաղցր, հեղ ու անմեղ դէմքին, նայում էր, մի քանի անգամ էլ շարժում էր իւր գրպանը, կարծես զարճանում էր, այդ պատճառով էլ այնքան ծանր կերպով ասում.

—Տե՛ս թէ քեզ համար ինչ եմ բերել...

Սանան այդ սովորական խօսքերին էր սպասում. և հէնց որ լսում էր, իսկոյն քաշւում էր, մօտենում նորան և իւր դէմքի վերայ մի ժպիտ էլ աւելացրած՝ աչքերը աղքատի դէմքին և գըրպանին էր ուղղում փոփոխաբար: Բարսեղը, վերջապէս, մի բան հանում էր, կամ մի ընկոյզի միջուկ, կամ մի կիսատ խնձոր, տալիս էր նորան: Նւ ինքը հպարտ իւր արածով, մի ձեռքը դնում էր նորա մէջքի վերայ և այդ ժամանակ նորա կոշտ և անհրապօր դէմքը աշխատում էր փաղաքշանք, ուրախութիւն, դուրս արտա-

չայտել: Սակայն Սառան այլ ևս չէր տեսնում այդ զէմքը և չէր իմանում ինչ է նա ասում: Խսկոյն ազահոլթեամբ ուտում էր, վերջացնում և այնուհետև բացւում էր նորա փոքրիկ բերանը:

Աննան այլ ևս հացի պակասութիւն չ'ունէր, ամեն իրիկուն Բարսեղի քսակը կտոր-կտոր հացերի մի բազմութիւն էր թողում, որ միւս օրը բաւականանում էր, շատ անգամ դեռ աւել մնում: Ճրագալոյն ու վառելիքն էլ առաջւայ պէս հաղւաղիւտ չէին: Բարսեղը մի տան համար հոգացողութիւն անելն էլ գիտէր: Նա դրսից բերել էր քարեր, մտածել էր, աշխատել և կազմել էր նրանցից մի փոքրիկ օջախ. բերել էր մի լրագրի թերթ, ծածկել էր նրանով լուսամուտը. իւր հին արխալուղը կախ էր արեւ դրան ճակատից, որպէս զի ճեղքովը շատ ցուրտ չը մտնէ: Մնում էր քարէ պահարանը. դա վատ էր թւում Բարսեղին, այնպէս բաց մնացած, ամանները անկարգ դրւած: Եւ նա մի օր մի հարուստ տան պատշգամբին տեսաւ մի հին սպիտակ շորի մեծ կտոր, խնդրեց որ իրան տան շապիկ կարելու համար, բերեց, կախ արեց առաստաղից, քարն ու նորա տակ բացւած խողովը ծածկեց:

Աննան ուրախանում էր այդ բոլորը տեսնելով: Եւ փոխարէնը հատուցանում էր իւր լաւութիւններով, խնամքով, պատրաստում էր, որքան կարելի էր, փափուկ անկողին, որի մէջ Բարսեղը հանգիստ քնում էր. լւանում, կարկատում էր նորա շորերը: Լինում էր այսպիսի ժամանակ. Բարսեղը զալուց և երեկոյեան հացը ուտելուց յետոյ՝ Աննան հանում էր ասեղը, վերցնում էր աղքատի որ և է շորը և նստում էր փոքրիկ ճրագի առաջ, բոլորովին մօտենում էր լոյսին, կարը դնում ծնկան վերայ: Ճրագը պարզ լուսաւորում էր նորա սպիտակ ճակատը և այն փոքրիկ, մի բարակ գծի չափ կրնճիւրը, որ անսիրտ ընկած էր ճակատի երկարութեամբ, թաւ յօնքերի գլխին: Այդ յօնքերը սուեր էին տարածում աչքերի վերայ, որոնց ներքին կոպերը խիտ շարած, երկար և սրածայր թերթերունքների հետ ստէպ ստէպ իրանց շատուկ արագութեամբ դէպի վեր էին շարժւում և էլի իջնում: Մի փոքրիկ սուեր էր արձակում նաև քիթը, որի տակ երևում էին միմեանց կպած գունատ շրթունքները: Այդպիսի ժամանակ Բարսեղը աւելի յետ էր նստում, այնպիսի շրջանում, ուր ճրագը պարզ լուսաւորել չէր կարող. և նայում էր

Աննայի այդ դէմքին, հարկաւոր գործով զբաղւած կնոջ հանգիստ
և անվրդով դէմքին:

Նայում էր թէև ոչ երկար, բայց խոր ուշադրութեամբ: Նա
լուռ էր, մտախոհ: Մտքերը նորան անհանգստացնում էին: Ի՞նչ էր
արդեօք նորա մտածմունքը: Մի անգամից չէր միտքը գոչացել. նա
ինքն ու ինքը եկել, նստել էր աղքատի գլխում: Ամեն ինչ յաջող-
ւում էր այդ փոքրիկ, սկիւր տան մէջ. ամեն ինչ կարգ ունէր, ինչ
գնում ես, սագում է: Երևում է պահասը, երևում է թէ ի՞նչը պի-
տի լինի և ի՞նչպէս պիտի լինի: Կարգը, սարքը այնպէ՛ս լաւ է,
այնպէս հանգստացնում է մարդուն. պահասը այնպէ՛ս սուր ծակում
է, միտք անել է տալիս. և երբ նորա ճարը զանում ես, հեռաց-
նում, որքա՛ն ուրախանում ես: Այս տան մէջ ինչ որ անում ես, ինչ
որ աւելացնում ես, հանգստութիւնը, յարմարութիւնն է աւելա-
նում: Էլ ի՞նչ լաւ բան. տեղը յարմար, տունը լոյս, խօսքն ու զը-
րոյցը այդ փոքրիկ օջախի շորս կողմն առած. կայ մարդ, կայ հաս-
կացող, լսող: Թրն ի բուն փողոցում թէ՛ նստած, թէ՛ ման գալիս,
ոչ ցխի, ոչ ձիւնի նայելով և ոչ անձրևի, մարդը լուռ է, նայում է
ամեն մի դատարկ բանի, մրսում է, տաքանում, լսում է հարիւր ու
մի կոշտ խօսք, կամ հայհոյանք, կամ ծաղր, կամ թէ որ և է
կծու հանաք: Այնտեղ նա ամենքից ցած է, ամենքից. ցած նոյն
խակ երկու-երեք տարեկան զուգած, զարդարած երեխայից, որին
ծառան տանում է նորա առաջով. այդ փոքրիկն էլ զիտէ մի բան
ասել, անպատճառ մի ծանր բան: Տէրը նրանց հետ, թո՛ղ ասեն,
անեն ինչ կարող են: Աղքատը, իւր գործին գնացող աղքատը, հէնց
այդպիսի բաների համար է ստեղծւած: Բայց գործից յետոյ, ամբողջ
օրւայ ընթացքում տեսածից ու լսածից յետոյ, որքա՛ն լաւ է այս օ-
թեանը, այս հանգստութիւնը: Այդ երեկոները նա էլ մարդ է դառ-
նում, այդտեղ նա ոչ ոքից ցած չէ:

Այսպէս ամեն օր, ամեն իրիկուն նորա գլուխը ուրիշ ուրիշ մըտ-
քեր էին մտնում: Յերեկը իւր գործը կատարելիս նա առաջւայ պէս
անզգայ չէր: Առաջ այդպէս չէր բոլորովին: Առաջ անում էր, ման
էր գալիս, հաւաքում, խմանալով որ իւր ճակատի զիրն է այդպէս.
ուրիշ տեղ, ուրիշ ճանապարհ չը կար, պէտք էր միայն այդ անել:
Իսկ այժմ: Մարդկանց մանր ու հասարակ գործերը, դէս ու դէն

ընկնելը նորա համար առանձին միտք, առանձին քաղցր նշանակութիւն էր ստանում: Եւ նա ուշադրութեամբ էր նայում այդ բոլոր գործերին, սիրում էր շատ տեսնել, որ իւր մտքերի վերայ ուրիշ մտքեր էլ աւելանան: Տեսնում էր, օրինակ, արհեստաւորին, որ դալիս կանգնում է մի մանրավաճառի առաջ. նորա փէշից կպած է փոքրիկ տղան, որ անդադար ձգում է այդ փէշը և հօրից մի ինչ որ բան է պահանջում: Բարսեղը մօտ է դնում, կանգնում: «Ազգում եմ, ո՛ւզո՛ւմ եմ», կրկնում է երեխան անդադար: Հայրը առնում է, տալիս մի փոքրիկ բան, բայց երեխան էլի պահանջում է. հայրը սկսում է հաւատացնել, ասում է թէ այդ մէկն էլ յետոյ կ'առնէ, այժմ փող չ'ունի: Բայց մի՞թէ փոքրիկը հասկանում է նորան. նա զիտէ իւր պահանջը, իւր լացը և իւր փէշից պինդ բռնելը: Կարծես էլ ի՞նչ մի պատճառ, որ ամեն մարդու բարկութիւնը շարունգանէր. այդ փոքրիկը, որ այնքան պնդացրել է երեսը, կարի պէս կպել է, ձեռք չի վերցնում, ամաչացնում է մարդուն հրապարակի մէջ, օտար խանութի առաջ: Բայց ո՛չ. այդ լացը, այդ անհաշտ կոշտութիւնը հօր ծիծաղն է բերում: «Ա՛խ, ի՞նչ անեմ», ասում է նա, ձեռքը գրպանն է տանում, թափ է տալիս, հանում վերջին սև փողը—վերջինը, որովհետև նա այնպէս է նայում այդ փողին— և առնում մի ինչ որ բան, որ միայն երեխային է հարկաւոր: Յետոյ համբուրում է երեխային, ճանապարհ դնում, մի քանի անգամ պատուիրում, որ լաւ պահէ առած իրը, չը կորցնէ, որ լաւ գնաց, շուտ տուն գնաց: Այդ ամենը տեսնում էր Բարսեղը և չանկարծ մըտաբերում, որ ինքը մենակ է այս աշխարհի վերայ, բոլորովի՛ն մենակ: Եւ հասկանում էր, որ ինքը մենակ իրան չը պիտի ճանաչէ, այլ պիտի թափ տայ գրպանը, պիտի իրան ծախէ որ այդպէս ուրախանայ, ինչպէս ուրախացաւ արհեստաւորը: Եւ երբ մի՞նում էր, երբ նա տեսնում էր Սառային, գլուխը կամացուկ շարժում էր: «Օձն էլ բոյն ունի... քո բոյնդ ո՞րն է, Բարսեղ», հարցնում էր ինքն իրանից:

Մի երեկոյ Աննան լաց նորա գլուխը: Խնամքով լաց, պակաս տեղ չը թողեց: Իւր թեւքերը վեր էր քաշել մինչև արմունկները, լանում էր, իսկ Սառան ջուրն էր ածում: Ամեն անգամ, երբ փոքրիկը սխալում էր, ջուրը շատ էր ածում կամ քիչ կամ թէ

Տուռ, մայրը բարկանում էր նորա վերայ, անիծում, որ այդպէս անշքնորհքն է եղել, երբեմն և խփում էր նորան, երեխան լաց չէր լինում, չէր վիրաւորւում, երևի, հասկանում էր, որ այդպէս չը պիտի անէր և աշխատում էր լաւ ածել: Աննան երկար շփեց, մաքրեց Բարսեղի ականջները, յետոյ բերեց մի շորի կտոր, սրբեց նորա գլուխըն ու դէմքը: Բարսեղը մոռացել էր՝ տեսել էր իւր օրում այդպիսի բան թէ չէ: Գլուխը թեթեւացաւ, աչքերը լայն բացւեցան, մազերը կակղեցին: Այնպիսի մի հանգստութիւն եկաւ նորա վերայ, երբ նա նստեց օջախի կրակացած ածուխների առջևը, այնպիսի մի սիրուն, ծոյլ թմրութիւն գրկեց նորան, որ շարժել չէր ուզում:

— Աստուած քեզ օրհնէ, Աննա՛, բացականչեց նա. — միայն Տէրը քո մէկը հազար շինէ, կուռզ դալա՛ր...

Աննան լսում էր և ծիծաղում:

Այսպիսի հանգստութիւնը, այսպիսի թեթեւութիւնը Բարսեղի համար տեսնւած բան չէր: Ինքն իրան մոռացել էր. և հպարտացած, կիսախուփ աչքերով տեսնում էր թէ ինչպէս Աննան արագ արագ դէս ու դէն էր անում, հաւաքում էր ամանները, դուրս էր տանում տաշտակը, ջուրը դէն ածում: Երբ նա կրկին ներս մտաւ, տաշտակը զրեց մի անկիւնում, յայտնեց որ լացած գլուխը հեշտ կը մըսէ, խնամքով դրստեց դրան ձակատից կախ արած արխայուղը, որ ցուրտ չը մտնէ, յետոյ ասաց որ տաշտակն իրանցը չէ, ուրիշի զոնից են ուզել բերել, ուստի պէտք է տանը պահել, որ դրսում ցրտից չը ձաքէ: Բարսեղը մինչև այդ մի ինչ որ բան էր ուզում անել: Մի քանի անգամ ձեռքը տարաւ դէպի ծոցը, բաց էլի դատարկ յետ քաշեց: Այդպէս անում էր և գլուխը կախ արած մտածում: Վերջապէս երբ Աննային և Սառային մի երկու աւելորդ անգամ էլ նայեց, ձեռքը տարաւ իւր կակղած և դեռ թաց մազերի վրայով և յետոյ ծանր կերպով հանեց ծոցի գրպանից մի չթի փոքրիկ կապոց, արձակեց նորա վերայ մի քանի անգամ փաթաթած և պինդ կապած թելը, բաց արեց կապոցը, բաց արեց և նորա մէջ դրած թղթի կտորը, սկսեց ուշադրութեամբ տնտղել այդ թղթի մէջ դրած սպիտակ փողերը: Նա առաջ համրեց, կռեց իւր ձեռքում, յետոյ ծանր-ծանր վերցրեց երկու հատ սպիտակ աբասանոց, որ երկու մատի մէջ բռնած, պարզեց դէպի Աննան:

—Ա՛ռ, քեզ համար մի բան կ'առնես:

Մի սև փող էլ, երեք կոպէկանոց, զրպանից հանեց և Սառա-
յին տւեց: Աննան բռնեց փողը, բայց էլի պարզեց դէպի Բարսեղը:

—Ինչի՞ս է, հարցրեց նա:

—Լա՛ւ, մի՛ յետ տուր, սրտիդ ուզածը կ'առնես:

—Ի՞նչ բան ունիմ, ինձ հարկաւոր չէ, Աստուած վկայ, պա-
տասխանեց նա քաղցրութեամբ, որ չը վշտացնէ աղքատին.—ա՛ռ,
ածուխ կ'առնես. եթէ այս ձմեռը կրակի կարօտ չը մնանք՝ էլի մեծ
բան է:

—Աստուած ողորմած է, Աննա՛, ածուխն էլ Աստուած կը հասց-
նէ: Ես կը բերեմ, մի քանի շահի էլ ունիմ: Վե՛ր առ, վեր առ:

Աննան տարուբերում էր, սպիտակ փողը խաղացնում էր իւր
պարզած ձեռքի մատների մէջ: Իսկ Սառան սև փողը պինդ սեղմել
էր բթամատի և ցուցամատի մէջ, բռնել էր ուղիղ քթի առաջ,
մի ոտը բարձրացրել էր, միւս ոտի վերայ ցատկտելով մի քանի
շրջաններ արեց նրանց շուրջը:

—Լա՛ւ, ա՛ռ, մի և նոյն է՝ քեզ մօտ թէ ինձ մօտ եղած, խօ-
սեց Աննան.—Աստուած վկայ է, ճշմարիտ եմ ասում:

—Ես էլ հէնց այդպէս եմ իմանում որ տալիս եմ, Աննա՛, Աս-
տուած էլ վկայ, երկինքն էլ. հաւատացի՛ր, որ այդպէս եմ իմա-
նում:

—Ե՛, չեմ կարող. ախր ի՛նչ անեմ... Լա՛ւ, որ այդպէս է, ա՛ռ,
ինձ համար մի տաշտակ կ'առնես, հէնց այսպիսի մէկը. շատ լաւն
է, ես սիրում եմ այսպիսին. ծանր չէ, բայց բարակ էլ չէ:

—Ե՛, Աննա՛, ողջ զլուխ ուղիւր, առանց տաշտակի էլ կը լւաց-
ւի, ասաց Բարսեղը ուրախացած:

—Որ այդպէս է, ինձ տո՛ւր, ես Սառայի համար մի ջուխտ
լաւ ոտնաման կարել կը տամ:

—Հա՛, հա՛, այդ լաւ է. խելքս Աստուած կտրէ. երեխաս բո-
բիկ է, տրեխն էլ այսօր կորցրել է, տանից դուրս գալ չի կարողա-
նում:

Սառան վազեց, եկաւ մօր մօտ, իւր փողն էլ տւեց նորան:

—Սրանով էլ ա՛ռ, ասաց նա:

—Լա՛ւ, լա՛ւ, Սառա՛, կ'առնեմ, պատասխանեց աղքատը.—տես

ի՛նչ կ'առնեմ—կարմիր, սև քողերով ու սպիտակ կոճակներով...
 Երեխան սկսեց ծիծաղել, տեղն ու տեղը ուստուտալ: Մայրը
 բռնեց նորան, համբուրեց նորա լիքը թշերը և շոյեց նորա ճակատը:
 Քնի ժամանակ էր: Բարսեղը դնաց, իւր սովորական անկիւնում
 պառկեց: Եւ այժմ պարզ, հասկանալի դարձաւ նորա զլխում նըս-
 տած միտքը: Այդպէս էլ պիտի լինի: Նա լուռ ծիծաղեց, նորա
 սիրտը ուրախութեամբ լցւեց, երբ յիշեց Աննային փող տալը:

Է.

Հետևեալ օրը եղանակը պարզ էր: Արեգակը լուսաւորում էր
 ձմեռուայ աղքատ աշխարհը, որ նոր էր ծածկել մի բարակ ձիւնի
 տակ: Բայց թէև արեգակը մի ամբողջ օր գործել էր, այնու ամե-
 նայնիւ, չէր կարողացել պնդացած, քարացած սառցային մարմին-
 ների պոնքն էլ պատռել: Ձմեռուայ արև օրերից մէկն էր, այն օրե-
 րից մէկը, երբ ցուրտը մի հանդարտ քամու մէջ մտած ամեն տե-
 ղին է հասնում, մարդ է չորացնում. իսկ ցերեկւայ լուսատուն, այն
 իսկ արեգակը, որ մի ժամանակ ձիւնի սարեր է ոչնչացնում, այդ
 օրը անգոր և ուժասպառ կախ է տալիս իւր լոյսը ինչպէս լուսինը,
 որ պարզ գիշերը թափում է այնքան առատ, գեղեցիկ լոյս, որ սա-
 կայն ջերմութիւն չ'ունի:

Եւ այդ արեգակը վերջացնում էր իւր կարճ և ծուռ ճանա-
 պարհը, հեռոցհեռէ ցած և ցած էր գնում, հեռոցհեռէ քչանում,
 «հաւաքւում» էր նորա լոյսը: Մարդիկ գնում էին քիթ ու ականջ
 փաթաթած, բերանները հուպ տւած, փչում էին, մրմնջում: Տներին
 երդիքներից զուրս էր թափւում ծուխը, թանձր ամպի պէս ան-
 շարժանում էր սառած, սեղմւած օդի մէջ և դանդաղ տարածւում
 մի փոքր տարածութեան վերայ: Քաղաքային սահնակները թըլ-
 չում էին լանջիվայր փողոցներով. ձիավարը անդադար շտապեցնում
 էր ձիերին իւր կարճ, խրախուսական և երբեմն անբաւարանութիւն
 չալտոնող աղաղակներով. սառած զանգակը կիսամեռ ձայներ էր ար-
 ձակում, դողդողում, և ձիերը գոլորշու քուլաներ զուրս թողելով
 իրանց քթածակերից, վազում էին զլխակոր:

Այդ ժամանակ մութացիան Բարսեղն էլ քարշ էր զալիս իւր մեծ
 ու պստիկ մահակների օղնութեամբ: Նա շտապել չէր կարող և նո-

րա քթի առաջ էլ անդադար զալարուում էին զորշ գոլորշու ամպիկներ, որոնք չետ ու առաջ էին գնում, կծկուում էին արեղակի մեռած լոյսի տակ, ցոյց էին տալիս, որ այդ անդամալոյծը թէև շարժուում էր այնպիսի յուսահատ դանդաղկոտութեամբ, բայց իւր մէջ ներսում, ունէր մի ոյժ, որ իրան առաջ էր հրում, մի եռանդ, որին, սակայն, ականջ չէին դնում իւր անյարմար անդամները, որոնք լաւ սառել էին:

Նա գնաց, մեծ փողոցից դուրս եկաւ, մտաւ մի շատ նեղ ու կարճ փողոց, հասաւ մի մենաւոր տան մեծ դռներին. նայեց, տեսաւ որ դուռը բաց է, բակը դատարկ: Բակում կանգնած էր մի հին տուն, որ, ինչպէս երևում էր, նոր էր կրով սպիտակացրած. բայց այդ սպիտակութիւնը չէր կարողանում ծածկել շինութեան ծերութիւնը, որ իսկոյն ինքն իրան յայտնում էր: Այդ տունը չորս կողմից շրջապատած էր հնացած, բայց դեռ ամուր քարեայ պարիսպներով. ոչ մի կողմից նա չէր կաշոււմ հարեան տներին, ամենքից էլ անջատուած էր մեծ մեծ պարտէզներով: Աղքատը երկար չը սպասելով բակը մտաւ և իւր պատիկ ձեռնափայտով երկու թեթև հարուածներ տւեց հին, արդէն ծուած դրանը, և բարձր ձայնով ասաց.

—Ո՞վ կայ տանը:

Աղքատի սովորական խօսքն էր. երևում էր որ այդ տունը նորան խիստ ծանօթ էր. այդ հաստատեց և այն ձայնը, որ իսկոյն պատասխանեց ներսից.

—Բարսե՛ղ, դո՛ւ ես, ե՛կ, ե՛կ:

Բարսեղը դուռը հրեց և մտաւ մի սենեակ:

Խոր սենեակ էր, յատակը բաւական ցած ընկած. ներս մտնողը պիտի իջներ սանդուղքի երկու աստիճաններով: Բայց խոր էր երեւում աւելի այն պատճառով, որ շատ լոյս սենեակ չէր: Երկու քառակուսի փոքրիկ պատուհաններ ունէր, որոնք դրսից պաշտպանուում էին երկաթէ հաստ ցանցերով: Վերին անկիւնի պատուհանի մի ապակին փշրւած էր և այդ «աչքը» ծածկւած էր մի ինչ որ կարմիր շորի կտորով: Արևը հաւաքւել էր այդ կտուրի վերայ և սենեակի մնաց լոյսի հետ խառնւել էր մի թեթև կարմրութիւն:

Երկաթէ վատարանի մօտ ծալապատակ նստած էր մի կին: Դորա բոլոր հագուստը կարմիր էր, բայց մոխրագոյն շալկից,

որ ամեն կողմից փաթաթել էր նորա զլուխն ու պարանոցը, ազատ թողելով միայն ղէմքը: Մի փոքրիկ, կոլոր ղէմք էր, որի նիհար, կուչ եկած թշերի ծայրին մնացել էր մի անհրապոյր, արնազեղ կարմրութիւն: Առաջին անգամ տեսնելիս կ'ասէիր, որ այդ կինը տարիների մի երկայն շարք է տեսել, թէև ղէմքը իւր բոլոր կարողութիւններով աշխատում էր հակառակել այդ մտքին: Նա ունէր մի զոյգ մանր ու խոր, կոլոր աչքեր, որոնք շրջապատած էին նօսր ու կարծիկ թերթերունքներով և որոնք թուլս էին և մի կերպ խոնաւ, փայլուն. այդ աչքերը անդադար ճպճպում էին, միանգամից մի հաստատ, հանգիստ դիրք բռնել չէին կարողանում, կարծես այդ կինը մարդուն ուղիղ մտիկ տալ չէր ուզում: Յօնքերի մէջ արդէն նկատելի էին սպիտակ մազեր, որոնք մի լուռ համերաշխութիւն պահելով վերին շրթունքի վերայ վերեւից ղէպի ցած ընկած և մանր ու սև մազերով ծածկւած սև, բազմաթիւ կնճիռների հետ, պառաւի տեղն ու տարիքն էին որոշում:

Բարսեղը մի րոպէ մնաց կանգնած, չը գիտէր թէ ինչ անէ իւր ահագին ոտնամանները, որոնց վերայ ցեխը սառել էր, մեծ մեծ ձիւնախառն կոտեր կազմել, քարի պէս սնդագեղ: Նա ուզեց հանել և արդէն սկսել էր կապանքները արձակել, բայց կինը տեղից վեր թռաւ, յետ գցեց վառարանի մօտ փռած մի կապերալ, բաց արեց հողէ յատակը և ասաց.

— Լա՛ւ, լա՛ւ, մի՛ հանիր, ե՛կ, տաքացի՛ր, խե՛ղճ... հիմա սառել ես:

Նորա ձայնը շատ բարակ էր, կատուի ձայնի նման: Բարսեղը մօտեցաւ վառարանին, կոշտ ու սև ձեռքերը դրեց նորա վերայ:

— Յուրտը... էլ մի՛ ասիր, խօսեց նա, երբ տաքացրեց մի ձեռքը և սկսեց նրանով իւր ղէմքը շփել: Աստուծու պատիժն է, պատիժը... Յճօ՛... հօ՛...:

— Խե՛ղճ, ասաց կինը՝ ձեռքով նստելու նշան անելով:

Նւ տեսնելով թէ ինչպէս այդ խեղճ մարդը զանազան շարժողութիւններ է անում իւր ծուռ ոտները մի կերպ ծածկելու համար, շարունակեց.

— Վառարանի մօտ սառչում ենք... բաս դու ի՞նչպէս ես ա-

նում այսպիսի օրը դռներն ընկած... Քո բերդի ա՛չքը կուրանաց,
Բարսե՛ղ... Մազերն էլ սառել են, մազերը...

Իրաւ, Բարսեղի երեսի ու գլխի մազերի վերայ սառուցների
կտորներ էին գոյացել: Նա լուռ էր, գլուխը թեքել էր վառարանի
վերայ, ձեռքերը տարածել, կարծես ուզում էր զրկել, կրծքին սեղ-
մել վառարանը: Կինը շուտ հասկացաւ, որ վառարանն այնքան
տաք չէ, վեր կացաւ, գնաց երկու փայտ բերեց, դրեց վառարանը:
Կարճ միջոցում Բարսեղի սառած դէմքն ու ձեռքերը տաքացան,
կակղեցին: Նրկաթէ վառարանը տարածեց իւր ժամանակաւոր սաս-
տիկ տաքութիւնը. նորա վերայ դրած ջուրը սկսեց եռալ: Բարսեղը
յետ նայեց:

— Ողորմի՛ հօրդ, ասաց, մէկ էլ նոր կենդանացայ: Այնպէս իմա-
ցիր թէ մի կամուրջ ես շինել:

— Նստի՛ր, նստի՛ր, քիչ հաց դնեմ, կե՛ր:

Կինը բերեց, նորա առջևը դրեց քիչ հաց, երկու կտոր եփած
սառած միս և աղամանը:

— Հիւրեր կային, շատ չ՛աւելացաւ, ասաց նա:

— Ամեն օր հիւրեր են լինում տանդ, Բա՛բուշկա:

— Ի՞նչ ասեմ, քեզ մատաղ. զիւղից դալիս են, ուրիշ տեղ չեն
ծարում, ինձ մօտ են դալիս. այտեղ, այնտեղ այնքան ծանօթ ու
բարեկամ ունինք, Աստուծու տունը չէ՛ն մնաց, Աստուծու հիւրերն
են, կարո՞ղ ես դուրս անել: Այդ երկու կտորն էլ Նփրեմիս համար
էի պահում, բացց մնաս չ՛ունի. նա իսկի չը գիտէ որ հիւրեր են
եղել, երեկոյեան իւր հետ ուտելու մի բան կը բերէ:

Պառաւը մենակ էր, այդ տունն էլ մնացել էր իւր մեռած մար-
դուց: Իսկ Նփրեմը նորա թոռն էր, 14 տարեկան մի տղայ, որ կօշ-
կակարի մօտ աշակերտ էր: Տատը նորան վերցրել, իւր մօտն էր պա-
հում և շուտ շուտ ստում էր, որ իրանից յետոյ մնացած «հոգե-
պահուստը» նորանը, Նփրեմինը, կը լինի:

Բարսեղն սկսեց ծամել հացը, մատների ծայրերով մի քիչ միս
կորեց, դրեց բերանը, մնացածը փաթաթեց հացի մէջ, չը մոռա-
նարով աղ անել, իւր քսակը կոխեց:

— Բաւական է, իրիկունը կ՛ուտեմ, ասաց նա. — հիմա մըթ-
նում է:

—Է՛, ինչ ես շտապում, նստի՛ր, խեղճ մարդ, տեղդ տաքացրու. եթէ ուշանաս էլ՝ այստեղ կը քնես:

—Ձէ՛, Բա՛բուշկա, ես էլ ունիմ տեղ, օթեւան, ուր զիշերները հաւաք եմ լինում:

Եւ նա ծիծաղելով նայեց դէպի պառաւը, որ զարմացաւ ոչ թէ խօսքերի, այլ այդ ծիծաղի վերայ:

—Եկել եմ մի բան ուզելու, շարունակեց Բարսեղը նոյն կերպով.— ինձ մի կտոր մո՛մ տուր:

—Մո՞մն ինչի՞ք է. այդ ինչպիսի տուն է, որ մի կտոր մոմ էլ չեն տալիս, որ վառես քեզ համար:

—Տուն է, Բա՛բուշկա, տունն ի՞նչպէս կը լինի. միջին մարդիկ են ապրում: Ես էլ մարդ եմ, նրանք տունն են տալիս, ես էլ պիտի մի բան տանեմ:

Բաբուշկան վեր կացաւ, պահարանից մի կտոր մոմ առաւ:

—Խե՛ղճ Բարսեղ, խե՛ղճ, ասաց մոմը տալով նորան.— քո ինչի՞ցդ են ուզում: Աստուծու խեղճն ես, ոտից, ձեռքից ընկած մի աղքատ ես՝ անտէր, անտիրական: Ի՞նչ խղճմտանք է, հողե՛մ նրանց գլուխը:

Բարսեղի ուրախ ծիծաղը փոխեց, մի բոպէում դառնացաւ: Նա գլուխը կախ արեց, պատասխան չը տուց: Պառաւն աւելի ևս խղճահարւեց:

—Է՛հ, ասում եմ քեզ, ե՛կ ինձ մօտ ապրիր, ա՛յ այն կողմի փոքրիկ թոնրատունն էլ քեզ կը տամ, այնպէս կը պահեմ, որ քէֆը կը դայ, քէֆդ... Աղքատ Գալուստը երկու շաբաթ ու կէս ապրել է այնտեղ, ինքդ հարցրո՛ւ, իմացի՛ր, տե՛ս ինչպէս է ապրել: Ո՞վ նրանից կոպէկ ուզեց և փառք Աստուծու, ո՞ր օրին ենք մընացել, որ ձեզ նման խեղճերից ուզենք: Մեղք է, մե՛ղք:

—Քո բաժինն արքայութիւն, Բա՛բուշկա, Աստուածանից խընդիրքս է՝ թոռնդ պինդ, պինդ ձեռքով պահէ:

—Հը՛, զալի՞ս ես, թէ չէ:

Բարսեղը իսկոյն չը պատասխանեց, այլ մի անգամ դեռ չափեց նորան մի ամաչիտութիւն արտայայտող, անվստահ հայեացքով և յետոյ միայն ասաց.

—Է՛հ, սրտինս չես իմանում:

—Սրտինդ ի՞նչ է, ասա՛, ասա՛, տեսնեմ:

Եւ պառաւը աւելի մօտ նստեց:

—Քո մայրութիւնդ վկայ է, Բա՛բուշկա, սրտումս շատ բան կայ. ո՞րն ասեմ: Այսքան անու՛մ եմ, անու՛մ, ասա վերջն ի՛նչ է զառնում: Ոչի՛նչ, կորչում է, գնում: Սրբ գնում է, տարին անցնում, ես էլի այն եմ ու այն: Մի՞թէ ես մարդ չեմ:

—Ի հարկէ, մարդ ես....

—Ղէ՛, մարդ եմ, իսկոյն ընդհատեց Բարսեղը աւելի բարձր ձայնով, — որ մարդ եմ, ինչո՞ւ Աստուծու տւած բաժնից զրկւած եմ. մեղաւոր եմ, հա՛...

Եւ նա մի մեղմ հառաչանք հանեց, թոյլ կերպով շարունակեց.

—Մեղաւոր եմ... իմ մեղքն է, ոչ հօրից, ոչ մօրից մի լաւութիւն, մի քաղցրութիւն չեմ տեսած: Ինչի՞ նման եմ: Էզոուց, միւսօրը կը սատկեմ, շան պէս կը սատկեմ, կը տանեն, ո՞վ գիտէ, որտեղ կը զցեն և մի մարդ չի լինիլ, որ անունս տայ: Ինձ օջախ է հարկաւոր, օջախ:

Վերջին խօսքերը նա այնպէս պինդ արտասանեց, այնպէս ոգևորւած, անսպասելի կերպով, որ պառաւը ծիծաղեց: Իսկ երբ նա ծիծաղում էր, վերին կնճռոտ շուրթը դէպի բարձր էր գնում, բաց անում նորա կարմիր քիմքերը և մի շարք սպիտակ, անվնաս ատամները:

—Ի՛նչ կ'ասես, բացականչեց նա. — Բարսեղս էլ է թուխս եկել... ես էլ ասում եմ ի՛նչ է...

—Բանն այդ չէ, Բա՛բուշկա, տեսնում ես ինձ, էլ ինչ ցոյց տամ: — Եւ նա բարձրացրեց իւր թւերը, ինքն էլ նայեց իրան: — Տեսնո՞ւմ ես, այս մարմինը, այս մարդը, չե՞ս ասիլ, խեղճ է, սորան էլ մի հանգստութիւն, մի տեղ է հարկաւոր: Հէնց միշտ կողքս քարին, գլուխս հողի՛ն...

Այդ շարժողութիւնը, տարածած թւերը, այդ հայեացքը, որով մարդը ինքն իրան էր քննում, պառաւին հասկացրեց, որ նա հանաք չի անում. ուստի ինքն էլ մտաւ նորա գրութիւնը և գլուխը ցաւակցաբար շարժելով ասաց.

—Քոռանա՛մ քեզ համար, այդ մէկը ճշմարիտ է, որ խեղճ ես, Աստուծու խեղճը: Ապրուստ կայ արծաթ է, ապրուստ կայ երկաթ է:

—Ողորմի՛ քո հօր հոգուն, արքայութեան բաժին դառնաս, ես էլ հէնց այդ եմ ասում: Աշխարհի բան է, վատը եթէ չ'ասես, լաւը չի գալ, Բա՛բուշկա: Աշխարհ է, այսինքն մահ կայ, մեռնիլ կայ: Այսօր, Տէրը մի՛ արասցէ, ես հիւանդացայ, ի՞նչ անեմ: Մէկը չը պիտի՞ լինի որ մէջքս ու գլուխս ծածկէ, ինձ մօտ նստէ: Այսպիսի բաների մասին, որ միտք եմ անում, սիրտս ճաքում է...

—Նո՛ր ես այդ մտքերը գտել, հա՞. առաջ քո բերանից այդպիսի խօսքեր...ի՞նչ ասեմ... լսած չեմ:

—Մարդու ջահելութիւնն է, Բա՛բուշկա. ջահելութիւնը որ անցնելու վրայ է լինում, միտք ես անում, ի՞նչպէս չէ. միտք ես անում, ասում՝ ի՞նչ է եկել քեզ, մէկ անգամ էլ պիտի ծնես, այս աշխարհը տեսնես: Այսպիսի բաներ կան...

—Խօսք չը կայ, խօսք չը կայ: Բայց ինչո՞վ պիտի պահես: Մուրա՞ծ հացո՞վդ:

—Ե՛, դրա համար միտք էլ չեմ անում: Քանի ողջ եմ, հացս կը լինի, մեռնելուցս յետոյ... Աստուած գիտէ, Աստուծու բանն է: Բայց հիմա, փառք Աստուծու, լաւ եմ. օրհնւի, հաստատ մնայ ժողովուրդը, ցաւ ու անէ՛ծք չը տեսնէ, ժողովուրդը իւր խեղճին պահում է, չի թողում որ կորչի:

Պառաւը գլխով հաւանութեան նշան արեց, վեր կացաւ, ամանի մէջ ջուր ածեց, խմեց:

—Հացը հաց է, Բաբո՛ւշկա, շարունակեց Բարսեղը քիչ լուելուց յետոյ. — հացին էլ այսպէս ու այնպէս կ'ասե՞ն: Աստուծու տւած տուրքն է, ամեն մէկն իւր բաժինն ունի. մերն էլ այսպէս է:

—Սիրականդ մեռնի՛, ախր մենակ հացը չէ, ախր կ'ասէ ա՛յսքեր, ա՛յն բեր:

Եւ Բաբուշկան ձեռքերով ցոյց տւեց գլուխն ու ոտները, հասկացնում էր թէ ոտից մինչև գլուխ հագնւել է հարկաւոր:

—Որքա՛ն Աստուած կը սայ, պատասխանեց աղքատը. — շատին շատ, քիչին քիչ: Եթէ հալալ ծծկեր լինի, ինձ հետ կը գայ...

Պառաւը թռաւ, նորա առջևը պպղեց և ձեռքը դնելով նորա ուսին, մտիկ արեց նորա աչքերի միջին և փսփսաց.

—Տեղը գտե՞լ ես, ճարե՞լ ես:

Այս անգամ միայն պառաւը ուղիղ նայեց իւր խօսակցի աչ-

քերին. այս անգամ նորա ձայնը խորհրդաւոր էր, ձախ աչքը երկու անգամ թեթև կերպով փակւեցաւ և բացւեցաւ, նա «աչքով արեց», որով նորա տւած հարցը աւելի ևս պարզւեցաւ:

Բայց աղքատը ոչինչ չը պատասխանեց: Այդ հարցի մասին ինքըն էլ տեղեակ չէր, դեռ միայն մի ցանկութիւն ունէր, բայց ամաչեց, չը կարողացաւ յայտնել այդ ցանկութիւնը. ամաչեց այդ ձախ աչքից, այդ բազմախորհուրդ նշանից: Եւ նա անպատճառ իւր դժգոհութիւնը կը յայտնէր, կոշտութիւն կ'անէր, եթէ այդ կինը Բարուչկան չը լինէր, եթէ նորա շրթունքներն Վրայից հեռացած լինէր չուսադրական, խրատուտիչ ժպիտը: Այդ ժպիտը հարկադրեց աղքատին լուռ լինել և պատրաստել տեղից վեր կենալու, բայց Բարուչկան չը թողեց.

— Ո՛ւր ես գնում, ասաց, օրը մթնում է, մնացի՛ր, այս երեկոյ կարծեմ մարդ էլ չը պիտի գայ այստեղ: Կամ թէ թող զան էլ, քե՞զ ինչ...

— Զէ՛, երեխերքը կը սպասեն... չէ՛, Բա՛բուչկա, այն տանը կը սպասեն:

— Ե՛յ, լեզուդ այրւե՞ց... Երեխերքը... երեխա՞ջ էլ ունիս, հարցրեց Բարուչկան մի բան իսկոյն հասկացածի պէս:

— Ո՛րտեղից է... բերանս այնպէս եկաւ, սխալւեցայ:

— Ե՛, Բարսե՛ղ, ի՛նձ լսիր, դժւար է, երեխայ կ'ունենաս, երեխաները գլխիդ կը թափւին, հաց, շոր հասցնել չես կարող: Քեզ պէս մարդուն, Աստուած վկայ, չի գալիս... Բա՛ն չ'ունիս. գլուխդ ազատ ման ես գալիս քեզ համար, որտեղ քէ՛ջդ ուզում է, ապրում ես. հիմա ուզում ես որ ճղվզոցը, լացը գլխիցդ անպակաս անե՞ս...

Բարսեղը անբաւականի պէս երեսը դէպի պատը դարձրեց. բայց իսկոյն էլի նայեց պառաւին և քիչ չոր եղանակով ասաց.

— Երեխա՛յ... թող լինի, չ'ուզողը ես չեմ: Երեխան ի՞նչ է. մարդուս իրան սիրտն է՛, առաջիդ ման է գալիս... հա՛, տեսնում ես, ման է գալիս: Դու իսկի լսե՛լ ես, որ Քրիստոս ասել է: Ասել է, ո՛վ մարդիկ, ձեզ ամենքիդ եմ ասում. ես ձեզանում մարդութիւն չը տեսայ, բայց արքայութիւնը երեխաներինն է. ուրեմն, նրանք պէտք է գնան, ասել է, արքայութիւնումը իմ գոգս նստեն: Իսկի

լսել ե՞ս, որ երկնքումը հրեշտակները երեխաներ են, այնպէս, փոքր երեխաներ, ծլլլում են, թռչկոտում են խնկի ծառերի վերայ, թռչունի պէս երգում: Երեխան... այն տունը հարամ է, որտեղ երեխայ չը կայ...

Բարուշկան զարմացած էր լսում այդ խօսքերը:

— Մեռնե՛մ հրեշտակների ոտին, ասաց նա ցած ձայնով.— նրանք պահեն իմ Եփրեմին...

— Ամէ՛ն, ամէ՛ն...

Կարճ լռութիւնից յետոյ էլի Բարուշկան խօսեց.

— Բայց դու չ'ասացիր, ո՞րտեղ ես կենում:

— Վերին թաղումը, մի տան:

— Ինչե՞նց տուն կ'ասեն:

— Մեծ տուն չէ, ասեմ էլ, չես ճանաչիլ...

— Ձե՛մ ճանաչիլ... Բաս էլ ո՞րտեղի մեռած Բարուշկան եմ, որ չը ճանաչեմ: Դու ինձ ճշմարիտն ասա՛, Բարսե՛ղ, դու էլ մի մարդ ես: Ես քո վատն ուզողը չեմ: Ես էլ կարող եմ լաւութիւն անել, դու գիտես, որ շատ բան առանց ինձ գլուխ չի գալիս:

Սուտ չէր ասում Բարուշկան:

Շատ մարդ էր դիմում նորա օգնութեանը, շատ մարդ էր նորան ճանաչում և էլ շատերին նա ինքն էր ճանաչում: Այդ կինը միշտ կը խօսէր իւր արած լաւութիւնների մասին. ծանր ու բարակ կը պատմէր թէ մի քանի խեղճերի «ծուռ վիզն էր զրստել», քանիսի արտասունքն էր սրբել: Հաւատացնում էր— և միշտ Աստուծուն վկայ կանչելով— որ շատ տեղ նա ինքն իրան մոռացել է, էլ աջ ու ձախ չի նայել, եղած վերջին կոպէկները չի խնայել, տւել է, մարդուն ոտի կանգնացրել: Ասենք շատերը երախտամոռ են եղել, լաւի փոխարէն կարողացածի չափ վատութիւն են արել, մինչև անգամ ուրացել են իւր տւած փողերը, յետ կանգնել, բայց Տէ՛րը նրանց հետ: Ինքը լաւութիւն արել էր հոգու համար, վարձով չէր բան տեսել:

Շա՛տ մեծ էր այդ կնոջ ծանօթութեան շրջանը: Քաղաքում նա էլ մի բան էր նշանակում, ամեն տեղ լինում էր, ամեն շատ թէ քիչ յայտնի տուն մտնում էր. շատ չէին այնպիսի օրեր, երբ նա իւր տանն էր լինում: Ինչ նորութիւն, ինչ անցք լինէր, առա-

ջին իմացողներից մէկը նա պիտի լինէր անպատճառ: Եւ այդ բոլոր լուրերը, նորութիւնները տնէ տուն ման էր ածում, մի բանը տասն անգամ պատմում էր միշտ շէնքով—շնորհքով: Յայտնի է, որ կանաչք ամենից շատ են սիրում սորա ու նորա մասին խօսել, դատել, բամբասել: Բաբուշկան առատ պաշար էր տալիս նրանց և շատ անգամ կարելի էր տեսնել նորան մի որ և է մեծ շրջանում նստած, տեսակ տեսակ զեղեցիկ և տզեղ դէմքեր իւր վերայ ժողոված՝ կանոնաւորապէս ընթացք էր տալիս վիճաբանութիւններին, ուղղում էր կարծիքներն ու մտքերը այնպէս, որ հեշտ լինի այս կամ այն տեսակ վճիռ կայացնելը: Նա հեղինակութեան տէր մարդ էր: Եւ իւր կոչմանը շատ էին նպաստում նորա բազմաթիւ արհեստները: Մի օր տեսնում էին նորան հին շորեր ծախելիս, միւս օրը մի հարուստի աղջկայ կամ կնոջ ետեւից ընկած՝ եկեղեցի էր գնում կամ մի ուրիշ տեղ, ինչպէս աղախին: Յաւում էր մի տիկնոջ կամ օրիորդի գլուխը, էլ դէս ու դէն չը կայ, Բաբուշկան պիտի գայ, որտեղ և լինի, պիտի աղօթէ, աղօթած ջուր խմացնէ, որ ցաւն անհետանայ: Նա մանկաբարձուհի էլ էր, տնային տատմէր, որ խիստ ճարպիկն էր իւր գործում. այդ պատճառով զիշերներն էլ շատ անգամ հանգիստ չ'ունէր, բոլոր հարուստ տները նորան էին միայն ճանաչում, տանում և ոչ մի ծնունդ առանց նորա խնամքի համարեա չէր լինում: Եւ որքան գաղտնիքներ գիտէր իւր այդ վերջին արհեստի շնորհիւ: Նորան յայտնում էին, նորան էին հաւատ ընծայում, իմանալով որ վճռական րոպէին այդպիսով միայն անուանարկ գաղտնիքը գաղտնիք էլ կը մնայ: Բաբուշկան պարծենում էր դրանով, շատ անգամ էր ասում, որ եթէ կամենայ մի օրում, միայն մի օրում կը խայտառակէ շատ այնպիսի տներ, որոնց անունը այնքան պատկառելի է: Բայց այդպէս չէր անում, չէր ուզում:—Որովհետեւ իւր հաշիւներն ունէր: Գաղտնիքների տէրերը պատուում, մեծարում էին նորան, այդ լուրթեան համար հարկ էին տալիս նորան: ձշմարիտ է, այդ հարկը միշտ չնչին էր, բայց Բաբուշկան բաւականանում էր. այդ էլ մի տեսակ լաւութիւն էր համարում և պարծենում. «Փա՛ռք Աստուծու, ասում էր, ո՛ւմ մօտ գնամ, ո՛ւմ դուռը ծեծեմ և ինձ յետ դարձնեն դռնից. ամենքը արևույս երդւում են»:

Մի հաստատութիւն էլ, որ նորա արևովը կարող էին երզել,

Նորա անունն էր: Նորա իսկական անունը բոլորովին մոռացել էր: Ծանօթ թէ անծանօթ նորան «Բաբուշկա» անունն էր տալիս. նա ինքն էլ իւր անունը դէն էր դրել և գործ էր ածում այդ վերջին անունը: Ամենքի «Բաբուշկան» էր, ամենքի տատը: Նա չէր սպասիլ որ իրան հրաւիրեն, այլ ինքը կը գնար, երբ կ'ուզէր, արձակ ու համարձակ մէջ կը մտնէր և անպատճառ բոլորի ուշադրութիւնը կը դրաւէր: Եթէ ուրախութիւն, խնձոց լինէր, նա կը ծիծաղէր, կը ծիծաղացնէր, հանաքներ, շատ անգամ փեղցփեղ հանաքներ, մաս-խարութիւններ կ'անէր, մանաւանդ ուսերէն կը կոտրատէր և բոլորին ծիծաղից կը թուլացնէր: Իսկ եթէ տրտմութեան, լացի տեղ լինէր, անմխիթար կ'ողբար, թուրքերէն բայաթիներ կ'երգէր և այնքան սրտառուչ, այնքան սիրակ ընկած, որ բոլորին լացից կը խեղդէր: Եւ ապա, երբ դուրս կը գար այդպիսի տանից, մինչև թաղի վերջը ինչ ծանօթի որ պատահէր, կը սկսէր փոստալ, ա'խ ու վա'շ անել, մեռածին գովել, աչքերը սրբել և ձեռքերը ծնկներին խփել:

Իւր տանը Բաբուշկան քաղցրաբարոյ հիւրընկալ էր: Շաբաթ չէր անցնիլ, որ նորա տանը մարդ չը գիշերէր: Գալիս, գնում էին տեսակ տեսակ մարդիկ և նորա հարեանները այլ ևս չէին հետաքրքրուում, չէին ուզում հասկանալ թէ այդքան մարդիկ ի՞նչպէս են նորան գտնում և ի՞նչ գործ էին ունենում նորա հետ: Տեսնում էին, օրինակ, մի սպիտակահեր և մէջքից կուացած ալևոր, որ առաջին անգամն էր այդ թաղը դալիս. տեսնում էին թէ ինչպէս էր նա չորս կողմ նայում, զգուշութեամբ քայլում, կարծես չէր ուզում որ իրան ուրիշ մարդ տեսնէ. կանգնում էր դրսի դռների մօտ, ականջ դնում թէ արդեօք ձայն չի գալիս պառաւի սենեակից և ապա մտնում ներս: «Երևի գործ ունի», ասում էին տեսնողները և անցնում: Բայց «խալխի Բաբուշկան», ինչպէս նորան էին անուանում մի քանիսները, միշտ չէր քաղցրախօս, սրտաբաց: Պատահում էր այնպէս, թէև քիչ, հազարից մի անգամ, որ նա բարկանում էր, և այդպիսի ժամանակ նա մի տղամարդ էր, այդպիսի ժամանակ նորա առջևը կանգնել չէր լինում: Ախում էին դէպքեր, երբ նա իւր «չմշկի» մի հատը ձեռքին բռնած, տանից դուրս էր անում այն հիւրին, որ մի կերպով բարկացնում էր նորան:

Բարսեղն էլ ճանաչում էր պառաւին, ճանաչում էր, ի հարկէ,

միայն լաւ կողմից. իսկ եթէ մի-մի նորա ականջին էին հասնում վաստ համբաւներ նորա մասին, չէր ուզում հաւատալ իւր ականջներին: Եւստի խօսք է, ասում էր, ամենքը մի չափով են ձեռում: Միշտ նորան պատուում էր Բաբուշկան. միշտ լցնում էր նորա ծոցը, ճանապարհ դնում: Եւ ոչ մենակ նորան, այլ առհասարակ սիրում էր տընանկ և անկարող աղքատներին, կոյրերին, անդամալոծներին: Եւստի կական աղքատները սրանք են, ասում էր Բաբուշկան. սրանց տըւածն է հոգու վարձք. Քրիստոս ինքն էլ, մեռնե՛մ նորա շաղաթաթախ ոտներին, շատ անգամ սրանց հազուատողն է ման զալիս:

Բարսեղը ցոյց տւեց այն տունը, ուր ինքն էր ապրում, Աննայի տունը: Պատմեց բոլոր հանգամանքները, ասաց որ մի խեղճ կին է, ունի մի երեխայ:

Բաբուշկան էլի իւր խորհրդաւոր հայեացքը գցեց նորա վերայ, էլի երկու թէ երեք անգամ ձախ աչքը թեթեւ փակեց և զլսով աներով, հարցրեց.

— Հը՛, չը լինի՞ թէ հէնց նա է հարսնացուդ. ասա՛ մի տեսնեմ:

— Ի՛նչ կը լինի որ:

— Աստուած տայ, Աստուած տայ, ես ի՛նչ պիտի ասեմ: Քրիստոնեա՛յ, քո շարն ուզողը ե՛ս եմ: Հա՛, լաւ է, շա՛տ լաւ: Ենորհաւոր լինի, օրհնուիս դու, որ այնպիսի խեղճին նայում ես: Հիմա կ'ասեմ՝ վեր կաց գնա՛... գնա, քեզ կը սպասեն:

— Հա՛, սպասում են, միշտ սպասում են ինձ... գնա՛մ, շատ շնորհակալ եմ, Բաբուշկա, Աստուած մէկը հազար շինէ, ձեռքդ կանաչ մնայ, Բաբուշկա:

— Լաւ է դառել, լաւ միտք է. էլ չի ուշացնես, մի գիշերւայ բան է, մի քահանայ կանչի՛ր, պրծացրու:

Այսպէս էր ասում նա, աղքատին մինչև դուռը ճանապարհ դնելիս: Երբ Բարսեղը փողոցի դրանն էր հասել, պառաւը յանկարծ մի բան չիշածի նման, կանչեց.

— Ա՛յ տղայ, մտիցս գնաց որ հարցնեմ. զոնէ լա՛ւն է:

— Ինչո՞ւ չէ, Աստուծու աւած շնորհքն ու երեսն ունի:

— Լա՛ւ է, լա՛ւ, վերջացրեց նա իւր հարց ու փորձը և իսկոյն դուռը փակեց:

(Կը շարունակւի)

Պ Օ Է Տ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆՅԻ

Պօէտը մի օր գովում էր երկինք,
Երբ այնտեղ պայծառ փայլում է լուսին,
Երբ շողշողում են աստղեր զեղեցիկ
Կէսգիշերային խաղաղ ժամերին:
Եւ ես անտարբեր լըսում էի այն
Սահուն խօսքերի ներդաշնակութիւն,
Եւ հայեացքս երկինք, պօէտի նըման՝
Դիտում էի լուռ աստղերը փայլուն:
Եւ սառն էր իմ սիրտս, որպէս եթերքում
Սառն են և՛ աստղեր և՛ ամպ և՛ լուսին,
Որպէս լուստեան լուռ են երկընքում
Նոքա՝ այնպէս լուռ էր սըրտիս միջին:

Մի այլ օր պօէտն յուզւած, վրդովւած
Պատմում էր մարդոց մի գործ չարութեան,
Այնտեղ մի թըշուառ, անմեղ գոհ դարձած՝
Նահատակում էր անվերջ, անվախճան:
Եւ ես վրդովւած, պօէտի նըման՝
Լըսում էի այն տըխուր պատմութիւն,
Ես տեսնում էի մի վէրք մարդկութեան,
Հորւած ու թաղւած ոճրագործութիւն:
Եւ այրւում էր սիրտս, որպէս ահարկու
Այրւում են ցուերն այն գոհի սըրտում,
Ես պատրաստ էի իմ կեանքս տալու՝
Թէ նա երջանիկ լինէր աշխարհում:

1886 թ. Ալէքսանդրօպօլ.

Խ Ե Ի Կ Ա Ր Ա Պ Ե Տ

ՍԱՐԳԻՍ ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

(Նարունակութիւն և վերջ ¹⁾)

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

ԴԱԻԱԾԱՆՈՒԹԻՒՆ—ՈՎ ԶՈՒՍՏ, ՓՈՐԸ ԿՈՒՅՏ

Լ Ա .

Յ Ո Ւ Ս Ս Հ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Իրաւարար ժողովարանի քարտուղարը չ'ուշացրեց մեծաւորների մտադրութիւնը ծածուկ հաղորդելու Մելիք-Ղարազեօզեանցին: Յովակիմ բէգը սարսափեց և, առանց վարանելու, շտապեց պէտք եղած պատրաստութիւնները տեսնելու: Մագազինի դուռը փակեց և մայր տոմարներն սկսեց այրել: Բոլոր մուրհակներն կաստից հանեց ու զրպանը դրեց: Որքան որ առձեռն փող կար սնդկումը, լցրեց մի տոպրակ և տեղաւորեց զամբիւղի մէջ: Աչքի անցկացրեց երկրորդական տոմարներն և շատ հաշիւներ փակեց: Կայքերի և անշարժ կալւածների տոմարն ու դոկումէնտները մի կաշեաց անդուկի մէջ զետեղեց: Թղթակալների թղթերը, մի լաւ քննելուց յետոյ, որը պատուեց, որը վառեց և որն էլ մէջը թողեց: Բոլոր պատրաստու-

¹⁾ Տե՛ս «Մուրճ»-ի 6, 7 և 8 համարները:

Թիւնները տեսնելուց յետոյ, դուռը բաց արեց: Երիկւայ մուտքը կոխելու վրայ էր, ակտուապանն էլ ձին բերել էր տիրոջը տուն տանելու:

— Ռոստոմ, ասաց բէզը, ո՞վ կայ այդտեղ:

— Մկրըրը, տէ՛ր իմ:

— Կանչի՛ր:

— Այս բոպէիս:

— Մկր՛ր, ասաց բէզը, այս զամբիւղը դու վեր առ, այս սընդուկն էր տուր Վարդանին և շուտ ետևիցս եկէք:

Ռոստոմի օգնութեամբ ձի նստեց ու տասը բոպէում հասաւ տուն: Սովորական ժամն էր տուն գնալու, և ոչ ոք չը նկատեց բէզի այլապլութիւնը: Մտաւ ննջարանը: Մնդուկներում և պահարաններում ունեցած թղթերն աչքի անցկացրեց: Բարեբաղդաբար տանեցիք բաղնիս էին գնացել և ոչ ոք չը նկատեց շփոթութիւնն ու զողզողը: Մի ժամից յետոյ մտաւ սրահը, որտեղ հանդարտութեամբ եղբոր որդուց հետ ընթրիք կերաւ, չիբուխը քաշեց և զայջփան խմեց:

Ծառաներին պատուիրեց, որ ժամանակ անցկացնելու եկողներին չ'ընդունեն, և իւր գլխի ցաւը պատճառելով, ինքն էլ գնաց ննջարանը:

Գովլաթ խանումը աշխատեց բէզի սիրտը ուրախացնել զանազան զւարճաբանութիւններով, բայց երբ նկատեց, որ սաստիկ մտատանջութիւնների մէջն է, աւելի չը վրդովելու համար, առաւ տագերորդիքն ու հեռացաւ ներոջ մօտ: Բէզը մօայլ դէմքով ձեռքերը ետևը դրած, ման էր գալիս սենեակում: Աշտանակի ճարպէ մոմի ճթճթոցից ջոկ, ոչ մի ձայն չէր լսուում: Ամբողջ մարմնով տատանուում էր բէզը, այնպէս որ քիչ էր մնում գլորւէր:

— Ալի՛, Ալի՛, ձայն տւեց նա:

— Հրամեցէ՛ք, տէ՛ր իմ, պատասխանեց թուրքմանը, ներս մտնելով:

— Փա՛յտ բեր, օճախը վառէ՛:

Ալին իսկոյն կատարեց: Բէզը կարծում էր, որ ցուրտ է. բայց ջանի զողը վախից էր, որ ատամները կչկչացնում էր ջերմախտով բռնւած մարդու նման:

— Ախ, ասում էր սրտմտած, այս ի՞նչ օրերի մէջ մնացի. այս ի՞նչ ցաւեր է վիճակւած եղել ինձ համար: Միթէ՞ չէր կարելի

հանգչել, առանց այս վշտերը կրելու: Միթէ՞ այսքան բարիքներ վայելելուց յետոյ, վիճակած էր տեսնել այս տառապանքներն ու անպատուութիւնները: Այս ալեոր մազերովս այս խաչտառակութիւնով պիտի գերեզման իջնեմ: Աշխարհից գովեա՛ծ, և այնքան պատուած այս դուլսս պիտի այնքան ստորութիւնով մանի դադաղը ու սև հողը: Այս պարզ ճակատս դաւաճանների և խաբեբանների համար պիտի կարմրի: Աչքերս, կէս դար աշխատութիւնով, արդար վաստակով ձեռք բերածս կայքերի ու կարասիների օտարի ձեռքումը խաղալիք լինելը տեսնելով պիտի գոցւին: Այս տունը զաղին ու զասէմը (Բաժանարար) պիտի ցուցա՞կ մտցնեն: Լաւ է, լաւ է մի օր առաջ մեռնել, քան թէ աչքով տեսնել իւր կնոջ կամ հարսի սրնդուհում գանձած կտոր-բրդու՛ճ շէջերի ստեան դուրս գալն ու գնահատւիլը զանազան ծաղրալի մունետիկների բերանում: Այս երկրում, որտեղ օրէնքները միայն թղթի վերայ են գրեա՛ծ, պաշտօնեաներն սանձարձակ, առանց կօնորօլի են վարում իրանց պաշտօններն, պատասխանատու չեն իրանց ասօրինի վարմունքների համար, դեռ շատ ու շատ մարդիկ ամօթից և յուսահատութիւնից ողջ ողջ գերեզման են մտնելու: Բայց ի՞նչ մեղք ունեն դոքա, ի՞նչ կարող են անել մեզ, եթէ կոթը մեզնից չը լինի: Ա՛խ, ա՛խ, Խե Կարապե՛տ, քո դատաստանը ինձ յանձնե՛ն, որ տեսնես վճիռը: Բայց շատ լաւ եղաւ, շատ զո՛հ եմ քեզ հանդիպելուց, իմ շատ կարծիքներն ու կասկածները պարզւեցին: Այո՛, քեզ պէս հրէշները միայն կարող են այդպիսի գործեր մտա՛ծել, որոնք դու կատարեցիր: — Ձեռքերը ծնկներին զարնելով մի ա՛խ ևս քաշեց ու շարունակեց.

— Ինչի՞ հօրդ մեղքանայի և անխնայ կերակրէի տարիներով, հազարներով փոխ տալի և ապա բաշխէի: Միթէ հայրենիքում ուրիշ տնանկ աղքատներ չը կային: Մեղաւորը ես եմ, որ քեզ այդ վիճակիդ և այս դրութեան հասցրի: Այո՛, շատ մարդիկ օգնութիւն ինզրել են, նրանց մերժել եմ, բայց քեզ պահպանել եմ՝ ցեց դառնալու և կեանքս ծակծկելու, մաշելու համար: Դո՛ւ, դու այնքան մեղաւոր չես, որքան ես: Քեզ միայն հարիւր ոսկի դրամագլուխ տալով, կարող էի բարի քաղաքացի և առևտրական դրացի շինել: Բայց հանձարիդ ու ձայնիդ զմայլած, ուզեցի մարդու որսորդ շինել և արիւնակիցներիս իրանց արիւնովը շաղախեա՛ծ ու կաթի հետ սնեա՛ծ ե-

կեղեցուց ու պապերի աւանդութիւններից դուրս հանել: Տե՛ղն է, ինձ դեռ քիչ է: Հերիք չէր պապիս խաբւելն ու սխալւելը, անգիտակցաբար ճարահատեալ ընկնելն ու մեզ էլ գցելը այս հարստահարողների ճիրանների տակ, ընկերներ էի ուզում քաշել, տանել հետս: Որքան սոսկալի էին մտքերս, այնքան սոսկալի եղաւ պատիժս: Մնեցրա՞ծս իժը սիրոս խալթեց: Ո՛րքան կոյր էի, ո՛րքան անզգայ էի, որ այսքան տարիներում օտարի մեզ տւած կաթնում խառնւած թոյնը չէի նկատում: Աէի մտածում թէ՛ ինչի՞ց ստիպւած նապօլէօնն և Պիոսը աշխատում են հային հաց տալ: Ուզիղ է, խոստովանւում եմ, որ շատ օգնեցին ինձ կանգնեցնելու, փայլեցնելու: Գերերջանիկ հայրը Բ. Իրան առաջը բարձրացրեց իմ համբաւը, և կործքիս կախւած պատւանիշներից շատերը նորա շնորհիւ եմ ստացել. բայց այդ բոլորը, բոլորը իրանց շահի համար են արել: Նստել եմ, կանգնել եմ, շարժւել եմ, գործել եմ նրանց ուղղութեամբ, արձանի դեր եմ կատարել ամեն տեղ: Ոչ իմ սեպհական խելքովս եմ գործել և ոչ էլ իմ դատողութիւնով: Ինչ որ հրամայել են, խկութեամբ՝ առանց քննութեան, կատարել եմ: Ինչ որ վաստակել եմ, իրանց մասն լիք լիք ստացել են, տասանորդից ջոկ: Տարեկան հազարներով իրանց զրպանն եմ զցել, կամ, իրանց հրամանի համաձայն, եկեղեցիների և կրօնականների վերայ եմ ծախսել: Իմ օգուտս նոցա շահումն եմ տեսել և նոցա պայծառութիւնովը գողոզացել: Պատրաստ եմ եղել ամեն բոպէ կեանքս մինչև անգամ զոհելու նոցա պատւի համար՝ առանց որ և է ակընկալութեան: Ինչպէս երևում է, այս բոլոր աշխատանքներիս փոխարէն ինձ մի փոր հաց և մի ձեռք շոր է վիճակւած եղել և ունեցածներիս լոկ ծառայ և սպասաւոր եմ նշանակւած եղել: Անխիղճները բոլոր կաջքս էլ յափշտակելու մտադրութիւն են ունեցել և Պապի միջոցով կողոպտել ու մերկացնել ինձ: Աւ՛յ իմ կուրութեանը: -- Նստեց բազմոցի վերայ և գլուխը ձեռքերում ամփոփած մրմնջած.

— Իհրուք թէ ես ձեր զերին էի, իմ դառն աշխատութիւնները ձեզ վաճառել էի. բայց ի՞նչ մեղք ունի իմ եղբայրս, իմ սիրելի Բէզլարը, մի՞թէ և նա ծախել էր իւր կեանքը: Աէ՞ որ այս հարստութեան կէսը նա է ձեռք բերել, նա է կրել միշտ ամենա-

ծանր և անտանելի բեռը այս ճոխութեան: Բէզլա՛ր, Բէզլա՛ր, եթէ ես մեռնիմ, մի կին ունեմ, որ կարող է ապրել մինչի մահ ոչ շատ դառնութեամբ. բայց քո մանկիկներին, քո մատղաշներին ի՞նչ պատասխան պիտի տամ: Նորա ու նոցա հանգստութիւնը ես մի փոր հացով ծախեցի: Թշառ ու անճար զաւակնե՛ր, պիտի օրհնէ՞ք թէ անխճէք իմ գերեզմանը:

Տաքութիւնը վրայ եկաւ և սկսեց քրտինքը Յովակիմ բէգի ճակատիցը հոսել: Լուռ ու մունջ հրացայտ աչքերը շողողացրեց չորս բոլորը. դուռը փակեց, ոսկու կապոցները ձեռքը, աշտանակը վառեց ու պահարանի դռնից ներս մտաւ: Այստեղից մի գազտնի դռնով իջաւ մութ տունը: Այս հինգ արշին տրամագծով, կամարակապ, գետնափոր, կլոր այրը, որ անյայտ էր աշխարհին, ամփոփում էր Մելիք-Ղարազեօզեանների գանձերը: Յովակիմ և Բէզլար բէգերը միայն զիտէին զորա ճանապարհը: Քարի սանդուղքներից իջաւ Յովակիմ բէգը այրը և ճրագը պատից դուրս ցցած աշտանակակալի վերայ դրեց: Լոյսը սփռեց և անմիջապէս պատերի և դրմբէթի սրբատաշ կարծր քարերը լուսաւորեցին:

Բէգը ձեռքի կապոցը վայր դրեց: Մօտեցաւ պատին և մի աներևոյթ զսպանակի վերայ մատը դնելով՝ հրէշի պէս երկաթէ մի դուռ ճռնչելով՝ ինքն իրան բացեց: Բէգը կապոցներն ու արկղիկներն քննելուց յետոյ, բերած ոսկիների տեսակներովը լցրեց զանազան արկղիկները: Յետոյ մի ուրիշ դուռ բացեց նոյն կերպով և զանազան մատանիներ, թանկագին քարեր, կաթով մարգարիտներ տեղաւորեց նորա մէջ: Երբորդ դուռը բացեց և զրիչն առնելով այնտեղ գտնւած սոմարում զանազան ծանօթութիւններ գրեց: Գրպանի բոլոր մուրհակներն այնտեղ դնելուց յետոյ, փակեց դռներն, ու, ճրագն առած, դուրս եկաւ: Բաւական ժամանակ լուռ մանզալուց յետոյ, մռնչելով շարունակեց իւր մենախօսութիւնը.

— Յիմար անմիտնե՛ր, ի՞նչ էք մտածում. կեանքս էք ուզում, ահա՛ ձեզ, բայց եղբայրս ու որդիքը վրէժս պիտի լուծեն: Գիտէք, որ ես առիւծ եմ, ծերացած առիւծ: Կնոջս արգանդը փակողը Բէզլարիս և իւր զաւակներին ինձ ժառանգ է տւել: Ես այն կորիւնների հացն եմ: Զգուշացէ՛ք, զգուշացէ՛ք: Նրանք ձեր խաբեպատիր խօսքերին չեն հաւատալ և ինձ պէս ձեզ յանձնել: Նրանց ստամ-

ներն էլ չէք կարող քաշել և նրանց բերաններին սանձ դնել: Ախ, ո՛րքան անմիտ էի: Բէզլա՛ր, Բէզլա՛ր, ես քո սրանց վերայ ունեցած իրաւացի թերահաւատութիւնդ ո՛րքան անիրաւարար թշնամանել եմ: Ի՞նչ վաղ օրով զգացել ու ինձ զգուշացրել էիր, բայց իմ գլուխս, իմ գլուխս եօթը տարեկան հասակիցս ի՞նչպէս էր մոլորուել ու սրբանց նախապաշարմունքներովը լցուել ու կուրացել: —Այս ասելով ոտքի ելաւ բէզը:

—Իմ ընտանեկան և անձնական զաղտնիքներս, որոնք սրտիցս և հոգուս ջլերից ջոկ ոչ ոքին, ոչ մի արարածի յայտնի չեն, խոստովանահօր ձեռքով տեղեկանան և Հոռոմ ծիրանաւորներն, Պարիզում փաստաբաններն աշխատեն բերնիցս խօսք դուրս քաշել: Ախ, չիմա՛ր, չիմա՛ր Յովակ, մի՞թէ պապերիդ սրբազան աւանդութիւնները քո սիրտդ պիտի արատաւորէին, որ դու միամտաբար պարզեցիր մի ցնդած խոստովանահօր, որ իւր տիրոջ, Քրիստոսին, ուրանալով, տարաւ ծախեց զաղտնիքդ ժեզեխաներին: Աեղոտոտ դաւաճաններ, խոստովանութեան սուրբ խորհուրդի միջոցով միայն ինձ հմայեցին ու կաշկանդեցին, գաղտնիքիս ծայրը նշմարեցին. բայց երբ իրանց մօտ ուրացայ և իսպառ մերժեցի նրանց միլիօններն, երես զարձրին ու հալածում են անխնայ: Տեսնենք ե՞րբ պիտի դադարին: —Խոհուն դէմքով մի քիչ լուելուց ու մտածելուց յետոյ, ասաց.

—Բայց սրանք պէտք է մոռացած առայժմ և վաղան մասին խորհել: Միւս օրը զայլու են տունս գրելու, ես խայտառակելու եմ աշխարհի առջև: Ճար չը կայ, հարկաւոր է զրել հեռագրով եղբօրս Կ. Պօլիս, զուցէ կարողանայ առաջն առնել: Ժամանակը կարճ է և հեռագիրը ժամանակին զուցէ չը կարողանայ հասցնել:

Բէզը մօտեցաւ գրասեղանին, առաւ գրիչը և զրեց հետեւալ հեռագիրը.

«Կ. Պօլիս, Բէզլար բէզ Մելիք-Ղարադեօզեանին:

«Ամոռոյ տասին մտադիր են մեր բոլոր կայքերը ցուցակագրել, Պապի ինդիրքի համաձայն: Աշխատի՛ր անյապաղ առաջն առնել:

Յովակիմ:

Հեռագիրը Ալին տարաւ և մի ժամից անդորրագիրը բերեց:

Հեռագրատան տեսուչը ընդունել էր հեռագիրը: Այդ իրիկուն իւր մօտ հիււր էր սէր-Վարապետը: Հեռագրի բովանդակութիւնը իմացաւ վարդապետը և բարկութիւնից կապտեց: Երկար ու բարակ խորհուրդից յետոյ, հեռագրատան տեսուչը խոստացաւ հեռագիրը չը զարկել մինչև հետևեալ իրիկունը, իրան էլ արգարացնելու համար կօնտորում մի անյայտ տեղից կտրեց հեռագրական լարը և մարդ ուղարկեց ճանապարհներին կտրւածը կապելու: Այս ծառայութեան փոխարէն վարդապետը վճարեց քսան և հինգ ոսկի:

ԼԲ.

Վ Ե Ր Զ Ի Ն Հ Ր Ա Մ Ա Ն Ն Ե Ր

Քսան և չորս ժամում քսան անգամ Ալին զնաց հեռագրատուն և դատարկ ետ դարձաւ: Բէզն անհամբեր սպասում էր պատասխանին: Բարկութիւնից կրակն աչքերն առած վառւում էին. այտերը կարմրած շանթի նման պսպղում էին. ճակատից շոգին քուլայ քուլայ բարձրանում էր: Ենչառութիւնից կուրծքը մի սեամ լայնանում էր և իրանը ամբողջապէս տատանում: Երբեմն մատների հետ էր խաղում, երբեմն ձեռքերը շփում, երբեմն ծընկերին խփում ու ազգրը տրորում: Երբեմն ողջ մարմնովը դողողում ու շարժւում էր, երբեմն էլ անշարժ արձանի նման ժամերով թրմրում ու աչքերը մի առարկայի վերայ չառած՝ մտածութիւններով տագնապում ու խորատուզում:

Գիշեր էր, կէս գիշերին մօտ: Ալին դատարկ վերադարձել էր հեռագրատանից և բէզի ննջարանի դրան առաջը կանգնած՝ չէր համարձակւում ներս մտնելու: Փականքի ծակից որքան աշխատեց ունչ չը կարողացաւ տեսնել, որքան էլ ականջը կախեց՝ բացի խեղդած շնչառութիւնից ունչ չը լսեց: Հաւատարիմ ծառան վախենում էր զուռը բանալ և երկու անդուր բառեր արտասանել: Բացի այս, գիտէր, որ անցեալ գիշերը անքուն էր անցկացրել տէրը և, կարծելով, թէ գուցէ քնած լինի, չէր ցանկանում հանգիստը վրդովել: Սպասեց ժամերով, բայց տխուր ժամերը անչափ երկարեցին: Բարի ծառան իւր տիրոջ ցաւերին ցաւակցում էր, ինչպէս որ ընկերաբար բաժանում էր նորա բարիքները: Կանգնած տեղը զլուխը պատին

կռթնած՝ քնեց Ալին, չը կարողացաւ չաղթել բնական պահանջին: Յովակիմ՝ բէգը ուշաբերւելուց յետոյ, կանչեց.

—Ալի՛, Ալի՛:— Պատասխան տուող չ'եղաւ:

Ճրադն առաւ և դուռը բացեց, տեսաւ ծառային քնած կանգնած տեղը: Ալիի դէմքի վերայ բերելիք պատասխանի բովանդակութիւնը տեսնելով՝ ետ դարձաւ: Ողջ զիշերն անքուն անցնելուց յետոյ, առաւօտ վաղ մարդ ճամբեց տեղեկանալու, թէ մութասարի՛ֆը, Էմին փաշան, քնից վեր կացա՞ծ էր: Բարեբաղդաբար լրարբերին մութասարի՛ֆի տան բակումը պատահեց հէնց ինքը Էմին փաշան և պատուիրեց, որ գնաց ու բէգին տունը, իրան մօտ ուղարկէ:

Յովակիմ՝ բէգը ուղիղ գնաց մութասարի՛ֆի բնակարանը: Փաշան ընդունարանումը չ'իբուխ էր ծխացնում ու զայ՛ջայ լսմուն: Բէգին անմիջապէս չ'իբուխ և սուրճ բերին:

—Ի՞նչ ունիս, կասես թէ սաստիկ տխուր ես և հիւանդութեան պէս բան է երևում դէմքիդ վերայ, ասաց փաշան:

—Ո՛չ, տէ՛ր իմ, առողջ և շատ առողջ եմ, բայց մի քիչ մտածմունքներ խռովում են հոգիս, պատասխանեց բէգը:

—Վերջերս բարի լինի, ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել:

—Ոչինչ, բայց քառասուն տարի պատուով և ամենայն հաւատարմութեամբ տէրութեան ծառայած մի մարդու շատ դժւար է հրապարակով իւր անպատուութիւնը տեսնել: Գլխիս մազերը տէրունական գործերումն եմ ճերմակացրել և դէմքս ու ճակատս ծառայութիւնների մէջ խորշումտել: Ես չեմ գանգատում վիճակիցս, փառք Աստուծոյ, հազարներով ինձ հատուցել է, բայց դառն է ինձ համար այս վերջին օրերումն աշխարհի այսպանքները լսելն ու տեսնելը:

—Ի՞նչ է պատահել, պատմի՛ր տեսնեմ, ինչի՞ քեզ վրդովում են:

Բէգը մի առ մի պատմեց գործերի դրութիւնը:

—Զարմանում եմ, ասաց փաշան, այդպիսի բան չեմ կարծում, որ պատահի: Այս նոր օրէնքները սատանան էլ չէ հասկանում թէ ի՞նչ հնարքներ են: Բայց դու անհոգ կաց, ես այս բուպէին կը կանչեմ՝ զաղիին և կը հրամայեմ, որ զոնէ չորս, հինգ օր յետաձգէ մինչև Կ. Պոլսից տեղեկութիւն գալը:

—Ինչպէս որ կամենում էք, փաշայ է՛ֆէնդի՛: Իմ տունս աւելի

լաւ է կրակ ընկնի ու այրւի, քան թէ զաղիով ու զասիմով զրի առնւի:

—Գիտե՛մ, գիտե՛մ ինչպէս վշտանում է սիրտդ, բայց անհոգ կաց, այսօր ևեթ մի բան կ'անեմ:

—Յառայ եմ, տէ՛ր իմ, ասաց ու զուրս եկաւ բէզը:

Սութասարի՛ջը նոյն օրը կանչեց իւր մօտ իրաւարար ժողովի ատենապետին ու նախազահին (զարուհի): Երկու ժամ խօսակցութիւնից յետոյ, չը կարողացաւ նրանց համոզել ու ետ կանգնացնել մտադրութիւններէր: Ղաղին կակազում էր, բայց Բէհրէմը զիմադրեց ամեն կերպով:

—Զերդ պաշտօնաւիպյութի՛ւն, ասում էր Բէհրէմը. զիտե՞ք այժմ օրէնքների խստութիւնը, մենք միայն նրանց կատարելու կոչւած ենք և ոչ թէ կամայականութեամբ ուղածներիս պէս շրջելու:

—Կամայականութեան ոչինչ չը կաց, կարող էք այդ ցուցակադրութիւնը մի տասն օր յետոյ կատարել և ոչ այսօր:

—Գրանով միջոց կը տանք պատասխանատուին թագցնելու իւր կայքը և տեղիք կը տանք պահանջատիրոջը մեր ապօրինի վարմունքի դէմ բողոքելու բարձր ատեաններում: Բացի այս, եթէ պատասխանատուն ծածկէ իւր ինչքը, կառավարութեան եկամուտին էլ վրնաս կը հասնի:

—Գրանցից և ոչ մէկը կը պատահի, դրանք կարծիքներ են միայն:

—Եթէ պատահի, մենք ենք պատասխանատուն:

—Այդ պատասխանատուութիւնները ես յանձն եմ առնում, միայն դուք խոստացէք յետաձգելու գործը: Գիտէք, հասարակ մարդու հետ գործ չ'ունինք: Ողջ պետութեան յայտնի մարդ է, և զըրան ձեռք տալը վտանգաւոր է:

—Օրէնքի առաջ բողոքը հաւասար են, տէ՛ր իմ, ասաց Բէհրէմը. յայտնի մարդ լինելով, չէ կարելի ուրիշի իրաւունքները իւրացնել:

—Այդ իրաւացի է, բայց բացառութիւններ կը լինին այսպիսի դէպքերում:

—Բացառութիւն չը կաց օրէնքների մէջ:

—Այս դէպքում, այս նահանգում, մի այդպիսի մարդու համար

Թող լինի: Գիտե՞ք, որ քան ծանր է մի պատուաւոր վաճառականի կայքը. ցուցակագրելը: Բացի այս, այդ ի՞նչ օրէնքի վերայ հիմնած և ի՞նչ փաստերով էք սխում՝ ցուցակագրել՝ ինձ յայտնեցէ՛ք:

— Տրւած խնդիրքի համաձայն, ասաց Բէհրէմը:

— Գուցէ անհիմն է պահանջը. ի՞նչպէս կարելի է խնդիրքի համաձայն գործ սկսել: Գուք ցոյց տւէք օրէնքը, որի համաձայն իրաւունք ունիք գործադրել խնդիրքը: Ձեր բռնելիք գործի համար՝ ո՞վ է պատասխանատու:

— Պահանջատէրը:

— Եթէ բէզն արդարանայ, պատուոյ դատը ո՞ւմ դէմ պիտի բանայ:

— Պահանջատիրոջ:

— Պահանջատէրը արդէն պատիւ չ'ունէ, ի՞նչ կորուստ պիտի ունենայ: Բայց բէզը վարչութեան դէմ, եւրոպական մամուլի մէջ, ի՞նչ խայտառակ յօդւածներ պիտի չը գրէ և մեզ անպատէ: Բ. Գրան առաջ ես եմ պատասխանատու, ես եմ զազայի տէրը, ինձ է յանձնւած վերատեսչութիւնը բոլոր ատեաններէ, ես չեմ կարող թոյլ տալ, որ դուք այդպիսի մի պատկառելի հպատակի գոյքը գրէք:

— Գուք այդ պատասխանատուութիւնը դրէք մեզ վերայ, ասաց Բէհրէմը, մենք էլ օրէնքների յօդւածները ցոյց կը տանք:

— Ո՛չ, ո՛չ, ասաց բարկութեամբ Էմին փաշան. ես պատասխանատուութիւն, ամեն բան յանձն առած՝ հրամայում եմ ձեզ յետաձգել գործը: Վաղը Վարչութեան ժողովի մէջ (Մեջլէսի Խորէ) ձեր ժողովականների հետ կը կազմենք խառն ժողով, որտեղ դուք խընդիրքը և իրերի դրութիւնը կը ներկայացնէք: Ձեր մասնաւոր զեկուցումը կամ կը հաստատենք և դուք կը վարւէք ձեր գիտեցածի նըման և կամ նոր սնօրինութիւն կը լինի:

Բէհրէմ բէզը կատաղութիւնից կապտեց: Ղազին էլ օրէնքների անունը մոռացաւ և զողողալով ասաց.

— Շատ բարի, տէ՛ր իմ, առաւօտը կը կատարենք ձեր ցանկութեան համաձայն. և դուրս եկաւ՝ Բէհրէմն էլ ետևից:

Հետեւեալ օրը զազայի Վարչական ժողովում կայացաւ խառն ժողով և բաւական տաք վիճաբանութիւններից յետոյ, մեծամասն-

նութեան ձայնով որոշեց, որ երեք օրից կատարելի Յովակիմ՝ բեզի ընչից ցուցակագրութիւնը, փաշայի, հայոց առաջնորդի և ներկայացուցիչների ցանկութեան հակառակ:

Թէև այս վճիռը գաղանի էր, բայց քաղաքում իրար ականջի խօսում էին այս նիւթի վերայ: Հազիւ կժան թուրքերի կամքով մի այսպիսի վճիռ կայացաւ, որոնք իրար մէջ խօսում էին.

—Տեսնո՞ւմ էիք «գեափուրին», ողջ քաղաքը տիրել էր, որտեղ որ լաւ խան և խանութ, փուռ ու բազնիք, տուն ու գործատուն կար՝ տիրել էր: Նահանգի ամենանշանաւոր ազարակներն, այգիներն, անտառներն ու գիւղերը սեպհականել էր: Մեր նախարարներն էլ նշաններ չը մնաց, որ վզիցը չը կախեցին, քիչ էր մնում, որ մեր զլխին փաշայ էլ շինէին:

Յովակիմ բեզը առաւօտը վաղ վերկացաւ և ծառային ուղարկեց հեռագրատուն: Նստեց, գրեց կտակը, ծալեց, կնքեց և գրեց սնդուկն ու փակեց: Բերաւ ատրճանակը, մաքուր սրբեց, լցրեց, գնդակը ամուր սեղմելուց յետոյ՝ պատրոնը ծծանի վերայ անցկացրեց ու գրեց բարձի տակը: Կանչեց իւր մօտ եղբօր որդիներին, գրկեց, համբուրեց և դուրս ճամբեց: Մկրն եկաւ իմացրեց, թէ քարտուղարը պատրաստ սպասում էր զաղիի և Բէհրէմի գալուն: Ալին էլ դատարկ վերադարձաւ:

Ժողովի վճռած օրը և ժամը հասել էր. ամեն բոսլէ սպասում էին զասէմի տուն մտնելուն: Բեզը մի քանի անգամ ման եկաւ սենեակում և անդադար լուսամուտից փողոցների անցն ու դարձը դիտում էր: Մի քիչ յետոյ նախաձաշիկն ուզեց և հանդարտ սրտով կերաւ խորովածն ու մի շիշ կարմիր գինին վերան խմեց:

Հրամայեց, որ դռները կողպեն և ոչ ոքի չ'ընդունեն մինչև զաղիի գալը: Վերջին անգամ աչքի անցկացրեց անշարժ կայքերի ցուցակը և մրմնջաց. —Միայն երկու հարիւր քառասուն հազար լիրայի միւլք տասնեւմէկ քաղաքներում ու զազաներում: Ճարեկան տասնե վեց հազար լիրայ զուտ եկամուտ: Դօկումէնտներն էլ պատրաստ են իմ և եղբօրս անունով հաստատուած: Յայտնի է բոլորի էլ զնւած տարին, ծախողներն և զնողներն:

Այս խօսելով մի սնդուկի մէջ տեղաւորեց տոմարն ու տոպրակով դօկումէնտները: Դրանից յետոյ աչքի անցկացրեց շարժական կայքերի և տան կարասիների տոմարը, որը դրեց նրանց մօտ: Լուսամուտից դուրս դիտելուց յետոյ, եկաւ նստեց բազմոցի վերայ և ճխսխտօր չիբուխն ուզեց: Մտախոհ և լուռ Ֆսֆսացնում էր չիբուխը և ծուխը բարձրացնում սենեակի մէջ: Այս միջոցին դուռը երկու անգամ իրար ետևից սաստիկ խփեցին: Իէզը դուրս արեց ծառաներին և ձեռքն առաւ ատրճանակը: Լուսամուտի առաջը կանգնած՝ ատրճանակի ոտքը վերցրած՝ սպասում էր բերելիք լուրին:

— Հեռագի՛ր, ասաց հեւալով Ալին ու ներս մտաւ ատրճ մօտ:

— Գնա՛ ու շուտով ներս բեր, ասաց բէզը և զորւեց բազմոցի վերայ: Ատրճանակը դրեց կրկին բարձի տակը: Յրւիչը հեռագրի բովանդակութեան հետ ծանօթ լինելով, ցանկանում էր անձամբ ներկայացնել, և վեր բարձրացաւ: Իէզը դորա ազատ և ուրախ ձևերից քաջալերւած, հանդարտեց, ձգեց պատետը և կարդաց հետևեալը.

«Մելիք-Ղարաղեօզեանին.

«Մութասարիֆին հրամայւած է անմիջապէս մեզ վերաբերեալ գործերը զաղարեցնել և Կ. Պօլսից զալիք հրամաններին սպասել: Իէզլար»:

Յովակիմ բէզը զրպանից մի ոսկի զրնամ հանեց, տւեց ցրւիչին և հրամայեց անմիջապէս ձին պատրաստել:

ԼԳ.

ԱՆՅԱԶՈՂ ՎՃԻՌՆԵՐ

Կ. Պօլսի արդարութեան նախարարութեան ղոնից հետևեալ հրամանը ստացաւ Կարինի իրաւարար ժողովը.

«Արդարութեան նախարարութեան տրւած մի աղերսանքի բովանդակութեան քննութիւնը (սոյն 128... թ. քեանունի սանի 12-ից) հրամայւած էր մեր օրէնսդրական ժողովի քննութեանը: Խնդրատուն՝ Իէզլար բէզ Մելիք-Ղարաղեօզեան յայտնում է, որ Կարինի իրաւարար ժողովը հակառակ օրէնքների տրամադրութեանը, իւր իրաւունքներից դուրս, քառասուն և երկու տարի անցած և երբէք չը բողոքւած ժառանգական գործը, երկու եղբայրների և հօրեղբօրը»

դու մէջ քննութեան է ձեռնարկել: Խնդրատուն ներկայացնում է զրաւոր ապացոյցներ, որոնք հաստատում են խնդիրքի բովանդակութիւնը և այս մասին խնդրում է հրամանագրել Կարինի իրաւարար ժողովին՝ անհետեանք թողնել այդ դատը և, օրէնքների ցուցման համաձայն, նախ ստանալ Օղոստափառ Սուլթանի ողորմած առանձնական իրաւունքի հրովարտակը, որով կարելի է միայն սկսել քառասուն տարւայ հնացած դատերը: Ժողովս քննելով գործը, արդարացի գտաւ Մելիք-Ղարաղեօզեանցի խնդիրը և պահանջը, որը տեղեկացնում է Բարձ. Նախարարութեանդ՝ պատկանեալ կարգադրութիւնները հրամանագրելու: 128... թ., քեանունի սանի 13-ին.

Օրէնսդէք ժողովի նախագահ՝ Սէլիմ:

Բարդուղայր՝ Միհրան»:

Այս թղթի բովանդակութեան համաձայն՝ կատարեց վճիռը և տոմարում արձանագրեց: Բայց որովհետև Պապը չը կարողացաւ ութ հարիւր քառասուն հազար ոսկու դատական ծախքը երեք հազար երեք հարիւր վաթսուն ոսկու վճարել, Յովակիմ բեգը չը ցանկացաւ այդքան փող զուր տեղը կորցնել, վճռագիրը ոչ մէկ կողմին էլ չը տրեց:

Տէր-Կարապետը չը յուսահատեց: Նա վաղուց զիտէր, որ գործը կարող էր և այս ելքն ունենալ և սորա առաջն առնելու համար վաղուց իւր պատրաստութիւնը տեսած էր: Հարկաւոր էր միայն սպասել մի ամիս էլ ու ստանալ Խալիֆայի հրովարտակը: Այժմ նա միայն մի մտածմունքով էր զբաղւած, որից կախում ունէին ապագայի բոլոր գործերը: Զատիկի ստորագրութեան իսկութիւնը հաստատելուց յետոյ, ինքն իւր բոլոր նպատակներին հասած էր համարում:

Այս գործը Կ. Պօլսում վճռաջինջ ատենում հաստատել տալը Դը Բուան երաշխաւորած էր, բայց հարկաւոր էր նախ աշխատել վճռաքննիչ ժողովում հաստատել տալ: Վիլայէթի վճռաքննիչ ժողովի նախագահը՝ Միհրատ էֆէնդին մի նշանաւոր մարդ էր: Ֆրանսիական Ֆակուլտետում իւր իրաւագիտական ուսմունքը աւարտած և զանազան պաշտօններ վարելուց յետոյ, ժամանակաւորապէս նշանակւած էր այս պաշտօնում, մինչև նահանգի դատարանները վերանորոգելն և Կ. Պօլսում արժանաւոր տեղ բացելը: Սորան, երեք.

Հարիւր ոսկիանոց դործի մէջ, երեք Հարիւր ոսկով չէր կարելի կաշառել: Պակասով զժւար թէ ընդունէր, մեծ գումարն էլ կարող էր լուսաւորեալ երկրի սանին մեծ կասկածների տակ զցել: Սորան որսալը սարսափելի կերպով վտանգաւոր էր:

Հնարք չը կար, անպատճառ Ղը Բուան պիտի կարգի տակ զնէր այս գործը: Տէր-Պարապետի ինքնասիրութիւնը ստիպում էր իրան, որքան որ կարելի էր, Ղը Բուալից գործերը թեթեւացնել. բայց Միհրատ էֆէնդուն, աւանց նորա օգնութեանն ու միջամտութեանը, չէր վարող զբաւել: Ճարահատեալ՝ զիմեց մեծաւորին, խնդրելով, որ մի բարձր պաշտօն խոստանալով հրապուրեն Միհրատին և կամ այդպիսի մի պաշտօնի համար մի մեծ գումար պահանջեն, որպէս զի անձարադած, զիմէ իրանց օգնութեան:

Ղը Բուան ներքին գործերի նախարարի զբասնեակի մի բարձր պաշտօնականի ձեռքով, որ Միհրատի շատ մտերիմն էր, մինչը շանաւոր տեղ առաջարկեց մայրաքաղաքում: Գրասենեակի պաշտօնականը խոստանում էր Միհրատին, նախարարների ժողովի ժամանակը, միմիայն նորան ամենաարժանաւոր ներկայացնել այդ պաշտօնի և յաջողեցնել: «Մինչև անգամ, զրում էր Ղը Բուալի բարեկամը, խօսեցայ եպարքոսին ու արդարութեան նախարարին այս մասին և նոքա ինձ հետ համաձայնեցան և առաջիկայ ժողովում հարցը բարձրանալիս՝ անպատճառ զլուխ կը գոյ ցանկութիւնս և ես ուրախ կը լինեմ բարեկամիս ամենայն ժամանակ մայրաքաղաքում և մօտս ունենալով: Այս մասին կամքդ իմանալու համար՝ հարկ համարեցի սոյն երկտողովս յայտնել քեզ իրերի գրութիւնը և սպասել պատասխանիդ: Գիտեմ, որ չէք մերժիլ իմ առաջարկութիւնը:»

Նամակի վերջը աւելացնում է. «Ժամանակով մի այլազ ունէինք Անտօն անունով, որը հօրս շատ երկար տարիներ ծառայել էր: Փոքր ժամանակս ես էլ տեսայ նորան: Մեր տանը մեռաւ և հայրս քրիստոնեայ հոգևորականներ կանչեց և միառաւոր կերպով թաղել աւեց: Գորա որդին՝ Ջատիկը այդտեղ մի ինչ որ հարուստ վաճառականի հետ դատ է ունեցել չորս կամ հինգ հարիւր ոսկիի: Մի անգամ որ այդ տանը տէր ենք համարել, պէտք է և պարտաւորութիւն է օգնել մեր շքի տակ մեծացրածներին: Աւստի, խնդրում եմ, եթէ կարելի է, այդ թշառների արտասունքը սրբէք և չը

թողնէք, որ զօրեղները տկարներին ոտնակոխ տան, որով ինձ պարտաւորած կը լինէք: Կորանով յոյս ունէմ, որ Հանգուցեալ Հօրս յաւիտենականութեան մէջ ուրախացրած կը լինիմ: Յուսով եմ, որ չեք մերժիլ իմ այս խնդիրքը:»

Այս նամակը Միհրատ էֆէնդին զրեց անել զրութեան մէջ: Նամակագրողի վերայ մեծ յոյս ունէր և բովանդակութեան ճշմարտութեան վերայ բնաւ չէր կարող կասկածել: Նա այնքան փորձառու չէր և խորամանկութիւնները գուշակելու հմտութիւն չ'ունէր:

Միհրատ էֆէնդին Չատիկի այս զործը մանրամասն քննում էր և իրերի ճշմարիտ բացայայտութեամբը ուզում էր զարմացնել մեծաւորներին: Նա համոզւած էր, որ վճիռը ինչ էլք որ ունենար, ընկերը խնայելու չէր իւր ջանքը այդ խոտոացած պաշտօնի համար: Բայց ինքը ցանկանում էր փոխադարձաբար անպատճառ մի զործով օգնել: Կորա համար միտքը զրեց ամեն հնարք զործ զնել խսկութեան և արդարութեան հետ ծանօթանալու և եթէ իրաւացի զանի Չատիկի պահանջը, շուտով կատարէ ընկերոջ խնդիրքը: Այս բովանդակութեամբ մի նամակ էլ զրեց իւր ընկերոջը:

Երկրորդ նամակն ստացաւ Միհրատ էֆէնդին իւր Կ. Պօլսեցի բարեկամից, որտեղ նախկին խնդիրքը կրկնելուց ջոկ, խնդրում էր իրանից անդեկութիւններ տալ իւր անկեղծ բարեկամ տէր-Պարապետից, որի հետ ժամանակին փոքր հասակում իբր թէ դասակից են եղել և Ֆրանսերէն սովորել:

Միհրատ էֆէնդին բնազգումը չէր սիրում և ոչ մէկ կրօնի հոգևորականներին: Պրանսիացում եղած ժամանակ պարբերական հրատարակութիւններն և մանաւանդ ժեզուիտների ղէմ հրատարակւած զրութիւնները կարգալով՝ աւելի խոր արմատացաւ իւր սրտումը այդ ատելութիւնը: Նա իժի խայթւածքից այնքան չէր զգուշանում, որքան պաշտպանւում էր ժեզուիտներից: Սոցա պատճառով սարսափում էր և բոլոր կաթոլիկ հոգևորականներից: Այս իւր հակակրութեան հակառակ՝ ընկերը իրան ստիպում էր զիջանելու, և զնալով տէր-Պարապետի ոտքն, մտերմաբար կացութիւնը անդեկանալով՝ իրան հաղորդելու:

Մտածմունքների մէջ խորատուզում և տատանւում էր և չէր կարողանում մի հանգստացնող որոշման հասնել: Նա ուզում էր,

նախ իւր ընկերի ցանկութիւնը կատարել, այնպիսի ընկերի, որը առանց ակնկալութեան աշխատել էր, աշխատում էր իւր շուտօրոյթ մի լաւ ապագայի հասնելուն: Հանաք բան չէր արդարութեան նախարարի գրասենեակում, մանաւանդ մայրաքաղաքում, մի առաջնակարգ աթոռ բռնելը: Դա մինիստրական աստիճանի սանդուղքն էր, որտեղից կարելի էր բարձրանալ հինգ-տասը տարւայ մէջ: Այդ մի այնպիսի նախանձելի դուռ էր, որտեղից հնգարաւոր անձեր ճիգ էին թափում ներս մտնելու, բայց թոյլ տուող չը կար: Այդտեղ իրան հրաւիրել տուող ընկերի համար չէր իմանում ինչպէս փոխարինութիւն անէր: Թէև ինքը կարծում էր և համոզւած էր, որ իւր հանձնարովը արժանի էր այդ կոչմանը, բայց լաւ զիտէր, որ ամեն արժանաւորները առանց միջնորդի և բարեխօսի չէին հասնում հարկ ու պատշաճ աստիճանի: Ուստի պարտաւոր էր ընկերին:

Միւս կողմից իրան տանջում էին իւր սկզբունքները ժեզուխների դէմ և խիզճը, որը իրան յիշեցնում էր իւր ուխտերն ու երդումներն միմիայն արդարութեան պաշտպան կանգնելու համար արած: Գիտէր և միշտ զգում էր արդարագատութեան քաղցրութիւններն և կողմնապահութեան դառնութիւնները, որոնք մինչև վերջը անհանգիստ էին անում իրան և վրդովում հոգին: Նա շատ անգամ երևակայութիւններով և երազներով տեսել էր իբր սխալմունքով վճռած ու զրկած անձինքների տառապեալ ոգիներն և սոսկացել ու սարսափել էր: Այս դառն բուպէներում միշտ մտադրած էր իրաւարարութիւնից երբէք չը հեռանալ:

Երկար այս մտքերում տատանւելուց յետոյ, չը կարողացաւ փառասիրական կրքերին յաղթել, Բոսֆորի ափերի քաղցր և դիւթական հրապոյրներն ստիպեցին զիջանելու: Թուլութիւնն ու փոփոխամտութիւնը խոնարհեցրեց Միհրատ էֆէնդիին մինչև վարդապետի դուռը, որտեղ և կարգի մտաւ Զատիկի գործը:

Վարդապետը սորա վերայ ազատ շունչ առաւ և կարծում էր, որ արդէն հասել էր ցանկալի բաղձանքին և ահա արևմտից երևեցան սև և փոթորկաբեր ամպերը: Ութն օր առաջ թաղել էր Վարդովեան տէր-Պօղոսին, ահա լրաբեր եկաւ, թէ տէր-Անտօնը զալիս է տէր-Պօղոսին յաջորդելու: Բնաւ չէր սպասում տէր-Վարդապետը այս յան-

կարծական յաջորդի զարուն և մտքովն չէր անցնում, թէ ինքն վաղուց հրաժարւած էր պաշտօնից ու ժամանակաւորապէս կառավարում հօտր:

Տէր-Անտօնն եկաւ իջաւ. ընդունելութիւններն, դիմաւորողներն և հրաւիրողներն անհամար էին. պատիւն ու յարգանքը պատշաճապէս կատարեցին: Անցան օրեր, բայց տէր-Վարապետը օրինաւորապէս պաշտօնը չանձնելու չէր շտապում: Աւագութեան և մեծութեան համար տէր-Անտօնն էլ խաթրին չէր դիպչում: Տէր-Վարապետն էլ ցոյց էր տալիս, որ իբր ամեն բան չանձնել էր և ձեռնկանութիւնից խորշում էր: Սորան էլ այն ձանապարհով յաւիտենականութիւն ուղարկելու դժարութիւնները զգալով՝ ինչ հնար գործ դնելը չէր իմանում: Կ. Պօլսից էլ որոշ մի հրահանգ չը լինելով՝ շարեւ մնացել էր:

Տէր-Անտօնին էլ Կ. Պօլսից հրամայւած էր Յովակիմ բէգի կամքով շարժել, հետեւապէս ստիպեց այնդելու, որ օրինաւորապէս հաշիւները տալ և ձեռք քաշէ ազգային գործերից: Սորանից ծնողեցին երկու հոգեւորականների մէջ տարաձայնութիւններ և տէր-Վարապետը ստիպւած թողեց ժամատունը և գնաց բնակում էր Անգերենց տանը:

Տարին վերջացած լինելով՝ նոր ընտրութիւններ կատարեցին և հակառակ տէր-Վարապետի աշխատութիւններին, Անտօն վարդապետը Յովակիմ բէգի ընտրելիներն ներկայացրեց կառավարութեան ու հաստատել տւեց: Իւր Ֆէրմանն էլ ստացաւ, ներկայացրեց Դուռը և սկսեց օրինաւորապէս բաղմել զազայի վարչութեան ժողովում: Բայց սուքա չը վհատեցրին ո՛չ տէր-Վարապետին և ո՛չ էլ Միհրատ Կֆէնպիին:

Միհրատի Մելիտօնեանի հետ կապած սերտ բարեկամութիւնը իմացրին Յովակիմ բէգին, վերջինս էլ՝ Կ. Պօլիս Բէգլարին և Էթէմ փաշային: Միհրատը իւր կարծածից կանուխ կանչւեցաւ Կ. Պօլիս. բայց ոչ երևակայած պաշտօնով. և նորա տեղն եկող Յուստ բէգը, իւր ունեցած հրահանգների համաձայն, առանց յետաձգելու, ժողովի միաձայնութեամբ տւեց հետեւեալ վճիռը Անտօնի որդու և Յովակիմ բէգի գործի մասին.

«Յովակիմ բէգի վերաքննութեան տւած խնդիրքը Վարինի Վաճառականական ժողովի վճռի դէմ քննեց Վարինի վիլայէթի վերաքննութեան ժողովը և գտաւ հետեւեալը:— Յովակիմ բէգը իւր ստորագրու-

Թիւնը ժխտել և նորա շինծու լինելը յայտնել էր Կարինի Վաճառականական ժողովին. բայց նոյն ժողովը, մի վկայի ցուցման համաձայն, հաստատել էր ստորագրութիւնը: Վերաքննիչ ժողովը հարցրեց առաջին վկայ Աքիֆին, որ իւր նախկին ցուցմունքը կրկնեց և աւելացրեց թէ՛ այդ թղթի վերայ Ամիրխանեանի ստորագրելը չէ յիշում, թէ՛ չէր մտաբերում և Հասան էֆէնդին այն օրը Մելիք-Ղարազեօղեանների գրասենեակը գալը: Իւր կնիքը քննելիս՝ Աքիֆը աւելացրեց, որ ստորագրութեան վերայ գտնուած կնիքը իւրը չէ, նախկին ժողովում չեն տւել իրան քննելու իւր կնիքը և այժմ դորա կեղծած լինելը պնդում է: Հասան էֆէնդին ուրացաւ և նոյնպէս իւր կնիքի կեղծւիլը յայտնեց: Յակոբ Ամիրխանեանը ցոյց տւեց, որ ինքը մի այդպիսի թղթի վերայ ստորագրութիւն դնելը չէ յիշում և թէ ինքը վարժ դրագէտ չը լինելով՝ չի կարողանում իւր գիրը զանազանել: Հայոց ուսումնարանի երկու ուսուցիչները, որ էկսպերտ էին կանչուած, ցոյց տւին որ Մելիք-Ղարազեօղեանցի և Ամիրխանեանցի ստորագրութիւններն կեղծուած են. կնիք փորոզ մօլլա Դուրսուն Մէհմէդ օղլին ցոյց տւեց Աքիֆի և Հասանի կնիքների կեղծուած քնները: Ժողովը կարգաց բնակութիւնների կողմից տրուած հանրագրական վկայութիւններն և հայ-կաթոլիկների առաջնորդ Անտօն վարդապետի տւած վկայութիւնը, որոնք միաբերան վկայում էին Յովակիմ բէգի արդարադատ, անկեղծ, ճշմարտասէր և բարեխիղճ լինելը: Ժողովը մանրամասն բոլոր գործերը քննելուց յետոյ, ցուցմունքների համաձայն վճռեց. — Սերժել Զատիկ Անտօնի որդու դատը, Յովակիմ բէգին արդարացնել և դատաստանական բոլոր ծախքերը առնել Անտօնի որդուց: Վճիռի մի օրինակը ուղարկել Կարինի Քրէական ժողովը՝ յանցաւորի գործի քննութիւնը շարունակելու և օրինաւորապէս պատժելու համար: 28 Քեանամի սանի 128... թ.

Նախագահ ժողովի՝ Յուլառ,

Անդամներ՝ $\left\{ \begin{array}{l} \text{Հիւսէին,} \\ \text{Սլահվերդի,} \\ \text{Ղանաուզեան,} \end{array} \right.$

Տ. Կ.

Քարտուղար՝ Ֆերիադ:

ԼԳ.

Յ Ա Ղ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Տէր-Կարապետը մի կատաղի նամակ էր ստացել Դը Բուաից և շանթահարուել: Ոչ քուն ունէր և ոչ հանգիստ, զիշեր ցերեկ մտածմունքների մէջ խորասուզուած էր: Միշտ առանձնանում էր մի սենեակում ու ժամերով դուրս չէր գալիս: Տարիների ընթացքում խորհած ու շինուած, կարգի ու սարքի դրած թակարդից որսը փախել էր: Սրտի խորքերից մուշում էր ձագերը կոնցրած վագրի նման: Հառաչում էր, յիսուն տարւայ դառն քրտինքով և հազարաւոր ոսկիներով շինած ու մի զիշերում մոխիր դարձած քարւանսաբայի տիրոջ պէս:

Բայց վարդապետը չըլուսահատուեց, և երբէք քաջասրտութիւնը չը կորցրեց: Ընդհակառակը՝ աւելի եռանդով և մեծ աշխոյժով անընդհատ իւր գործը շարունակում էր և նպատակին հասնելու համար նոր նոր միջոցներ էր խորհում: Նա Միհրատի յանկարծակի փոխելը բազդի խաղ կամ անյաջող դէպք համարելով, գործի առաջ մղելուց չը կասեցաւ:

Նա ասում էր. քանի որ մէկը Կ. Պօլսում և միւսը այստեղ դէպքերն այնտեղից այստեղ և այստեղից այնտեղ իրար հաղորդում են, դեռ շատ կորուստների կը հանդիպենք և մեծ արգելքներ կը կտրեն մեր ճանապարհները: Նորան վերջացնելով, մեծ օգուտ հազիւ թէ ունենանք. սա է վնասակարը: Սա եթէ չը լինի, նա ճարահատեալ այստեղ պիտի լինի և մենակ պիտի խոնարհի, գլորի, դայ, ընկնի ոտքերիս տակը: Սորա դատաստանը շուտափոյթ տեսնելու է:

Իրիկուն էր, ճրագները վառելու մօտ: Պօսորը ստացել էր: Վարդապետը «Մէճմուլայի-Հաւադիս» լրագիրն էր աչքի անցնում: Հետեւեալ լուրը երկու անգամ կարդաց ու ձեռքից վայր դրեց թերթը:

«Սեբաստիայէն գրում են Պատրիարքարան, թէ Կովկասից դաղթած չերքէզները, որոնց քաղաքի շրջակայ զիւղերում են բնակեցրած, ամեն տեսակ չարագործութիւններ անում ու անպատիժ են մնում: Պատմում են, որ շատ արիւնուռւշա ժողովուրդ են և իրանց ոճրագործութիւնների հետքը միշտ անյայտ է մնում կառա-

վարութեան աչքերից: Անցեալներն մի երեկոյ քաղաքից անյայտացաւ մի հարուստ վաճառական, որի դին տասն և հինգ օր յետոյ մի ձորում գտնուեցաւ: Մի ուրիշը, որ ապառիկ չէ աւել մի ուրիշ չէրքէզի, կորցրեց միակ զաւակը մօտակայ գիւղից տուն վերադառնալիս:

— Թշուառական չէրքէզները, մրմնջաց վարդապետը, կարծես միայն այդպիսի գործեր կատարելու համար ստեղծւած լինին: Տասն օրուայ ճանապարհ են գնում մի ձի կամ երկու կով յափշտակելու համար: Տասն ոչխարի համար չորս հովիւ են սպանում, և տասը ճանապարհորդ են կորստում մէկի զրպանից մի ոսկի գտնելու յուսով: Կարծես կառավարութիւնը ժողովրդին պատուհասելու համար ընդունեց այս գաղթականներին և սոցա գտնւած նահանգներում առանց ոճրագործութեան օր չի անցնում: Մինչև այժմ գաւառներում կամ քաղաքներում եղած շարագործութիւնների համար, յայտնի աւագակներին բանտարկում, շարչարում, նեղացնում էին. բայց այժմ թէև նոքա կատարում են աւելի շատ և աւելի մեծ յանցանքներ, բայց դոքա էլ բարւում են չէրքէզների վերայ և կառավարութիւնը առաջուայ պէս չէ կարողանում նրանց ճնշել: Զէրքէզներն լաւ ասպարէզ բացին քաջերին. — Քօռ. Եղիկն ու Քէօզեցի Յակօն առանց մի կաթիլ արիւն թափելու, ազատ համարձակ սահմանի մօտ քրդերի ու թարաքամանների հազարաւոր ոչխարները քշում տանում են ռուսի հողը ու իրանց ազգականների մէջ բաժանում: Կարծեմ թէ դեռ երկար ժամանակ չէրքէզների վերայ պիտի խօսի ամբողջ տէրութեան մէջ, ամեն յանցանք նրանց վերայ բարդելի, մինչև որ կառավարութիւնը մի միջոց ձեռք առնէ դրանց զսպելու:

— Բայց շատ ճարտար են շարագործները, ժպտան երեսին աւելացրեց տէր-Վարապետը. մի սատակած ձի նստած, մտրակը ձեռքին՝ կայծակի արագութեամբ ցանկութիւնները կատարում և աներևոյթանում են: Ամենքն էլ միատեսակ են հագնւում, միատեսակ ձի նստում, միևնոյն տեսակ զէնքերով ու ձևերով: Ամենքի էլ փափախը մինչև աչքերն է իջած և նորա երկար կախ կախ մազերով դէմքերը կիսով չափ ծածկած: Ամենքն էլ սև մազերով ու մորուսով, ամենքն էլ երկար ոչխարի մորթից մուշակները հագին, սև այծի մորթից կարւած մասերը ոտքերը, ձիու գաւակին կպած՝ սլանում են պետութեան մի նա-

Հանգից միւսը՝ իրանց պարէնը որսալու: Ժողովուրդը, կարծես, միմիայն կողոպտելու համար է ստեղծւած և ուրիշի աշխատութեան արդիւնքը իւր թրի զօրով վայելելու: Այլ ու Թուստ փաշաները, մեր երևելի զիպլոմատները, սոցանից լաւ միջոց չէին կարող գտնել քրիստոնեայ ազգաբնակութիւնները հալածելու, ճնշելու: Սոքա քրդերից լաւ դեր են խաղում, պետութեան ոչ մահմէդական տարրը չորացնում: Թէև մահմէդականներին էլ չեն խնայում, բայց մեծ հեռատեսութիւն է սոցա պետութեան ամեն անկիւնը ցրել թէ Եւրոպայում, թէ Ասիայում և թէ Աֆրիկայում: Սոքա հրաշալի գէնքեր են գործ ածողի ձեռքում:

Այս մտածմունքները շատ հեռու չը տարին վարդապետին իւր նպատակից. և ողջ գիշերը իւր ծրագիրը պատրաստելուց յետոյ, առաւօտ վաղ վեր կացաւ, պատարագն ասելուց յետոյ, մենակ ձի նստեց, գնաց գեղ: Երեք օր տեւեց այս ճանապարհորդութիւնը և մարդ չ'իմացաւ նորա ուր գնալը: Շատ կարծիքներ եղան այս բացակայութեան վերայ, բայց ոչ ոքի մտքից չ'անցաւ ճշմարտութիւնը:

Վարդապետի մեկնելու լուրը ստանալուն պէս, բէգը Մկրին ետեւից ուղարկեց լրտեսելու: Մկրը շատ հեռուից ամեն տեսակ զգուշութիւններով լեռների զազաթներից հեռուում էր վարդապետին: Անտառում կորցրեց հեաքը. երկու օր շարունակ փնտռելուց և ամեն կերպ հարց ու փորձ անելուց յետոյ, վերադարձին պատահեց վարդապետին:

Ութն օր անցել էր այդ օրից և դեռ այդ ճանապարհորդութիւնը շատ մտքեր չուզում էին: Երիկուն էր և ժամուրը եկեղեցուց դուրս էր եկել: Բազարի խանութաւորները կողպում էին իրանց խանութների փեղկերը ու տուն դառնում: Մութը չէր կոխած և անց ու դարձը սաստկացել էր: Յովակիմ բէգը իւր բաղնիսի դրան առաջը նստած՝ ծխում էր իւր չիբուխը և խօսում բաղնիսի նորոգութիւնների մասին ուստայ Վարդեանի հետ: Բաղնիսպանն էլ եկել թախանձում էր, որ ներս հրամայէ ու լողանայ: Այս միջոցին մի կատարի չէրքէզ ձիաւոր եկաւ, ատրճանակը զատարկեց, բէգին կուրծքիցը խփեց, վար զցեց ու սրննթաց ձին քշեց աներևոյթացաւ:

—Ձերքէզ շատանն էր, գուռայ Վարդեանը:

—Բռնեցէ՛ք, գուռային անցորդները:

Բաղնիսպանը իսկոյն գրկեց բէգին, որն անմիջապէս հոգին աւանդեց:

Ժողովուրդը խունեց բաղնիքի դուռը, անէծք և նախատինքներ թափեցան չարագործի և վատ վարչութեան վերայ: Ոստիկանութիւնը եկաւ և ձիաւորներ զուրս հանեց չարագործի ետևից:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԳ

ԶԱՐ ՄԱՐԴԻԿ ԶԱՐ ԶԵՌՔԵՐՈՎ ԵՆ ԳՈՐԻՈՒՍ

ԼԵ.

Ն Ո Ր Զ Ո Վ Ի Ի

Տէր-Անտօն վարդապետ Փունջը մի բարձրահասակ, վայելչակազմ, շագանակագոյն գանգուր մազերով ու մօրուքով, խոշոր աչքերով, վարդագոյն ու վառվռուն այտերով, յունական քթով, վայելուչ ձեւերով մի անձն էր: Արտաքին երևոյթը, շէնքը, շորհէքը, մաքուր ու կոկ հագուստն ու կապուստը, նիստն ու կացը, խօսքն ու զրոյցը բոլորի համակրութիւնն էր վաստակում: Ժողովուրդը սիրով ու յարգանքով հետը վարւում էր և ամեն տեղ ուրախ և ժպտալի երեսներէ էր հանդիպում: Զերմ՝ Վարապետականներն մի քիչ հետը սառն էին վարւում, բայց տէր-Վարապետը նրանց էլ ուղղեց:

Երկու վարդապետներին ժողովրդի աւագանին կարգով հրաւերներ սարքեց, մէկին «բարի եկար», միւսին «գնա՛ս բարով» մաղթելու և ամեն տեղ շքեղ և արժանաւոր ընդունելութիւններ եղան: Ամեն մի տուն գնալիս նորեկին առաջնորդում էր տէր-Վարապետը և ընտանիքի զրութիւնը ճանապարհին համառօտապէս նկարագրելուց յետոյ, տան մէջ անդամներից ամեն մէկին անունովը ներկայացնում էր:

— Գիտես, վարդապետ, ասում էր ներկայացնելիս, Աննա խա-

նուժի պէս Կարինուժը փլաւ եփող չը կայ. այս ասն դուռը բաց է, երբ որ ցանկանաս իմացրու, թո՛ղ պատրաստեն, յետոյ առանց քաշ-ւելու արի՛ և կե՛ր:

Կամ թէ՛

— Ազնէս խանուժի նման խաշ պատրաստող կեանքումն տեսած չեմ, այնպէս մաքուր է խտակում կովի ռաներն ու փորը և այնքան համեղ է լինում ծ ու է ն ը, որ որքան ուտես, այնքան ախորժակդ բացուժ է:

— Իսկուհի դուդուն (ֆիլիս) այնպէս ազնիւ բուժ բար է պատրաստում, որ համնիլն ու հոտովը մարդ կշտանում է: Եւ այսպէս շարունակում էր ամեն տան տիկինը ներկայացնելիս:

Այս հրաւերներում տէր-Կարապետը նկատեց, որ Փունջը շատ է սիրում խմիչքներ և անչափ խմելով շատանգամ իրան կորցնում էլ է: Հետեւեց և տեսաւ, որ երեկոյեան ժամերից յետոյ՝ մենակ կամ ընկերով դռները փակում ու կոնծում է: Գինեվաճառից տեղեկացաւ, որ մաստիքի բենլիզը (Տէլեբոբո Վեբո) երկու օրը մի անգամ լցում է: Փունջի գիշերաց ընկերներին էլ շատ չէր հաւանում, վստահելի մարդիկ էլ չէին երևում և թէ ամեն գիշեր մի մարդուց աւելի ներս չէր ընդունում: Գիտէր տէր-Կարապետը, թէ այդ հարբեցողութիւնները ի՞նչով էին վերջանում:

Պապին կանչեց և ապապրեց, որ մի լաւ հարկինք պատրաստէ. քիչ ու իւր գիտցած անձնաւորութիւններին միայն հրաւիրէ: Որոշեալ ժամանակին հրաւիրեալները ժողովեցին: Տունը լուսաւորւած էր, ամեն կողմը ճոխ զարդարւած սեղանը պատրաստ: Դահլիճի օճախից սագը կախւած էր, տակը կաւէ շանախում սխտորն ու քացախը լցրած: Միւս սենեակի օճախի առաջ պտուացնում էին մեծ շամփուրը, որի վրայի խորովածի կարմրած մսերից անցնում էին փայտէ բարակ ձողեր, կտրատում ու տաք տաք ներս բերում:

— Վա՛րդապետ, ասաց տէր-Կարապետը սեղանին մօտենալով, այստեղ մենք ու մերոնք ենք, պէտք է մի լաւ քէֆ արած: Հագիւ ուզածիս նման մի հրաւերի պատահեցինք: Դէ՛հ, Պա՛պ, ասա՛ որ ջուր բերեն լացւենք:

Ձեռքի ջուրը բերին: Այս միջոցին ներս մտաւ տան տիկինը: Սա մի երեսնամեայ չինարի բօջով, միջակ հաստութեամբ, երկայ-

նավիզ, բոլորերես մի կին էր: Կարմիր եազմով վաթաթել էր զլու-
լըն ու կզակը: Լայն ճակատը, խոշոր աչքերը, սև ունքերը, վար-
դագոյն այտերը, արծւէ ուռնգը, սպիտակ մորթը միայն հայոց աշ-
խարհի հայ տիկնոջն էր յատուկ: Ամօթխածութիւնը և բերկրառիթ
ժպիտը նահապետական էր: Կապոյտ մահուդ ջիւբբէն, ալ շուխա
գոգնոցը և վարդագոյն թաւիշէ կրծկալը ամենայարմար ձևերով
ծածկում էր իրանը: Առաջ եկաւ, նախ մօտեցաւ տէր-Վարապետի ա-
ջըն առաւ, յետոյ տէր-Անտօնինը և մնացեալներին բարևեց:

— Անտօն վարդապետ, ասաց տէր-Վարապետը, ուտես Շողակաթ
խանութի եփած լոխումը, բիշին և ուրիշ խմորեղէնները: Խօսքով չէ
կարելի պատմել. հիմի կ'ուտենք և համը կը տեսնես:

— Վա'րդապետ, դարձաւ Շողակաթը, ամեն տեղ ինձ պիտի
խայտառակէ՞ք, ասաց քաղցր ձայնով, ի՞նչ մեծ բան է խմորեղէն
եփելը, որ ամեն տեղ այդ խօսքը բաց էք անում: Գիւղացու աղ-
ջիկ եմ, իմ եփածս խմորեղէն ու եղեղէն պիտի լինի: Աւրիշ ի՞նչ
գիտեմ:

— Հրամեցէ՛ք, ասաց Պապը, լանգարով խորովածը ներս բե-
րելով:

Բոլորը ժողովեցան խոնջի շուրջը, բարձերը դրին ու նստեցին:
Տէր-Վարապետն օրհնեց սեղանը և սկսեցին մաստիքի գաւաթները
ձեռքերում օրհնել ու կոնծել: Տէր-Վարապետը երկրորդ և երրորդ
անգամ լցրեց արաղով Փունջի գաւաթը, որ առանց երկար խնդիրք-
ների դատարկում էր: Շուտով կաւէ գաւերով ընտիր դիւնները բե-
րին սեղանի վերայ դրին: Շատերը դիւնի սկսեցին խմել. բայց տէր-
Վարապետը, հակառակ իւր սովորութեան՝ մաստիքան կոնծում էր
Փունջի հետ: Կերակուրներն իրար ետևից բերին ու շարեցին և դա-
տարկ ամաններն դուրս կրեցին բանանողներն: Երեք ժամ տևեց
սեղանը և ուրախութեամբ վերջացաւ: Սեղանականներն լւացւելուն
պէս, Ֆինջաններով սուրճն ընդունեցին ու հեռացան:

— Պա'պ, ասաց տէր-Վարապետը, զեռ ժամը ինն է, շատ կա-
նուխ է, ոչ իմ քունս է տանում և ոչ վարդապետինը, բե'ր մի
քիչ ուտեստներ ու մաստիքս, թէ խօսենք և թէ ժամանակ անց-
նենք: Այտեղ ուրախ ենք, տանը երկուսս էլ պիտի տխրենք:

Պապն անմիջապէս կատարեց հոգևոր հօր հրամանը և երկու

րուպէում ամեն բան պատրաստեց: Տէր-Վարապետը զանազան առակներով զւարճացնում ու զբաղեցնում էր: Անտոն վարդապետը դիւթւել և համաձայնում էր նախորդի զանազան կարծիքների հետ: Պապըն էլ քիչ էր մնում իւր իրաւունքները պաշտպանողի ոտքերն քնկնէր: Նողակաթ խանումն էլ զործից պրծած՝ եկաւ մի կողմը նստեց: Սա էլ հետաքրքրում էր Փունջի կարծիքներն իմանալու և ուրախութիւնից վեր վեր էր թռչում երիտասարդ վարդապետի շրթունքներից զուրս թռած նպաստաւոր խօսքերը լսելիս: Ուրախութիւնն անչափ էր, երբ նորեկը բացարձակ խոստացաւ պաշտպան հանդիսանալ զրկեալ ընտանիքին:

Տէր-Վարապետը, Պապն առաջը խառնած, միւս սենեակը զնաց, հիւրին տան տիկնոջ մօտ թողնելով: Այստեղ գինով թմրած Պապին ժամից աւել խրատ խօսեց, պատւիրելով, որ որքան կարելի է յարգէ նորեկին, որից կախումն ունէր ընտանիքի ապագայ բաղդը: Այստեղ մի առ մի ցոյց տւեց Պապին իւր բռնելիք բոլոր զործերն: Պապը բոլորովին հարբած, պատասխանելու կարողութիւն չը կար վրան, անդադար տէր-Վարապետի աջը համբուրելով, ասում էր.

—Քեզ եմ յանձնւած, զու գիտես, տէրս էլ զու ես, հէրս էլ զու ես—ինչ որ կամենում ես, պատրաստ եմ:

Երբ վերադարձան, Նողակաթ խանումին չոքած տեսան տէր-Անտոնի առաջը, աջ ձեռքը համբուրելով հետևեալ խօսքերն ասելիս.

—Այս տունը քոնն է, վա՛րդապետ, ուզում ես քանդէ, ուզում ես շինէ, ուզում ես կրակ տուր, մոխիր դառնայ, ուզում ես ոսկով ու զոհարով պատէ:

Այս խօսելով ոտքի ելաւ:

—Ժամանակ է, ասաց տէր-Վարապետը, զնա՛նք, վա՛րդապետ:

—Գնանք, ասաց Փունջը, ահամայ տեղիցը բարձրանալով: Լապտերը վառեցին և հիւրերին մինչև իրանց բնակարանը առաջնորդեցին:

Տէր-Անտոնը կարկանդակների և խմորեղէնների համն առած՝ շաքաթն երկու կամ երեք անգամ այցելում էր Պապենց տունը և միշտ ուզածի պէս հիւրասիրւում: Տէր-Վարապետը Պապին մի մօտակայ քաղաք էր ուղարկել, որտեղ տասն և հինգ օր ուշացաւ:

Շողակաթ խանութը այդ օրերը համարեա ամեն իրիկուն հրաւիրում էր Փունջինս Վերջինս էլ մերժելու անկարող էր:

Մի իրիկուն, զիշերը ուշ ժամանակ, Փունջը զուրս եկաւ Շողակաթ խանութի տանից: Տիկինը մտքը բակը դրած՝ զուրս եկաւ առաջնորդելու հիւրին, որի ձեռքը բռնած՝ զառիվայրի սառույցներից վայր իջեցրեց. վարդապետը բաւական տաքացրած էր զլուխը: Վերադառնալիս պատի տակից մի ոստիկան զուրս եկաւ և ամուր գրկեց Շողակաթ խանութին, որի լեզուն ու շունչը բռնեց: Ոստիկանը ձիւն վերցրեց և ճակատն ու կուրծքը շփեց, արորեց, մինչև որ սթափեցաւ:

— Ատուճու սիրոյ համար, ասաց տիկինը, թո՛ղ ինձ:

— Խանո՛ւմ, ասաց ոստիկանը և Պօլսոյ թիւրք բարբառով, մինչև որ ինձ չը բաւականացնէք, ձեռքիցս չէք ազատուիլ: Այս բուպէիս բռնել կը տամ այն հարբածին, որ տանիցդ զլորելով ճանապարհ գրիք ու ձեզ երկուսիդ էլ աշխարհի առաջը կը խաչտառակեմ:

— Խնայի՛ր, անխի՛ղճ, խնայի՛ր:

— Դուք էլ ողորմեցէք:

— Հիմի կը գոռամ ու աշխարհ մօտ կ'անեմ զլիսիդ:

— Ուզում էք սուլիչովս այս բուպէին կանչեմ մի տասնեակ զօրք, ու երկուսիդ էլ կապկապած ուղարկեմ ոստիկանատուն:

— Առի՛ր, լռի՛ր, անաստուա՛ծ, ձայնդ կտրի՛ր, կորա՛յ...

— Դուք գիտէք, խանո՛ւմ, կամ զնանք ոստիկանատուն, կամ ինձ բաւականացրէք:

— Մեռա՛յ, ամա՛ն Աստ...ուա՛ծ, ասաց և կրկին նւաղեց:

Ոստիկանը զթաց և գրկելով տարաւ մինչև տունը և մի քիչ ձիւն սրկելով սթափեցրեց: Քիչ քիչ ուշքի եկաւ Շողակաթ խանութը. զանազան ճիչեր ու ձայներ հանելով:

Ոստիկանը կուպերն ուռած, աչքերը ցաւոտ, հիւանդոտ մի և Պօլսեցի էր, որին մի փաշայ հետը բերել էր Կարին և զթալով մտցրել ոստիկանութեան մէջ: Շողակաթ խանութը անճարացած՝ տուն տարաւ ոստիկանին, պատուեց, ուտեցրեց, խմեցրեց, շահեց ու բռնեց էլ մի ոսկի դնելով ճանապարհ գրեց: Բայց նորա ազտեղի զէմքից, արիւնթաթախ աչքերից, դարշահոտ բերանից և վիրաւոր ռնզից այնպէս գանեց, որ ողջ զիշերը զգւանքից քունը չը տարաւ:

Տէր-Անտօնը շարունակում էր իւր երթևեկութիւնները և ամեն օր յաճախելու առիթ էլ չէր պակասում: Նողակաթ խանութին ու Պապը ամենայն ուրախութեամբ ընդունում, յարգում, սպասում էին: Բայց այդ այցելութիւններն ընդհատեց Նողակաթ խանութի հիւանդութեամբ, որ կողինքից չէր կարողանում վեր դալ: Դայեակներն ու պառաւ դեղանոցներն յաճախ մտնում էին հիւանդի մօտ, բայց ոչ ոք չը կարողացաւ օգնել: Պապի էլ աչքերը բռնեց և վերան զանազան վէրքեր դուրս տուց: Յաւը փոփոխական էր, երեսաների վերայ էլ նկատում էր:

Փունջն էլ բռնել էր այս ցաւով, բայց ամօթից ձայնը դուրս չէր հանում ու նեղութիւնից կարողացածի չափ խմում էր թունդ ուսմը, որը աւելի բորբոքում էր հիւանդութիւնը: Բայց ամսից աւել համբերելը անկարելի դարձաւ, ճարահատեալ բժիշկ հրաւիրեց: Բժիշկը բարկացաւ և ասաց.

— Այնքան սպասել էք, մինչև որ ցաւը ոսկորներդ է անցել, այժմ որ ես էլ անկարող եմ բժշկելու, օգնութեան էք կանչում: Թո՛ղ աչքերդ դուրս գայ, բիթդ թափւի, որ խելօքանաք և ուրիշ անգամ ցաւ զգալիս՝ անմիջապէս բժիշկ հրաւիրէք:

— Բժի՛շկ, ասաց Փունջը, այդ խօսքերի ժամանակը չէ, օգնեցէ՛ք, ազատեցէ՛ք ինձ այս տառապանքներից: Խրատների և քարոզների ժամանակը չէ, փրկեցէք ինձ, ապրեցրէք, աղաչում եմ, աչքերն արտասուենքով աղերսում էր:

— Քաշի՛ր, ասում էր անհոգաբար, մեղքիդ պատիժն է, կրի՛ր ու տար այս դառնութիւններն, որ խելօքանաս:

— Բժի՛շկ, բժի՛շկ, դանակն առէ՛ք մորթեցէք ինձ կամ դեղ տւէք ու առողջացրէք:

— Ես քեզ չեմ կարող օգնել: Կը տամ դեղեր՝ գործածէք, բայց անմիջապէս ճանապարհ ընկէք դէպի Կ. Պօլիս: Տւածս դեղերը առժամանակ ցաւի առաջը կ'առնեն. Կ. Պօլսում կամ կ'առողջացնեն և կամ կ'ուղարկեն Բրուսայի տաք ջրերը առողջանալու:

Անտօն վարդապետը առանց հրամանի սպասելու, ճանապարհ ընկաւ և տասնըհինգ օրից հասաւ Կ. Պօլիս, մեծ զարմանք պատճառելով իւր մեծաւորներին: Տէր-Կարապետը քաշեցաւ կրկին իւր հին խուցը:

Լ.Զ.

«ԵՄՐԱԼՈՆՑ ՏՈՒՆԸ»

Կողինքի մէջ պառկած Շողակաթ խանուժը սաստիկ և անընդհատ տքում էր: Տքում էին փոքր աղջիկն ու մեծ տղան, որոնց վիրալի դէմքերն մայրը տեսնելիս՝ մորմոքում, արիւնթարխոտ արտասունքն աչքերից թափում, դառնապէս ողբում էր. նա բոլորովին իւր անձնական կսկիծները չէր զգում: Պապն էլ կապոյտ աղբուխը ձեռքին, նստած կնոջ կողինքի կողքին, անդադար սրբում էր խաշխաշի նման կարմրած աչքերն և ուռած կոպերը: Քանի որ Զարուհին լաց էր լինում, մայրը մղկտոցով նւաղում էր: Պապն էլ Մատթէոսի ձայնը լսելիս, վաղում էր սիրելի որդու ցանկութիւնները կատարելու:

Անտանելի էր Կատարինէի դրութիւնը: Ամեն օր պիտի սպունդներով սրբէր հիւանդների վէրքերն ու քոսերը, փետուրով դեղերը քսէր, նոր կապերով կապէր: Ոչ ոք չանձն չէր առնում ո՛չ միայն ինձամէլու այս տառապեալներին, այլ մինչև անդամ սրանց լացքը լալու: Արդէն տարածւել էր քաղաքում, որ ախտը փոփոխական է և ամեն մարդ՝ բարեկամ, ազգական՝ բոլորը հեռանում էին: Վշտալի սրտով, անընկճելի կամքով և անսպառ համբերութեամբ Կատարինէն տանում էր իւր խաչը և անտրտունջ հոգում, շահում էր հիւանդներին: Նրանց ամեն մինի պահանջները կատարելուց յետոյ, եփում, թափում, լւանում, մաքրում, աւելում, խտակում, կարում, կարկատում և տան ամեն գործին հասնում էր: Ողջ քաղաքին արմանք ու զարմանք էր պատճառել այս թշուառ աղջիկը և կարծես ծնած օրից վարժւած լինէր այդ ծանր և անտանելի լուծը տանելու:

Յաւը օրից օր յիմար ու տղէտ պառաւներն զեղերովն ու զեղրունքներով սաստկանում էր և հիւանդներին ճլերք էր գցում: Յուսահատ թէ քաղաքի, թէ դիւղերի և թէ նահանգի բոլոր տնական զեղտուրներից, դիմեցին զինւորական եւրոպացի բժիշկներին: Բայց սովորաբար այդ բժիշկներին հողին աւանդելիս կամ աւանդելուց յետոյ են կանչում: Յայտնի բան է, մի սպանիացի հրէայ բժշկի սիրտը բոլորովին չի ցաւիլ արեւելքում մի հայ գերդաստանի

կորչելը տեսնելիս, նամանաւանդ նա աւելի ուրախ էր, տեսնելով նրանց զլորումը, յուսալով որ գուցէ խրատուեն ուրիշներն և իրան յաճախողներին թիւն սոււարանայ:

Մեռաւ Մատթէոսը, մեռաւ Հեղինը, և վշտալի մայրն էլ, չը կարողանալով դիմանալ այս վշտերին, ութն օր չ'անցած, գնաց սիրելիներին մօտ, անբաղդ Կատարինէին յանձնելով երեք տարեկան որդին՝ Գրիգորին: Պապը բոլորովին տանից չէր կարողանում զուրս դալ և այնքան ողբաց իւր անողոք բաղդը, որ բոլորովին լսից զրկեց:

Սրտածմլիկ էր Կատարինէի վիճակը և անել զբուժիւնը: Աէր իմանում իւր հայրենի տո՞ւնը պաշտպանել, թէ թողնել այս դառը վիճակը ու գնալ խօսք տւածի օճակը շէնցնել: Խեղքը, միտքը, ուշքը, սիրտը տւել էր Ամիրխանեաց Վարդանին ու ցերեկը տանը անչափ գործերը կատարելուց յետոյ, զիշերն էլ անքուն նորան զբաղեցնելով, համբերութեան ու քաջասրտութեան խրատներ տալով, սիրոյն ու գորովին արժանացնելով՝ անց էր կացնում: Շատ աղաչեց, շատ աղերսեց, շատ թախանձեց Վարդանը, որ մի օր առաջ գնաց իւր պառաւ մօրը մխիթարելու և իրան անհանգստութիւնից ազատելու, բայց Կատարինէի երկաթից պինդ կամքը չը կարողացաւ կոտրել:

—Մնչ ես խօսում, ասում էր թշւառ աղջիկը, իմ հայրենի տունս թողնեմ այս զբուժեան, այս վիճակին, որ վիւր: Մի՞թէ դու ինձ այնքան անզուժ ես կարծում, որ ես մոռանամ և ինձ սնուցանող չարկի կործանման առաջն առնելու չ'աշխատեմ: Հայրենի որջս անօգնական և անկարեկից թողնելուց յետոյ, մի՞թէ կարծում ես, որ կը կարողանամ քո հովանիից տակ մի օր չոր աչքով աղ ու հացդ ուտել, ծնունդդ օրհնել և տանդ սիւն կանգնել: Ուրիշ բան էր, եթէ զոնէ տանը կամ զուրսը մի ստիր աղգական ունենայի, որը կարողանար իմ տեղս բռնել: Չ'ունինք և չը կայ մէկը, որ սրբէ թշւառ հօրս արտասունքներն և զգէ ու փայփայէ մատաղ եղբօրս: Առանց ինձ մի օրում կը կորչին նրանք և ես, ես յաւիտեան կը տանջեմ և խղճիս առաջը դատապարտեալ կը մնամ մինչև վերջին շունչս փչելը: Վարդա՛ն, Վարդա՛ն, թէ ինձ սիրում ես, սիրիր և ցաւերս:

Բայց սանդարապետի անզուժ վճիռը պիտի կատարէր և այս գերդաստանը երկրի երեսից ջնջէր: Պապն էլ իւր մխիթարիչը

պիտի կորցնէր և վերջը անպտուղ ծառի նման պիտի կտրւէր ու կրակ գցւէր: Կատարինէին կրկին վշտերն ու տառապանքները հալեցին ու մաշեցին: Խեղճ աղջիկը կիսւեց, կաշին ու ոսկորը մնաց: Որքան որ բնական կազմը և դժագրութիւնը չնաշխարհիկ էր, այնքան էլ թորշոմեց: Ոտքի վերայ թոքերի բորբոքման երկար հիւանդութիւններ քաշելուց յետոյ, ընկաւ կողինքը և երեք օրից հանգաւ:

Պապի մազերն բոլորովին սպիտակեցին, վերան էլ բոլորովին խելագարւածի նշաններ էին երևում: Աստուծու սիրու համար զուրը բացող, այցելող չ'ուներ: Ել մահից ու խոլերից այնքան չէին վախենում զուռ-դրացիները, որքան սոսկում էին սրանց սան տեսարանիցը: Կարծես ամեն կողմից հրէշներով և ձիւաղներով շրջապատւած լինէր: Նոյն փողոցով անց ու դարձն անգամ նւագեց: Հեռուից մատով էին ցոյց տալիս, անուանելով «Նարալոնց տունը»: Կարծես քաջքերի և դևերի բնակարան լինէր: Գերեզմանների դռներն հասած պառաւներն անգամ այդ կողմերից անցիկնալիս՝ իրանց զիրենք խաշակնքում էին, մահի ծիրանները չ'ընկնելու մտքով:

Միայն հաւատարիմ մնաց մինչև վերջը տէր-Կարապետը: Ամեն իրիկուն իւր տիրացուի և մնջի հետ գալիս էր, դպրատանը պատրաստուած կերակուրներ բերում, սեղան դնում. և վարդապետը, Պապի ու որդու հետ միասին նստում, ուտում ու խմում էին: Տէր-Կարապետը մխիթարում էր տառապեալին, որը անբաժանելի Գրիգորին գրկած, համարեա անորոշ ձայներով ու ձևերով պատասխանում էր: Լւացքներն, կարերն ու կարկատանները կատարելու համար մի խըստակրօն կոչս բերել տւեց, խրատեց, համոզեց, և սորվեցրեց եղանակը ու կատարել տւեց: Այս կոչսը կառավարում էր Պապի տունը:

Այս մխիթարութիւններն անելուց յետոյ, մի կտակ գրեց, որով Պապը իւր մահւանից յետոյ իւր որդւոյն Գրիգորին յանձնում էր տէր-Կարապետի խնամակալութեանը: Կտակը հաստատել տւեց իրաւարար ժողովարանում:

Մի քանի ժամանակից յետոյ բոլորովին գժւեց Պապը: Տէր-Կարապետը, բժիշկների քննութիւնից յետոյ, մութասարիֆի գիտութեամբ ուղարկեց Կ. Պոլսում Փանկալթի գտնւած ս. Յակոբի հիւանդանոցը, Գրիգորին էլ՝ Յէրիբէօյի մայրապետների որբանոցը:

Հայաստանից հազար հինգ հարիւր վերստ հեռաւորութեամբ,

Կ. Պօլտոյ աւստրիացի կամ իտալացի կուսանոցների որբանոցը տղայ ուղարկել և հայ տղայի խնամքը չանձնել եւրոպացի մայրապետների՛ն...

ԼԷ.

Թ Շ Ի Ա Ռ Թ Մ Ն Ո Ղ Ն Ե Ր

Անչափ և աննկարագրելի ցաւեր զգաց Լուցիա խանութը Տիրուհու փախուստից յետոյ: Ամեն բոպէ աչքերը դէպի հեռու ճանապարհների կողմը դարձնելով լալիս ու ողբում էր իւր դստեր կորուստը: Նորա գոռում-գոչումի, նորա ողբաձայն երգերի ձայները լսող ասպառաժասիրտներն անգամ կը զգացւէին և կ'արտասուէին: Մի ժամանակ լազերին, քրդերին ու չէրքէզներին անիծեց իբրև պատճառ առեւանգութեան իւր սիրասուն աղջկան, բայց վանքից լուրն ստանալուն պէս՝ սկսեց ողբալ միայն իւր ճակատագիրն: Քար սիրտ պէտք էր՝ նորա ողբերն ու երգերը լսելու, դժում գլուխ պէտք էր՝ նորա մըրմունջներն ու տրտունջներն իմանալու: Նորա բերանից թռած ամեն խօսքը, ամեն բառը և ամեն ձայնը ամբողջ մտքեր պարունակող ու սրտեր մորմոքող բողոքներ էին:

Վիշտը որբան սաստկացաւ մի հատիկ որդուն՝ Մարտիրոսին՝ կորցնելուց յետոյ, որդեկորոյս ծնողները միայն կարող են զգալ: Չառամեալ խեղճ կնիկը կողինքն էր ընկել և շարժելու կարողութիւն չ'ունէր: Այս վշտերի վերայ աւելացաւ եղբօր՝ Պապի՝ տան անկումը:

Հաճի Քաթոս աղան պակաս ցաւ չէր զգում Լուցիայից և կեանքից զզւած անհամբեր սպասում էր մահւան հանգստեանը: Երկու հիւանդները միեւնոյն սենեակում խնամւում էին բանանոց Մարիամից և սորա ամուսին Մնացականից: Արիասիրտ աղախինը այնչափ ժրջանութեամբ ու սիրով կատարում էր այս թշառ ծնողների ծառայութիւնները, կարծես ուզում էր իւր այնչափ տարիներում վայելած բարիքների հատուցումն անել և պարտականութիւնից ազատւել: Գնում էր մէկի մօտ ու ամեն ցանկութիւնները կատարելուց յետոյ՝ հասնում էր միւսին: Գիշեր, ցերեկ ամեն բոպէ առանց հեռանալու, այր և կին փոփոխակի հսկում էին իրանց ապաւինած տառապեալներին:

Բայց զառամեալների քաշելիք պատիժը կարճ չէր վճուած ան-

ողոք դահճից.—երեք ամբողջ տարիներ տապալկեցան: Եւ այս դարաբաշ տարիների ամեն մի բուպէն ամիսների պէս երկար էր թուում անկեալներին: Այնքան զզւեցին երկու հիւանդները, որ նեղութիւններից սկսեցին իրար պատճառ բռնել այս քաշած պատիժներին և մէկը միւսին հայհոյել: Եւ մոռացան իրանց կորուսաները, իրանց թանկագինների խապառ բացակայութիւնները, միմիայն իրանց սուկորների, ջղերի և վերքերի ցաւերով էին առչորուում:

Մի ժամանակ, որ Լուցիա խանումը գիշեր-ցերեկ աղօթքով ու բարի խնդրածքներով էր պարապած, սաղմոսներ ու շարականներ էր երգում, այժմ անէծք էր կարգում իւր մօրը, որ իրան չղացել, ծնել, սնուցել ու մեծացրել էր: Մի ժամանակ որ տունը, դուռը միշտ բարեգործութիւնների համար բաց էր, աղքատն ու կարօտը լիութիւն էր ստանում, այժմ անարգութեամբ վռնդում էր իւր տանից բարեկրօն քահանային, որը աղերսում էր նորա ոտքերն ընկած խելքի գալ, վերջին պատրաստութիւնները օր առաջ տեսնել, յաւիտենականութեան ասեղ Դատաւորին ներկայանալու համար:

Անհնարին է առաջ տանել այս թշուառ բնոմանիքի տանջանքների նկարագրութիւնը, ոչ սիրտը կարող է զիմանալ, ոչ լեզուն խօսել և ոչ մատները շարժել:

ԼԸ.

Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ի Ո Ն Ի Լ Ա Բ Ի Ի Բ Ի Ն Թ Ո Ս Ն Ե Ր Ը

Ով որ Կ. Պօլիս եղել է, անշուշտ տեսած կը լինի Յուսիփիանոս կայսեր Եզիպտոսից բերել տւած ու Աթ-Մէլլան կոչւած հրապարակում տնկել տւած կոթողը: Կ. Պօլսոյ նշանաւոր հնութիւններից մէկն էլ սա է: Այս կողմը գնացողին անպատճառ առաջարկում են գնալ և մանկել սրանից ոչ հեռու գետնի տակ զանաւոր հսկայաշէն «Ին-Իիր դիրէկ» կամ «Գիդար-Գելճագ» կոչւած բարձր սիւնաշատ և կամարակապ շինութիւնները, որը ժամանակին ինչ բանի ծառայած լինելը դեռ օրոշ յայտնի չէ: Այստեղ այժմ մետաքսագործները քերուցք են անում իրանց թելերը և երիզգործում: Բայց այս շինութեան անէն կողմը մանգալուց յետոյ, կարելի է կրկին առանց ճանապարհը կորցնելու ու գժւարութիւնների դուրս դալ:

Աթ-Մէլզանի հրապարակից գլխաւոր փողոցով մի քիչ վեր բարձրանալուց յետոյ, Սուլթան Բայազէդի մէջիդի մօտից, Սէրասքերի (գլուխ զօրաց) նախարարանոցի դրան առջև գտնուած հրապարակի ո՛ր երկրորդական փողոցն որ մտնես, էլ չես կարող ճանապարհ գտնել վերադառնալու: Մի փողոցից մի ուրիշ անձանօթ փողոցի ես հանդիպում, այնտեղից մի երրորդի, չորրորդի, մի անել փողոցի, վերջապէս ո՛ր կողմն որ դառնաս, էլ չես կարող Սէրասքերի դրան հրապարակը հասնել: Փողոցները նեղ նեղ, ծուռ ու մուռ, բարձր ու ցած, կեղտոտ, բազմամարդ, շինութիւնները բարձր, երկյարկանի, եռյարկանի, չորսյարկանի, տեղ տեղ գեղեցիկ, վաջելուչ, տեղ տեղ փլիկած, թափթփած:

Որքան առաջ գնաս, որքան հեռանաս՝ հետզհետէ այնքան նրււազում է անց ու դարձը: Մի քիչ յառաջ էլ՝ չեն երևում վաճառանոցներ, արհեստանոցներ և խանութներ: Ահա՛ այնպիսի դատարկ թաղեր, որի մի ծայրից մինչև միւսը հասնելը մի մօլլայի, երկու ծախսանողի և երեք երեսայի ես հանդիպում: Քաղերի մէջ տեղ տեղ երևում են բախկալի խանութներ, որոնք թաղեցոց մառաններն են, դաջֆաներ սափրիչներով, ծերերի զբօսարանները: Մի կաթծախի խանութ, որտեղ միշտ պատրաստ կարելի է զտնել յաք կամ սառը կաթ, մածոն և սեր: Միւս կողմը՝ կարմիր ու սպիտակներն հազին, թւերը վեր քաշած մի երիտասարդ անդադար թուչիտում է և անցնողի ուշադրութիւնը գրաւում իւր պատրաստած պաղպաղակի կամ «մուհալլէբի» վերայ: Մի քիչ այն կողմը՝ մրգածախը տեփուրի վերայ դարսած խաղողն ու դեղձը և եռոտանին ուսին՝ կանչում է, տանը հանգիստ նստողների ախորժակը գրգռելով: «Աբլաբու», գոռում է զոնիացի մի կեղտոտ բուն թուրք, բերնի թուրք երկու ափում պինդ բռնած բոված սիսեռի խախալում թափելով: Արաբուհի աղախիններն ու գերիններն գլխները մի գորշ թաշկինակ կապած, ամբողջ մարմնով մի ֆարաջայում ամփոփւած, սափորը ձեռքերը կամ լւացքի ջուր են կրում և կամ խանութներից տուն նիւթեր տանում:

Յանկարծ լուսամուտի վանդակը վեր բարձրացնելով, երևում է մի նամէհրէմի գլուխը, ժպտան երեսին, փայլուն աչքերը ոլորելով՝ չորս բոլորը կանչում է. — «լիթրաբջի», տասը փարի լաբլաբու

տուր:—Պանդուխտը մօտենում է, ուրախ ուրախ կշիռքին ժարը դընում ու կշռում բոված սիսեռը: Մի ուրիշ կողմից բացւում է նոյնպէս վանդակը և մի յաւէրժահարսն՝ բորբոքւած կարմիր այտերով, դրաւիչ դէմքով՝ ձայնում է.—«Մուհալլէբիջի», մուհալլէբիջի, քսան փարաչի տօնդուրմա (պաղպաղակ) բե՛ր:—

Այս նեղ փողոցներով երկար շրջաններ կատարելով՝ երբեմն բարձրանալով, յաճախ իջնելով, իջնում է մարդ ծովափի մօտերքը, Սամաթիայի քովերը մի ձորակի Ամֆիթատրոնի նման բլրները իրանց վերայի նօսը շինութիւններով շրջապատում էին այս ձորակը: Սամաթիան ազգասէրների թաղն է. տաճկահայերի ազգային սահմանադրութիւնը այս թաղումն է յղացել և այն ժամանակ այս թաղումը քառասուն երեսփոխաններ էին: ապրում: Եւ այս թաղումը, վերոյիշեալ ձորակի մէջ գտնւած ազգային մի ուրիշ հիմնարկութիւնից, հայաստանցի հայ աղջկայ լաց ու կոծի և բողոքների ձայնը լսելիս՝ ազգասէր էֆէնդիները միշտ կրկնել են.—Մեր ի՞նչ գործն է. և ուսերը թոթւել, ինչպէս որ ասում են Վ. Պոլսեցիք: Ձորակի մէջ, ծառաստաններով շրջապատւած բարձր շինութիւնը «Անարատ յղութեան» քոյրերի մենաստանն էր:

Սա մի երկչարկանի շինութիւն էր, որի հիմունքը երկու կամ երեք դար առաջ զցւած էր երևում: Նաո հեռուից այս վիթխարի շինութիւնը իւր թուլս կարմիր գոյնովը ակրութիւն էր ազգում անցորդին: Ձորս կողմից արձակ էր և անհամար լուսամուտներ ունէր ճաղերով ծածկած: Նորա մօտակայ այգին շրջապատւած էր բարձր և ամուր պարսպով: Միայն հիւսիսից այս պարիսպը ունէր մի երկաթապատ փոքր դուռ, որին կից գտնւում էր դռնապանի օթեակը: Դռնապանը, որ միշտ փակած ունէր դռները խոշոր ու պինդ փականքներով, կատարում էր և պարտիզպանի պաշտօնը: Ամենօրեայ պէտքերը բերում էին դուռը, յանձնում և ամսէ ամիս պատրիարքարանից հաշիւն տոանում: Մեծ ծախս էլ չ'ունէին, հացն ու միսը կառավարութիւնն էր մատակարարում: Մուտքն աշխարհին արգելւած էր, միայն մի ծեր քահանայի, որը խոստովանահօր պաշտօն էր կատարում, ամեն առաւօտ ժամը ութին ընդունում էին, որը մատուռի մէջ պատարագը ասելուց յետոյ, դուրս էր գալիս: Սորա այցելութիւնները երեք քառորդ ժամից աւել չէին տևում:

Պարսպադոնից հարիւր քաջ հեռու, շինութեան հիւսիսային կողմը, գտնուում էր վանքի բուն դուռը, որը նոյնպէս փականքով կողպած էր և դռնապան քոյրը միայն մայրապետի հաճութեամբ կարող էր բանալ: Այս դռնից մտնում էին բակը, որի շուրջը գտնուում էին քսան սենեակներ, ութն՝ արևելք, ութն՝ արևմուտք, երկուսն՝ հիւսիս և երկուսն էլ՝ հարաւ: Հարաւային սենեակներն յատկացրած էին մառանին և սեղանատան, արևելեաններն՝ դռնապան քրոջ և մայրապետին, որպէս զի առանց դժարութեան ելքն ու մուտքը քննեն. միւս սենեակներում տեղաւորեցրած էին երեք երեք քոյրեր: Վրայի յարկը նոյնպիսի կազմուածք ունէր, միայն հարաւային կողմը չորս սենեակներ էին գտնուում: Այստեղի իւրաքանչիւր սենեակը յատկացրած էր մի տեսակ ձեռագործի և ամեն մի կողմը փայլում էր մտքի, աչքի և ձեռքի վարժութեան ստեղծագործած բրդից, բամբակից, մետաքսից, ուլունքից, ոսկեթելից, թաւիչից և սնդուսից գործուած քներ: Ամենքը գեղեցիկ, ամենքը գրաւիչ և ամենքն էլ իշխանավայել զարդ ու զարդարանքներ: Արևելեան մի ընդարձակ դահլիճը յատկացրած էր մատուռի, որտեղի սքանչելի պատկերները, ծաղիկներն ու փուռները ժամերով մարդու ուշքն էին գրաւում: Խորանը բունած էր Տիրամօր պատկերը ուլունքներից շինուած, որը տեսնելիս չէր կարելի չը զմայլել: Նոր ուխտի տապանակի դրան վարագոյրը, մութ կարմիր թաւիչի վերայ ոսկեթելով բանուած խաղողն ու ցորենի հասկերը այնքան բնական էին, որ մարդ զգուշանում էր ձեռք դիպցնելուց: Այնքան շատ և այնքան առատ էր գեղարւեստի շնորհքը այս յարկում, որ մարդ չէր իմանում ո՛ր մէկը լաւ աչքից անցնէր:

Ամբողջ երեք տարի էր անցել այն օրից, երբ Տիրուհին ուխտել էր այս վանքում: Առաւօտ էր և նոր էր վերադարձել Տիրուհին պատարագից, վերի յարկում իւր արհեստանոցում նստած, Լիօնի ընտիր ալ թաւիչի վերայ ոսկեթելով ու մարգարտով, աննկարագրելի գեղեցիկ ու նուրբ ծաղիկներ էր կարում Էօթէնի կայսրուհու ապրսպըրած մինգրելական բաշլիկի վերայ, որ այդ ժամանակ մօզա էր: Նկարները ինքը Տիրուհին կազմել էր Կ. Պօլսի ամենայայտնի ծաղկանկարչի՝ պ. Կ. Այդինեանի օգնութեամբ: Բոլոր ծաղիկները բանուած էին, մնում էր կարելու երկու կապերի ծայրերին վշերի զըլ-

խին բացւած ու կոկոն վարդերի վերայ սոխակը թառած քաղցրիկ ձայնով երգելիս՝ անհամբեր վարդի բացւելուն սպասելով: Քաշեց քարզահը իւր կողմը և խոր սրտիցը մի դառն ակն քաշելով, Տիրուհին դրեց առաջը թղթի նկարը աղի արտասուքներ թափելով: Սիրած աշխատութիւնով պարապելիս՝ մասամբ մոռացաւ դառն վըրտերը: Տփից վեր առաւ կարկինն ու մատիտը և սկսեց չափչփելով նկարի գլխաւոր գծերը խաղել: Երբեմն հեռանում, երբեմն մօտենում, մի քիչ աջ, մի քիչ ձախ ծռւում, աչքերի խփերն իրար մօտեցնում և դիտում իւր ձեռագործը: Արիասիրտ զինւորի նման ձեռքերին վատահած, ժպիտն երեսին, մօտեցաւ աներկիւղ իւր ըստեղծագործութեան, ասեղը ձեռքը սկսեց բանել մեքենայական արագութեամբ: Տրամադրութիւնը տեղը գործում էր և գործի մէջ որոնում իւր մտիթարութիւնը: Մի ժամ չ'անցած արդէն պատրաստ էին գլխաւոր գծերն, երևում էին ծաղիկների ունենալիք գեղեցկութիւնը: Հնչեց զանգակը. պէտք էր դնալ նախաճաշի: Ուռքի ելաւ Տիրուհին, ասաց «Հրեշտակ Տեառն» աղօթքը և իջաւ սեղանատուն, որտեղից քսան բոպէ յետոյ վերադարձաւ մայրապետի և երկու աւագ կոյսերի հետ:

—Այսօր ի՞նչպէս ես, քո՛յր իմ, հարցրեց մայրապետը, որ շատ հասակաւոր չէր:

—Լա՛ւ եմ, շատ առողջ: Մի անգամից, առանց ջնջելու գծեցի և սկսեցի այս ծաղիկն, ասաց Տիրուհին, մատովը աշխատանքը ցոյց տալով:

—Մ'հ, ո՛րքան գողտրիկ և ո՛րքան քնքոյշ է սոխակն վարդի վերայ, ասաց աւագ քոյրերից մինը:

—Տեսնում եմ, քո՛յր իմ, տեսնում եմ: Քոյր Տիրուհին մեր վանքի դանձն է և մեծ ասպաղայ է խոտտանում մեր միաբանութեան:

—Մա՛յր իմ, մա՛յր իմ, ասաց Տիրուհին, այդ խօսքերով մի վշտացնէք սիրտս, չէ՞ որ այս չարիկի տակը ստացայ այս շնորհքները և այս վանքին եմ պարտական հոգով ծառայելու չաւիտեան:

—Ամենքս էլ պարտաւոր ենք մինչև մեր վերջին շունչը ծառայելու, բայց դու ողջ միաբանութեան պարծանքն ես:

—Իմ պարծանքս այն է, որ արժանացել եմ սոյն օթեանում

սրբակրօն մօր և քոյրերի մէջ հողիս խնամելով, պատրաստել մեզ խոստացած երկնային երանութեան արժանանալու:

— Որին արժանացնէ Տէրը ամեն հաւատացեալներին:

— Ամէն, ասացին աւագ քոյրերը:

Տիրուհին նստեց ծաղիկները լցնելու: Գործը վերջացնելու մօտ էր. մնացել էր սոխակի դէմքը, աչքերն ու կտուցը, որոնք յառաժ կոկոնների բացելուն պիտի սպասէին: Մայիսեան օր էր, սոթքը զգալի էր լեռնական աշխարհի զովաշունչ զեփուռներով մնած զրստերը: Լուսամուտները թէև բաց էին, բայց քամու նշոյլն անգամ չը կար: Կոյս-բժշկուհին, որի խնամքներին յանձնուած էր վանքը և մասնաւորապէս Տիրուհին, գիտենալով վերջինիս թուլութիւնը, անդադար գալիս էր, մի քանի խօսքեր խօսելով հեռանում: Նոքը նըկատելով կոյս-բժշկուհին, թէև շատ ստիպեց Տիրուհուն, որ գործը թողնէ և պարտէզը իջնէ մի քիչ հանգստանալու, բայց—պըրծայ, այս բոպէիս,—ասելով նորան ճանապարհ էր դրել, առանց գործը ձեռքից թողնելու:

Եւ երբ ուղում էր սոխակի աչքերը տեղաւորել այնպէս, որ յառաժ լինի ճիշդ կոկոնի ճեղքերին ու ծալքերին, թռաւ Տիրուհու միտքը, վերացաւ, սլացաւ, հասաւ իւր սիրելի Կակոսի մօտ, որը նոյնպէս մի ժամանակ գիշեր-ցերեկ քունը կտրած՝ սպասում էր սիրուհու բացելուն: Յիշեց իւր խոստմունքը, աւաճ երդմունքը, չիշեց Կակոսի ջերմ համբոյրները, չիշեց նորա սիրոյ համար քաշած տառապանքները և աչքի աւաջ ներկայացաւ թշուառ երիտասարդի ներկայ դրութիւնը: Այս մտածութիւնների մէջ ուշքը գնաց, նւաղեց ու գլորեց բազմոցի վերայ, Կակո՛ս, սիրելի Կակո՛սս ...մրմնջելով:

ԼԹ.

ԾՈՒԼԻ ԵՒ ԵՐԿՆՔԻ ՄԷՋ ԱՊՐՈՂ ԱՆԹԵՒ ԹՌՉՈՒՆԸ

Կակոսը, Տիրուհուն երկար ման գալուց յետոյ, անդեկացաւ, որ Կ. Պօլսում վանքն է քաշուել: Առանց այլ ևս մտածելու, մտաւ նաւը, հասաւ իւր երկրորդ հայրենիքը, որտեղ իւր ծննդեան վաչրից աւելի շատ էր ապրել: Կ. Պօլսի ամեն ծակը-ծուկը իրան

յայտնի էր, ոչ հարց ու փորձ արեց և ոչ էլ ճանապարհը կորցրեց, զնաց ուղղակի Սամաթիա և հասաւ վանքի դուռը: Արմացաւ մընաց, տեսնելով շրջապատի նոր շինած բարձր պարիսպները: Բերդի նման ամուր և անառիկ էր թւում մենաստանը: Առանց քաղաքավարական ձևերի դուռը բաղխեց: Գոնապանը, առանց դուռը բանալու, հարցրեց ներսից.

— Այդ ո՞վ է:

— Բա՛ց, ես եմ, պատասխանեց Կախուր, իբր թէ իրանց դուռը զարկած լինէր:

— Դու ո՞վ ես, կրկնեց գոնապանը:

— Մարդ եմ, խօ՞քեզ չեմ ուտիլ լոյս ցերեկով, պատասխանեց Կախուր:

— Այս դուռը մարդու համար չի բացւիլ:

— Այ՛ մարդ, ախր զորժ ունեմ, որ եկել եմ, շուտ արա՛, բա՛ց: Կախուր կարծում էր, թէ հանաք էր անում գոնապանը և սիրտը տրոփում էր: Քսան-երեսուն քայլ յետոյ մտածում էր տեսնել իւր սիրեկանին և նորա շրթունքներից լսել այն քաղցր բառերը, որոնց կարօտով տոչորւում էր: Մի և նոյն էր նորա համար, եթէ Տիրուհին աւսէր. — Արի՛ զնանք, կամ զնաս բարով և յաւիտեան ինձ մոռացիր: Նա աւելի յոյս ունէր առնել ու տանելու, քան թէ վերջին հրաժեշտը լսելու: Բայց և այնպէս հաստատապէս վճռել էր մի վերջին անգամ ևս տեսնել և ապա կամ նորա հետ ապրել, կամ մեռնել: Այս մտքերով զբաղւած գոռում էր գոնապանի վերայ:

— Ե՛յ, դուռը բա՛ց:

— Յիմա՛ր, քեզ չ՛ասի որ այս դուռը ամեն մարդի համար չի բացւիլ: Կորի՛ր, զնա՛, կամ ասա՛, ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, ինչի՞ ես եկել և ո՞ւմ ես ուզում տեսնել, զնամ լուր տանեմ մեծաւորին, այն ժամանակը թէ բարեհաճի՛ կը բանամ, թէ ոչ՝ կը թողնես ու կ'երթաս: Քեզ պէս հազարներ եկել են ու, առանց շէմքից ներս մտնելու, ետ դարձել: Քեզանով թող լինի հազար ու մէկ:

Կախուր շեղեմրած, չէր իմանում ի՞նչ պատասխանէր: Զգաց, որ եթէ ճշմարտութիւնը խօսի, ներս չը պիտի ընդունեն և իւր բոլոր ենթադրութիւններն անհետանան: Գորա առաջն առնելու համար, ստեց ու ասաց.

—Ես Կարինից եմ զալիս, օրիորդ Տիրուհուն իւր ծնողներից նամակ ու բերանացի խօսելիք ունեմ: Ինքս էլ նորա մօրքոյրի որդին եմ:

—Լա՛ւ, ա՛յ այդպէս: —Ասաց ու գնաց տեղեկութիւն տալու:

Կակոսի սիրան սկսեց աւելի սաստիկ բաբախել իւր վաղուց ի վեր չը տեսած ու կարօտած հոգու հատորի սիրովը: Տիրուհու ղեմքը տեսնելու և նորա շրթունքներից դուրս զալիք խօսքերը լսելու, ծարաւն ու պապակը չազեցնելու տենչի մէջն էր: Նրեակայումէր, որ Տիրուհին իւր խոտամունքների համաձայն, այժմ ազատ ծնողների ճնշումներից, պէտք է վազէ Կակոսի զիրին, ասելով: —Ազատի՛ր ինձ, Կակո՛ս, տար և հեռացրո՛ւ ինձ այս սևազգեստների միջից, հասցրո՛ւ քո ջարկիդ տակը և մինչև մեր գերեզման մտնելը սիրենք իրար մեր խոտամունքների համաձայն, ապրենք իրար ցաւի ցաւակից, և արդար բաժանենք իրար մէջ մեր բարիքները:

Դռնապանը իմացրեց դռնապանուհուն, սա էլ մայրապետին: Վերջինս զարմացաւ այս այցելութեան վերայ և Տիրուհուն զբաղեցնելու երկու քոյրեր ուղարկելով, հրամայեց որ ընդունեն եկողին: Կակոսը մտաւ ընդունարան, որը բացի դրսի դռնից ուրիշ դուռ չ'ունէր: Մէկ կողմը վանդակներով մի փոքր պատուհան էր երևում, որը միւս կողմից թանձր մթադոցն վարագոյրով ծածկւած էր: Կակոսը ազատ ման եկաւ ընդունարանի ամեն կողմը, նստեց, կանգնեց, դուրս նայեց լուսամուտից, բաց ոչ ոքի չը տեսաւ: Մայրապետը պատուհանի վարագոյրի ետևից լիտում էր Կակոսի շարժմունքները: Մի քիչ յետոյ ասաց.

—Պարո՛ն, դո՛ւք էիք ցանկանում քոյր Տիրուհուն տեսնել:

—Այո՛, ասաց Կակոսը, առանց տեսնելու և իմանալու թէ ո՞վ էր իւր հետ խօսողը և ո՞ր կողմից է զալիս ձայնը:

—Ցաւում եմ, որ նա վանքումը չէ և չը պիտի կարողանաք տեսնել նորան: Խնդրեմ՝ դրէք նամակը այդ տեղ, երեկոյեան զալիս՝ իրան կը յանձնենք:

—Ներողութիւն, ես նամակ չեմ բերել, այլ լուր: Նորա ծրնողներն կողինքում հեծում են, ի՞նչպէս կարող էին գիր գրել: Նւ ի՞նչ կարիք՝ տան մարդու հետ դեր ուղարկելու, քանի որ աչքով տեսածս, ահանջով լսածս եկել եմ անձամբ հազորդելու:

—Շատ բարի, որ այդպէս է, վաղն եկէք ու հաղորդեցէք քոյր Տիրուհուն ամեն բան, ինչ որ ապայրել են ճողոները: Ասացէք խնդրեմ, ի՞նչպէս է նոցա վիճակը:

—Շատ ցաւալի, մա՛յր իմ: Միակ որդին մեռաւ, ողջ տանը տէր ու ժառանգ չը մնաց: Ծնողներն էլ, ահա այս վեց ամիս է, պառկած են մահաւան անկողնում, տանջւում են անմխիթար, և հարազատ մէկը չ'ունեն, որ խնամէ նրանց հոգով:

—Ի՞նչպէս է նոցա կարողութիւնը. վերջին յօրերում խօ կարօտութեան մէջ չե՞ն:

—Ո՛չ, մա՛յր իմ, բոլորովին ո՛չ, նոցա դռանը դեռ շատ մարդիկ ապրուստ են հայթհայթում: Ուրիշից կարօտութիւն չ'ունեն: Անմխիթար են միայն տեսնելով, որ իրանց ահազին կարողութիւնը օտարի ձեռքն է անցնելու, կորչելու և որ իրանց օձախի ծուխը մարելու է:

—Շատ ցաւալի է, ախտ'ս, հազա՛ր ախտս: Մի՞թէ այդքան մեծ օձախ էին և ո՞րքան կարողութիւն կարելի է մնաց նոցա մահաւանից յետոյ:

—Որոշ չը գիտեմ, գուցէ մի տասը հազար ոսկիի կալանք ունենան:

—Մի՞թէ այդչափ կարողութիւն ունեն:

—Որոշ չը գիտեմ, բայց հաստատ գիտեմ, որ մեծ կարողութիւն ունեն:

—Ի՞նչ ասելիք ունէք քոյր Տիրուհուն, չի՞ կարելի ասէք ինձ, ես իրան երեկոյեան հաղորդեմ:

—Ոչ, ի՞նչ, մա՛յր իմ, միայն թէ ընտանեկան գաղտնիքները զժւար է պարզել, ինքը ձեզ ամեն բան կը պարզէ:

—Շատ բարի, պարո՛ն, գնաք բարով. առաւօտը եկէք և ինչ որ ունէք քոյր Տիրուհուն ասելու՝ ասացէք:

Վակոսը զուրս եկաւ և պարսպի դուռը ձռնչալով կողպեց իւր ետեւից՝ էլ չաւիտեան նորա առաջ չը բացելու համար: Վակոսի բոլոր ջանքերն անօգուտ մնացին, էլ Տիրուհուն չը տեսաւ: — Միայն երեսը տեսնեմ և երկու խօսք խօսեմ, ասում էր, նրանից յետոյ հանգիստ կը մեռնեմ: — Վանքի դուռը շուտ շուտ գնալ-զալու և ձանապարհներին սպասելու համար՝ ստիկանութեան յայտնեցին, որը

Կակոսին ստիպեց անմիջապէս հեռանալու քաղաքից: Բարեկամներին էլ յոյսը բոլորովին կտրելու համար, ասում էին, որ Տիրուհին գնացել է Եւրոպա:

Իորա համար զնաց Կակոսը մտաւ Ֆրանսիական «Մէսսօերի-Մարիտիմ» ընկերութեան մի շոգենաւի մէջ զայն Ֆաջի և տարին տասներկու ամիս շրջում էր Միջերկրական ծովի վերայ, Կ. Պօլսից Յունաստանի, Իտալիայի Կիպրոսի Վարսէջ և՛ հակառակը: Նաւից դուրս չէր գալիս և ճանապարհորդող բոլոր կոյսերին մանրամասն պիտում էր՝ մի օր Տիրուհուն գտնելու և իւր երկու խօսքը խօսելու յուսով:

Խ.

ՏՈՒՆԸ ԳԼԽԻՆ ՓԼԱՄ ՄԱՐԴԸ

Յովակիմ բէգի սպանման գոյժը հեռագիրը նոյն իրիկուն հաղորդեց Կ. Պօլսում Բէգլար բէգին: Սա, առանց երկար մտածելու, որդուն ուսումնարանի տեսչին և բարեկամներին յանձնեց և անմիջապէս շոգենաւով մեկնեցաւ: Կ. Պօլսի լրագիրներն, եւրոպական թերթերն ամիսներով զբաղւեցին այս հարցով և, չէրքէզ չարագործների առաջն առնելու համար, միջոցներ ձեռք առնելու խորհուրդ տւին եւրոպական դեսպանները Բ. Իրան: Ի իսլամատիան այս հարցերով զբաղւելիս, Բէգլար բէգը հասաւ իւր տունը՝ եղբոր կնոջը միութարելու, որը ամուսնու գծբաղդ մահից յետոյ երկար չ'ապրեց:

Սորան հանդատարան իջեցնելուց յետոյ, Բէգլար բէգը անմիջապէս ընտանիքը, հաւատարիմ ծառաների ընկերակցութեամբ, Կ. Պօլսի ճամբեց: Շուտով եղբոր կտակը հաստատել տւեց և տիրապետեց ու ամփոփեց իւր իշխանութեան տակը բոլոր հարստութիւնը: Առնելիքները ժողովեց՝ հարկւրից քառասուն զեղջելով, կայքերը ծախեց կէս գնի, մաքրեց բոլոր գործերը թէ առնելիք և թէ տալիք ու պատրաստեց Կ. Պօլսի մեկնելու:

Բայց ամենից առաջ հարկաւոր էր տեղափոխել այս դրամները Պօստով չէր կարելի ուղարկել, թշնամիներն անմիջապէս կը կողպտէին, մարդու չէր կարելի հաւատալ: Ձէր իմանում ի՞նչպէս հասցնէր այդ

գումարը Կ. Պոլիս: Հանաք բան չէր՝ մօտ կէս միլիօն ոսկի տեղափոխելը Տաճկաստանի պէս երկրում:

Յովակիմ բէգի գանձարանումն էր զետեղւած բոլոր հարստութիւնը և շատ զգուշութեամբ շարաթը երկու անգամ քննում էր Բէգլար բէգը գանձերը: Այս գումարներն ոչ թէ միայն Բէգլար բէգի հանգստութիւնը խանդարեցին, այլ քունն էլ կտրեց, գիշեր-ցերեկ պահապան էր դառել այդ ոսկիներին, տանից էլ չէր կարողանում դուրս գալ: Այս անհանգստութիւնները մաշում էին բէգին և ձգել էին անել դրութեան մէջ:

Մի երեկոյ, կէս գիշերից մի ժամ առաջ, տան չորս բոլորից հրդեհը բարձրացաւ և կրակի բոցերն ամեն կողմից յանկարծ ցլացին: Պահապաններն ու ծառաները հազիւ իրանց կեանքն ազատեցին, և Բէգլար բէգը, ծուխի ու մուխի միջից խեղդւելով, դուրս բերին, թմրած ու բժժած: Բոցերը մի սաստիկ լոյս էին արձակել քաղաքի ամեն կողմը և ծուխը ամպերի նման պատել էր երկինքը: Ապարանքը ողջ այրւում էր չորս բոլորից և ոչ մի կողմից ներս մտնելու և կահ կարասիք ազատելու հնարք չը կար: Ամբողջ քաղաքը ժողովել էր տեսարանի չորս բոլորը և աղմուկն ու կրակի ճարձատոցը տարածւել ամեն կողմ: Ոստիկանապետը իւր փոքրիկ գնդով եկաւ և, հրդեհի սաստկութիւնը տեսնելով, գնաց մութասարիճի մօտ ու մի վաշտ զինւորներով կրկին եկաւ կրակի առաջն առնելու: Կնքը մութասարիճը և բոլոր նշանաւոր զինւորական և քաղաքական ծառայողները բոլորեցան հրդեհի շուրջը:

Հրդեհը գնալով սաստկանում էր և սպառնում մօտի շինութիւններին, որոնք բարեբաղդաբար բուռական հեռու էին: Այրւող տան պատերը ձեղքւում, մաս մաս թափւում էին և զերանները գլորւում փողոցներում: Ախոռի մէջ նժոյգներն ու կովերն, թառի վերայ հաւերն խորովեցան, թափւեցան, և սարսափելի հոտը տիրել էր ամեն կողմ: Ապակիները տաքութիւնից հալեցին և սենեակների զարդն ու զարդարանքը պահարաններով գլորեցին: Թանկագին զորգերի ու կարպետների այրւածի խանձահոտը զզւանք էր պատճառում:

Բէգլար բէգը հրդեհի ամենասաստիկ բողբոջներում սթափւեց և մօտակայ մի տանիք բարձրանալով՝ նստեց երդիքի կլոր քարի վերայ,

առանց ցաւ զգալու զիտեց իւր տարիների ընթացքում ժողովածի հող ու մոխիր դառնալը և անհոգաբար հրամայեց ծառաներին նարգիլէ պատրաստել: Այրևած տան կրակում մի դաւ վառեցին ու զրին բէգի քաշելիք զալիոնի թամբաքուռի վերայ: Անհոգաբար ծխեց ու ծծեց զալիոնի ծուխը, առանց աչքը տան բոցերից հեռացնելու:

Քսան և չորս ժամ տեւեց և հնարք չը գտան կրակի առաջն առնելու: Տունը մինչև հիմունքը մոխիր դարձաւ: Զօրքերը, ոստիկանները լաւ պաշարեցին տունը և ոչ ոքի չը թողին հրդեհից բան վախցնելու: Մինչև կրակի իջնելը Բէգլար բէգը վայր չ'եկաւ տանիքից, ոչ քնեց, ոչ հանգստացաւ, ոչ կերաւ, ոչ խմեց և ոչ էլ մի բոպէ աչքը կրակի վերայից հեռացրեց: Միտեց իւր զալիոնը և խմեց դառը զայ՛փան:

Երկրորդ օրը լուսադէմին, երբ ամեն մարդ գտնուում էր իւր հանգստարանում, Բէգլար բէգը հաւատարիմ Փափանի հետ գնաց մոխրի կոյտը մանդալու: Դեռ շատ սաք էին քարերն ու գետինը և խորը մոխրի տակ պահած կրակի կայծերն: Երկար մանդալուց յետոյ, բէգը տան հիմքում քանդած պատի հանդիպեց, որտեղից անմիջապէս նշմարեց զանձարանը:

Էլ չը համբերեց, զգուշութեամբ մտաւ ներս՝ Փափանին դուրսը պահապան կանդնեցնելով: Սանդուղքներից իջնելիս՝ սաք և զարշելի օղը իրան խեղդում էր. աչքերից արտասունք թափելու չափ նեղւեց, բայց առանց ուշադրութիւն դարձնելու վաղեց, բացեց պատերում դանւած արկղիկները: Երբ բոլորն իրար ետեւից դատարկ գրտաւ, սարսափեց, էլ չը ղիմացաւ՝ — ուշադնաց վայր ընկաւ:

Երկու տարի յետոյ Բէգլար բէգը, կորցրած բոլոր հարստութիւնը, ընտանիքով ապրում էր Կ. Պօլիս՝ Իւսկիւտարում: Նա վարձել էր մի համեստ բնակարան, որտեղ տեղաւորել և հազար անգամ գոհ իւր ներկայ վիճակից, առանց աղմուկի ապրում էր: Տեղական մահմէդական, հայ և հրէայ աղղաբնակութիւնները, զոհ իրանց դրացուց, կռւած նորա արդարասիրութիւնը, փորձած հաստատամտութիւնը, քննած հանձարը և զխտութիւնը՝ նորան ընտրել էին իրանց քաղա-

քամասի Վաճառականական Ժողովի նախագահ և կառավարութիւնն էլ անմիջապէս կատարել էր ժողովրդի ցանկութիւնը:

Իսկ երբեմն երբեմն խաղաղ ընտանիքի հանգիստը տակն ու վրայ էին անում կաթուղի կղերը իրանց այցելութիւններով, որոնց ամբողջապէս ժեղուիտ էին կարծում Մելիք-Ղարազեօղեանները: Սորա առաջն առնելու համար, Բէզլար բէզը աղերսագրով դիմեց աղգալին պատրիարքարան, խնդրեց որ իրան և իւր ընտանիքին արձանագրեն լուսաւորչական եկեղեցու ցուցակի մէջ և բանան իւր գերդաստանի համար Հայաստանեայց Եկեղեցու մայրական գիրկը, կրկին ընդունելու այն զաւակներին, որոնք երկու սերունդ առաջ աշխարհի փառքերից, նեղութիւններից և ուրիշ հանգամանքներից ստիպւած, մոլորւել, դուրս էին եկել:

ԽԱ.

ԿՈՏՈՇՆԵՐՈՎ, ՄԱՐԴԸ

Գարուն էր. զիւղացին ցանքը ցանել, մի պահապան դրել և իւր կթանները առաջը խառնած՝ դնացել էր Ն ա չ լ ա: Զողարը հեռզհեռէ իւր կովերի ու ոչխարների հօտերը հովիւների առաջը դցած՝ դաշտերից ու լեռնադաշտերի, բարձրանում էր բարձր սարերի փէշերի վերայ: Մարդիկ և կենդանիք պատրաստուում էին զալիք շօքերին զիմաւորելու, թէև լաւ գիտէին, որ չորս ամսից աւելի իրանց մօտ հիւր չէր մնալու: Սարերի ծաղկազարդ հովիտներում ու մարգագետիններում գերացնում էին իրանց անասունները՝ աշնան ճարպառատ մնացուներ պատրաստելու: Գեղջկուհիներն, ալ ու զեղին շորերն հազին, կանանչառատ ձորերում զարկած իրանց վրանները՝ պատրաստում էին ձմեռուան պաշարները բնութեան սուստ պարզեաներից:

Մի կողմը, ոտքերը մինչև ծնկները մերկ, թևերն ու կուրծքը բաց, հաց աղջիկները մտել էին փոքրիկ վտակը բուրդ էին լւանում, միւս կողմը, գետնի վերայ գործիքներն սարքած շալ գործում: Այն կողմը պղինձը կրակի վերայ դրած, զանազան խոտերով ասրէ թէլերը զոյն զոյն ներկում էին գործելիք կարպետների համար: Մի քիչ այն կողմը, հիւղի մէջ կամ վրանի տակը, կնիկ-մարդիկ խոշոր տաշտերում փուած կաթի սերն են քաշում: Փոքրիկ հովիւներն բերում են ոչխարը և

զառները ու զոռում իրանց քոյրերի վերայ, որ շտապեն կթեն, որպէս զի ընկերներից ետ չը մնան: Վազում են աղջիկները ոտքերը բորլիկ, թևերը վեր քաշած, քուղէքը ձեռքերին ու ուղղելով ոչխարի կողքին շտապ շտապ կթում են: Մայրերն անմիջապէս մակարդը զցում և կաթը լցնում տոպրակների մէջ ու քամոց դնում: Ամեն օր, ամեն րոպէ, ամեն կողմ վխտում է կեանքը. միայն կիւրակի օրերը ճաշի ժամանակ կարողանում են մի քիչ հանգիստ առնել ու իրանց զարդ ու զարդարանքներով պճնւած բարձրանալ սարերի զագաթների վերայ դռնւած ուխտատեղիներն կամ սրբերի գերեզմաններն՝ խօնակ ու մոմ վառելու և իրար զարմացնելու իրանց նոր-նոր շորերով ու զարդարանքներով:

Մի օր չորս և հինգ աղջիկներ զարդարած բարձրանում էին Ս. Քաղաւորի գերեզմանը: Դամասկոսի և Հալէպի դործարանների ալ ու կանանչ, կարմիր ու դեղին մետաքսեայ կերպանների շողք արեգակն ճառագայթների տակ ծփծփում էր: Կարմիր կամ սև ուլունքներից շինւած մանեակներով, արծաթ ոսկեջրած փողմազներով պատած էր սալտակ և փղոսկրի նման փայլուն վզերն ու կուրծքերը, որոնց վերայ արեգակնաման դէմքերը շողշողացնում էին: Սև սաթի նման փայլուն մազերի տանեակներով հիւսերը շարքով անցկացրած էին զոյնզոյն սպրեշում թէլերից և փռած թիկունքների վերայ, որոնց ծայրերը կրկներին էին հասնում: Գլուխների ալ Փասերից կախած էր Ախալցխայի երկար, կապոյտ խաչաթի Ֆիւսկիւլը ոսկեթէլ կապերով, որոնք ծածանում էին մազերի վերայ և Փասերը Շամախու ծաղկուն վալալով պնդացրած էր զլիւններին: Արջան գեղեցիկ էին հագնւած, այնքան էլ ուրախ սրտով թրթուալով, հանաքներ անելով վազ էին տալիս դէպի արժանաչիշատակ հանգրստարանը:

Ճանապարհը թէև հեռու էր, բայց խօսակցութեան նիւթը չէր պակասում:

— Աղջի՛, ասում էր Նաշխունը Շուշանին, էդ խղմադ ո՞րտեղից է, վրայի փերուզի նմանը չը կայ զիւղում. էդ խօ Բէհի հարսի խղմիցը լաւ է:

— Դիւնազս առաւ ոսկերչից: Գիտես, երկու լիտր եղ աւինք, զեւ հօրիցս զազանի մի լիտր էլ պանիր:

—Շա՛տ սատանայ ես, էնքան արիւր, որ մամի արծաթ խղման ղէն զցեցիր:

—Ինչի՞ ղէն զցեմ. էն էլ Գոհարին տւինք:

—Լա՛ւ, լա՛ւ, մէջ մտաւ Մարջանը, դու որ Շուշանի խղման ես զովում, ասա՛, տեսնենք, քո օղերդ ի՛նչպէս ձեռք բերիր:

—Ինչպէ՛ս, երկու սոմար ցորեն տեց արարս առաւ:

—Ինչպէ՛ս չէ, ոսկի օղերը երկու սոմարի կը տան, է՛հ: Ինչի՞ չես խոստովանում, որ երկու էլ զաղի (ոսկի հին փող) Սոնադ ճակատից կտրեց, տեց ոսկերչին:

—Որ գիտես, էլ ինչի՞ ես հարցնում:

—Դրուսոր չես ասում Շուշանի պէս, զորա համար խօսեցի...

Այսպիսի խօսակցութիւններով բարձրացան մեր ուխտաւորները:

Միւս կողմից բարձրանում էին մի քանի պատանիներ: Սոքա էլ ուրիշ զարդեր ունէին:

—Ծօ՛, ասում էր Խէչանը Սարօյին, Տէրաէրենց աղջիկն էք ուզել քեզ համար ու չե՞ն տել:

—Ի՞նչպէս թէ չեն տել, երկու հազար դուրուշ է ուզում սեղլուխը, արտ ու մալ ծախէինք, թէ ինչ է՛ մի հարս տուն պիտի բերե՞նք:

—Թող իրանց տանը պահեն ու թթու դնեն:

—Քէհի տղան պիտի ուզէ, ասում են, իրանց Վարդանի համար:

—Մարջանը էն չուտին չի առնիլ:

—Դու ի՞նչ գիտես: Տէրաէրն որ տայ, ի՞նչ պիտի ասէ:

—Մարջանը մարդու չի գնալ Սարօյից ջոկ:

—Խօ՞սք է տել քեզ, Սարօ՛ ջան, հոգիդ սիրես՝ զրօ՛ւտն ասա:

—Տել է, չի տել՝ նորան չի առնիլ:

—Թէ տել է, զրուստն ասա՛, գիշերս փախցնենք: Ափարդ բէզի դասն է, ձեզ մարդ բան չի ասիլ:

—Ծօ՛, ասում էր Սարօն փքւելով, ասում եմ, որ բանը սիրով լինի, թէ բանը այդտեղ համի, Աստուած ողորմած է:

Սրանք էլ հասան Ս. Գերեզման:

Այստեղ երկիւղածութեամբ ամեն մարդ, իւր ուխտը կատարելուց յետոյ, ընկերների հետ կրկին ցածրանում էր ղէպի իւր հիւղը: Այս օր մի տարօրինակ մարդ ամենքին զարմանք էր պատճառում: Այդ

աղքատը քրդի շորերով նստած գերեզմանի քարի կողքին, խլիկի մէջ փաթաթւած, անմուռնչ լաց էր լինում: Դորա միայն ճակատն ու աչքերն էին երևում և մազերի մէջ ճակատի մէջ տեղը մի մեծ խուլ ունէր, որի կէսը ծածկւած էր գլխի չթի և քիւլածի տակ: Ամենքը դորա հետ երկիւղածութեամբ էին վարում, բայց մի չարածճի համարձակեց հարցնելու, թէ դա քո՞ւրդ է, թէ հայ: Բայց երբ պատասխան չը ստացաւ, սկսեց ձեռքիցը փայտը քաշել, վըրայիցն էլ խլիկը և զայրացնել միմոտութիւններով: Այս կատակները շատերի ծիծաղը շարժեց և սաստիկ զայրացրեց անծանօթին: Ուխտաւորներն կոտորներով մարդուն կանչուրտելով, ծիծաղելով հեռացան: Եպլացում տարածեցին կոտորներով մարդու համբաւը և շատերը սպասում էին նորա սարից վայր գալուն:

Իրիկւայ մթանը վայր իջաւ անծանօթը և, մի հիւղի տակ գիշերելուց յետոյ, առաւօտը վաղ գնաց եպլաւորի տանուտէրին գըտնելու: Զարմացան գիւղացիք, երբ իմացան որ անծանօթը ուզում էր մի քանի ոչխար գնել:

— Անունդ ի՞նչ է, հարցրեց տանուտէրը:

— Ռոստոմ, ասաց կոտորներով մարդը:

— Ռոստոմ՝ աղբէ՛ր, ո՞րտեղացի ես, կրկնեց տանուտէրը:

— Զաւակացի:

— Լա՛ւ, լա՛ւ: Քանի՞ ոչխար ես ուզում գնել:

— Մի տապը հատ կ'առնեմ:

— Լա՛ւ, Ռոստոմ՝ աղբէ՛ր, հաց կե՛ր, ես իմանամ, ով որ ունի

ծախու, երթանք առնենք:

Ռոստոմին բերին նախաճաշ, հաց, պանիր, սեր և մածուն: Ռոստոմը ախորժակով կերաւ, կշտացաւ և, տանուտէրի հետ մի քիչ մանդալուց յետոյ, երեք ոսկի աւեց ու վեց ոչխար առաւ, առաջը խառնեց և է՛հ, հէ՛, է՛խ, է՛խի ասելով՝ քաղաք բերեց ծախելու: Առաւօտը վաղ բազարում ոչխարի չորս բոլորն էր ման գալի Ռոստոմը: Այդ օրերը մորթելու մալ քիչ են բերում և մանրաբազները շրջապատեցին Ռոստոմին, բայց հնարքը չը գտան զնելու: Քուրդը ասում էր, որ չորս ոսկուց սրակաս չի տալ վեց ոչխարը և ուրիշ բան չէր խօսում: Ոչ լաւ խօսքով, ոչ հայհոյանքով և ոչ էլ ծաղրածութեամբ կարողացան քրդին համոզել ու ձեռքից խլել ոչխարները: Ռոստոմը

երեք օր շարունակ տանում էր մօտակայ սարերի վերայ, արածացնում ու մի շալակ խոտ էլ քաղելով բերում քաղաքը, հրապարակում սպասում էր ոչխարները ծախելու: Երրորդ օրը պղնձագործ Դաւիթն եկաւ քրդի մօտ և ուզեց գնել ոչխարները:

Բայց Դաւիթը բոլորովին փոխել էր, այնպէս որ դժւար էր նորան ճանաչել: Թէ ի՞նչ էր պատահել վերջին երեք չորս ամուսն մէջ, հարկաւոր է նախ պատմել:—

Գիտենք որ Դաւիթը Տիրուհու հազարների սիրովը վաււած էր: Այնքան ժամանակ այս մտքի համար ամեն զրկանք ու նեղութիւն յանձն էր առած, միայն նպատակին շուտով հասնելու յուսով: Անակնկալ կերպով Իլիջէի ջրերից Տիրուհու փախուստը յուսահատեցրեց Դաւիթին: Սկզբում կարծում էր, որ Կահուի հետ փախած կը լինի, յետոյ Իլիջէի զայմաղամի և ուրիշ ականատեսների վկայութիւնով համոզեց, իբր լազերի առևանգած լինելուն: Այս պատճառով Թախանձեց աէր-Կարապետին, որ անմիջապէս ամեն կողմ մարդիկ հանել տայ և բոլոր գաւաւներում փնտռել տայ փախցրածին: Բայց վարդապետի լոկ խոստումներից և անտարբերութիւնից ստիպւած, մի ամբողջ ամիս անձարացած ինքն անձամբ ման եկաւ, քննեց ամեն մի գիւղ ու գաւառ՝ կեանքը վտանգի դրած: Թէև Սուլթանի գերիշխանութեան անհնազանդ, հարկից, տուրքից ազատ, անսանձ ու վայրենի Պարխար լեռների որդիքը, լազերը, մի ակնթարթում կարող էին մի գնդակով այս լրտեսին գլորել, բայց խորամանկ աղւէսը նրանց աչքերը կուրացրել էր իւր շալակած կլայգործի փուքսովը: Տնից տուն ման էր գալիս ու կանչում.

—Ո՞վ ունի կլայցեկելու ամաններ:—Ամեն գիւղ մի քանի աման կլայցեկելով անցաւ մինչև Տրապիզոն: Այստեղ տեղեկացաւ, որ իւր փնտռածը Կ. Պօլիս վանքն է քաշել:

Դաւիթը հասկացաւ իւր գլխին խաղացած վարդապետի խաղը և, առանց ձայն ու ծպտուն հանելու, վերադարձաւ Կարին: Տէր-Կարապետը սկսեց սառը վարել Դաւիթի հետ: Պղնձագործը իբր թէ չէր նկատում նորա անտարբերութիւնը ու շարունակում էր իւր խոնարհ ծառայութիւնները: Դաւիթը խորհում էր վրէժը լուծել, բայց չէր իմանում ի՞նչպէս զցէր վարդապետին իւր Թակարդը:

Գտաւ պղնձագործը մի հարբեցող, բայց քաղաքում յայտնի

անձնաւորութիւն, որը վարում էր զազայի ինժեների և արխիտէկ-
սորի դերը, թէև այդ զիտուութիւնների այբ ու բէնից տեղեկութիւն
չ'ունէր: Սերտ ընկերութեամբ կապեց հետը և ամեն օր տասը կամ
քսան զուրուշի մաստիկէն չէր խնայում նորա համար: Ամեն իրի-
կուն մի տեղ ժողովում ու իրար հետ երկար ուտում, խմում, քէֆ
անում:

Խալիդ բէգը (այսպէս էր անուանւում) հարբած ժամանակը բաց-
ւում էր, իւր զգացմունքներն ու ցանկութիւններն յայտնում Ռաւ-
թին. վերջինս էլ ամենայն ուրախութեամբ աշխատում էր լրացնել
նորա իղձը: Խեղճ երկրաչափը փողի շատ նեղութիւն ունէր. Ռա-
ւիթն այդ դէպքում էլ օգնում էր: Մէկ, երկու ամսից այնպէս մտեր-
մացան, որ Խալիդը իւր բոլոր գաղտնիքներն Ռաւթին պարզեց:

Խալիդ բէգը զանգառուում էր իւր պարտքերից, որ օրից օր ա-
ճում էր և տոկոսովը բարդւում: Ռաւթիթը զիտէր նորա նեղ վիճակը
և աշխատում էր նորա զրպանի սովը սաստկացնել: Մի օր Խալիդը
առանձնապէս խօսեց Ռաւթին, որ մտածեն և մէկից շատ փող ձեռք
բերելու հնարը գտնեն:

— Ռաւթիթ, ասում էր Խալիդը կատակով, կորածդ փողերից չը
կա՞յ, որ ծախսենք:

— Նրանք պատուից ընկան, էլ չեն անցնում:

— Նորը կորի՞ր:

— Այդ փորձը ինձ խելօքացրել է, ուրիշ բան մտածել կարո՞ղ
ես, ասա՛:

— Ի՞նչ պիտի մտածեմ, դատի՞ր ու կեր: Աշխարհն այդպէս է
ապրում:

— Հնարքը գտի՞ր, խաբի՞ր, թալանի՞ր — աշխարհքն այդպէս է
եօլայ գնում:

— Ախար վաստակ չը կայ, ոռճիկը քիչ, տունը մեծ, դրամա-
զուլիս չը կայ, որ մեծ գործերի ձեռք զարկեմ ու կանոնաւոր ապրեմ:

— Քիչ քիչ մօտ արա՛ւ: Ձե՞ս իմանում, որ ջուրը կաթիլ կաթիլ
լճանում է, հեղեղի նման վազում ու գնում:

— Մաղրո՞ւմ ես:

— Ինչի՞ եմ ծաղրում, այդպէս են ասում: Մի՞թէ բոլոր հարուստ-
ները այդպէս չեն առաջ եկել:

—Դաւիթ, Դաւիթ, նրանք խեղճի արիւնն են ծծել:

—Ո՛չ, բէ՛գ, ո՛չ, նրանք խելօքութեամբ են ժողովել:

—Ո՛չ, ո՛չ, նրանք ուղղակի և անուղղակի խելօքութեամբ կամ խորամանկութեամբ գողացել են իրանց բուկից, շորից, տան ծախսերից, դրացու թույլութիւնից, յաճախորդի խախտութիւնից, գիւղացու աղքատութիւնից և քրդի կարօտութիւնից: Ծել են չիտուն դուրուշանոց ապրանքը հարիւրի և, վեց ամիս յետոյ, տարեկան քսանը չորս տոկոս էլ վրայ եկել և միշտ կարիքներում խեղբւածներին բարերար հանդիսացել: Տրանջացողներին էլ իրանց լաւութիւնների ու բարութիւնների կտրելովը վախեցրել են: Այնքան որ ճանկերն ընկնես, մինչև բնբուլներդ չը պոչկես, յայտնի բան է, չես կարող ձեռքերիցը դուրս պրծնել:

—Էդ դու լա՛ւ քարոզ տալ գիտես, ինչի՞ մէջիդում մէկ վաչիզի պաշտօն չես խնդրում: Զը գիտե՞ս, որ դրանք չեն անցնում, կարող ես՝ դու էլ արա՛ և մի՛ նախանձիր ուրիշի վերայ:

—Ե՛ս, ե՛ս չեմ կարող խարդախ, խաբեբայ, ստախօս, կեղծաւոր, երկերեսանի և սորուկ դառնալ: Այդ ձիրքերը իմ օճախիս չէ վիճակւած: Սուլթան Մուրադից մինչև այս օրը սուրը ձեռքերս միշտ կուել կամ կառավարել ենք: Խաթունը աւելի քաջ է եղել, որ ամուսնու մահից յետոյ Իսլամն ընդունելով, արգանդի որդւոյն հօր ժառանգութիւնից չի զրկել: Բայց մեղի պապս, Սուլէյման փաշան, Սուլթան Մահմուդի նիդամից (հաննաւոր ցօր) վախենալով, հազար տարւան ժառանգական կալւածքները առանց տրտունջի յանձնում է, գանձից տարեկան մի քանի հազար դուրուշ ստանալու պայմանով: Իսկ այսօր մենք տարիներով սպասենք, որ Կ. Պօլսից իրադէ (հրաման) գայ ու մեզ բամաղանից բամաղան մի ամսական խարջուխ (ծախուք) տան:

—Մի՛ վրդովւիր, բէ՛գս, մի՛ վրդովւիր: Աշխարհքում ո՞վ չէ ապրել: Ապրուստի համար էլ մարդ այդքան հողայն:

—Ի՛նչ ես խօսում, Դաւիթ, ողջ գաւառի, երեք հարիւր ութսուն գիւղերի տիրոջ թոռը այսօր անքում է Նալբանդ Յարութիւնի երեք հարիւր ոսկու պարտքի տակը և իւրաքանչիւր տարի եօթանասուն երկու ոսկի էլ տոկոս է վճարում: Այս դեռ հերիք չէ, առաջի օրը այդ մրտա մեխ ջարդողը համարձակւում է ասելու, որ

եթէ մինչև յուլիս իւր փողերը չը վերադարձնեմ, պարտաւորւած պիտի դանդատ տայ և տներս սեք վեստրի տակ առնէ:

—Ե՛հ, շան հաչալուն ո՞վ է մտիկ տալի:

—Իւււի՛թ, խօսելուն վերջ չը կայ, որքան շատ խօսենք, այնքան աւելի պիտի վրդովւեմ. ասա՛, դու կարո՞ղ ես փող գտնելու ճարը տեսնել:

—Ի՞նչ դիտեմ:

—Բէզլար բեզից մի հինգ հարիւր ոսկի պոկել չե՞նք կարող:

—Խելքս չի կտրու՞մ, նա առանց ասպահովութեան փող գուրս չի տալ:

—Պալլարի՞ց:

—Ո՛չ, ո՛չ: Մօսն որ երթանք, ինքը քեզնից առաջ փող կը խնդրէ, որ էլ դու բան չ՛առաջարկես:

—Չմշկեանի՞ց:

—Նորա ծառաները կ'ասեն՝ թէ աղէն տանը չէ:

—Ոչ մի տեղից յոյս չ'ունե՞ս:

—Բոլորովին:

—Արի՛ զնանք սարը ու ճանապարհորդներին կողոպտենք:

—Այդ մեր զործը չէ:

—Տուն մտնենք, թալանենք:

—Դորան քիչ խելքս հասնու՞մ է:

—Ո՛ւմ տունը մտնենք. Ղարազեօզեանցի՞:

—Ո՛չ, նրանց արջւենի ծառաների ձեռքից առողջ չենք ազատել:

—Մալուժեանի՞:

—Նորա տանը բան չենք գտնիլ:

—Ազարեանի՞:

—Նորա գամփոռները մեզ կը խեղդեն:

—Հապա ո՞ւմ:

—Այնպիսի մի տեղ, որ ոչ ծառայ լինի, ո՛չ շուն, ո՛չ պահապան և ո՛չ բազմութիւն:

—Այդպիսի տեղն էլ փող չի լինիլ:

—Ես մի այդպիսի տեղ զիտեմ, որտեղ չափից շատ փող կայ:

—Շա՞տ փող կայ:

—Հինգ հազար ոսկի, ես զիտեմ, որ կայ, աւելին էլ՝ մեր բաղդին:

—Այդ ո՞րտեղ է:

—Քաղաքի մէջ:

—Յայտնի թաղո՞ւմ է:

—Ոչ, անց ու դարձը շատ սակաւ է:

—Ո՞վ է:

—Ինչի՞դ է հարկաւոր, չեմ ասիլ:

—Դէ՛հ, ասա ո՞վ է:

—Անկարելի է:

—Թէ յոյս ունես, ասա՛, պատրաստութիւն տեսնենք, երթանք:

Տունը լաւ յայտնի՞ է քեզ:

—Ամեն ծակ ու ծուկը զիտեմ:

—Փողի որտեղ լինե՛լը:

—Երկաթի սնդուկում, որի բանալին վերան է և ես շատ հեշտութեամբ կարող եմ բանալ:

—Եթէ հաստատ զիտես, որ փող կայ, վաղը ես մի չորս կամ հինգ կտրիճներ կը հաւաքեմ, մի լաւ քէֆ կ'անենք ու խորհուրդ անելուց յետոյ՝ կ'երթանք:

—Շա՛տ բարի, էգուց ժողովենք:

—Ո՞րտեղ:

—Որտեղ որ կամենաս:

—Քու-Ալիենց տանը: Բայց հարկաւոր է մեծ խորոված, արաղ և զինի, որ կուրացնենք նրանց աչքերը:

—Ես կը տեսնեմ այդ պատրաստութիւնները:

—Մէկ գէր ոչխար հաղիւ բաւականանայ:

—Շա՛տ բարի, զիտեմ, որ անկուշտ են:

—Գիշեր բարի՛, դնամ:

—Լո՛յս բարի:

—Տեղը չ'ասացիր, հանգստութիւնս զիշերս պիտի կտրւի:

—Վաղը գնալիս կ'իմանաս:

—Լա՛ւ, լա՛ւ:

Դաւիթը մինչև լոյս մտածեց և երկու հազար ոսկի իրան բաժին հանելով, օտար-աշխարհ փախչելու որոշեց: — Այն տեղերում մեծ հարստութիւն ձեռք բերելու երևակայութիւնների մէջն էր:

Առաւօտ կանուխ ժամ գնաց, այստեղից ժամատուն և երկար

խօսակցեց տէր-Վարապետի հետ: Դաւիթը համոզում էր նորան, որ ինքը միշտ եղել է ու պիտի մնայ վարդապետի հաւատարիմ ստրուկը: Տէր-Վարապետը փոխադարձաբար իւր շնորհակալութիւններն էր յայտնում նորան՝ իւր բոլոր գործունէութիւնների համար և սրտանց ցաւում Տիրուհու կուսանոց մտնելուն վերայ: Խոստանում էր ապագայում մի աւելի յարմարաւոր բաղդի հասցնել: Երկու ժամ աւելի տևեց տեսակցութիւնը և երկու կողմերն որքան որ խաբեպատիր խօսքերով իրար շողոքորթեցին, բայց իրանց անկեղծութեանը իրար չը կարողացան համոզել: Երկուսն էլ իրար խաբած կարծելով բաժանուեցան:

Իրիկւան դէմ բազարում միս չը գտնելով, Դաւիթը գնաց հրապարակ ոչխար գնելու և պատահեց մեր կոտոշներով Ռոստոմին:

—Մի ոչխար ծախէ ինձ, կուռօ՛, ասաց Դաւիթը:

—Աղա՛, ասաց կոտոշաւորը, մէկ-մէկ չեմ ծախում, վեցը մէկ-տեղ եմ ծախելու:

—Քո՛ւրդ, ինձ մի հատ է հարկաւոր:

—Ձէ՛, զուրբան աղա՛, մէկ-մէկ չեմ ծախիլ:

—Ես զասաբ չեմ, վեց հատն ի՞նչ անեմ:

—Ձեմ՛ գիտում, աղա՛, վալահ՛ ես չեմ բաժնիլ:

—Լա՛ւ, ի՞նչ ես ուզում վեցին:

—Չորս ոսկի, աղա՛:

—Ոսկին ի՞նչ է, դու զուրուշ ասա՛:

—Ղուրուշով չեմ գնել, աղա՛, ոսկով եմ գնել:

—Ա՛յ քուրդ, յի՞մար ես, խե՞ ես, ի՞նչ է:

—Ձեմ՛ գիտում, աղա՛:

—Ախար վեց ոչխարին էլ չորս ոսկի կը տա՞ն:

—Եղպէս է, աղա՛:

—Սա խելքը կորցրածի մէկն է երևում:

—Դրուստ է, աղա՛:

—Երեք ոսկի տամ:

—Ձէ, աղա՛, չորս...

—Տո՛ւր, տո՛ւր, միջամտեցին շրջապատողները և առնողի ու ծախողի ձեռքերը իրար կպցնելով՝ սկսեցին թափ տալ՝ տո՛ւր, տո՛ւր կանչելով:

—Ձէ, չէ, չէ, զոռում էր քուրդը:

—Լա՛ւ, ասացին միջամտողները, երկու ճերմակ մէջիղիէ էլ աւելի քուրդը լռեց: Առուտուրը գլուխ եկաւ:

—Դէ՛հ, քէ՛ն՝ խանի ակտուր, ասաց Դաւիթը, և փողերդ ստացի՛ր:

—Լա՛ւ, աղա՛, ասաց կոտոշաւորը. ո՞ր կողմը երթանք:

—Ետեւիցս արի՛, ասաց Դաւիթը, ու առաջ ընկաւ, զնացին մեզ յայտնի Օսման փաշայի խանը: Աշխարները ակտուր անելուց չետոյ, քրդին տարաւ իւր սենեակի դուռը կանգնեցրեց:

—Բողորը ճերմակ մէջիղիէ տամ կ'ընդունես՞, ասաց Դաւիթը:

—Լաւ, աղա՛, ասաց քուրդը:

Դաւիթը ներս մտաւ: Մութը կոխել էր և զժւար էր որոշում առարկաները: Խանութաւորները խանութները կողպում էին և ոստիկանները բազարի այս ու այն կողմը ուշադրութեամբ քննում: Դաւիթը քսակը ձեռքը դուրս եկաւ և սկսեց համրել մէջիղիէները: Երբ ութ հատ համրեց ու ձեռքը կոխեց քսակը, քուրդը Դաւիթի երկու դաստակներն ամուր բռնեց և սկսեց գոռալ. —Ձաբթիէ՛, հիւմմէթի-Մուհամմէդի, զաբթիէ, (ոսթիէան, Մահմէդի հասարակացեալ ոսթիէան): Դաւիթը որքան որ աշխատեց, չը կարողացաւ ազատել քրդի ձեռքիցը: Բազմութիւնը եկաւ լցւեցաւ: Կեղծ մէջիղիէներն, որ գետնի վերայ թափութը փաւած տեսան, սկսեցին բռուցքներով Դաւիթի դլխին զարկել և գոռգոռալ. —Սատկեցրէ՛ք այս քեաֆիրին: —Մինչև ոստիկանութեան գալը այնքան խփեցին, այնքան ծեծեցին, որ բժ ժ եց աւ Դաւիթը:

Ոստիկանութիւնը կեղծ փողերը հաւաքեց ու Դաւիթի ձեռքերը ետը կապած՝ հրելով ու քաշքշելով տարաւ ոստիկանատուն, որտեղից առանց այլ և այլ քննութեան՝ իսկոյն բանտը:

ԽԲ.

Կ Ո Յ Ր Ը

Դաւիթը կրկին անգամ հանդիպեց իւր վաղածանօթ բանդապետ Իբրահիմ աղային: Սա շատ մտերմաբար ընդունեց պղնձագործին և սովորական շղթայն չը զարկեց ոտքերը: Իրիկունն էլ սովորական պատին կցւած ընդհանուր շղթայի մի օղակը չը գցեց Դաւիթի վիզը: Պղնձագործը առաջին անգամ բանտապետին լաւ շա-

հելուց զատ, բանտից դուրս գալիս անմիջապէս Իբրահիմ աղայի տունը դայֆայ, շաքար և կնոջը կապացու շութնի զրկեց: Իբրահիմ աղան յոյս ունէր, որ առաջւայ նման կարող է էլի շուտով ազատել Դաւիթը:

Թէև բանտի հիւսիսային կողմը առանձին տեղ էր որոշւած մի քիչ պատուաւոր բանտարկեալների համար և Դաւիթն էլ այդ տեղ էր դրւած, բայց ընդհանուր տեսարանը սոսկալի էր:—Քսան արշին երկայնութիւն ու տասներկու արշին լայնութիւն ունէր, աւելի աստուի էր նման քան թէ մարդու բանտի: Յատակը հողից, որի վերայ փռւած էր խոտ և ամեն մի բանտարկեալի տակը մի կտոր խտր, բանտարկեալներն ունէին իրանց բարձն ու վերմակը կեղտերի մէջ կորած: Պատերի քարերը կարելի էր համրել և միջոցներիցը հողը անդադար թափուում էր:

Չորս երկաթեայ վանդակներով փաքրիկ լուսամուտներ ունէր հիւսիսային պատից, որոնք համարեա առատաղին կպած էին: Բանտի երկայնութեամբ մէջտեղից մի արշին տրամագծով փայտից կոր չորս սիւներ կային: Առատաղը, որ համարեա եօթ արշին բարձրութիւն ունէր, խոշոր գերաններով ծածկւած և գերանների միջոցներում գցած մարդակների միջից հողը անդադար մաղուում էր: Թէ առատաղը, թէ պատերը, թէ սիւները, թէ լուսամուտներն և թէ ամեն անկիւնները սարդի պէս պէս ոստայններով զարդարւած էին: Ապականւած գարշելի օդը, զանազան սողունները, միջատները և սոսկալի ծխերն ու բուրմունքը՝ դռնից ներս նայելիս անզամ՝ սաստիկ զզւանք էին պատճառում մարդու: Այտեղ սպասում էին հարիւրաւոր մարդիկ իրանց դատարաններում ունեցած մարդասպանութեան, գողութեան, յափշտակութեան, պարտքի և ուրիշ յանցանքների գործի վճռին:

Դաւիթը յոյս ունէր, որ վարդապետը անպատճառ կ'աշխատի անմիջապէս իրան ազատելու այս օթեանից: Ամեն մի անցնող վայրկեաններն ու բոպէները համրում էր, ներս ու դուրս ման եկող ծառաներին միշտ հարցեր էր տալիս, բայց փնտռող չ'եղաւ: Բանտարկեալների ծանօթները գնում, գալիս, հաց, կերակուր, ծխախոտ, միրգ և ուրիշ նիւթեր բերում էին: Շատերն էլ հսկողութեան տակ մօտենում էին իրանց բարեկամներին, ազգականներին, եղբայր-

ներին, ծնողներին, խօսում, քաջալերում, յոյսեր տալի, մխիթարում ու հեռանում էին: Բանտարկեալներից մի քանիսի մօտ խօսակցութեամբ անցկացրեց բաւական ժամանակ Դաւիթը: Բանտի ծառային ուղարկեց տէր-Վարապետի մօտ, որին վերջինս համարեա թէ վռնդեց այս խօսքերով.

— Գնա՛, ասա՛, որ իմ վերայ թող յոյս չը դնէ: Ես նորա խօսքերին հաւատալով առաջի անգամ օգնեցի, բաւական է, էլ պարտաւոր չեմ և եթէ օգնեմ, խղճիս դէմ մեղանշած կը լինիմ:

Դաւիթը շանթահարած լսեց այս պատասխանը և բաւական ախտեր ու օ՛ֆեր քաշելուց և լաւ մտածելուց յետոյ, կարծեց որ ուրիշ պատասխան չէր կարող տալ իւր ուղարկած մարդուն, որը կառավարութեան մի փոքր պաշտօնեայ էր: Բարեկամներից մէկին կանչեց և խնդրեց, որ գնաց ու մի որոշ պատասխան բերէ: Սորան աւելի մեծ անպատուութեամբ ճամբեց, ասպարելով որ ուրիշ անգամ մօտն էլ մարդ չ'ուղարկէ:

Յուսահատութիւնը պատեց պղնձագործին և մթնեց նորա աչքի լոյսը: Այդ ժամերում ի՞նչ սարսափելի տխուր պատկերներ չ'անցան նորա մտքից...

— Այդ անիծւած քուրդը, ասում էր նա ինքն իրան, այդ կօրօ՛ն, այդ կոտորաւոր սաղաթէլը, այս երկրորդ անգամ բանտարկութեանս պատճառն էլ դա եղաւ: Եւ ի՞նչպէս կուրացայ, որ սկզբում չը նկատեցի ճակատի կոպը...: Վա՛յ, Ռոստո՛ւմ, վա՛յ, թէ երրորդ անգամ էլ պատահես, արդե՞օք կախաղան ես հանել տալու ինձ, թէ կացնով վիզս կտրել տալու: Ա՛խ, այս ի՞նչ սարսափելի պատահարներ են...: Շէկ Յակոբից խօսք առածս գիշերը նա ինձ անհանգստացրեց և այն օրից մինչև այսօրս երկու անգամ երևեցաւ աչքիս և երկու անգամին էլ ինձ մահացու հարւածներով խցեց: Ո՞վ է իմանում, այս վիճակիցս էլ ազատելո՞ւ եմ...:

Իրան բոլորովին անօգնական, անտէր և կորած զգացած ըստե՛նում՝ բանտապետը առաջնորդում էր մի թուրք ծառայի, որը սինու վերայ զանազան կերակուրներ շարած՝ բերեց դրեց Դաւթի առաջը: Բանբերը մտերմութեամբ նստեց մօտը ու սկսեց խօսակցել: Դաւիթը շատ զարմացաւ և մի լրտես համարելով զգուշութեամբ վարեցաւ հետը: Բանբերը կամաց իմացրեց, որ Խալիզ բէգն է իրան ուղարկողը:

Դաւիթը երկար մտածելուց յետոյ յիշեց, որ սորան մի անգամ նորա հետ խորհրդակցելիս տեսել է, ուստի հանդարտելով հարցրեց թէ՛ ի՞նչպէս է կերակուր ուղարկողի առողջութիւնը:

— Դիւղն է, ուշ ժամանակ զուցէ գաց, ասաց պատգամաբերը:

— Հասկացայ, ասաց բանտարկեալը: Բան բերողը դատարկ ամաններով ետ դարձաւ:

Կէս գիշեր էր: Բանտում ամեն մարդ խոր քնի մէջ էր: Առաստաղից կախած կոտրտած ապակեայ լապտերից ճարպէ ճրագի աղօտ լոյսը տարածւած էր ամեն կողմ: Սիւների շուքերը տեղ տեղ մութ սոււեր էին գցել: Դաւիթը իւր մինդարի վերայ զարթուն, բաց երկնցած էր, անդադար մէկ կողքից միւսի վերայ էր դառնում, հառաչանքներ քաշելով:

Կողքի պատից, որ օճառի զործարանը բաժանում էր բանտից, մեղմ ձայներ լսեց: Բոլոր ուշադրութիւնը հաւաքած, անշունչ ականջը պատին կպցրած՝ լսում էր Դաւիթը: Մարդու ձայն չէր լսում, երբեմն երբեմն փայտի բաղխիւն և քարի գլորելու ձայն էր զալիս: Մի քիչ յետոյ ձայնը սաստկացաւ և փսփսոցներ էր իմանում: Սառը քրտինք հոսեց Դաւիթի ճակատից և սիրտը բաբախում էր արագութեամբ թրթռալով: Աչքերը չորս կողմն էր դարձնում և ամեն կողմ խոր քնի մէջ թմրած բանտարկեալներին քննում: Բանտարկեալները յաճախ դէլին էին տալիս և սրանց ձայները թըմբուկի դըմբղմբոցի նման զղրղացնում Դաւիթի կուրծքը: Այս միջոցին ներս մտաւ բանտապետը երկու զինւորներով ու մի առ մի քննեց բանտարկեալներին, բանտի ամեն կողմը: Մօտեցաւ Դաւիթին, որը սուտ քուն արած խորդում էր: Աեր քաշեց վերմակը և ծածկեց Դաւիթի քամակը ու հեռացաւ: Օճառի զործարանից դղրդոցը շարունակում էր: Մի տասը րոպէ Դաւիթը հանգիստ շարունակեց իւր կեղծ քունը: Յետոյ քիչ քիչ գլուխը շուռ տուց, բարձրացրեց և մեռելային հանգստութիւնը տեսնելով՝ կրկին ելաւ նստեց: Այս րոպէին մի երկաթէ ձողի ծայրը ոլորւելով դուրս եկաւ պատից և այդ ծակից ներս ցլաց լոյսը: Դաւիթը զգուշութեամբ մօտեցաւ ծակին, անձանօթ և անորոշ ձայներ լսելով՝ կրկին պառկեցաւ մինդարի վերայ: Պատը շարունակեցին քանդել և մարդ դուրս գալու չափ ծակ բաց արին: Մակից գլուխը դուրս հանեց ցերեկը կերակուր բերողը ու խեղդւած ձայնով կանչեց:

— Դաւիթ, Դաւիթ:

Դաւիթը ցուցամատը բերանին զնելով՝ լուել հրամայեց, մօտեցաւ բացւածքին և նկատեց Խալիդ բէզին, որ իրան դուրս էր կանչում բանտից: Դաւիթը օճառի գործարանում Խալիդի հետ բաւական խորհուրդ անելուց յետոյ, ընկերներից մէկին ճամբեցին փողոցները քննելու, երկրորդին՝ հսկելու, մի ուրիշին՝ լուր բերելու: Դաւիթը շորերը փոխելով հարցրեց Խալիդ բէզին.

— Լծակ ունէ՞ք:

— Երկու հատ, պատասխանեց բէզը:

— Մկրատ, սղոց, մոմ, լուցկի՞:

— Կա՛յ, կա՛յ:

— Սուր զանա՞կ, մախա՞թ:

— Իմ զանակիս վերայ կա՛յ:

— Տո՛ւր ինձ:

— Վեր ա՛ռ:

Քոռ-Ալին ներս մտաւ և իմացրեց, որ զիշերւայ պահապանները վերադարձան Խալիֆի մահչէից (Խաչեց):

— Գնա՛նք, ասաց Դաւիթը: Ալի՛, դու առաջ անցի՛ր:

Նեղ ու անանցանելի զառիվեր փողոցներից բարձրանալով մեծ շրջան անելուց յետոյ, լերան կողմից իջան հայ-կաթողիկաց ժամատան երդիքը: Երկուսին ճանապարհները հսկելու թողին, Դաւիթը, բէզը և Ալին մտան տան օճախը: Կափարիչը բացին և լծակով երկաթի երեք ձաղերը պոկեցին: Կափարիչին կցւած սրղին փաթաթւեց Դաւիթն ու իջաւ, նորա ետևից բէզը և Ալին: Հասանը օճախի անցքին պահապան մնաց:

Դաւիթը իւր սովորական տան պէս թաթերի վերայ առաջ էր զնում: Ալին մոմը վառեց: Սանդուղքներից բարձրացան և բաց դռներից առանց նեղւելու ներս մտան: Ննջարանի դուռը վրայ էր դրած: Դաւիթը զգուշութեամբ նիզը վերցրեց և ներս հրեց: Փրչեց, Ալիի ճրագը մարեց; երեքը միասին ներս մտան ու զնացին տէր-Վարապետի կողինքի վերայ նստեցին: Երկու կողքերից թևերն ու ոտքերը բռնեցին Ալին ու բէզը, Դաւիթը ձախ ձեռքով աղլուխը վարդապետի բերանը կոխեց և աջ ձեռքով զանակի վերայի մախաթը կոխեց նախ նորա աջ աչքը, առանց հեկեկոցին լսելու, յետոյ ձախ

աչքը, և երկու ականջները: Սարսափելի կերպով լացեց տէր-Վարապետը, բայց առանց ականջ դնելու մղկտոցին ամուր կերպով ձեռքերն ու ոտքերը կապկպեցին և կողինքի մէջ դնելով՝ վերան զարսեցին վերմակ ու մինդարներ, որ հեծկլտոցի ձայնը կտրի, որտեղ և նւաղեց:

Սկեղեցական բոլոր զարդերը, արծաթ և ոսկի ամանները ժողովեցին: Բացին սնդուկը և շատ զարմացան, որ միայն հազար հինգ հարիւր ոսկի գտան:

Քաղկեդոնում այգեստանների մէջ, բնակութիւններից ոչ շատ հեռու, մի մշտադալար և մշտազարուն պարտիզի մէջ գտնւած երկյարկանի փայտաշէն տանը, ապրում է մի երկու աչքով կոյր և խուլ նշանաւոր հոգևորական, որի ձախ ականջը մի քիչ լսում է: Երկու հասակաւոր և չորս մտաղահաս (որոնց ազգականներն է կոչում) կոյսեր մեծ խնամքով հոգում են այս հոգևորականի կեանքի պաշտպանութեան բոլոր պէտքերը: Ամեն առաւօտ կանուխ Հաչդար փաշայի երկաթուղիով հանքային ջրեր են ստանում, որով լողացնում են, սալերով Ալեմդաղիից բերում են «կենսատու ջուր», որը առհասարակ խմելու և կերակրի են բանեցնում: Լողարանից դուրս զալուն պէս, երկու մտաղահաս կոյսեր թւն ընկած՝ տանում են ծաղկանոցը, որտեղ ամեն մի ծառի և ծաղկի մօտեցնում են, որ կոյրը շոշափէ ու հոտոտայ քաղցրաբոյր ծաղիկներն ու վարդերն: Ծաղկանոցում լճակի մօտ բազմոցի վերայ նստում, ընդունում է սերուցկով սուրճը զանազան քաղցրաւենիներով, մեղրով, կարագով և կարկանդակներով:

Նախաճաշից յետոյ այգու շուրջը, ծառերի հովանու տակը երեք չորս անգամ մանգալուց յետոյ, կանանչներում գտնւած նստարաններից մէկի վերայ նստում, զանազան մրգեր քաղել տալիս և ուտում է: Շատ անգամ, ուզածը չը կարողանալով հասկացնել կոյսերին, կոպիտ խօսքերով անպատուում, երբեմն էլ խածած մրգերը գցում ու սխտում է բարձր ձայնով հայհոյել և անիծելիւր վիճակը: Այսպիսի դէպքերում կոյսերը առաջը չօքում և լռելեայն արտասուալի աչքերով աղօթում էին:

Ճաշերին անուշաբոյր և քաղցրահամ կերակուրներից և խմիչք-

ներից համ չ'առնելով՝ թափում է յատակի վերայ, կոտրատում թանկագին ամանները և գոռգոռում սաստիկ կատաղութեամբ խոհարարի և քոյրերի վերայ: Միշտ տրտնջում և զանգատում է, որ իրան լաւ չեն խնամում: Ախորժակը բացւելու համար զանազան բժշկական և քիմիական դեղեր էր բնդունում և կերածը մարսելու համար պէս պէս ջրեր խմում: Ճաշերից յետոյ ժամերով նոյն կոյսերի հետ զբօսնում և մարմնամարզութիւններ էր անում:

Գիշերն առանց օպիումի և խաշխաշի քուն չէ գալիս աչքերին և անդադար թաւալւելով մահիճում, տրտնջում է բազդի դէմ: Այս ճոխ կեանքում ու ապրուստում ծերունու տրտունջներին համար ու հաշիւ չը կայ և դառն մահը չէ գալիս իւր աւանդը տանելու, որին թշւառը սրտանց փափագում է:

Սորա տառապանքներում յաճախ նշանաւոր ժեղուիտ հոգևորականները և յայտնի անձնաւորութիւնները իւր մօտը գալով մի ուետին զլանաձև գործիքի օգնութեամբ հետը ժամերով խօսակցում, զանազան խորհուրդներ և հրամաններ ստանալով՝ հանձարի վերայ զարմանալով և վիճակի վերայ ցաւելով՝ հեռանում են: Բայց յաճախողներից սովորաբար դժգոհ լինելով շատերին անպատուում և վարնդում է: Ժեղուիտների մեծաւորը շաբաթը երկու անգամ գալիս է մօտը և ժամերով անհասկանալի բարբառով խօսակցում:

ԽԳ.

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Վարինում մի տան վերի յարկում ապրում էր մի ամենախեղճ ընտանիք: Չունևորութիւնը տիրապետում էր ամեն կողմ: Դառն աղքատ էին, տնանկ և ամօթներիցը ձայները դուրս չէին կարողանում հանել: Մի բարեկամ էլ չ'ունէին, որ ղիմէին. անձարացած նեղն ընկնելիս, տանից մի բան վեր աւնելով, բազարում կամ թաղում թաքուն, գողի նման զողզողալով, ծախում էին: Վա՛յ ծախածին և վա՛յ ծախողին, ամեն բան քառորդ գնի: Վա՛յ ապրուստին, որ այդ զրամով զրամ զրամ (ճեխը) պիտի տուն գար:

Ընտանիքի մեծը պառկած էր կողինքում և այն էլ մի տարի և ութ ամիս էր, որ տանջւում էր: Վերան ամեն կողմ վէրքեր էին

բացելի, ամեն տեղ որդունք դրել, ամեն կողմից էլ դեղին ջրերն էին վազում: Արիւնի, թարախի, կեղտերի, դեղերի ու դեղրունքների զարշահոտը փախցնում էր մօտը եկողներին: Տան մէջ բոլորը և ինքը մահ էին խնդրում և սանդարապետը դանդաղում էր մօտենալու: Հիւանդը Չատիկ Անտօնեանն էր:

Մի օր խոստովանահօրը և քաղաքի նշանաւորներից չորս-հինգ հողի իւր մօտ կանչել աալով՝ իւր Մելիք-Ղարազեօղեանների գէմ զրպարտութեամբ արած դատը խոստովանեց: Խնդրեց բոլորից, որ բարեհաճեն մի նամակ գրելու Մելիք-Ղարազեօղեանին և ներողութիւն խնդրելու իրան համար, որ պարտաւոր չը մնայ ահեղ Կատաւորի առաջը: Նամակը տեղ չը հասած՝ ինքն էլ հողին աւանդեց: Ահա նամակի ճիշդ պատճէնը:

Կարին, 30 հոկտեմբերի, 186... թ.

Առ աղնւափայլ Բ. բ. Մ. Ղ.

«Արդարեւ, վստահելով մեծահաւատ քրիստոնէութեանդ և քրիստոսասէր եղբայրսիրութեանդ, որն որ ի վաղուց քաջ ճանչնալուս, ձեռնմխեցայ առաջարկել աղերսալից առաջարկութիւն մեծափայլ աղնւութեանդ:

«Քանի մը տարիէն ի վեր չանիրաւ ամբաստանելով, կրածնիդ նեղութեանց ու վնասուց փոխարէն, ահաւասիկ ճշմարտութիւն երևան գալով, անյաղթելին արդարութիւն, կրկնափայլ պարզելով ձեր մեծանուն համբաւը, կը պսակէ զանմեղութիւնդ: Ահաւասիկ անթիւ բարերարութիւնդ վայելելով այն Չատիկ Անտօնեան երախտամոռ. ծառանիդ դառնատանջ հիւանդութեան մը հանդիպելով, և օր քան զօր դժբաղդ արկածներ վերան տիրելով, և իւր չար խորհրդականները հեռացած, օտարացած, իրմէն երես դարձուցած՝ ինքը միայնակ տարի և քանի մի ամսէն ի վեր այն թշւառ արկածից, և դառն չքաւորութեան զոգը ընկղմած մնացած, այնպէս կը տանջւի և օր ըստ օրէ այնպէս կը հալի և կը մաշւի, որ սիրտ պէտք է, որ չի զթաց իւր խեղճութեանը, աչք պէտք է, որ չ'արտասուի իւր թշւառութեանը: Բայց քաղցրախնամ տեսչութեան Աստուծոյ, որ չը խնայելով Հոգւոյն Սրբոյ շնորհած լոյսը, գտաւ իւր շրթանց վերայ ասպաշխարութեան ու զղջման խոստովանութեամբը:

Յիշելով այն անցեալ անցքերը և իրան մոլար դատողութիւն արդար համարելով ձեռնամուխ եղած, անիրաւ դատերու երեսէն ծագեալ վնասները, ներկայիս այն դատմունքների մէջը իւր սխալիլը ազէկ ճանչնալով, և իւր սխալմունքը յետս կոչելով, և ասկից ետքն ալ ամենեւին այնպիսի անիրաւ դատերու չը մտենալը հաստատ առաջարկելով, արդ միջնորդութեամբ աղօթարարիդ, իբրև անառակ որդի ծունր իջեալ, մեղաց զոչելով — բարեգութ և ողորմած հօրմէն արտասւտառն աչքերով ներում և թողութիւն կ'ազերսէ: Յիշելով ձեր բարեսրտութենէն նախկին տեսած այնչափ անթիւ երախտիքը, իւր բնական հօրմէն աւելի երախտարար հայր ճանչնալով, պարտք և միանգամայն պարծանք կը համարէ իրան, եթէ ինչայէ երկինք իւր կենաց, և եթէ կարելի ըլլայ ձեր ծառայութեան մատչիլը: Ուստի, սիրելիս, ի սէր քաղցրագութ խաչելեալ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, և Տիրամօր սուրբ Կուսին, ի սէր և շարևս սիրասուն զաւակացդ, և ի շնորհս մեծափայլ ազնուութեանդ, այս արտասւտառն պաղատանաց շնորհը անտես չ'առնելուդ սպասելով, և չիշեալ դատին վերաբերեալ էվրագներու (Բզմէք) մասին ալ անկասկած ըլլալնիդ ծանուցանելով, կը կնքեմ զրութիւնս՝ յանձն առնելով զՔրիստոսասէր և զմեծահաւատ ազնուափայլութիւնդ հանդերձ ազնիւ գերզատանեօքդ հզօր պաշտպանութեան ամենօրհնեալ Աստուածամօր սուրբ Կուսին:

Աղօթարար ձեր

Տէր Ա. քահանայ Պ. — հոգաբարձու չիշեալ Զատիկ Անտօնեանի:»

Մ Ի՛ Զ Ա Ր Մ Ա Ն Ա Ր

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆՑԻ

Թէ հըպարտ ամբոխն ինքն անբաւական
Հայեացք է ձրգում մի խեղճի վերայ,
Թէ ժըպիտներով արհամարհական
Նայում է մէկին՝ հըրէան է դա:

Թէ մի մարդ տեսնես բազմութեան միջին,
Ծաղը ու ծանակի դարձած առարկայ,
Թէ հայհոյանքներ թշուառի գըլխին
Թափւում են առատ՝ հըրէան է դա:

Թէ հազար ապտակ, բըռունցք ու մահակ
Անէծքով իջնում են մէկի վերայ,
Թէ քարշ են տալիս մի անտէր դիակ
Նըների առաջ՝ հըրէան է դա:

Թէ տուն է քանդւում, փըլւում, աւերում,
Կատաղի բոցով թէ լափւում է նա,
Թէ կահ կարասիք ցըրւած փողոցում
Տեսնես ոտի տակ՝ հըրէինն է դա:

Թէ այնուհետև տեսնես մի թըշուառ
Օր-հացի համար դարձած իտաբեբայ,
Որ քեզ կեղեքում է կատաղաբար՝
Ո՛հ, մի դարմանար՝ հըրէան է դա:

1882 Թ., Պետերբուրգ.

Ե Ր Գ Ե Ր

ՀԱՅՆԵ-ԻԿ

Ա Ր Ծ Ի Լ Ե Ա Ն Ի

I

Անհո՛գ եղիր, ես չեմ պատմում
Երբէ՛ք մեր սէրն աշխարհին.
Թէպէտ յաճախ ես իմ երգում
Քեզ գովում եմ, իմ անգին:

Ո՛չ. ես հեռու մարդկանց աչքից՝
Վարդի ծոցում պահեցի
Գաղտնի սէրը մեր ախտալից,
Եւ իմ երգով կնքեցի:

Եթէ անգամ երբեմնապէս
Գաւաճանէ մեզ այն վարդ,
Եւ մեր սէրը, վառ կայծի պէս,
Նա դուրս ցոլայ. — Ի՛նչ մեծ դարդ:

Ես գիտեմ, որ մենք մարդկանցում
Չենք զարթեցնիլ կասկածանք.
Մարդիկ բիրտ են. մարդկանց աչքում
Սիրոյ կայծն է — զառտնցանք:

II

Մեր իղձն ու փափազ ծաղկում են, փթթում,
 Որպէս ծաղիկներ քաղցրաշունչ գարնան.
 Ծաղկում են, բայց և նորից թարշամում,
 Եւ այդ կրկնում է մինչ կեանքի վախճան:

Մեր վառ կրքերի այդ անվերջ խաղից
 Թունաւորւած է իմ սէրը վաղուց.
 Օ', ինչ խելօք ես, սիրտ իմ վշտալից,
 Որ կամիս դադրել դու բարբախելուց...

III

Որպէս չար ծերուկ, արնալից աչքով
 Մռայլ երկինքը նայում է երկրին,
 Եւ սև ամպերը խիտ-խիտ շերտերով
 Գիղել է նա իւր կնճռոտ ճակատին:

Լալիս են ծաղիունք, լալիս ու թոշնում
 Երկնքի այդ չար, դաժան հայեացքից.
 Լալիս, թոշնում են և՛ մարդու սրտում
 Երգ ու զգացմունք, խանդ, աւիւն ու իղձ:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒԽԶ
ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑԻ:

Իդէան աչքով տեսնել կարողացողի մէջ
մի հրաշալի սէր կը բռնկէր դէպի նա:

Պ.Ա.ՏՈՆ:

Դաստիարակնե՛ր, ձեր սաների մտքի շքե-
շանի վերայ ազդելու գօրութիւն ձեռք
բերէք և այն ժամանակ դուք կ'ունենաք
ազդեցութիւն և՛ 'նորա արտադրութեան'
կամքի վերայ:

ՖՐԵՕԼԻՒ:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

«Մուրճ»-ի № 3-ում «Հողերանական-մանկավարժական խորհրդածու-
թիւնները» գրելիս և նամանաւանդ նրանից անմիջապէս վտույ՛ իմ միտքն
սկսեց զգալի կերպով Լեւթատուր լինել այն խնդրին, թէ ուսուսման ա-
րանական գիտելիքներն թնչպէս են բարոյական բնաւո-
րութիւն առաջացնում և որն է արդեօք իւրաքանչիւր գիտելիքի
համար ամենակարճ և բնական ճանապարհը այդ նպատակին հասնելու
կամ նորան նպաստելու համար:

Վերոյիշեալ չօղւածս զբաղել էր գլխաւորապէս մեր ուսումնարան-
ներում գիտելիքների աւանդման արդի դրութիւնով՝ հանդերձ իմ առա-
ջարկութիւններով: Կրթական գործի ամենագլխաւոր նպատակից՝ բարոյա-
կան բնաւորութիւն առաջացնելու մտքից էր ծագել իմ մէջ այդ խնդիրը:
Սակայն այնտեղ միայն հարկանցի ակնարկութիւններ էի արել սորա մա-
սին, ուստի, բնականաբար, այժմ ևս պէտք է պարապէի այն մտքերով, թէ

իւրաքանչիւր գիտելիք ինչ դեր է կատարում այդ իդէալական գործում և թէ ինչ ուղղութիւնով է իւրաքանչիւրի զօրութիւնը երևան գալիս:

Այս ընթացքով խորհելով, հարկաւ, իմ մտքի առաջ պէտք է բարձրանալին նաև այն օժանդակիչ և խանդարիչ տարրերը, որոնք գիտելիքների հետ կամ համերաշխ ևն գործում և կամ ընդհակառակը՝ նրանց գործունէութիւնը ջլատում: Ուրեմն, ուսումնարանական գիտելիքների դաստիարակիչ ուժից զատ, ես պէտք է վիշէի՝ ուսումնարանական անմիջական դաստիարակութիւնը, ուսումնարանական կեանքն և ընտանեկան դաստիարակութիւնը:

Որովհետև այս բոլոր չորս ուժերից ամենազօրաւորը ուսուցումն է, նամանաւանդ մեր ընտանեկան և հասարակական շատ անպատասաւոր հանգամանքներում, ուստի և ես հիմա շատ կարևոր եմ համարում այս խնդրով պարապելու: Ես որքան խորն եմ մտածում իմ անցեալ աշակերտական կեանքի վնասութիւնների և ապա ուսուցչական կեանքումս արած գիտողութիւններիս մասին՝ այնքան ևս առաւել նաև գործնականապէս համոզում եմ, որ գիտելիքները մարդուս կեանքում և՛ բարոյականութեան տեսակէտից, կամենում էի ասել, հրաշքներ են գործում:

Այս հիանալի երևութիւնների պատկերն է, որի վերաջ ես փորձում եմ մի աղօտ լույս սփռել: Այդ հրաշալի տեսարանն իւր ամբողջութիւնով լուսաւորած ներկայացնել գիտողին այնքան ևս դժւար է, որքան հողին խորիմաստ է: Ուշիմ և հետաքննին ընթերցողս, հետամուտ լինելով բնաւորութեան զարգացման պայմաններին, լուսալի է, որ մեր և այլ ազգութիւնների գործնական կեանքի շատ երևութիւնների հասկանալը նորան դիւրացած լինի: Այնպէս չէ, ալնիւ ընթերցող, հետաքրքիր է իմանալ, թէ այդ ինչպէս է լինում, որ, օրինակ՝ մինչև անդամ համալսարանական մարդն իւր ուսանողական շրջանում և գործնականում այլ կերպ է խօսում և այլ կերպ գործում... Երկու անձնաւորութիւն մի մարմնի մէջ: Այդ զուալիդմն է, ներքին երկպառակութիւնն է, որ առաջանում է իդէալի և կամքի մէջ առնչութեան բացակայութիւնից: Հետեւենք և տեսենք:

I

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԵՐԵՔ ԳԼԽԱՒՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՓՈԽԱՂԱՐՁ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ:

Նախ քան մեր խոսկան խնդրին անցնելը, հարկաւոր է որոշ գաղափար կազմել անմիջական դաստիարակութեան (Schulzucht), կառավարութեան (Regierung) և ուսուցման (Unterricht), այս երեք հիմնական տարրերի դերերի մասին բարոյական ընաւորու-

թեան կազմակերպութեան գործում: Ապա պէտք է խօսել բարոյական բնաւորութեան զարգացման մասին, որ մարդու կեանքի զանազան շրջաններում զանազան աստիճանների է հասած լինում և, նախելով սրանց, բնաւորութիւնն ունի իւր բնատրոշ չատկանիչներն ու ձգտումները: Ուստի և դաստիարակ-ուսուցչիչը միշտ աշակերտի հասակն ի նկատի ունենալով՝ պէտք է ձեռնարկէ նորա բնաւորութեան զարգացնելու գործին:

«Դաստիարակիչ ուսուցումը կարող է, ասում է Ֆրեյդիհը, բնաւորութեան կազմութիւնը միայն նախապատրաստել, բարոյական դաստիարակութիւնը կարող է միայն անմիջական դաստիարակութեան միջոցով առաջանալ»: Դաստիարակիչ ուսուցումը մատակարարում է բնաւորութեան տարրերը, իսկ անմիջական դաստիարակութիւնը դեռ չը կազմակերպած՝ բնաւորութեանը որոշ սկզբունքների համեմատ գործելու առիթ է տալիս: Տճաս աշակերտի կամ ընտանիքի զաւակի մէջ անընդհատ կամք է առաջանում՝ արտաքին աշխարհում այս կամ այն փոփոխութիւնը չառաջացնելու (գործելու): Նորա սկզբունքները դեռ անընդունակ են՝ դիտակցութեան մէջ երևան եկող մտապատկերների, սրանց համախմբութիւնների և վերջիների նպատակի՝ կամքի վերաջ իշխելու: Նւ ահա չաճախ հոգեկան տատանում է չառաջանում, որին հաւասարակշռութիւն և ապա որոշ ուղղութիւն տալու համար՝ վրայ է հասնում դաստիարակի խօսքը, որ հակաիշուելով անբարեմիտ հակմանը, վճռողական գործողութիւնը բարու կողմն է դարձնում:

Ուսումնարանական դաստիարակութեան գաղափարը չը պէտք է շփոթել կառավարութեան կամ դիսցիպլինայի գաղափարի հետ. առաջինը ուսուցչի անմիջական և սրտեմատիկական ազդեցութիւնն է աշակերտի վերայ՝ վերջինիցս բարի մարդ պատրաստելու համար, իսկ կառավարութեան գործն է՝ հսկել այն կարգապահութեան վերայ, որը հարկաւոր է ուսուցման և անմիջական դաստիարակութեան խանգարիչ հանգամանքները վերացնելու համար: Առաջինը իսկական դաստիարակութիւնն է, իսկ երկրորդը՝ ոստիկանութիւն կամ պօլիցիա, ինչպէս պրօֆ. Շտոյն է անուանում: Զորօրինակ, եթէ աշակերտը ու է գալիս, դասը չէ պատրաստում, դասի ժամանակ կամ ուսումնարանում ընդհանրապէս անկարգ է և ալլն, այս դէպքերում նա մեղանչում է կառավարութեան կամ դիսցիպլինայի դէմ. իսկ եթէ նա մի հիււանդ կատու է սպանում, դողանում է ընկերի հացը, խաբում է ուսուցչին և, իրան աղատելու համար, իւր մեղքն ընկերի վերայ է բարդում, սորա նման վարմունքներն անբարոյական են, որ վերաբերում են ուսումնարանական դաստիարակութեան շրջանին: Նւ ալլպէս՝ կառավարութեան գոլութիւնը ուսուցման և անմիջական դաստիարակութեան կողմից ենթադրում է և սրանց առաջընթաց պայմանն է: «Անմիջական դաստիարակու-

թիւնն կամենում է, ասում է Ֆրեյդիլիւր, նորատի հոգու մէջ իրաւունք և արդարադատութիւն, բարեացակամութիւն և մաքուր բարութիւն, մեղմ խաղաղասիրութիւն, ամենքի վերաբերութեամբ անաչառութիւն, եռանդուն և համոզմունքի հաւատարիմ ձգտումն սերմանել և խղճմտանքն, աչս ներքին պահապանը, որ հսկում է մեր պարտականութիւնների վերայ, զարթեցնել ու հզօրացնել իսկ կառավարութիւնն ընդհակառակը՝ կամենում է զսպել երկրաւորի աչն անարժան ցանկութիւնները, որոնք բարձրանալ ձգտողին կրկին երկիր են քարշում, և վարժեցնել արտաքին սովորութիւններին, ինչպէս են՝ կարգապահութիւնը, մաքրասիրութիւնը, ճշտասիրութիւնը, ջանասիրութիւնը, պատշաճաւոր վարմունքը, հնազանդութիւնը: Աչս միջական առաքինութիւններին աշակերտն ընտելանում է, ինչպէս զինւորը՝ զրօշակին. սորանով պատրաստում է բարոյականութեան հողը միաչն, բայց նա այսպիսով դեռ չի տնկել ու խնամել: Բաւ է. անմիջական դատարարակութիւնը զլիսաւորապէս ներքին կազմութեանը, զիսցիպլինը՝ արտաքինի, առաջինը ներքին, իսկ երկրորդն արտաքին կրթութիւն է. ուստի և առաջինը ներգործում է աւելի սիրոյ զօրութեամբ, երկրորդը՝ հակիրճ հրամանի և խստութեան միջոցով: Ինքն ըստ ինքեան հասկանալի է նոյնպէս, որ մեծ դանազանութիւն կալ անմիջական դատարարակութեան և զիսցիպլինակի պատիժների մէջ. առաջին տեսակը լաւացնելու համար է, երկրորդը՝ միաչն երկրլղածութեան մէջ ձգելու (միտքը սրող, աչսինքն՝ խելքի բերող պատիժներ):

II

ԲՆԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՌԻՂՂՈՒԹԻՒՆՆԵՐԳ ԵՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ:

Բնաւորութիւնը, ինչպէս փորձը ցոյց է տալիս, շատ դանդաղ է զարգանում. նա հասունանում է միաչն առնական հասակին մօտ, երբ մարդս կեանքի շատ հոտանքներից արդէն անցած է լինում: Գիտիէն ասում է այս առթիւ. «Այնիւ մարդն իւր (բնաւորութեան) կալմակերպութիւնով շնորհապարտ չէ մինեղ շրջանի: Հարեմիք և աշխարհ պէտք է նորա վերադադրեն»:

Այնու ամենայնիւ նախ քան վերոլիշեալ աստիճանին հասնելը, մարդն, արդէն ունի կամք արտաքին երևութիւնների վերաբերութեամբ: Կարելի է բնաւորութեան այս կողմը, որի հիմունքը տնտղականութիւնն է, առարկալ աչան (օրեկալիւ) բնաւորութիւն անուանել, որովհետեւ նա իրբն զգացման առարկալ, մեր ես-ին ենթակալ է լինում: Ընդհակառակը՝ բնաւորութեան աչն միւս կողմը, որ ներքին զխտղութիւնով, կշռադատութիւնով և ինքնադատութիւնով, ինքնալարութիւնով և ինքնաքննութիւնով

է պարապում, պէտք է անուանել սուրեկտիւ բնաւորութիւն, որովհետեւ նա մեր դատող սուրեկտից է ծագում: Պարզ է, որ ալչալիսի բնաւորութեան հասնելու համար, պէտք է նախ զարգացման զանազան աստիճաններն անցնել: Օրեկտիւ բնաւորութեան մէջ կարող ենք ցանկալու և կամենալու աստիճանները զանազանել: Մի մանուկ, որ ձեռք է մեկնում դէպի լուսինը, տակաւին կանգնած է ցանկալու աստիճանի վերայ, որովհետեւ նա դեռ ոչ մի հասկացողութիւն չ'ունի ցանկացածին հասնելու մասին: Կամենում է նա իւր հիւանդ հարեանին աչցելել. այս ժամանակ նա աւելի բարձր աստիճանի է հասած, որովհետեւ նա համոզւած է, որ կարող է ալչ կատարել: Սուրեկտիւ կամքն անցնում է հետեւալ ձևական աստիճանները. ա) մի դատողութիւնից առաջացած բնատրութիւնը, բ) դիտաւորութեան աստիճանը, որ ընդհանուր բնաւորութիւն ունի, որ ներփակում է մի ամբողջ շարք պարզալ ղէպքերի և հաւանականութիւնների. գ) մաքսիմի, ալսինքն՝ կեանքի կանոնի, օրինակ, վարըողութեան, աղնութեան և դ) սկզբունքների, ալսինքն՝ գործելու համար ընդհանուր նօրմաների աստիճանը, զորօրինակ՝ միշտ կատարիք բարոյականութեան օրէնքի պատէրները. հետեիք միշտ խղճի ձայնին: Աղնիւ մարդն իւր մասին վերջն է մտածում: Մի աշակերտ մի քսակ է գտնում. ահա հարց է առաջանում՝ պահել թէ վերադարձնել: Նորա խիղճն ասում է. վերադարձնել, չպտարարել (ընտրողութեան աստիճան): Ապա նա մի մատանի է գտնում. միևնոյնը պատահում է գիրք գտնելիս: Աշակերտը մտքին է առնում այն, թէ ի՞նչպէս նա երեք ղէպքերումն էլ գործեց (կամքի չիչողութիւն) և նորա մէջ կազմակերպւում է հետեւալ դիտաւորութիւնը. «ամեն դոտած բան ես վերադարձնելու եմ»: (Այս կամենալն արդէն վերաբերում է շատ ղէպքերի): Եթէ ալչ դիտաւորութիւնն ևս առաւել է ընդարձակոււմ, ալնպէս որ նա պարունակում է այն ընդհանուր դիրքը, որ մարդս բռնելու է ուրիշի ունեցածի վերաբերութեամբ, ալն ժամանակ առաջանում է հետեւալ մաքսիմը. «չարգիք ուրիշի սեպականութիւնը»: Այս տեղից միևնոյն ժամանակ մենք տեսնում ենք, թէ ի՞նչպէս մասնաւոր ղէպքերում կամքի գործառնութիւններից ընդհանուր կանոնների ենք հասնում, որոնք հաւաքական ղէպքերի են վերաբերում:

Նրեք հալեցակէտերից է առաջանում մարդուս գործելու ժամանակ արած ընտրողութիւնը. ըստ այնմ բնաւորութիւնը կարող է երեք աստիճաներ ստանալ, 1. վալեւլչութեան, որի վերայ երբ մարդ կանգնած է լինում, միայն զգալական հաճութեանն է բաւախանութիւն տալիս, 2. նը. պատակաչարմարութեան կամ խեւալցիութեան աստիճանը, երբ մարդ միայն օգտակարին և նպատակաւարմարին է հետամուտ լինում և 3. բարոյականութեան աստիճանը, երբ մարդ ձգտում է արդարացին և բարին իրագործելու:

Այս բոլոր երեք աստիճաններումն էլ կարող է կամքի հաստատութիւն և հետևողականութիւն տեղի ունենալ, սակայն բարոյական բնաւորութիւն՝ միայն կրորդ աստիճանում, որովհետև առաջին երկու աստիճանները զեռ կասկանութիւնով են պաշարած լինում:

Այս հոգեբանական վերլուծութիւնից լետոյ մենք տեսնում ենք, որ բնաւորութեան տէր մարդ պատրաստելը հասարակ բան չէ. մանկավարժական ոգով գործող ուսուցիչը պէտք է առ սակաւն իմանալ, թէ իւր սանիկները այս աստիճանն երկրից ո՞րի վերաջ են կանգնած: Նա պէտք է, օրինակ՝ ինքն իրան ասէ, որ մաքսիմի և սկզբունքի աստիճանին կարելի է միայն պատանիներին բարձրացել, որոնք բարձրագոյն ուսումնարանների միայն վերին դասարաններն են չաճախում, որ ժողովրդական և քաղաքական ուսումնարանների աշակերտների մեծամասնութիւնը (11—15 տարեկան) տակաւին դիտաւորութեան աստիճանի առաջնորդութիւնով են գործում և որ մաքսիմի աստիճանին պէտք է նրանց զեռ բարձրացնել, որ միջին դասարանների աշակերտներն ըստ մեծի մասին ընտրութեան աստիճանի վերաջ են զեռ կանգնած լինում և որ ստորին դասարանների աշակերտները զեռ բոլորովին անկարող են կամեցածն ինքնադատութեան ենթարկելու և մինչև անգամ զեռ զուրկ են մտապատկերների հաստատուն համախմբութիւններից և կամենալուց, ուրեմն նրանք զեռ միայն զուտ օբեկտիւ բնաւորութեան տէր են լինում և կամ թէ չէ՝ տակաւին բոլորովին զուրկ են լինում բնաւորութիւնից:

Եւ այսպէս, ըստ բնաւորութեան այս երեք աստիճաններին, պէտք է որոշել և նրանց գործառնութեան երեք ուղղութիւնները. հ ա ճ ու թ իւ լ ն, ն պ ա տ ա կ ա չ ա ր մ ա ր ու լ թ իւ լ ն և բ ա ր ո չ ա կ ա ն ու լ թ իւ լ ն:

Այս ընդհանուր տեսութիւնից լետոյ կարելի է նաև տեսնել, թէ ինչ աստիճանի սխալ բան է, այսինքն՝ ինչպէս հակամանկադարձական է մանուկներին արդէն առաջին ուսումնարանական տարիներում մաքսիմներ և սկզբունքներ բերան անել սալը, զորօրինակ՝ «որպէս կամիք ձեզ արասցեն մարդիկ, աջնպէս և զուր արարէք նոցա»: «Մինչև քո սառն զերեզմանը վարժելի՛ր միշտ հաւատարմութեան և ազնւութեան մէջ»:

Նաև ի զէպս էր այստեղ մի բոպէ կանգ առնել ու մտածել, թէ ինչպիսի երեքիս ու տատանեալ գրութեան մէջ է լինելու մի ուսումնարանի բարոյական կեանքը, որի ուսուցչական խումբն իւրաքանչիւր տարի փոփոխուելով և չը հասկանալով կամ անտես առնելով իւրաքանչիւր դասարանի բարոյական կեանքի աստիճանը՝ կամ այս գործը միշտ նորից է սկսում և կամ աւելի քան հարկաւոր է չառաջ է անցնում: Այսպիսով իւր խօսքը միշտ «ձաչն բարբառոյ չանապատի» է մնում, որովհետև ոչ ուսուցիչն է աշակերտներին հասկանում և ոչ սրանք՝ նորան:

III

ԳԻՏԵԼԻԲԵՆՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ:

Յարդ մեր միտքն զբազանց բարոյական կեանք լառաջացնող ուսումնարանում գործող երեք տարրերով՝ միջական դաստիարակութիւնով, անմիջական դաստիարակութիւնով և ուսումնարանական կեանքի ազդեցութիւնով ընդհանրապէս: Արդ, մենք մի քաջ ևս լառաջ գնանք և քննութեան ենթարկելով ուսման միջոցով առաջացնելի բարոյական շարժումները՝ քննենք նրանց ծագման, զարգացման բարեւաջող և արդելաութիւն պայմանները: Այս տեսակէտից վերլուծենք իւրաքանչիւր զիտելիք իւր ալն տարրերին, որոնք կարողութիւն ունին՝ իրլու բարոյական փոփոխութիւն լուծ գործելու:

Յրբ մենք, համակաժ մեր ժամանակակից դարու հաղեցածքներով, պարագում ենք զանազան խնդիրներով; մեր մտքերի հոսանքը՝ լաճախ դրաւելով պատմական կեանքի, անցեալ մարդկութեան մտքերով՝ ակամաբար խորասուզում է նրանց մէջ և վետոյ սթափելով տեսում է, որ իւր այդ ուղիորութիւնը նորան այս անգամ ևս արդիւնատր եղաւ:

Ապալէս՝ թէ փիլիսոփայութեան և թէ մանկավարժութեան պատմութեան մէջ հազիւ չի պատահում տեսնել, որ մարդկութեան մտքի ներկայացուցիչները նորան առաջարկում են կրթութեան հնարաւորութեան խնդիրն և նայելով նրանց բնականցական և հոգեբանական հալեցւածքներին՝ զանազան եզրակացութիւններին են գալիս: Ինչպէս էլ մթտածէին այդ անցեալ և նրանց շիջալին պատկանող հետագայ մարդիկ բնատուր և ստացական ընդունակութիւններին մասին՝ ալնու ամենալիւ ալսօր թէ տեսականապէս և թէ փորձնականապէս մենք համոզւում ենք, որ մարդու հոգին ճկուն է և ընդունակ նախագծած կազմակերպութիւնն ընդունելու: Իհարկէ, մանուկները բնութիւնը զանազան է. երջանիկը նա է, որի մտապատկերներին համախումբութիւններն աւելի երկար ժամանակ ճկուն զրութեան մէջ են մընում¹⁾: Առհասարակ քանի աշակերտն աւելի է հասունանում, ալնքան

1) Հետաքրքիր էր ի դէպ այստեղ յիշել նաև ուսուցչական կեանքից հետևեալ երևոյթը: Ինչպէս որ աշակերտները միջ կան ճկուն և ա՛նմատ չէն ընութիւններ, այնպէս էլ ուսուցիչները. օրինակ՝ մի երկրասարդ կամ հասակաւոր ուսուցիչ ի սկզբանէ անհետաքրքիր լինելով ֆւրաքանչիւր մանկավարժական նոր մտքի և առաջադիւթեան՝ այնպէս էլ «դաս է տալիս», ինչպէս որ սովորել է իւր չարտեքից կամ խալից, իսկ մի այլ հասակաւոր ուսուցիչ միշտ թաքմ, միշտ նոր կեանքով է ապրում. միլի մանկավարժական մեթօդի մտապատկերներն ու դադափարներն այնպիսի անքակտելի կերպով են դասաւորւած, որ այլ ևս ոչինչ նոր բան ներմուծել չի կարելի, իսկ միւսինը այնքան ճկուն է, որ միշտ նորանոր մտքեր

ևս առաւել կազմակերպուած են նորա մէջ նորան ուղղութիւն տուող սկզբունքներն ու գլխաւորութիւնները, այնպէս որ ինչ նոր բան նորա հողուն հասնի, նա ըստ որոշ կատեգորիաների կամ միացնում է հողու մէջ արդէն եղածների հետ կամ տրոհում է նրանցից: Բայց լինում են և շատ բաներ, որոնց այդ աստիճանին հասած աշակերտն այլ ևս չի թողատրում ձեռք տալու իւր մտքի կազմակերպութեանը, այսինքն՝ մտապատկերների մի որ և է համախմբութեան հետ միանալու կամ նորա վերայ ներգործելու:

Աշակերտը արդէն իւր մտաւոր շրջանի ինչ ինչ մասերն իւր դաստիարակից թագուն է պահում, որոնց միայն մանրակրկիտ հետադասութեան շնորհիւ երբեմն հնարաւոր է լինում երևան հանել: Այս կրեւոյթը միւլ մասնանի է լինում, որ այդպիսի աշակերտի դաստիարակութեան, ուրիշի խնամակալութեան տակ մնալու շրջանը՝ լրացել է: Այժմ, եթէ նորա ուսումը դեռ չէ լրացել, պէտք է նորա վերաջից հսկողութիւնը վերացնել և կամ եթէ լրացել է, ինքնուրոյն կեանք շնորհել:

Նպատակաւոր դաստիարակութեան հնարաւորութեան խնդրին չարակից է և այն, թէ արդեօք հարկաւոր է մանկանը մի աչդպիսի նպատակաւոր ազդեցութեան ենթարկել: չէ որ մտապատկերները հոգեբանական մեքենայական ուժեւորութեան (մեխանիզմում) (մտապատկերների և սրանց համախմբութիւնների պատահական կամ անդիտակցական շարադարութիւնների) շնորհիւ կարող են և ինքնուրոյնաբար գործել: Ի հարկէ, այդ աչդպէս է, բայց չէ որ միւս կողմից հակակրթականը աւելի հեշտ է կազմակերպուած, քանի սր սա բիւրաւոր ճանապարհներ ունի, իսկ կրթականը՝ միակ և ամենակարծը: Պրոֆ. Շորիւմպէլն ասում է իւր «Հողեբանական մանկավարժութեան» մէջ. «հողեբանական մեքենայականութիւնն առիթ է տալիս որպէս վատին, նոյնպէս էլ բարուն, անհասկանալի և հասկանալի բանին, տղիկին և դեղեցկին, արդարութեանն և անարդարութեանը, վրէժխնդրութեանն և հաշտութեանը»: Բայց, ինչպէս շեքսպիրը մարդկութեան սրտից խօսում է, չը պէտք է մեր դեռահաս սերնդի ապագան պատահականութեան թողնել, որովհետեւ վատութեան ճանապարհները շատ են, իսկ բարութեանը՝ որոշ և ընարեալ: Նւ անհն կրթութիւնն իւր բոլոր միջոցներով ձգտում ու ճիգ է թափում՝ դէպի իւր զլխաւոր նպատակը տանող այդ զլխաւոր ճանապարհը գտնելը:

Ընդունելով հարստացնում է իւր մտաւոր կեանքը: Սրանցից մինը երեխոսարդը՝ դաւաճաւ է, իսկ միւսը թէև ծեր, սակայն ուսանող է, ուսանողի (studiosus) լատիներէն ձգտող բառի բուն իմաստովն է նա ասում, ուստի և մէկի համար ուսուցչութիւնը մի ձանձրալի աշխատութիւն է, իսկ միւսի համար՝ հետադասութեան գրաւելն ասպարէզ: Ահանքը փոփոխութեան վերայ է հիմնած, ուր չը կայ նոր հոսանք, այնտեղ մահն արդէն սկսում է իւր խաւարային թևերը սխալել:

Այս նպատակին հասնելու համար, մանկավարժութիւնը դեռահաս մարդուն մի նախագծած աշխարհ է մտցնում, որպէս զի, ինչպէս Հերբարտըն ասում է, մենք նորա փորձառութիւնն ու չարաքերութիւնները բնութեան մէջ ընդարձակենք: Պարզ է, հարկաւ, որ մենք մանկանը մեր իդէալին մօտեցնելու համար՝ պէտք է նորան ընտիր աշխարհ մտցնենք, որի բնակիչներն ու իրերը իրանց ամբողջութիւնով աղնւացուցիչ ազդեցութիւն ունենալ կարողանալին, իսկ անաղնիւ վարմունքներ ու սղեղ երևութիւնք պէտք է հանդիպէին այդ աշխարհում, իբրև հակադրութիւնք՝ առաջիններէն արժանաւորութիւններն աւելի բարձրացնելու և ակնյայտնի կացուցանելու համար:

Հիմա մեզ պէտք է աւելի և աւելի պարզել այն խնդիրը, թէ ինչն է կրթական գործում ուսումնարանական գիտելիքը, աչսպէս անուանեալ միջակայն դաստիարակութիւնն է ամենազլխաւոր ուժը համարում և ոչ թէ, օրինակ՝ հէնց անմիջականը, որ ամենակարճ ճանապարհով ներգործելով աշակերտի մտաւոր շրջանի վերայ՝ և ամենանպատակաւարմարը պէտք է լինէր:

Այս մեր թէմալի ծուծը կազմող խնդիրը լուծելու համար՝ մենք պէտք է այժմ դիմենք հոգեբանական հետեւեալ վերլուծութեանը:

Մենք գիտենք, որ անմիջական դաստիարակութիւնն ազդում է խըրախոյսի և պարսաւանքի միջոցով: Նա հիմնում է իւր ուժը զանազան բարոյական սկզբունքների վերայ, մի խօսքով՝ աշակերտի մըտաւոր շրջանն է, որ նախ քան զգացւիլը՝ դեռ պէտք է դաստիարակի խօսքերին իւրացուցիչ մտապատկերներն ու գաղափարներն ենրկաւացնէ: Եթէ դասարանի կամ աշակերտի մէջ պատրաստ են ուսուցչի արտաչառած բարոյագիտական գաղափարներն ու իդէալները իւրացուցանող համասեռ հոգեկան տարրերը, այն ժամանակ խրատողի խօսքը, ասում են, «խորն է թափանցում», աչսինքն՝ նա աշակերտին միայն առ ժամանակ չէ, որ զգացւած դրութեան է հասցնում, ալ այս անցողական ներքին գրգռից չետոյ ևս նորա մտաւոր շրջանը փոփոխւած դրութեան մէջ է մնում և պատրաստ, եթէ միայն զէպքը պատահելու լինի, բարոյապէս աւելի նպատակաւարմար ուղղութիւնով ընթանալու: Ընդհակառակը՝ եթէ բացակաջ են կամ անպատրաստ սպասելի իւրացուցիչ տարրերը, թէև դաստիարակը կարենար թերևս իւր լոյս զգացւած խօսքով մեղաւորին մինչև անդամ լացացնել, սակայն մտապատկերների անհաւասարակչութիւնից առաջացած այս հոգեկան դրութիւնը, ինչպէս փորձն այս զէպքում ցոյց է աւելիս, անհետանում է, հէնց որ հոգին դարձեալ հաւասարակչութեան մէջ է մտնում: Վասն զի, ինչպէս Յիլլերն ասում է այս աւթիւ, «մինչդեռ մտապատկերները հոգեկան կեանքի հաստատուն հիմնաքարերն են, զգացութիւնները (Empfindungen), զգացմունքները (Gefühle), ստորակարգ բաղձանքները

(Begierden) և կրքերը (Affecte) և ողու բոլոր աչսպիսի զգալական դրութիւնները Gemüths Zustände) մտքում ներկայ եղող մտապատկերների միալն փոփոխական ալլաիերպութիւններն (Modificationen) են, այսինքն՝ նրանք ցոյց են առնում ողու հաւասարակ շնորհեան խանդարումը: Ուստի, երբ դադարում է այս խանդարումը, երբ գիտակցութիւնը անհետանում է այն ծանրութիւնը, որից առաջացել էր հաւասարակշռութեան այս խանդարումը, այն ժամանակ մտաւոր շրջանն ինքն իրան վերադառնում է իւր հին դիրքը, և այն ժամանակ այլ ևս ոչ մի հետք չը կազ ողու առժամանակեալ փոփոխութիւնը: (Թո՛ղ քարոզիչներն էլ այս երևութիւն անտես չ'առնեն): «Ուսուցումն ամենահոօր մանկավարժական ոչ ժն է, ասում է Յիլլերը: Այս կարելի է ևս առաւել վճռողաբար ասել, որովհետև առաքելութիւնն և հաւատը՝ մանկավարժական դասաւանդութեան և ամբողջ կրթութեան վերջին նպատակը, մնալուն հոգեկան դրութիւնն է: Նրանց մէջ անձնական կամքը տնողաբար ստորադրած է իդէալական գիտելիքներին: Ուրեմն, եթէ կրթութեան միջոցով մենք (աշակերտին) դէպի առաքինութիւն և հաւատ պէտք է առաջնորդենք, այն ժամանակ պէտք է ուսուցումը գերակշռէ, այսինքն՝ նա պէտք է գլխաւորապէս միջնորդական ճանապարհով մտաւոր շրջանի դարգացնելու միջոցով՝ առաջանալ, որովհետև միայն այս ճանապարհով հաստատուն և մնալուն հետեանքները կարելի է հասնել, ինչպէս առաքինութիւնն ու հաւատը պահանջում են, որովհետև միայն այս միջոցով կարելի է այնպէս ներգործել, որ սիրտը հաստատ լինի»:

Անմիջական դաստիարակութիւնը խրախուսում և պարսաւում է, նա առիթներ ու դէպքեր է ներկայացնում ուսումնարանական կեանքում բարիք գործելու, սակայն աշակերտի մէջ ինքնաբեր գործողութիւններ կարող են առաջանալ նորա կամքի ներքին ձգտումներին: Ուրեմն ուսումնարանական գիտելիքները պէտք է ճգնեն այնպիսի կամք առաջացնել, որի սկզբնական դրութիւնը անմիջական հարցասիրութիւնն (Interesse) է, ինչպէս Պեստալոցցու իմաստով Հերբարտն իւր շխարհով գործ է ածում այս դարձւածքը: Առհասարակ ինտերես բառը մանկավարժական գրականութեան մէջ շատ հետու է շահադիտական հակում ունեցող իմաստից. ընդհակառակը՝ նա գործ է ածում կամ հետաքրքրութեան (այլ շխարհներում) և կամ սիրող նշանակութիւնով: Գէպի մի առարկայ ինտերես ունենալ՝ նշանակում է նորանով պարապել կամ մի այլ բաձր նպատակի համար և կամ եթէ անմիջական ինտերեսն է դրդում՝ աչսպէս անուանեալ՝ դուռ պղատօնական սիրուց դէպի նա: Եւ անհ մեր Պղատոնի խօսքը, որ Յոլաձիս բնաբաններից մէկն էր, այժմ տեղն է գալիս. «Իդէան աչքով տեսնել կարողացողի մէջ մի հրաշալի սէր կը բռնկէր դէպի նա»: Ինտերեսը գործող

ձգտող և չառաջ ընթացող հողեկան գրութիւնն է, (մի հոգեկան գրութիւնն, ասում է Յիլլերը, որ բոլոր միաժամանակեալ հոգեկան գրութիւններին գերակշռում է բացի կամքից և մեղանքն դհատ հաճուք պատճառելով՝ մղում է ինքնուրոյն չառաջագիմութեան՝ միշտ աւելի նոր ու բարձր նպատակներին): Այս գրութիւնն անուանում է ինտերես. սա ամբողջ կամքի բողբոջն ու արմատն է, և մի ուսուցում աւանց այս ինտերեսի՝ մանկավարժական ուսուցում չէ, որովհետև միայն այս ինտերեսի միջոցով նա ներգործում է կամքի վերայ: Ինտերեսն իւրացուցման այն գրութիւնն է, երբ վերջինս կատարում է ոչ թէ մեքենաբար կամ ակամաջօրէն, այլ սիրով և հաճուքով:

Մենք հոգեբանութիւնից գիտենք, որ կամքն այն ուժեղ ցանկութիւնն է, որ իւր առաջագրեալ նպատակին հասնելն հնարաւոր է համարում, իսկ այս համոզմունքին զալու համար՝ դեռարողջ կամքը պէտք է մարդի նախապէս ինտերեսի, այդ ինքնուրոյն, միշտ չառաջ ընթացող կեանքի շօլալում: Այն ըստ Յիլլերի ալլաբանական դարձւածքին՝ ինտերեսը կամքի բողբոջն ու արմատն է, ապա ուրեմն մենք մնալով այս ալլաբանական աշխարհում՝ տեսնում ենք, որ այդ արմատներն իրանց սնունդն ընդունելու են այն պարարտ հողից, որ ուսումնարանական գիտելիք է կոչւում: Գիտելիքներն են, որոնք եթէ՛ դեռահաս մարդու զարգացման աստիճաններին համեմատ են ընտրւած (կուլտուր—հիատորիկական աստիճաններ) և եթէ՛ աւանդում են համաձայն հողու իւրացուցման ցուցմունքներին, այն ժամանակ, (ա) իւրացուցումը հեշտ գլուխ կը գա, (բ) չաջողութեան պատճառով նա հաճուք կ'առաջայնի և (գ) նորանոր իւրացուցումներ ի կարիք զգացնել կը տալ (աւելի բան ուսանելու և միտքն ընդարձակելու): Իսկ սրանք հարցասիրութեան զարգացման երեք աստիճաններն են:

Ուսուցումը պէտք է բացի այս երկու պայմաններից նաև կենդրոնացած ազդեցութիւնով գործէ. նորա բոլոր գիտելիքների մէջ պէտք է ուժերի աւնչութիւն, նպատակի միութիւն լինի (ուսուցման կենդրոնացում): Այն ժամանակ իւրաքանչիւրն ամենքի և ամենքն իւրաքանչիւրին պէ՛, սիրտ ու հոգի կը տան:

Այն գործն ապակէ ընթանալ, այն ժամանակ ինտերեսներին կենդրոնացումից կամքի կենդրոնացում և սորանից վերջապէս բնաւորութեան կենդրոնացում կ'առաջանալ, այսինքն՝ հողումն անդողող գիւրք մտածելու, խօսելու և գործելու ժամանակ:

Ներքին ազնիւ և ինքնուրոյն ձգտումներ առաջացնելուց շատո՛ք արդէն մի բան է մնում, որ ուսուցումն իւր նպատակին հասնի. հարկաւոր

է, որ, Հերբարտի լեզուով խօսելով, ուսածը մի և նոյն ժամանակ և՛ զգացւած լինի, որ նպաստելու է մարդու բնական ուժերէն դժերի ամբարայն դուրսէնը: Այս նպատակին հասնելու համար՝ պէտք է ուսումնարանական և ընտանեկան կեանքը անմիջական դաստիարակութեան միջոցով բարձր գործելու առիթներ ներկայացնեն աշակերտին: «Նուրթէ, ասում է Յիլլերը, ուսուցման մէջ միացեալ ներդրութեան հետ և կենսակի և տևողական միացեալ զգացումներ (Gesammtempfindungen) շարժապահ, և երբ սրանցից ինքնուրոյն լուսջընթաց գործունէութիւն և ձգտում կ'առաջանայ, և երբ բացի սրանցից ամենայն գործունէութիւն, որ առաջանում է ուժեղ, մնալուն մտապատկերներից կամ հանապազորոշ նպատակների է ձգտում և ներքին բուսականութիւնով կապած է գործելու հետ, այն ժամանակ հասել ենք այն բարձրագոյն նպատակին, ինչ որ կամքի վերաբերութիւնով, ուսուցման միջոցով, ձեռք պէտք է բերէր:

Այս ընդհանուր տեսութիւնից վետոյ, որ վերաբերում էր բոլոր ուսումնարանական գիտելիքների բարոյական ոյժերի հոգեբանական-մանկավարժական վերլուծութեանը, արդ անցնենք խրաքանչիւրին առանձին առանձին, և տեսնենք, թէ ինչ է ամեն մէկի ոյժը և ինչպէս պէտք է նորանցից մեր նպատակի համար օգուտ քաղենք:

Բոլոր գիտելիքներն այս տեսակէտից կարելի է երկու գլխաւոր խմբերի բաժանել. ա) բարոյական տրամագրութիւն սարունակող կամ ինչպէս գերմանացին խը ընտիր բառով արտաչափում է, Gesinnungsunterricht և բ) իրական աշխարհի ուսուցումն: Առաջինն զբաղում է սըրբազան և աշխարհային պատմութիւններով, վերջինս՝ խը ընդարձակ ամամբ (հէքլաթ, գիւցարանութիւն, Ռօբինզօն և այլն), որ խօսում է ոչ միայն մարդու չարաբերութիւնների մասին զէպի Աստուածու մարդիկ, այլ և զէպի կենդանիներն ու անշունչ առարկաները, վերջիններիս կենսակիրարածներ երկակափով: Նրկորոյ խմբի առարկաների թւում գտնում են առաջինի բոլոր մասերը՝ բացի Աստուածանից: Այստեղ արարածները քննելու ևն բնագիտական, աշխարհագրական, մաթեմատիկական և գեղարեստական տեսակէտներից:

Այժմ ուսումնարանական կեանքը բաժանենք երեք մեծ շրջանների, և պարապենք նրանցով առանձին առանձին:

Ուսումնարանական գիտելիքներին հաւաքական բարոյական թիւն ազգեցութիւնը աշակերտի Աշրջանի՝ 1—3 ուսումնարանական տարիների կեանքի վերաջ:

Առաքելնութիւնը մանկավարժութեան ամբողջ նպատակի անունն է: Նա ներքին ազատութեան իրէան է, որ անձնաւորութեան մէջ տեղական իրականութեան է հասած:

Հ Ե Ր Բ Ա Ր Տ:

1. ԶՈՒՏ ԲԱՐՈՅԱԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԲՆԵՐԻ ՅԵՂԱՓՈՒԻԶ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ:

Ինչպէս մենք տեսնում ենք, կը թուի եւս վերջնական նպատակն է առաքելնութիւնը, որ անձնաւորութեան մէջ տեղական իրականութեան հասած ներքին ազատութեան իրէան է: Իսկ ինչ է ներքին ազատութիւնը:—Նա ոչ ալ ինչ է, եթէ ոչ՝ համոզման և կամքի համաձայնութիւնը: Մի մարդ, որ շատ լաւ մտքեր ունի և կամք չունի իրադրծելու, և կամ ընդհակառակը՝ կամք ունի գործելու և ներքին բարձր իրէական մղիչ ուժեր չունի, երկու դէպքերումն էլ նա անկատար է. ուստի և կրթութեան գործն է ներքին ձգտման տեղականութեան իրագործումը, որ նաև գործնական բարոյականութիւն (Moralität) է անուանուում:

Նախ քան գործնականապէս բարոյական մարդ պատրաստելը կամ բարոյական բնաւորութիւն առաջացնելը կրօնական գիտելիքների միջոցով՝ մենք պէտք է ի նկատի ունենանք, թէ մեր աշակերտները բնաւորութեան զարգացման որ աստիճանի վերայ են կանգնած:

Մեր ընդհանուր տեսութիւնը վերլուծեց աշակերտի մտաւոր ու բարոյական զարգացման աստիճաններն և մենք տեսանք, որ նա իւր մանկական հասակում լցած է լինում զանազան իրձերով, ցանկութիւններով, որոնք կամքի, եթէ կարելի է աւելցնուի, նախակրթարանն են: Այս ժամանակ նա ուսումնարան է գալիս ընտանեկան կեանքում իւր բաղմապիտի ցանկութիւնների մի մասին հասած և միւսն անիրագործած տեսնելով: Ուրեմն կամքը, որ ցանկութիւնների կատարելուց է զարգանում, դեռ իւր բողբոջման աստիճանի վերայ է: Այս աչն հասակն է, երբ ընտրողութիւնը, զիտաւորութիւնը և նա առաւել մաքսիմն ու սկզբունքը տակաւին անպատրաստ են, և մանուկը գործում է մտապատկերների ազդեցութեան ներքոյ: Եւ որովհետև մտաւոր շրջանը դեռ շատ աղքատ ու միակողմանի է, տակաւին մտապատկերների համախմբութիւն չեն կազմել, ապա ուրեմն նա զուրկ կը լինի նպատակաշարմարութեան զադափարից, ալ նորան վախճելութիւնն է, որ այս ու աչն կողմն է հակում: Եւ չեմ ասում առաջնորդում, որովհետև մանկան մէջ այդ հասակում գործում են ստորագույն զգայութիւնները, որոնք հեռու են սրտը ազդութիւններ ունենալուց:

Ահա այսպիսի հոգեկան աշխարհի տէր մարդիկ են, որ ընտանիքից

ուսումնարան են մտնում և ամենաազդու կերպով ուսուցման դաստիարակիչ ազդեցութեան տակ ընկնում:

Բայց ուսումնարանն ինչպէս է գործում: Նախելով մանկավարժութեան և մասնաւորապէս կրօնուսուցման պատմական ընթացքին՝ մեր օրերի ուսումնարանը բաղմապիտի փորձեր է արել կրօնական—բարոյական գաղափարներ ու զգացմունքներ առաջացնելու գործում, սկսած Սոկրատէսի կատեխետիկական (հարց ու պատասխանական, մեր քրիստոնէականների մեթօդը) ուսուցումից մինչև քրիստոնէական դարերի և այս վարդապետութեան առաջին ուսուցչի, Քրիստոսի, մեթօդն ու մինչև մեր օրերի քրիստոնէականների, սրբազան պատմութիւնների, բարոյախօսութիւնների և գրաբան աղօթքների ուսուցումները:

Այս զանազան մեթօդների և ուսուցումների մասին արժէք մի ալ անգամ պատմական տեսակէտից աւելի մանրամասն խօսել: Առ այժմս միայն այսքանս մտաբերենք, որ կրօնի ուսուցումը մեղանում ևս արել է իւր լատաջղիմական և չետաղիմական քաղերը և վերջին ժամանակներս դարձեալ, զարմանալի երևոյթ, վերջին ճանապարհի վերաջ է:

Թողնելով այն թէ՛ ուսումնարանի կրօնազխտութիւնն ի՛նչպէս է գործել ու գործում, այժմ տեսնենք, թէ ժամանակակից մի շիջալի տեսակէտից կանոնաւոր ուղղութիւնը ո՞րն է:

Ի նկատի ունենալով մանկան ուսումնարանական կեանքի 1—3 տարիների մտաւոր շրջանը, որ մինչև անգամ զուրկ է մտապատկերների հաստատուն համախմբութիւններից, մենք պէտք է նորան նախ մտցնենք մի ի դէպ լակական աշխարհ, որպէս զի այդ երեակապական զրաւիչ աշխարհում նորս միտքը հետզհետէ նորանոր տպաւորութիւններ ստանալով հարստանալ և կազմակերպելին մտապատկերների համախմբութիւններ: Այս բանաստեղծական աշխարհը սրբազան պատմութիւնը չէ, որի մտքերն անպատրաստ մանկանը դեռ անհասկանալի են, այլ հէքիաթն ու դիւցազներգութիւնը (էպօս) են ներկայացնում: Սրանք են իրանց հերոսների պարզ ու գրաւիչ ձգտումներով ու գործողութիւններով, որոնք և՛ մատչելի և՛ հրապուրիչ են մանկական ընթացեանը: Նրբ մանուկն ու մինչև անգամ հասակաւոր մարդը լսում են հէքիաթ կամ կարդում, օրինակ՝ Հոմերոսի զիւցազներգութիւնը, այն ժամանակ բանաստեղծ Ֆոսսի խօսքով՝

Das ewig junge homerische Epos,

Welches der Jüngling liest mit Lust und der Greis mit Andacht,

(Այդ չաւէտ թարմ հոմերական վէպը պատանին կարդում է հաճութեամբ, և ծերը բարեպաշտութեամբ): Ահա ալստեղ լսողն ու ընթերցողը, կրբ խորասուզուած են հերոսի կեանքի մէջ, նրանց գեղեցիկ ձգտումներն այն աստիճան խորն են թափանցում նորա սիրտն ու հոգին, որ մարդ առժամանակ հէնց իրան է զգում ուրախացող ու տիրող, չաղթող ու չաղթւող: Ինչո՞ւ է առաջանում այն հրաշքը, որ մենք հաղարաւոր տա-

րինքն քննելով, նստելով Հելլադալից ահապին տարածութեամբ հեռու աշխարհում և՛ աչս րոպէիս նորա գիւշաբանական հերոսների հետ հրճում ու արտասուում ենք: Այս հոգեբանական երևութիւնը բացատրուում է հետեւեալ կերպով:—Նրբ մեզ ներկայանում են բարի և վատթար հերոսներ, այն ժամանակ մեր ներքին աշխարհը բաժանուում է երկու հակառակ բանակների, որոնցից իւրաքանչիւրը ձգտում է մեր գիտակցութեան մէջ աւելի բարձրանալու և լաղթող հանդիսանալու: Մարդիկ աւելի տրամադրած լինելով ճշմարտութեան հերոսներին համակրելու և կարեկցելու, վէպերի, պատմութիւնների, ողբերգութիւնների և այլն գործողութիւններին երեակապութեամբ հանդիսատես լինելով՝ նաև իրական կեանքում կուսակից և ջատագով են հանդիսանում աղնիւ հերոսներին և սրանց դրօշակի բարձր պահելուն սրտատրով հետամուտ են լինում: (Փողնելով մի կողմ այն ծանրակշիւ և վիճելի խնդիրը, թէ մարդս ի բնէ աւելի չարի՞ն թէ բարուն է հակած լինում, և թէ արդեօք նա աշխարհ է գալիս բոլորովին անտարբեր (indifferent) տրամադրութիւններով՝ այնու ամենայնիւ մենք հիմք ունինք աւելի լաւատես լինելու, քանի որ հաղադիւտ են այն հրէշալին մարդիկ, որոնց ոգիները հասարակական կեանքից սնւելով չարութեան հերոսներին են համակիր լինում): Այս չուլած տրամադրութեան մէջ երեակապողի նախկին և նորամոծ մտապատկերներից չառաջացած զգացմունքներն հետզհետէ այնպէս են հզօրանում, որ մարդու ամբողջ ներքին աշխարհը մի ուժգին հոսանքի է ենթարկւում, և ահա այս դէպքում նա «իրան մոռանում է»: Եթէ մենք մեզ գործող ենք զգում, ապա ուրեմն մեր ստացած տպաւորութիւնները, նայելով իրանց կազմակերպութեանը, կարողութիւն են ունենում մեր մէջ զգացմունքներ առաջադնելու: Այս զգացմունքներն, իբրև շարժում մտապատկերների համախմբութիւններին՝ ամեն անգամ կ'առաջանան, երբ նրանց համապատասխանող ու ծնունդ տուող մտապատկերները կը վերարտադրւին: Հետզհետէ իրական և իդէալական կեանքից ստացած մտապատկերները հիւսւելով, մի ցանց կը կազմեն, որ կ'ունենալ իւր հանդուցները կամ հեռագրաթեղերի նման երկրորդական ու կենտրոնական կապարանները: Իւրաքանչիւր անգամ, երբ ցնցումն է ստանում սրանցից մինը, մի ակնթարթում նա զրգում ու արթնացնում է իրան անմիջապէս հաղորդակից մտքերն ու զգացմունքները: Պարզ է, որ քանի աւելի չաճախ ենք առիթ տալիս աղնիւ ձգտումներով տողորած մտապատկերների համախմբութիւններին վերարտադրելու, այնքան ևս առաւել նրանց հիւսւածքը ամրապնդւում է և նորանոր լաւելածներ ստանալով՝ հարստանում: Մեղանից իւրաքանչիւրն աչս երևութիւն վտրճնական կեանքում բիրաւոր անգամ հանդիսատես է լինում. քանի մի բան շուտ շուտ ենք լսում, տեսնում, քանի մի սլոտմութիւն չաճախ է կրկնւում, այնքան ևս առաւել նրանց մենք «լաւ ենք լիչում, մտքերը լաւ ենք պահում»: Քանի շատ են այս-

պիտի համասեռ մտապատկերների համախմբութիւններն, այնքան ևս առաւել հզօր ճնշող ներգործութիւն կարող են նրանք ունենալ ստորակարգ ցանկութիւնների և հակումների վերայ: Այլ խօսքով՝ քանի շատ են միամեանց ոչո՛ք ու կող տուղ զինակիրքներն, այնքան ևս առաւել նրանք հաստի են հակառակ բանակի պարտութեանը:

Մենք արդէն հասնում ենք գաղափարների և զղացմունքների կազմակերպութեան խնդրին: Այստեղ խօսքը վերաբերելով մասնաւորապէս կրօնականին, այժմ տեսնենք թէ ուսումնարանական կեանքի առաջին տարիներում մանկան հոգին ի՞նչպէս է փոփոխուում:

Աստուածաչիւն ի դէժան կազմուում է մարդու մէջ նորա ճշմարտութեան և բարութեան գաղափարներից, որոնք մանկանը մտթն են: Այս հասակի մարդը ղեռ գաղափար չի կարող ունենալ տիեզերքի կարգ ու կանոնի մասին. մանկան մէջ միակ դրուութիւն ունեցող զգացումն է ծնողներից և մեծերից կախում ունենալը, որ վարդանալով նորան այն նախազգացմանն է բերում, որ իւր մեծերից զատ կան և իշխաններ ու թագաւորներ, որոնք նոյնպէս մի աւելի մեծ էակից կախումն ունին: Ահա մտածմունքների այս շղթան է, որոնց պէտք է ուսուցիչը ձեռք տալ և նորա օղակները հետզհետէ աւելացնելով՝ աւելի ընդարձակութիւն և հարստութիւն տալ աշակերտի կրօնական զղացմունքներին:

Աշակերտական կեանքի առաջին տարիներում, երբ այս կախման զգացումն հզօրանում է, անս վրայ է հասնում հերոսական կեանքի արկածաւոր երեւոյթների նկարագրութիւնը, որոնք, մենք արդէն տեսանք, լսողին աջնպիտի արամադրութեան մէջ կարող են դնել, որ նա հէնց իրան կարող էր զգալ բարձրագոյն էակից կախման մէջ:

Այս շրջանի վերջին, այսինքն՝ երրորդ տարում ընտանիքից և բանաստեղծութիւնից առաջացած կրօնական-բարոյական մտաւոր աշխարհին միանում է և զուտ կրօնական աշխարհը: Մեր մանուկներն, իբրև քրիստոնեայ ընտանիքի զաւակներ՝ առաջին երկու տարիներում պէտք է հետզհետէ ծանօթանալին Քրիստոսի զեղեցիկ ու կրթիչ կեանքի ինչ ինչ կողմերին ու զգացւէին նորանով: Միայն վերջին, այսինքն՝ այս շրջանի երրորդ տարում սկսւում է Հին-Ուխտի դասաւանդութեան կանոնաւոր ընթացքը, որ ընդարձակութիւն է ընտանեկան պարզ կեանքի: Այս թանձրացել նիւթերն հետզհետէ հարուստ նիւթեր են հաւաքում կրօնական-բարոյական պարզ գաղափարներ վերացուցանելու (զուրս բերելու) համար: Այս շրջանի վերջերում, մանուկը հետզհետէ զուրս գալով հէքիաթաբանական և զիւցազներդական կեանքը ղեկավարող մութ և զիւթական էակների աշխարհից, մտնում է աստուածալին զօրութեան աշխարհը:

Այժմ դառնանք այլ մտաւոր շրջաններին, և մտնենք բնական գիտելիքների աշխարհը:

(Կը շարունակւի)

ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրխտի յիշողութիւններէց)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

III.

ՏԱՍՆՈՒԹ ՕՐ ԿԱՐԻՆՈՒՄ

...Բնակեալ է կեանս իւրեանց
Իբրև է թանձրամած խաւարի
և ոգիքն արդեւեալք ի մարմնի
Իբրև զկենդանի է զերեզմանի...

ԵՂԻՇԷ:

(Շարունակութիւն 1)

Նոյեմբերի 5-ին առաւօտեան, երբ բարձրացայ թէյարան-ըն-
թերցարանը, այնտեղ գտայ նստած արդէն մի քանի հոգի: Այդտեղ
էր թաղիս երկու բոլիս-էֆէնդիներէց՝ մինը՝ Մուրադը՝ նիհար, շի-
կահեր, սակաւախօս մի տաճիկ: Գորա կողքին նստած էր Կարինի
հայերի մէջ հռչակաւոր մատնիչ Պօղոս Սարափեանի մի աչքով կոյր
որդին, որին ժողովուրդը ծածուկ «Վասակի տղայ, մատնիչի զաւակ»
անուններն է տալիս: Իիլիարդի սեղաններէց մէկի մօտ խաղում էին
երկու երիտասարդներ, մինը՝ հայ, միւսը՝ տաճիկ: Այդ վերջինը կա-
նացի պճնասիրութեամբ էր հագնւած և... «օղլան»-ներէց էր:

Կամաց կամաց ընթերցարանը լքուում էր: Առհասարակ հիւ-
րերը իրար հետ վարւողութեան մէջ քաղաքաւարի էին. հայերը

1) Տե՛ս «Մուրճ»-ի 4, 5 և 7 համարները:

ամեն բանում աշխատում են զիջանել տաճիկներին, չը հակառակել: Կարինի թուրքերն էլ աւելի աշխարհ տեսած լինելով՝ քաղաքակմանութիւնից էլ քիչ-միչ տեղեկութիւններ ունին. նրանք տեսան Ներսէսի օրով հայերի յառաջադիմութիւնը և աւելի պատկառանքով սկսեցին վերաբերել զէպի հայերը, վախենալով որ սուր յարաբերութիւնները առանձին զէպեր յառաջ բերեն: Ահա՛ ինչու համար Կարինում այնքան աչքի չի ընկնում հայերի և տաճիկների մէջ եղած ատելութիւնը:

Ես պէտք է զնայի հեռագրատունը: Յովհաննէս աղան խոստացաւ ինձ ցոյց տալ ճանապարհը. բայց որպէս զի պօլիցիականները չը կասկածեն իւր վերայ՝ իբրև մի տաճիկհայտակի, որ սուսահայի հետ մտերիմ է՝ մտեցաւ Մուրադին և Ալի-էֆէնդուն, որ նոր էր ներս մտել, և յատնեց նրանց, թէ պէտք է ինձ հետ հեռագրատունը գնայ՝ ճանապարհ ցոյց տայ: Այդ խօսակցութեան ժամանակ ես էլ մտեցայ բօլիս-էֆէնդիներին և կրկին յիշեցրի Ալիին, որ անցաթուղթս բերի:

— Կուք ինքներդ գնացէք սէրայը և վերցրէք, ասաց նա:

— Ա՛չ, ես չեմ գնալ, զա իմ գործը չէ. եթէ վաղն էլ չը վերադարձնէք, ես առանց անցաթղթի կը գնամ հիւպատոսարանը:

— Չա՛նմ, էսօր երեկոյեան գնացէք վերցրէք, էլի՛, պատասխանեց Ալին:

— Այդ ձեր պարտականութիւնն է և ես հարկաւորութիւն չ'ունիմ անձամբ գնալու:

— Լա՛ւ, վաղը կը ստանաք, միջամտեց Մուրադը:

Հիւրանոցից դուրս գալիս Յովհաննէս աղան հասկացրեց, թէ ինչու պօլիցիան ձգձգում է անցաթղթիս վերադարձնելը. «Կուզեն, որ ինքդ անձամբ գնաս սէրայը, որ բաշ-բօլիսը քեզի տեսնէ, հարց ու փորձ անէ, իմանայ ով ես. կը կասկածեն...»

Մենք անցնում էինք նեղ, ծուռ ու մուռ փողոցներով, որոնց երկու կողմից շարւած էին փոքրիկ աներ, կրպակներ և արհեստանոցներ: Խանութներում, ուր ծախւում են եւրոպական մանուֆակտուրային ապրանքներ, դարսւած էին և Հայաստանի գործւածներ՝ Բաղէշի կարմիր կտաւ, Վանի շալեր, Արաբկերի մանիսս (բամբակեայ գործւած), Խարբերզի զեազի (մետաքսէ գործւած) և այլն:

Առաջնորդարանի մօտից փողոցի ձախ ճիւղաւորութեամբ զնալիս՝ պատահում էք մի շարք արհեստանոցների, ուր կուզի, աղէսի, գայլի և այլ գազանների մորթիներից շինում են մուշտակներ: Բարձր-Հաչքը ունի բազմաթիւ թանձրամորթ գազաններ, որոնց մորթիները մինչև անգամ արտահանում են Ռուսաստանի Նիժնի-Նովգորոդեան տօնավաճառը:

Կրպակների շարքում աչքի էր ընկնում մի մեծ ամբարանման քարեայ շինութիւն, լայն բացւած դարբաններով:

— Ատ խանում կը կենայ Ալեքսանդրապօլցի հարուստ վաճառական մը՝ Մ. աղա Չ.՝ որ Կարին կաշիի մեծ առուտուր կընէ: Կը ճանչնա՞ք զանիկա, հարցրեց Յովհաննէս աղան:

— Լսել եմ նորա մասին, իսկ անձամբ ծանօթ չեմ՝ պէտք է նորան տեսնեմ, դորժ ունիմ:

— Մ. աղան Սանասարեան վարժարանի պատուաւոր հոգաբարձու է, նկատեց առաջնորդս:

— Աւելի լաւ. հետը միասին կը գնամ վարժարանը:

Հասնելով մի կեղտոտ հրապարակ, նման հիւրանոցի առջևը գտնուածին, մենք ծուռեցինք ձախ և դուրս եկանք մի նեղ փողոց, որի երկու կողմից շարւած էին ողորմելի տնակներ: Մ՛ջ շարքում մի սպիտակ փոքրիկ շինութիւն էր երևում հարթ կտուրով. դա պօստ-հեռագրատունն էր: Փայտեայ խարխուլ սանդուղքներով զգուշութեամբ բարձրացանք և մտանք մի նրբանցք, որը տարաւ մեզ մի նեղ, լուսամուտներից զուրկ սենեակ: Քէ նրբանցքը և թէ սենեակը հոգայտակ էին և ցելով ծեփած պատերով: Նէմ ու դէմ պատի մէջ, իրար կողքի երևում էին երկու մեծ ծակեր. մէկից՝ ներքին կայսերութեան հեռագիրներ էին ընդունւում, միւսից՝ նամակներ: Արովհետեւ ևս հեռագիրս Ռուսաստան պէտք է ուզարկէի, ուստի պէտք է զիմէի արտաքին հեռագիրներին յատկացրած բաժանմունքը: Բացանելով ձախ կռան վերայ երևացող մի փոքրիկ դուռ, մտանք արտասահմանի հեռագիրներ ընդունելու բաժինը: Նա մի շատ փոքրիկ սենեակ էր, որի կէսը բռնած էր մի թախտ միւլթաքաներով. հակառակ կողմում մի փոքրիկ սեղան էր, իսկ սենեակի մի անկիւնում, յատակին ածած էին պաշտօնական թղթեր և ծառայողի շորերը: Սենեակում կարող էին իրար ձեռքբելով կանգնել շորս-հինդ հոգի:

Կրան մօտ մեզ հանդիպեց 15 տարեկան մի յոյն պատանի, լայն երկար շալւարով և մեծ հողաթավիներով: Նրբ հեռազիրը ունի իրան (ուրիշ մարդ չէի տեսնում բաժանմունքում), նա ասաց.

— Սպասէ՛ք, դեռ էֆէնդին չի եկել անից:

Ինչ պէտք էր արած. նստեցի ու սպասեցի մինչև «թել զարկող» էֆէնդին բարեհաճի շնորհ բերել իւր պաշտօնը կատարելու: Մօտ 20 րոպէ սպասեցի. այդ ժամանակամիջոցում պօստ-հեռագրատունը միմիայն 3 մարդ այցելեցին: Տաճկաստանը, իբրև քաղաքակրթութիւնից բոլորովին յետ ընկած երկիր, չունի պօստ-հեռագրական մեծ պահանջ: Ամենականոնաւոր պօստային հաղորդակցութիւնը Տրապիզոնի և Կարինի մէջ է, այն էլ շարաթը մի անգամ է ստացւում և գնում պօստը, որը տանում է մի ձիաւոր սուրհանդակ, նամակներով ու ծրարներով տոպրակները զցած իւր հեծած ձիու վերայ: Երզրումից Թիֆլիս նամակը հասնում է երկու շաբաթում: Այդ դեռ Կարինից է այդպէս. բաց երևակայեցէք Հայաստանի խորքերը՝ Վան, Մուշ, Տիգրանակերտ, Խարբերդ՝ դրանք համարեա աշխարհքից կտրւած անկիւններ են. ինչ ուզում ես կատարիր այնտեղ, հազարից մէկ զօհի հառաչանքը չի հասնի լոյս աշխարհ... Կերջապէս «թել զարկող էֆէնդին» բարեհաճեց զալ և ընդունել իմ հեռազիրը: Այդ յոյն պաշտօնեան, ինչպէս և պօստ-հեռագրատան միւս ծառայողները, չունէր հազին պաշտօնազգեստ. ով ինչ ուզում է՝ հագնում է. էֆէնդիս եւրոպական վերարկու ունէր հազին, որի տակից երևում էր տաճկական լայն շալվարը: Ամեն տեղ սովորութիւն է, որ, հեռազիրը ընդունելիս, անդորրագիր են տալիս, բաց ծաճկաստանում հարցնում են. «անդորրագիր կամեն՞ում էք. եթէ այո՛, գնացէք գնէք մի 10 փարանոց նամակադրոշմ»: Կատարեցինք հրամանը և ստացանք անդորրագիրը՝ վրան նամակադրոշմ կպցրած: Ծաճկաստանում պաշտօնական թղթերը, կնիքները և այլն, կէսը տաճկերէն է գրւած լինում, կէսը Ֆրանսերէն:

Պօստ-հեռագրատանից վերադառնալիս մտայ Մ. աղա Զ.-ի մօտ, որի սենեակը վերոյիշեալ լսանի մէջ էր: Այս, մաքուր, փոքրիկ սենեակում, զրանդանի առջև նստած էր մօտ 55 տարեկան մի յաղթանդամ մարդ, կովլասեցի հայ-վաճառականի հազուատով: Նա, ինձ տեսնելով, հաշիւները մի կողմ ծալեց, բարեկեց ինձ և պատւիրեց

Ճառային մի մի Ֆինջան զայժէ բերել Վանուշով (շաբարով):

Մի քանի հարց ու փորձից յետոյ, երբ նա խմացաւ իմ Տանկաստան գալուս նպատակը, խորհրդաւոր կերպարանք ընդունեց ու սկսեց.

— Է՛հ, ինչի՞դ է հարկաւոր իմանալ երկրի, ժողովրդի զրութիւնը... Ի՞նչ բան ունիս. քեզ ի՞նչ սրանց զրութիւնը, ուսումնարանները... այդ քեզ բոլորովին հարկաւոր չի... Եմ բարի խորհուրդս է, քանի որ մի փորձանք չի պատահել զլիտիդ, շուտով վերադառնաս, ինչ տեսել ես բաւական է... դու ջահել ես՝ օամանցուն չը զիտես, իսկ ես երկար ապրել եմ, զիտեմ ի՞նչ է այստեղ կատարուում... Այ՛նչ չես կարող անել... Ես քսան տարի է գալիս եմ գնում, ինձ այստեղ ամեն մի լակոտ անգամ ճանաչում է, բայց էլի մինչև անգամ ինձ վերայ էլ են կասկածում... Ամեն ուսահայ և ամեն մի տաճկաստանցի, որ ուսաց հիւպատոսարանն է գնում՝ կասկածելի է: Հիմա կարծում ես, որ այստեղ բոլոր հայերը արդէն չը գիտեն քո մասին. շատ լաւ գիտեն և շատ կուզենային Տանթանալ, հիւրասիրել քեզ, բայց կառավարութիւնից երկիւղ են կրում. նրանք ստիպւած են քեզ հետ ոչ տեսնել, ոչ խօսել. և աշխատում են ձեւացնել, որ բոլորովին չեն էլ նկատում քեզ... Բոլորովին խորհուրդ չեմ տալիս Կարինից ուղևորել դէպի Մուշի կողմերը. հաւատացած կացի՛ր, որ կէս ճանապարհին կը բռնեն, կը բանտարկեն և կ'արդելին մի քայլ անգամ անել. իսկ նրանց, որոնք քեզ հետ կը խօսեն, կը տեսնեն՝ այնքան կը տանեն կը բերեն, որ հոգիները դուրս կը գաց:

— Շնորհակա՛լ եմ ձեր խորհուրդների համար. յետոյ անելիքս դեռ կը տեսնենք, ասացի ես, չ'ուզենալով երկար վիճել. բայց հիմա ես խնդրում եմ օգնէք ինձ տեսնել Սանասարեան վարժարանը:

— Ի՞նչ բան ունիս. ի՞նչ կայ տեսնելու:

— Ինչպէ՛ս թէ ինչ կայ տեսնելու. գալ Կարին և չը տեսնել Սանասարեան վարժարանը...

— Դէ՛, լաւ, Յ. Մաղաթեանին այսօր կ'ասեմ:

Դուրս գալով փողոցը՝ պատահեցի Մուրադ էֆէնդուն, որ իրան ձեւացրեց իբրև թէ ինձ չէ նկատում: Մի քանի քայլ հեռանալով, ես յանկարծակի յետ նայեցի և չը կարողացայ ծիծաղս պահել, երբ տեսայ թէ ինչպէս տնաքանդը հեռուից քայլ առ քայլ հետևում է ինձ:

ձաշել էի և մտել սենեակս: Հաջի-Ղազարը եկել էր «սօբաս» վառելու: Այդ խարտեաշ մշեցին մօտ 35 տարեկան միջահասակ մի մարդ էր, դանդաղ թէ շարժւելում և թէ խօսելում: Նա հաւատարիմ էր և աշխատասէր: Խօսում էր մշեցիներին յատուկ առողանութեամբ, խառնելով ամեն մի նախադասութեան միջ անթիւ տաճկերէն բառեր: Ղազարը ինձ հետ շատ մտերմացել էր. միշտ երբ զալիս էր «սօբաս» վառելու, երկար մնում էր և զրից անում, նամանաւանդ երեկոները, երբ հիւրանոցը փակւում էր և այնտեղ մնում էինք ես ու ինքը. սովաւ էր պատահում, որ միւս համարներում էլ «միսաֆիր»-ներ լինէին:

Նա չէր կարող առանց հողոց զմայլման մտաբերել Մուշի հողը, ջուրը, այգիները, օղը. նա չէր կարող առանց ցաւի և տխրութեան յիշել թէ ինչ դէպքեր են տեղի ունենում Մուշում. «Քուրդը կը թալնէ, ասում էր նա, կը զարկէ, կ'այրէ, գէշութիւններ կ'ընէ, կը նեղէ մեզի: Պարտքի, սովի, քրչի ու տաճկի տւած նեղութենէն ժողովուրդը կը գաղթէ, կերթաց օտար երկիր, մշակութիւն կ'ընէ, իր զլուխ կը պախէ»:

Քաղաքներում ապրող տաճիկ և հայ դրամատէրերն էլ իրանց վաշխառուական ցանցերում միւս կողմից են տանջում ժողովուրդը: Գիւղացին ահազին տոկոսներով փող է վերցնում և զբաւ է դնում աղա ու էֆէնդիների մօտ իւր հողերը, լծկանները, սոււնը: Ի հարկէ, սարսափելի տոկոսները անկարող է լինում վճարել. բոլոր զբաւ դրածը դառնում է փողատէրի սեպհականութիւն. իսկ գիւղացին, զրկւելով ամենից, իւր հողի վերայ դառնում է «միրիբաս», մի վարձկան, որը մի փոքր հացի համար չարչարւում է, հերկում, ցանում, հնձում ու կախում և, ամեն բան պատրաստելուց յետոյ, աղան հանգիստ իւր համար զալիս է արդիւնքի կէսը տանում: Աղան միայն մասնակցում է նորանով, որ տալիս է սերմնացուն, գործիքները ու տաւարը. եթէ վնասւած բան է լինում գործիքներից կամ տաւարից՝ վնասը աղան հաշւում է և վնասի կէսը «միրիբացից» առնում: Այդպիսով գիւղացուն իւր աշխատանքից մի քանի կօտ ցորեն ու գարի է մնում: Այդ էլ զալիս են «աշար» (բերքերից կորի) վերցնում, իսկ գիւղացուն ու իւր ընտանիքին մնում է իրանց մատերը լպտել, կամ զլուխ վերցնել, զիմել մաշող պանդխտութեան: Զարմանալի՜ ժողովուրդ:

այլքա՛ն թշւառութիւն, անպատուութիւն ու տանջանք կրում է զբաստի համբերութեամբ. ինչքա՛ն կեանք քարշ տալու ցանկութիւնը մեծ է նորա մէջ... Կառավարութիւնը աշարք ինքը չի հաւաքում, այլ՝ հաշւելով որ, դիցուք, այս ինչ դաւառը պէտք է այսչափ սօմար ցորեան, զարի և այլն տայ՝ ժողովելու իրաւունքը ծախում է այս կա՛մ այն վաճառականին և իւր ստանալիք հարկը փողով առաջուց առնում: Աճառականն էլ, ի հարկէ, աշխատում է հարկը այնքան հաւաքել, որ և՛ իւր տւած փողը դուրս դաչ և՛ աւելանայ. եթէ ոչ, էլ ի՛նչ առուտուր է: Այնպէս էլ է պատահում, որ այդ իրաւունք ձեռք բերողը աշխատանքով իսկոյն ծախում է մի ուրիշին, որը եթէ կարողանում է նոյնպէս ինքն է անում: Այսպիսով բացի «կայսերն կայսեր» բաժնից, հարկի վերայ բարդում են և այդ «միլիթէզիմներին» (խոսքով հարկ ժողովող) զբոսանի համար մի խոշոր մաս. ուրեմն հասարակ ժողովուրդը ոչ թէ տալիս է օրէնքով սահմանած 8-ից—1, այլ 8-ից—2: Այդ տասանորդ հարկը (առաջ), որ օրէնքով առաջ 10⁰/₀ էր, հիմա 12¹/₂⁰/₀՝ հաւաքելու ձևի շնորհիւ, դառնում է 25⁰/₀ և աւելի:

Դեռ չեմ հաշուում բազմաթիւ միւս հարկերի և ղեղծումների մասին. դորա վերայ աւելացրէք քրդերի մշտական աւերումները և սպանութիւնները... Տնտեսական թշւառութիւնը ստիպում է դիմել պանդխտութեան և զաղթականութեան. անապահով ու անկարգ զրութիւնը և հարստահարութիւնները մեռցնում են ժողովուրդը բարոյապէս...

— Հաջի՛ Ղազար, ինչո՞ւ ձեզի քրդերը այնքան կը նեղեն, կը տանջեն և դուք բան մը չէք ընէ անոնց, հարցրի ես:

— Մուշի դաշտին վրայ սպրող ժողովուրդը «խիեղճ» է, ոչ զէնք ունի, ոչ պաշտպան: Խաչը զէնք կրելու խամար պիտի թուղթ ունենայ փաշայէն: Եթէ խաչ մը մէնակ ճանփա կերթայ և քիւրդեր կը յարձակին վրան, նա կռիւ կենէ, կը զարնէ, կը սպանէ քրդեր, չի վախնար որ մէկը դնայ զանգաթի. համա որ ընկերովի ըլլայ, խաչը կը վախնայ զինքն պաշտպանել, զարնել, սպանել զքուրդն. ընկերները կերթան կը զրիցեն իրար մէջ, կը լսի կառավարութիւնը, զխաչն կը բռնեն բանտ կը դնեն, փաշայի մօտ կը տանեն, կը բերեն, կը չարչրեն և յետոյ կը տան զաֆթիներուն, որ տուն հասցնեն. անոնց էլ ծա-

Տուկ կըսեն, որ զարնեն սպանեն զնա: Քիւրդերն ալ անոր ընտանիք, ազգականներ բիւթիւն կը մորթեն: Ամա սարցի խայեր քաջ են. քիւրդ և տաճիկ անոնցմէ կը վախնան: Շէնիկ, Սեմալ, Գալիգազան զիւզեր կան Մշու կողմերը. անտեղի խայ ժողովուրդը շատ քաջ է, միայն խայերէն լեզու կըխօսի, պասը պինդ կը պահի: Անոնք չեն թողնի, որ տաճիկ մը կամ քիւրդ մըստի իրենց: Եթէ նրանցմէն զմին քրդեր զարնեն սպանեն, առ խայերը մէկի տեղ 50 քիւրդ կը ջարդեն: Եթէ խայ մը փախաւ կառավարութենէն անոնց մօտ, նրանք կը պահեն իրանց քով, զանիկա չեն մատնի: Անոնք սուս խօսել չեն զիտի. կառավարութեան խարջ տալէն չեն թողնի որ տաճիկը կենաց խամրէ իրենց ոչխարներ. իրենք կըսեն՝ այսքան զրուխ ոչխար ունինք, այսքան պիտի խարջ տանք, առէք զնացէք. և տաճիկներ կը խաւատան, չեն խառնուեր անոնց դործերի մէջ:

—Ա՛յ, դուք էլ եթէ այդպէս լինէի՛ք:

—Մենք դաշտի մէջ ենք, չենք կրնար. անոնք անառիկ լեռների վրայ, մեր աչքը վախեցրեր են...

—Քայց ձեր կողմերում ուսումնարաններ, վարժապետներ չը կա՛ն:

—Ե՛հ, էֆէ՛նդմ, երբ Սարըեան էֆէնդին կէր, լաւ ուսումնարաններ բացեր էր. զնա բռնեցին, Ստամբուլ տարան, ուսումնարանները աւրեցան, վարժապետները վախկոտացան: Ստամբուլի Միացեալ ընկերութիւնը կը պահէ Մուշի քաղաքի մէջ մանչերի ու աղջկերանց խամար դպրոց մը: Մշոյ դաշտի չորս, խինգ գիւղում էլ կան ուսումնարաններ, խիեղճ վիճակի մէջ են: Ճիզուլթները կաշխտեն վարժարաններ բանալ, կառավարութիւնը անոնց կ'օգնէ...

—«Հաջի՛, ա՛յ Հաջի... Հաջի՛-Ղաղար», կանչեցին զրսից: Եւ մշեցին շտապեց դուրս զնալ և այդպէս մեր խօսակցութիւնը ընդհատեց:

* * *

Կիւրակի օրը, նոյեմբերի 6-ին, առաւօտեան ժամի մօտ 11-ին, ես դուրս եկայ Հիւրանոցից ու դիմեցի Մ. աղայի մօտ, որի հետ միասին զնացինք Սանասարեան վարժարանը:

Մտնելով վարժարանի ընդարձակ բակը, որի մէջ տեղում կանգնած է նախկին ազգային աղջկանց ուսումնարանը, այժմ Սանա-

սարեան վարժարանի մի մասը, մենք ղիմեցինք աջ՝ դէպի բակի մի անկիւնում գտնուող երկրարկանի փոքրիկ նոր շինութիւնը, որի նախասենեակի ու հիւրասենեակի հետ արդէն ծանօթացել ենք: Նախասենեակի մի անկիւնում երևացող մաքուր աստիճաններով բարձրացանք և հասանք սանդուղքների վերը: Մ. աղան բացեց մեծ երկփեղկեայ սիրուն դռները մինը և մենք մտանք մի զեղեցիկ, իտակ, լոյս, եւրոպական կամ Խորտով բաւական շքեղ կահաւորած սենեակ: Մարդ մի առժամանակ մտռանում էր, որ գտնուում էր Տաճկա-Հայաստանում, Կարինի մէջ. կահարասիքը, շրջանակները, պատկերները, ծանր վարադոյրները, դորգերը և այլն, բոլորը եւրոպական ճաշակով էր: Սենեակի մէջ տեղում, փափուկ զահաւորակի առջև, դրած էր մի կոլոր սեղան թանկագին սիւռոցով ծածկած, սեղանի վերայ զեղեցիկ լամպա և մանր-մունր առարկաներ:

Գահաւորակի վերայ բազմած էր մի Ֆէսաւոր պարոն գերմանացու դէմքով, իսկ մեզ տեսնելով տեղիցը վեր կացաւ և դիմաւորեց մի թխամօրուս, երկարահասակ կապոյտ ակնոցաւոր երիտասարդ: Պ. 2.-ը մեզ ծանօթացրեց: Դա պ. Գ. Աբուլեանն էր, իսկ զահաւորակի վերայ բազմածը՝ պ. Ս. Սողիկեանը: Այդ երկուսը մեզ արդէն ծանօթ Յ. Մաղաթեանի հետ միասին կազմում են Սանասարեան վարժարանի ե. ո. ա. տ. ե. ս. չ. ո. թ. ի. լ. ն. ը, եթէ կարելի է հռոմէական տրիումֆիրատ» խօսքի անալոգիայով այսպէս ասել: Երեքն էլ իրանց ուսումը վերջացրել են Գերմանիայում: Դրանց մէջ գերիշխողը և գործերի վերայ ազդեցութիւն ունեցողը Յ. Մաղաթեանն է երևում:

Մեր խօսակցութիւնը արդէն կապւել էր, երբ ներս մտաւ և պ. Յ. Մաղաթեանը: Նա շոտպեց ներողութիւն խնդրել, որ այն օր այնքան անքաղաքավարի, սառն կերպով ընդունեց՝ ասելով. «Թիւրքիայում դրութիւնը և պայմանները այժմ այնպէս են, որ եթէ մի քանի րոպէ աւելի սպասէին ձեր ձիերը մեր դարբասների առջև և դուք աւելի մնայիք մեր վարժարանում, պոլիցիան իսկոյն և եթ պիտի շրջապատէր ամբողջ ուսումնարանը:»

Տեսնելով որ առհասարակ մի առանձին թերահաւատութեամբ և կասկածանքով են վերաբերում դէպի ինձ, ես հարկաւոր համարեցի մեկնել իմ ճանապարհորդելու նպատակը, պատճառը, որ չանկարծակի Կարին եկայ, փոխարէն սկզբից Վան գնալու և մտադրու-

Թիւնս՝ ճանապարհս շարունակելու Մուշի կողմերը: Ես յայտնեցի իմ կարծիքը, որ անհրաժեշտ է ոչ միայն պօլսեցիներէ համար «աչքով տեսնել, ախանջով լսել» Թիւրքահայաստանցուն, այլ և ուսաստանցիս համար հարկաւոր է Թիւրքաց-Հայաստանի հետ անմիջապէս ծանօթանալը և նորա մասին ճիշդ տեղեկութիւններ ու գաղափար ունենալը: Սանասարեանք չէին համակրում այդ կարծիքին և յայտնում էին իրանց դժգոհութիւնը, որ ուսաստանցերը և եւրոպական հայ զաղթականութիւնը խառնում են Թիւրքահայերի գործերում: Եւրոպացում նստած ազատ խօսում են, աղմուկ հանում, իսկ տուժում է այստեղ ժողովուրդը և տաճիկներէ ճնշումը ու կասկածանքը դոցա շնորհիւ աւելանում: Ես ասացի, թէ Թիւրքահայաստանի վիճակով իրաւունք ունի հետաքրքրել ամեն մի հայ, մանաւանդ ուսաստանցերը, որոնք իրանց մտաւոր, բարոյական և նիւթական գորութեամբ անհամեմատ բարձր են Թիւրքահայերից, և կարող: Իսկ ինչ վերաբերում է եւրոպաբնակ հայերին, թէև, ի հարկէ, պախարակելի է նրանց լոկ աղմուկներ հանելը առանց գործ կատարելու, կ'աղմակեւրուէ լուր, բայց, այնու ամենայնիւ, վնասակար չեմ գտնում նրանց արդարացի բողոքները և հրապարակ հանելը Հայաստանի ցաւերը ու Թշառութիւնը...

Սանասարեանք բողոքովին համակրում էին Յարութիւն պատրիարքի շրջաբերականին, որով նա համոզում էր Թիւրքահայերին՝ հրաժարել եւրոպաբնակ խռովարար հայերից, նզովել նրանց, որոնք ուրախութիւն, բարօրութիւն և երջանկութիւն չեն տեսնում վշտի, Թշառութեան, աւեր ու զրկանքների երկրում: Նա հրաւիրում էր իւր ժողովրդին, որի հազարաւոր Թշառ, վտարանդի, յուսահատ զաւակներին տեսնում էր պատրիարքարանի շուրջը՝ Թափել եկեղեցիները, ծնկաչոք մաղթանքներ կարդալ առ Բարձրեալն վասն կենաց հայրախնամ օգոստափառ Սուլթանին և նորան շրջապատող մեծամեծներին, որոնք օր ու դիշեր մտածում են, հոգս են տանում իրանց սիրած հայ ազգի մասին...

Սանասարեանք իրանց աշխարհայեցողութեամբ պատկանում են այն կուսակցութեան, որին մեր մէջ կարելի է ընդհանրապէս «խոհեմների» անունը տալ. դրանք ներսէս—Խրիմեան—Ռաֆիֆի-ական ձգտումների դէմ են... Խոհեմները համոզւած են, որ կրակից ազատ-

ւերու համար՝ պէտք է նետել բոցի մէջ: Խոհեմները պառաւ մարդկանց պէս դանդաղիտո, կասկածոտ և ողևորւելու անընդունակ մարդիկ են: Նրանց զգուշութիւնը վախկոտութեան է հասնում, քարոզած համբերութիւնը՝ անբարոյականացնող, մեռցնող ստրկահոգութեան...

Սանասարեանք լաւ տեսնում էին երկրի դրութիւնը. իրանք գիտէին, որ Հայաստանի աշխարհագրութիւնը և պատմութիւնը արդէլւած է աւանդել ուսումնարաններում, որ համարեա ամեն մի տպւած գրքի մուտք Հայաստան խափանւած է, որ Ազգերեանի աստուծոն բառարանի և Շարականի պէս անմեղ գրւածքներ բռնւում են, իբրև վնասակար և ժողովուրդը պրզող գրքեր, որ բանտերում տառապում են բոլորովին անմեղ մանուկներ, որ իրանք քաղաքական, հասարակական գործերում խառնւելուց բոլորովին հեռու լինելով և վալինների ու փաշանների վստահութիւնն ու յարգանքը վայելելով հանդերձ, պարտաւորւած են այնու ամենայնիւ պատուել, շողջորթել Պօղոս Սարափեանների պէս մասնիչներին, յարմարել նորա պէսների ցանկութեան: Նրանք չէին կարող չը տեսնել երկրի անտեսական վատթար վիճակը, մտաւոր խաւարը, բայց այնու ամենայնիւ նրանց ջղերը այնքան բթացել էին, որ նրանց այդ չէր վրդովեցնում, և նրանք հանգիստ ու խաղաղ ատում էին. «Այդ բոլորը ժամանակաւոր է... մենք չենք ուզում, բացի մեր դասերից ու ուսումնարանից, ուրիշ բան ճանաչել: Մենք կղզիացած ենք ժողովրդից: Ճաճկա-Հայաստանի բաղը կախւած է մեր վարժարանից: Միակ սուրբ, նւիրական մեծ բանն է Ճաճկա-Հայաստանում մեր վարժարանի գոյութիւնը: Ուսուցանել մեր աշակերտներին ինչ որ գիտենք և բոլորովին կղզիանալ մեր վարժարանում, պահպանելով միմիայն կապ տեղիս բարձր շրջանների հետ—ահա՛ մեր իդէալը: Պահանջները շատ են և մենք բոլորին պէտք է գոհացում տանք: Մեր նպատակն է նախ և առաջ Թիւրքիայի համար լաւ քաղաքացիներ (?) պատրաստել: Մենք ուզում ենք միջոց տալ մեր սաներին մրցելու ապրուստի կոււի մէջ մեր երկիրը թափւող եւրոպացիների հետ, պատրաստելով արհեստաւորներ, Ֆրանսերէն խմացող գործակատարներ, աէրութեան բարձրագոյն (!) վարժարանները մտնելու համար աշակերտներ, որոնք զուրս գային զեղագործներ, բժիշկներ և այլ ծա-

ուայրդներ: Մենք զանդադ ենք քայլում, բայց մանկավարժութեան մէջ հետևում ենք եւրոպական գիտութեան վերջին խօսքին...»

— Հայաստանում վարժապետներ չը կան, քահանաները և վարժապետները զարհուրելի ազէս են, նկատեցի ես:

— Այո՛, պահանջները շատ են և մենք պէտք է ամենին զոհացում տանք: Մեր ուսումնարանը առ այժմ ունի 6 տարւայ դասընթաց. ներկայ ծրագրի ծաւալը հաւասար է ձեր բէալական ուսումնարանների 4 դաստան...»

Խօսակցութիւնը դեռ շարունակւում էր, երբ Մ. ազան և պ. Յ. Մաղաթեանը վերկացան ու հեռացան: Պ. Աբուլեանը հրաւիրեց զնալ ներքև՝ իրանց հետ ճաշելու, խոստանալով յետոյ մանածել վարժարանում: Իջնելով ցած, մենք մտանք հիւրասենեակը, ուր սպիտակ սիւռոցով ծածկած սեղանի շուրջը նստած էին հինգ հոգի վարժապետներ: Նրանք արդէն վերջացրել էին ճաշը: Բացի Յ. Մաղաթեանից, որը պասիւած է, բոլոր միւս վարժապետները ճաշում են միասին, վարժարանում:

Ճաշի ժամանակ մեր խօսակցութիւնը զլխաւորապէս վարժարանի մասին էր: Մինչև այժմ Սանասարեան վարժարանը ուսումնարաններ դեռ չի ունել: Ընդ ամենը պէտք է լինի 9 տարւայ դասընթաց, այժմ դեռ 6-ը կայ: Աւանդում են կրօն, բարոյագիտութիւն, հայերէն, տաճկերէն, Ֆրանսերէն, գերմաներէն, ընդհանուր աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, թւաբանութիւն, երկրաչափութիւն և բնական պատմութիւն: Երեք տեսուչներից ամեն մինը, բացի իրանց առարկաներից, սովորեցնում են, մէկը՝ ջութակ անել, միւսը՝ զաշնամուրի վրայ, երրորդը՝ կազմարութիւն: Աշակերտները բոլորը գիշերօթիկներ են: Մօտ 150 աշակերտ կար, որոնցից միայն 25 հոգի էին ձրիավարժ, միւսները՝ թօշակաւորներ: Վճարը տարեկան 25 ոսկի է (մօտ 235 ռուբլի) — մի դումար, որ ճանկաստանում բաւականին պատկառելի է համարւում և ունեւոր ծնողներին մատչելի: 25 հոգի ձրիավարժներից պէտք է հանել նոցա, որոնք ընդունւած են «բօլիդիդի» համար՝ մի քառորդ կարող չէին յաջելու նպատակով. մնացածը՝ ո՞րքանը չէմ կարող ասել, որովհետև Սանասարեանք շատ ժլատութեամբ էին ինձ տեղեկու-

Թիւններ ապիս ուսումնարանի մասին՝ Հայաստանի զանազան տեղերից են և, երևի, ազքատ ծնողների զաւակներ: Կարինի Հայ Ժողովրդի մեծ մասը՝ չքաւոր լինելով՝ իւր որդիերանց համար փակւած է տեսնում վարժարանի դուռը՝ մանաւանդ վերջին տարիներս՝ և անբաւական է այս վարժարանից, արտընջում է ու յետ պահանջում իւր շինութիւնը (բակի մէջ տեղում տեսածը), ասելով թէ՛ իւր որդիերանց կրթութիւն տալու տեղ չ'ունի: Քէլե պ. Մ. Սանասարեանը իւր վարժարանի համար մեծ տարածութեամբ հող է գնել Կարինում, սակայն տեղական վարչութիւնը թոյլ չի տալիս շինութիւն կառուցանել: Հանդամանքները ստիպում են մտածել վարժարանի ղեկավարներին՝ տեղափոխւել Խարբերդ:

Որովհետև կիւրակի օր էր և դասեր չը կային, խի ինձ հետաքըրքրում էր աւելի դասաւանդութեան եղանակը և աշակերտների ընդհանուր զարգացման սասիճանը, ուստի դիմեցի պ. պ. Աբուլեանին և Սողիկեանին, հարցնելով. — Կարելի՞ է արդեօք հասարակ օրերից մէկում ներկայ գտնւել դասերին:

Մի քանի բոպէ տիրեց խորին լռութիւն: Բոլորեքեան նայում էին իրանց պնակների վերայ:

— Ո՛չ. վերջապէս ընդհատեց խորին լռութիւնը պ. Աբուլեանը:

Անյարմար էի համարում մեկնութիւններ խնդրել, այնպիսի ձևով էր արտասանւած այդ սոչ»-ը: «Ոչ»-ից յետոյ մի քանի բոպէ տիրեց կրկին լռութիւն, որը ընդմիջեց պ. Սողիկեանը, դիմելով վարժապետներին. «Քալեցրէ՛ք պ...-ին վարժարանը»: Խի ինքը և պարոն Աբուլեանը յայտնեցին, որ զբաղւած են և ժամանակ չ'ունին ինձ հետ զալ: Էջմիածնի ձեմարանում աւարտած երկու վարժապետները և փականագործութեան ուսուցիչը «քալեցրին» ինձ:

Գասարանները և ննջարանները մաքուր, ընդարձակ ու եւրոպական ձևով են: Առ հասարակ, ինչպէս երևում է, բարեգործը ոչինչ միջոց չի խնայել իւր հիմնարկութեան վերայ: Մի փոքրիկ թանգարանում ժողոված են մի քանի զագանների և Կարինի մօտ գտնուող Շամբի թուշունների մորթպատիկները (սպիւռ): Կան և մի քանի պատկերներ, ծովային կենդանիների կարծր մնացորդներ և այլն:

Անցնելով դէպի բակի մէջ տեղում գտնուող շինութիւնը, մտանք մի սենեակ, ուր մի քանի աշակերտներ ջութակի վերայ էին վարժուում. նրանք ածեցին դերմանական նոտաներին նայելով մի եղանակ: Այդ սենեակից մտանք մի ուրիշը, որտեղ զրած էին մի քանի դաշնամուրներ: Աշակերտներից մէկին վարժապետները խնդրեցին «չալել» և նա «չալեց» մի գերմանական վալս:

— Իսկ հայերէն երգեր չը գիտե՞ն, հարցրի ես:

— Երբ գերմաներէն և ընդհանուր եւրոպականը կը սովորեն, հեշտ կը լինի իրանց համար և հայերէնը, հիմա շենք սովորեցնում:

Հասկանալի էր. Տաճկա-Հայաստանում բացի «Հայր-մերից» ուրիշ երգ չէր կարելի երգել հայերէն:

Դիմեցինք դէպի բակի մի ծայրում գտնուող առանձին շինութիւնը՝ սեղանատուն-գրադարանը: Գրադարանում ոչ մի հայերէն գիրք չը կար, բոլորը գերմաներէն և ֆրանսերէն. հայերէն գրքերը դեռ գտնուում էին հիմնադրի մօտ՝ Պետերբուրգում, որովհետև ներկայ պայմաններում Թիւրքա-Հայաստան անկարելի է հայերէն գիրք մտցնել: Նոյն իսկ Պոլսի գրաքննութիւնից թոյլ տաճ գրքերը արգելւում են Հայաստանի մէջ. Ազգերեանի առձեռն բառարանի սէս անմեղ գիրք փնտաւար է համարում: Սեղանատանից դուրս գալով դիմեցինք բակի մէջ գտնուող միջարկանի հասարակ շինութիւնը — արհեստանոցը, որը մի մեծ երկար սենեակ էր մի շարք սեղաններով, հարկաւոր մեքենաներով և փուքսով: Մուտքի մօտ մի անկիւնում լւացելու տեղն էր և մի պատից կախած էին կարգով աշակերտների կապոյտ շապիկները: Ուսուցիչը ցոյց տւեց ինձ աշակերտների շինած մի քանի իրերը: Վարժարանում արհեստները միմիայն ցանկացողների համար են և աւելի մի մարմնամարզական զբաղմունք, քան իսկական դործ: Հիւսնութիւն, փականագործութիւն և երկաթագործութիւն են սովորեցնում:

Ինչպէս մենք տեսանք, վարժարանի աշակերտների ահագին մեծամասնութիւնը ունևոր դասին է պատկանում. այնպէս որ հազիւ թէ մէկը այդ աշակերտներից, աւարտելուց չետոյ, սկսի արհեստով պարպել, այն էլ Տաճկաստանում, ուր անտեսական պայմանները այնպէս են, որ մեծ պահանջ չը կայ զարգացած և կատարելագործած արհեստ-

ների, հետևապէս մեծ ձեռով մի գործ սխել չի կարելի և ունեոր մարդիկ չեն պարտալի գորանով. ուրեմն էլի կը մնայ նոյն ազքատ արհեստաւորների զաւակներին պարապել իրանց հօր գործով, միայն աւելի կատարելագործած միջոցներով... Դաշնամուր, ջութակ ածողը, ֆրանսերէն, գերմաներէն իմացողը, միջնակարգ կրթութիւն ստացածը և եւրոպական կօմֆօրտին բնութեացածը չի զնալ եզներ պատելու, մեխեր շինելու... Ար ամեն տեսակ պահանջ շատ է—այդ չի նշանակում որ ամեն բան իրար խառնելով կարելի է գոհացում տալ ամենին: Արհեստաւորին հարկաւոր է և յայտնի տեսակ, յայտնի չափով կրթութիւն, բոլորովին զատ ծրագրով: Կարինի ազգային վարժարաններում սովորում են չքաւոր դասակարգի զաւակներ, զլիաւորապէս արհեստաւորների. նրանք, ստանալով ամենատարրական կրթութիւն, էլի վերադառնում են իրանց հօր արհեստանոցը և պարապում նոյն գործով: Ահա՛, եթէ Սանասարեան վարժարանի չինական պատում մի անցք բացել այդ մանուկների համար գէպի արհեստանոցը և այդ չքաւոր տղաներին միջոց տրւել սովորել վարժարանի արհեստների հմուտ ուսուցիչների մօտ՝ այն ժամանակ անհամեմատ աւելի օգտակար կը լինէր այդ արհեստանոցը շաշաստանի ժողովրդին, քան հիմա՝ լինելով ունեւորների երեխայոց զւարճութեան աւարկայ: Սանասարեան վարժարանը ոչ միայն ոչինչ չէր կորցնիլ, եթէ նորա արհեստանոցը, աւանձին հիմնարկութիւն լինելով, մատչելի դառնար արհեստաւորների ազքատ զաւակներին, այլ և բաժանելով արհեստանոցից աւելի որոշ ծրագիր կ'ունենար և այդ չէր խանգարի էլի իրանց ցանկացածին հասնել՝ «պատրաստել կրթւած քաղաքացիներ»): Պօլսի թիւրքաց բարձրագոյն ուսումնարանների համար ուսանողներ, ընկերութիւնների համար գործակատարներ և այլն»:

Արհեստանոցից դուրս եկանք կրկին ընդարձակ բակը, ուր անկւած էին մի քանի բարդի. ծառեր: Բակում ձմեռը շինւում է աշակերտների համար սահելու տեղ: Բակի մէջ տեղում դանուղ շինութեան մօտից անդնելիս կրկին պատահեցի տեսուչներին և երկու վարժապետ էջէնդիներին խմբւած մի փոքրիկ արկղանման ջերմանոցի (оранжерея) մօտ: Այդ ծանօթ խմբի մէջ կանգնած էր ինձ անծանօթ յաղթանդամ մի սև մարդ. զա պ. Ն. Մաղաթեանն էր, պ.

Յ. Մաղաթեանի եղբայրը, վարադայ վանքի Հայրիկի նախկին երկրագործական ուսումնարանի տեսուչը: Այդ վարժարանի փակուածից յետոյ, նա եկել էր Կարին եղբոր մօտ՝ փոքրիկ ջերմանոցի վերայ հսկելու: Այդ տեղ, ի միջի այլոց, վարունդ են ցանուած և ստացած առաջին նուբարը մասուեցանուած վալի վաշային և այլ մեծամեծներին ի վայելուամն: Ուրիշ տեսակ ճաճկաստանուած անկարելի է...: Անցնելով խմբի մօտով, պ. պ. տեսուչներին և վարժապետ էֆէնդիներին մնաք բարով աւի և դիմեցի իմ երեք չիչերօն ինեբիս հետ գէպի դարբասը, որի մօտ իմ ուշադրութիւնը դարձրին մի կէս-օմնիբուս կէս-հիւրդօնի ձե ունեցող կառքի վերայ: Ձիչերօնիներինս ասելովք, այդ կառքը աշակերտներն են շինել և դորանով ամարանոց են դնում թէ իրանք տեսուչները ու վարժապետները և թէ աշակերտները:

Յայտնելով շնորհակալութիւնս պ. պ. ուսուցիչներին՝ դուրս եկայ մենաստան-վարժարանից: Նաո բան դեռ ուղում էի իմանալ, շատ բան պարզել ինձ համար այդ ուսումնարանի մասին, բայց սառն ընդունելութիւնը, ուղիղ պատասխաններից խոյս տալը և վերջապէս լակոնական «ոչ»-ը և չը ցանկանալը որ և է յարաբերութիւն ունենալ ինձ հետ—հարկադրում էին քչով բաւականանալ: Ես շատ բան լսեցի այդ ուսումնարանի մասին ժողովրդի մէջ պտուող, բայց անկարող լինելով ստուգել՝ լռում եմ. նաև իմ անձնական տպաւորութիւններս մեծ զգուշութեամբ աշխատեցի գրել, լոյս աշխարհ հանելով այն, ինչ բանի մէջ հաւատացած եմ և համոզուած: Գուցէ դանւեն մարդիկ, որոնք կարծեն թէ ես որ և է նշանակութիւն եմ տալիս ինձ արած ընդունելութեանս — Ոչինչ, բացի այն որ բոլորը ինձ համար նշանակութիւն ունի, իբրև նոր ապացոյց, իբրև լուսաբանուամն Քիւրքա-Հայաստանում տիրապետող անտանելի պայմաններին մի կողմից և ղեկավարներին, իմ կարծիքով, սխալ ուղղութեան՝ միւս կողմից:

* * *

Երեկոյեան, ընթերցարանից դուրս գալիս, լինդեցի Յովհաննէս աղային, որ մանի իմ սենեակս, բան ունէի հարցնելու: Նա ուրիշներէ համար անլսելի և աննկատելի կերպով շտապեց պատասխանել.

«Թէ երեկոյեան փողոցում բօլիսների չը պատահեմ», և իսկոյն հեռացաւ, մօտենալով մի խումբ տաճիկներին:

Թիւրքաց-Հայաստանի ներկայ դրութեան պատճառներից մինը այն է, որ բարձր կառավարութիւնը անտեղեակ է հեռու, կենդանի անջատուած խորքերում կատարուող զործերին: Աւրիշ երկիրներում բարձր կառավարութեան օգնում է գաւառական մամուլը, որը չը կայ Թիւրքիայում: Օտար երկրացի ճանապարհորդներին է մնում կառավարութեան նպաստած լինելը, ցոյց տալով տեղական վարչութեան սխալ և տերութեան շահերին մնասող զործերը: Բերենք մի քանի փաստեր՝ ցոյց տալու համար տեղական վարչութեան բռնած ընթացքը: Չանազան ստահակ պաշտօնեաներին ջաջողակ է հաւատացնել Բ. Իրան, թէ հայերը գանգատուում են ոչ թէ այն պատճառով, որ ճշմարիտ որ քրդերից հարատահարուում ու նեղուում են, այլ ուզում են յուզում, ապստամբութիւն չառաջանել: Եւ ահա վալիները ներկայացնում են երկրի դրութիւնը այնպիսի գոյներով, որ Ելլըզի պալատը, սխալի մէջ խրելով, նրանց տալիս է բացառիկ իրաւունքներ «խառնակութիւն»-ը արմատախիլ անելու...

Այդ վալիները և փաշաները աչալուրջ երեւուլու համար և մեծ ծառայութիւններ անող՝ դիտմամբ են երկիրը այդպիսի դրութեան մէջ ցոյց տալիս Բ. Իրան, որպէս զի իրանց աւելի ևս իրաւունքներ տրւի իրանց քիմքի համեմատ վարելու այդ թշուառ երկրում. նոքա չեն էլ մտածում, որ դորանով մնասում են իրանց կառավարութեան: Մի երկրում, ինչպիսին Թիւրքաց-Հայաստանն է, ուր ոչ մամուլ կայ, ոչ հասարակական կարծիք, ուր ոչ մի միջոց չը կայ՝ լսելի անել արդարադատութեան և բարձր կառավարութեան երկրի իսկական դրութիւնը, պաշտօնեաների բազմաթիւ զեղծումները, ժողովրդի կրած անբաւ հալածանքը—ինչ էլք է մնում դուրս գալու այդ վիճակից... Նոյն իսկ եւրոպական և ռուսաց հիւպատոսները այդ ամենը տեսնում են, ցաւում, հաղորդում իրանց կառավարութիւններին, իսկ Պօլսում չեն կամենում խաղաղացնել երկիրը, լսել հայերի արդար պահանջները:

Վալիները առաջարկում են արմատախիլ անել «խռովութիւնները» և ահա՛ ինչ միջոցներով:—Ամբողջ Ցաճկա-Հայաստանը, այսինքն՝ Էրզրումի, Վանի և Բաղէշի վիլայէթները պաշարման դրութեան մէջ

դնել. ամեն զիրք և լրագրի մուտք խափանել. մինչև անգամ այն զրքերը, որոնք Պօլսի տաճկական գրաքննութիւնից թոյլատրւած են, Հայաստան մտնելիս կրկին քննել. Բաֆֆիի, Գամառ-Քաթիպայի, Պէշիկթաշլեանի, Գուրեանի և այլ գրւածքները, ինչպէս և հայ հին պատմագիրները, խստիւ արգելել: Շարականը հրատարակում է իբրև վնասակար զիրք, որովհետև մէջը կան տաղեր՝ նւիրած ս. Վարդանանց և Աւոնդեանց. Աւգերեանի անձեռն բառարանը գրաւում է իբրև յուզող զիրք: «Յօլիսները» այնքան վախենում են զրքերից, որ, երբ փողոցով մէկը անցնում է կռան տակին զիրք բռնած, նրանք մօտենում են, առնում, տեսնում և եթէ անփնաս են զտնում՝ յետ են տալիս, իսկ եթէ ոչ՝ տիրոջը տանում են (աէրայը)...

Արդարադատութիւն, այն մտքով, որ հասկանում է եւրոպացին՝ Տաճկաստանում չը կայ: Թէև Տաճկաստանում երկու տեսակ դատարաններ կան՝ շէրիյէ—մուսուլմանների համար և նիզամիյէ—քրիստոնեանների և մուսուլմանների ու քրիստոնեանների մէջ պատահած վէճերի համար, բայց երկրիս վարչական դրութիւնը այնպէս է, որ դատաւորները և վարչութիւնը ինչպիսի ընթացք ուղենան կը տան գործին. հին կարգ ու կանոնը, միայն ուրիշ ձևով, էլի պահպանւած է: Նէրիյէի դատաստանագիրքը Աուրանն է իւր Ֆէթուաներով (յօդաւաններով). դատաւորները ուլեմներին (չքոնական փեռնական մի գոտայորդ) դուրս եկած կադիներն են, որոնց նշանակում է ու ընտրում շէյխուլիսլամը: Նիզամիյէ դատարանները իրանց կազմակերպութեամբ ու օրէնքներով փոխ են առնւած ֆրանսիականից մի քանի «տաճկացրած» փոփոխութիւններով: Երկրիս ամեն մի վարչական բաժանմունք՝ նահիյէ, դէզէ, սանջակ, վիլայէթ՝ ունի իւր դատարանը, որի իրաւասութիւնը մեծ կամ փոքր է, նայած բաժանմունքի աստիճանին: Այդ դատարանների մէջ անդամների ընտրութիւնը կախւած է վարչութեան ցանկութիւնից: Դատաւորներին ընտրում է և նշանակում վարչութիւնը: Եւրաքանչիւր վիլայէթում կայ դատաստանական պալատ, որի նախագահը նոյն ուլեմների դատակարգից է և միշտ կարող է տալ գործին այն կերպարանքը, որ իբր թէ խնդիրը կրօնական է և շէրիյէի վերաբերեալ, ուստի պէտք է քննւի Աուրանի յօդաւանների համաձայն. և այդ շատ զիւրիւն է ա-

նել, քանի որ անորոշ են այն խնդիրները, որոնք պետք է այս կամ այն դատարանում քննեն: Բացի այդ, նիզամիլիչի օրէնքները, թարգմանւած լինելով Փրանսիական օրէնսդրական գրքերից բարձր խրթին ոճով—բոլորովին անհասկանալի են տաճիկ տգէտ պաշտօնեաներին, թէ լեզուի և թէ մտքի կողմից. չէ՞ որ այդ օրէնքները հասկանալու համար հարկաւոր է մի յայտնի զարգացում, կրթութիւն, որը ի հարկէ չ'ունին տաճիկ պաշտօնեաները: Եթէ մեր մաշադիների ձեռքը տանք Փրանսիական օրէնքները, թէկուզ թուրքերէն թարգմանւած, մի՞թէ նրանք կարող են կարգին դատաւորներ դառնալ. նոյնը և տաճիկների համար... Եւրոպական օրէնսդրութիւնը և կազմակերպութիւնը կը պատւաստուի Տաճկաստանում, երբ այնտեղ կը տարածւի եւրոպական կուլտուրը, իսկ մուսուլմանութիւն և քաղաքակրթութիւն բառերը իրար բացասում են:

Քանի որ Եւրոպայից Փոքր-Ասիա ճանապարհը բռնում են տաճիկները, քաղաքակրթութեան մուտքը արգելւած է Փոքր-Ասիա և կարգ ու բարօրութիւնը չի կարող անցնել Բօսֆորից դէպի ասիական ափը: Մարդիկ են ստեղծում պայմանները. մինչև Փոքր-Ասիայում կը լինին տաճիկները, կը լինին և նրանց ստեղծած պայմանները, կարգ ու կանոնը: Ինչպէս զժւար է, որ տաճիկները Մահմէդի տեղ Քրիստոսին պաշտեն, նոյնքան անհնարին է, որ եւրոպական քաղաքակրթութիւնը իւր կարգ ու օրէնքներով պատուաստուի տաճկական կեանքում:

Բացի այդ ամենից, տաճիկները անզօր են քրդերին զսպելու: Այդ լեռնաբնակ աւազակաբարոյ ցեղերի հետ կարելի է կուել միայն՝ տալով խաղաղ ժողովրդին տեղական սեպհական զինւորական ուժ, միջոց՝ արդարութեան և օրէնքների հիման վերայ պատժել չարագործութիւնները և, վերջապէս, երկրիս այն ազգութեան, որը ընդունակ է քաղաքակրթելու, տալ ազատ զարգանալու և լուսաւորելու պայմաններ, որպէս զի նրանք այդ վայրենիների մէջ կարողանան տարածել գիտութիւնը, մարդասիրութիւնն և կարգ ու կանոնի հասկացողութիւնը: Իսկ ներկայ պայմաններում երկիրս մի այնպիսի վիճակի մէջ է, որ ապստամբութիւնները լեռնական ցեղերի մէջ սովորական բան են: Ծրինակ, անցեալ տարի օգոստոս և սեպտեմբեր ամիսներում, Աանի հարաւային կողմերում լեռ-

նական ասորիները ապտամբւել էին, տեսնելով որ քրդերից իրանց հասցրած վնասների համար կառավարութիւնը ոչինչ չի անում: Երգրումից զօրք էր ուղարկւած խաղաղացնելու ասորիներին և այդ դէպքի մասին խստիւ արգելւած էր խօսել, որպէս զի լուրը չը հասնի Եւրոպա...

Ասորիների այն ցեղերը, որոնք ապրում են Հայաստանի հարաւարեւելեան սահմաններում, Ջուլամերկի մօտերքում և պարսկական սահմանի վերայ, գլխաւորապէս լեռնաբնակ խաշնարածներ լինելով, պահպանել են իրանց վայրենի, բիրա և պատերազմասէր բնաւորութիւնը: Այդ նեստորականների հողւոր-աշխարհական պետը, նրանց պատրիարքը, Մար-Շիմօնն է (տէր-Սիմօն), որ կենում է Ջուլամերկի մօտ մի վանքում: Իսկ Հայաստանի հարաւարեւմտեան սահմաններում ապրում է ասորիների մի այլ ցեղ, որ կրօնով և սովորութիւններով տարբերում նեստորականներից: Այդ յակոբեանները (Եւտիքէսի վարդապետութիւնն են դաւանում) դաշտաբնակ ժողովուրդ լինելով, աւելի մեծ հակում ունին դէպի լուսաւորութիւնը և խաղաղ կեանքը. զրանք ունին մի առանձին պատրիարք, որ նստում է Ջաֆիրան վանքում, Մարդինէ քաղաքի մօտ:

Ասորիների մէջ կան և կաթողիկէներ:

Թէ նեստորականները և թէ յակոբեանները ընդունում են Պօլսի հայոց պատրիարքարանի իրաւասութիւնը. հայոց պատրիարքարանն է Բ. Ռբան և ասորիների միջնորդը: Հայերի թշնամիները աշխատում են հեռացնել ասորիներին հայերից և այդ երկու հարեան ազգերի մէջ ատելութիւն սերմանել: Հայ առաջնորդների և պատրիարքների քաղաքական տակտից է կախւած պահպանել և արմատացնել հայերի և ասորիների մէջ համերաշխութեան զաղափարը:

Ասորիները Թիւրքաց-Հայաստանում գլխաւորապէս Բաղէշի և Վանի վիլայէթների հարաւային մասերում են բնակւած և նրանց թիւը Հայաստանում հասնում է մօտ 50 հազարի: Ասորիները, չը նայած որ իրանց ծագումով ոչինչ կապ չ'ունին հայերի հետ, այնուամենայնիւ իրանց աշխարհացեցողութեամբ և ձգտումներով աւելի մօտ են հայերին քան քրդերը, որոնք, ինչպէս և պարսերը, թէ լեզուով և թէ ծագումով շատ մօտ լինելով հայերին և մի զենդ-իրանական ճիւղին պատկանելով հանդերձ՝ շատ հեռու են հայերից կրօնով,

ձգտումներով և զարգացման աստիճանով: Ուրեմն Քիւրքաց-Հայաստանում այժմ հայերին բարեկամ և մօտ կարելի է համարել միմիայն ասորիներին, և ուսումնասիրել նրանց կացութիւնը, ձգտումները ու դրութիւնը՝ պէտք է լինի Քիւրքաց-Հայաստանի ապագայով հետաքրքրւողների գործերից մէկը, ինչպէս նրանց հետ ունեցած քաղաքական կապը պահպանելը՝ Պոլսի պատրիարքարանի պարտականութիւններից ոչ փոքրագոյնը:

(Կը շարունակւի)

Ձ. ԲԱԼՈՒՂԵԱՆԻՑ

Արդեօք եղե՛լ ես անքուն գիշերով
Միայնակ պառկած մի կոշտ անկողնում...
Պատահե՛լ է քեզ զազտնի ցաւերով
Տառապած փակել խաւար սենեակում:
Գուցէ պատահած լինի, որ արթուն
Նըստես սեղանիդ առաջ տաղտկութեամբ,
Սեղմես ճակատդ տարաժամ պահուն
Ափերիդ մէջը բոլոր զօրութեամբ:
Եղե՛լ է արդեօք, որ դու զառանցես,
Սնէճքներ թափես դողդոջ շըրթունքից...
Քո ոչընչութիւնն բացորոշ տեսնես,
Ջրգըտնես մի ելք այդ խոր անդընդից:
Եւ այդ ժամանակ փետե՛լ ես մագերդ,
Յուսահատ ջարդել փայտացած մատներդ,
Ճընշող ու խեղդող զգացմունքը կըրճփիդ,
Թունալից միտքը այրւող ուղեղիդ:
Գուցէ ցընցե՛լ ես, ցատկել աթոռից,
Գըժւած վազվըզել անկիւնից անկիւն,
Կարծես, անլեզու, մութը խորշերից
Յուսալիս լինես միակ փրկութիւն:
Եւ այնտեղ, գըլխումդ արագ պըտտումով
Գործում է ուժգին, զարկում ճակատիդ
Այն մըռայլ հարցը, մըռայլ դոյներով,
Իր սպանիչ թոյնը թափելով սըրտիդ:

« Ինչո՞ւ — կըրկնում ես անգիտակցաբար
 Խեղդեա՞ծ մի ձայնով, դիմելով պատին. —
 « Ես այդպէս չէի վըճըռել, ախար,
 « Երբ զբօսնում էի ծովի ափերին:
 « Սչնտեղ նըպատակ դըրեցի դիմել
 « Հեռում երևող սքանչելի լոյսին,
 « Հոսանքի հետը անվեհեր կըռւել
 « Եւ հասնել անշուշտ տենչալի կէտին:
 « Բայց ինչո՞ւ յանկարծ դեռ ճամբի կիսում,
 « Անորոշ կանգնած, նայում եմ հեռւին...
 « Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ չեմ թիալտրում,
 « Որ հասնեմ շուտով ցանկալի ափին:
 « Հոսանքը կատղած խըփում է նաւիս...
 « Ունում է իմ դէմ, ըսպառնում ալիք...
 « Ծովը ահագին — փրուած առաջիս...
 « Իսկ ես միայնակ՝ մի մըրջիւն փոքրիկ... »

Ն Ա Դ Ս Օ Ն-ից

Զ. ԲԱՆՈՒՂԵԱՆՅԻ

Եթէ սիրում ես—պիտ' անվերջ տանջւես,
Յագեցնես սիրտըդ, ծարաւ ու ագահ,
Խեղդող գիշերներ կատաղած փրնտուես,
Ծրձես շրթունքից թոյնը դու անահ:
Ես չէի սիրում, աղօթում էի,
Այնպէս ջերմ, վրսեմ ես պաշտում էի...
Մի ցաւակցական բառ նորա բերնից—
Իստակ, անարատ, անկեղծ բերանից—
Ահա այն բոլորն, ինչ որ ես չոքած
Կամէի լրսել, ոտքերը գրկած...
Ահա այն աղօթքն, որ ես գողալով
Շրջընջում էի ոսկի յոյսերով...:
Ես սիրում էի գուցէ մի ըսուեր...
Գուցէ երազ էր այդ քաղցրիկ ժամեր...
Գուցէ ցընորք էր... մի ցընորք անմեղ...
Գուցէ դա ամպ էր երևում այնտեղ...:
Բայց մի՞թէ բաղբըս կամէր ինձ ծաղրել...
Իմ սիրտըս կըրկին այրել, փոթօթել
Նոր-նոր տանջանքով, մօտեցնել մահւան...
Հայհոյել, կեղտել ու թըքել վերան...:
Սակայն յոգնեցայ վավաշոտ կեանքից,
Ձանձրացայ վաղուց դատարկ օրերից...
Ինձ դէպի առաջ մի միտք էր մըղում,
Եւ դա էր միայն ապրել յորդորում:
Այդ հպարտ միտքը դէպ' գեղեցկութեան
Վեհ իդէալի տաճարն սըրբազան,
Կանչում էր առաջ, ապրել պատւիրում,
Որ սիրեմ անվերջ, սիրեմ անգագրում...:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆ-
ԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Բժշկ. ԳՐ. ԳԱՍ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ (Ղզարցի)

Մի ժողովուրդ, որ այնքան զարգացած է, որ գիտէ թէ ինքը ինչ պէտք է ուտէ և իւր մանուկներին ինչ պէտք է ուտեցնէ՝ ի հարկէ քաղաքակրթութեան ասպարէզի մէջ բաւականին յառաջադէմ ժողովուրդ պէտք է համարուի: Բայց որքան ցաւալի է տեսնել մի ժողովուրդ, որը զրկւած է քաղաքակրթութեան այդ բարիքից, մանաւանդ մանուկների վերաբերութեամբ: Քանի՜ քանի՜ մանուկներ իրանց մատաղ հասակում զոհ են գնում ծնողների սգիտութեան մեր երկրում, այդ ի հարկէ մի գաղտնիք չէ, և պատճառը ըստ մեծի մասին այն է, որ ծնողները չը գիտեն թէ ի՞նչ և ի՞նչպէս պէտք է ուտեցնեն իրանց մանուկներին: Մի տեղ դուք տեսնում էք, որ մանուկը հիւանդ է այն պատճառով, որ մայրը վեց ամուսայ հասակում տանձ է ուտեցրել իւր միակ մանկանը, միւսը՝ տասն և մէկ ամուսայ հասակում կորիզներով կեռաս է ուտեցրել, մի ուրիշը՝ տարին չը լրացած միս է ուտեցնում կամ երկու տարեկան հասակում պասուսայ լոբի, թթու խիար և այլ դժւարամարս բաներ է ուտեցնում. և երբ երեխան հիւանդանում է, բժշկից-բժշկի մօտ է ման ածում, բայց կերակուրը չի փոխում, կարծելով, որ զեղերը բաւական է փոխել, որ մանուկը բժշկուի: Եւ երբ բժիշկը սկսում է հասկացնել, թէ ի՞նչ պէտք է ուտեցնեն մանկանը և ի՞նչպէս՝ այն ժամանակ պառաւները պատասխանում են, որ նոքա տասնեակ երեխաներ են մեծացրել այսպէս, բայց մոռանում են, որ թոյլերը վաղուց արդէն գըլորւել են գերեզման, իսկ միայն ամուր կազմւածք ունեցողները մնացել են և թէ ամեն երեխայ նոցա գործածած կերակուրները չէ կարող

մարտել և եթէ ոչ իւր կեանքը, զոնէ իւր առողջութիւնը կը տուժէ:

Ահա՛ այդ իսկ պատճառով կան մի քանի ճշմարտութիւններ մանուկներին կերակրելու վերաբերութեամբ, որոնք պէտք է մի քանի տասնեակ տարիների ընթացքում կրկնեն, որ ժողովրդեան սեպհականութիւն դառնան և ինդճ մանուկներին հիւանդութիւններից փոքր ի շատէ զերժ պահեն:

Գլխաւորներն են:—Միժ տուղ մայրը կամ ծծմայրը ¹⁾ պէտք է այնքան տոկունութիւն ունենայ, որ երկու ժամը մի անգամ ծիծ տայ մանկանը, իսկ զիշերը վերջին անգամ ժամը տասն և մէկին և այնուհետև միւս առաւօտը ժամը վեցին: Երկու տարին լրանալուց առաջ չը պէտք է երեխային միս տալ ուտելու: Զորրորդ տարում պէտք է երեխային միայն միրզ տալ և այն էլ հասածը առանց կորիզների և, աւելի լաւ է, եփած: Առաջին երեք տարին երեխայի գլխաւոր կերակուրը պէտք է լինի կաթ՝ սկիզբը մաշրականը և ապա՝ կովինը: Եթէ կովի թարմ կաթ դժւար է ունենալ, այն ժամանակ աւելի լաւ է այժ կամ էշ պահել, և, չոր կերակուր ուտեցնելով նրանց, այդ կենդանիների կաթով կերակրել երեխային: Մեծերի կերակուրը երեխայք չորս տարուց առաջ չը պէտք է ստանան... ²⁾: Ալիւրեղէն, այն է՝ հաց և զանազան կասկեր (չրոպա) վեց ամսից առաջ չը պէտք է տալ երեխային և այն էլ շատ չափաւոր քանակութիւնով: Եթէ այդ կանոնները ճշդութիւնով պահւեն, մենք փորձով զիտենք, որ շատ քիչ կը պատահի, որ երեխաների մարտողութեան գործարանները հիւանդանան:

Մանուկների մարտողութեան գործարանների հիւանդութիւնները նկարագրելով մեր դիտաւորութիւնը այն չէ, որ խորհուրդ տանք, թէ ի՞նչպէս պէտք է բժշկեն, այլ այն է՝ թէ հիւանդութեան ժամանակ ծնողները ի՞նչ պէտք է ուտեցնեն և ի՞նչպէս պէտք է հիւանդ մանուկներին պահեն:

¹⁾ Մանրամասնութիւնները կարդա՛ մեր «Մանկատաժութեան» մէջ՝ էրես 29, 30, 31 և 32, նոյնպէս 40, 41 և 45:

²⁾ Կարդա՛ մեր «Մանկատաժութեան» մէջ՝ 104, 105, 109, 110, 118, 119, 120, 121, 122 և 123 էրեսները:

Ամենից շատ պատահող հիւանդութիւնները սոքա են. Գիսպեպսի, բարակ աղիքների կատար, հաստ աղիքի բորբոքումն, դիզենդերի (Քանչ) և երեխաների խօլերա:

ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ (աչուս) ԳԻՍՊԵՊՍԻ:

Գիսպեպսին արտաշայտում է նորանով, որ մանուկը ակորժակը կորցնում է, բզկում է, կերածը փսխում է, փորի մէջ շանջուունի, կղկղանքը կանանչ կամ դեղնագոյն կանանչ է՝ խառն սպիտակ կամ դեղնագոյն կորած կաթի կտորներով, ըստ մեծի մասին թըթւած հոտ ունի, արտավիժում է երբեմն շուտ շուտ և երբեմն փորկապութիւն ունի: Հիւանդութիւնը պէտք է, որչափ կարելի է, շուտով բժշկել, ապա թէ ոչ կամ աղիքների բորբոքումն չառաջ կը գալ, կամ խօլերա, կամ երկարատե դիսպեպսի կը փոխուի, որը շատ ժամանակ է քաշում և դժար է բժշկում:

Այնտեղ, ուր մայրը ծիծը անկանոն է տալիս, իսկոյն պէտք է սկսի երկու մինչև անգամ երեք ժամը մի անգամ ծիծ տալ կամ աւելի ուշ. եթէ երեխան չի պահանջում, հարկաւոր չէ նորան ստիպել որ ուտէ. իւրաքանչիւր ծիծ տալուց յետոյ երեխայի բերանը հարկաւոր է մաքուր ջրով սրբել: Երբէք չը պէտք է երեխային ծիծ տալ նորան հանգստացնելու համար, երբ նա լաց է լինում. եթէ նա փորի ցաւիցն է լաց լինում, այդ կը նշանակէ որ նորա կերածը չէ մարսել, այլ քայքայել է, ուստի նորա կերածը նոյնպէս կը քայքայուի և ցաւ կը պատճառի: Իսկ եթէ ծիծ չը տալ և թողնել, որ ստամոքսը հանգստանայ կամ աղիքները դատարկեն, այնուհետեւ կերածը աւելի լաւ կը մարսուի և ցաւ չի պատճառի: Ծիծ տուող մայրը և ծծմայրը չը պէտք է հոգեկան յուզմունքներին կամ մարմնական տաժան աշխատանքներին ենթարկեն իրանց:

Եթէ երեխային կովի կաթով են մեծացնում, պէտք է որ ծնընդեան առաջին շաբաթը մի մասը կաթ վեր առնեն և չորս մասը եփած և սառցրած ջուր, երկրորդ շաբաթը՝ մի մասը կաթ և երեք մասը ջուր, երրորդ շաբաթից մինչև չորս ամիսը՝ երկու մասը ջուր և մէկ մասը կաթ, հինգ և վեցերորդ ամիսները՝ մէկ մասը ջուր, մէկ մասը կաթ: Վեց—ութ ամիսները՝ երկու մասը կաթ, մէկ մասը ջուր:

ութ — տասն ամիսները՝ երեք մասը կաթ, մէկ մասը ջուր: Կաթը պէտք է նոր կթած լինի, ստանալուց յետոյ իսկոյն պէտք է եփ տալ 15 րոպէից մինչև կէս ժամ, ապա նեղ բերանանի մաքուր շիշերի մէջ ածել, բերանները բամբակի խցանով փակել և սառը տեղում պահել: Աւելի լաւ է, որ կովը նոր կերակուր ստանում լինի ամառ ժամանակը: Կաթի խառնուրդը, ամեն անգամ երեխային տալուց առաջ, պէտք է տաքացնել մինչև 28° Բ. 3)

Եթէ երեխային նոր են ծծից կտրել, իսկոյն պէտք է սկսել ծիծ տալ: Իսկ եթէ հիւանդութեան ժամանակ ստիպւած են կովի կաթ ուտեցնել, պէտք է մի քանի օր կաթ չը տան և հետևեալ կերակուրներից մինը գործ ածեն:

Չուրի սպիտակուցի ջուր: Վեր առնել մէկ ձուրի սպիտակուց և մէկ թէյի բաժակ (14 հացի գդալ) եփած և սառցրած ջրի մէջ լաւ տրորել, այնքան որ սպիտակուցը ջրի հետ միատեսակ խառնւի, մի քիչ աղ անել և ապա բարակ գործած կտաւի կամ շղարշի (փշւ) միջով քամել:

Երկու թէյի գդալ վարսակի (սուշու) կասկը (չրոպո) եփում են մէկ թաս ջրի մէջ՝ մի փոքր աղ խառնած և ապա քամում են բարակ կտաւի միջով:

Մէկ թէյի գդալ զելադինը (բորոզ) լաւ խառնում են մէկ թէյի բաժակ ջրի հետ, մինչև որ բոլորովին լուծւի և ապա քամում են կտաւի միջով: Կամ ուղղակի հորթի մտից արզանակ են պատրաստում:

Այս կերակուրներից մէկը սկսում են տալ. երբ հիւանդութիւնը թեթեւանում է, խառնում են նորա մէջ փոքր քանակութիւնով կաթ և կամաց կամաց կաթի քանակութիւնը աւելացնում են, երբ տեսնում են, որ երեխայի կղկղանքը բնական կերպարանք է ստանում, այն է՝ միատեսակ դեղին, բաց ոչ ջրալի և ոչ շատ սերու:

Երեխային տալու կաթի խառնուրդների մասին արդէն մենք մեր «Մանկատաճութեան» մէջ խօսել ենք, թէ ո՞ր հասակում ո՞ր քանակութիւնով և օրը քանի՞ անգամ պէտք է տալ. այս կանոնները

3) Մանրամասնութիւնները կարգն մեր «Մանկատաճութեան» մէջ և րևս 54—60.

Հիւանդութեան ժամանակ աւելի ճշդիւ պէտք է պահել վերը յիշած կերակուրների վերաբերութեամբ (տե՛ս երես 54 և 59), բայց այստեղ մի քանի անհրաժեշտ կանոնները կրկնում ենք: Երեխային կերակուրը կամ կաթի խառնուրդը երեք չորս ժամը մի անգամ պէտք է տալ, իսկ զիշերը վերջին անգամ տասն և մէկ ժամին և այնուհետև մինչև միւս առաւօտուայ վեց ժամը ոչինչ չը տալ: Առաջին ամիսը՝ երեխային ամեն անգամ պէտք է տալ հնգից մինչև վեց հացի գդալ և օրը մինչև ութն անգամ: Երկրորդ ամիսը՝ օրը մինչև եօթն անգամ և իւրաքանչիւր անգամ մինչև տասն հացի գդալ: Երրորդ ամիսը՝ օրը վեց անգամ, իւրաքանչիւր անգամ տասնից մինչև տասներկու հացի գդալ: Այնուհետև ամենաշատը իւրաքանչիւր անգամ մինչև տասնևվեց հացի գդալ:

Ընդհակառակն, եթէ երեխան մինչև հիւանդանալը ալիւրեղէն շատ էր ստանում, հարկաւոր է վերը յիշած վարսակի ջրի կամ հորթի մսի արգանակի հետ ուղղակի կովի կաթ խառնել և այնպէս տալ: Կաթը կարելի է խառնել նոյնպէս կակօի (հնդկանոջ) թէյի հետ: Մէկ թէյի գդալ կակօի վերայ մի բաժակ եռ եկող ջուր են ածում, կէս ժամ թողնում են և ապա կաթի հետ խառնում: Երեք մասն այդ թէյն են վեր առնում և մի մասը կովի կամ այծի եփած կաթ:

Յաւի ժամանակ երեխայի փորին քսում են մի որ և իցէ տաքացրած ձէթ և Ֆլանելով փորը փաթաթում են:

ԵՐԿԱՐԱՏԵՒ (սրճնկէան) ԴԻՍՊԵՊՍԻ:

Երեխայի կղկղանքը սաստիկ հոտ ունի, և շողի մեծ մեծ կտորտանքի հետ խառնւած է: Երբեմն երեխայի փորը կապ է, երբեմն շուտ շուտ լուծում է: Երբեմն երբեմն երեխան փսխում է մեծ քանակութիւնով շողի խառնուրդ, ախորժակ չ'ունի, ստամոքսը լայնացած է, երբեմն կասես երեխան խեղդում է, փորը փքւած է քամիներով, հիւանդութիւնը շատ երկարատև է, երեխան նիհար է և թույլ:

Այսպիսի դէպքերում՝ կերակրելու մասին խտուրթիւն պէտք է պահպանել: Կերակուրը մէկ կամ կէս ժամը մի անգամ տալ, բայց

Իւրաքանչիւր անգամ մէկից մինչև երեք հացի գդալ: Ոչ մի կերպով չը պէտք է տալ երեխային ոչ իւղալի կերակուր և ոչ ալիւրեղէն: Կաթի քանակութիւնն էլ պէտք է շատ չափաւոր լինի: Մի բաժին կաթը խառնում են երեք բաժին սովորական թէյի հետ կամ ընկուզի տերևների թէյի հետ, դարու սուրճի հետ: Գարին աղանձում են, փոշիացնում, ապա ինչպէս սուրճ մէկ կամ երկու թէյի գդալը մէկ թաս ջրի մէջ եփում են: Բայց աւելի լաւ է կաղնիի պտղի սուրճի հետ խառնել: Կաղնիի պտուղները սուրճի պէս աղանձում են և փոշիացնում: Այս սուրճը (այսինքն փոշին) ծախում է իւրաքանչիւր դեղատան և անուանում է գլանդուլէ քվերկուս տօստէ: Մէկ կամ երկու թէյի գդալ փոշին մէկ թաս ջրի մէջ չափաւոր կերպով եփում են, ապա աւելացնում են շաքար և կաթ և տալիս են երեխային: Օրը մի քանի անգամ տալիս են շիշի մէջ եփած տաւարի մսի արգանակ: Կէս գրանքաց տաւարի միսը մանր կտորում են, ածում են մէկ շիշի մէջ և բերանը խցանով պինդ փակում: Ետոյ շիշը ձգում են մի ջրով լիքը կաթսայի մէջ, որի տակը մի ժամաչ ընթացքում հանդարտ կրակ են անում: Այնուհետև շիշը հանում են, նորա միջի պարունակութիւնը մզում են կտաւի միջով: Ստացած պղտոր և մուք դեղնագոյն հեղուկը ամբողջ օրւայ ընթացքում փոքր առ փոքրը թէյի գդալով տալիս են երեխային: Կնչպէս վերը յիշեցինք, բոլոր կերակուրները հարկաւոր է մէկ կամ կէս ժամը մի անգամ տալ, ամեն անգամ մէկից մինչև երեք հացի գդալ: Երբեմն օգտակար է լինում գելատինի հեղուկը, որի վերայ աւելացնում են մի փոքր ուժ կամ լաւ գինի: Գելատինի հեղուկը կարելի է պատրաստել տանը հորթի ոտներից: Նոյնպէս խորհուրդ են տալիս՝ փոքր քանակութիւնով գլուխ գինիներ տալ, զորօրինակ, խերես, մալազա:

Եթէ չաջողի, որ երեխայի շողիււոր փսխումը վերջանայ, ախորժակը լաւանայ, կղկղանքը կանոնաւոր և բնականին նման դառնայ՝ այն ժամանակ կարելի է զգուշութիւնով կաթ սկսել տալ, բայց միշտ խառնած կամ հորթի մսի արգանակի հետ կամ վարսակի շողիււոր հեղուկի հետ: Սկիզբը պէտք է կաթը փոքր քանակութիւնով խառնել և տեսնել, եթէ երեխան լաւ է մարսում, այնուհետև կաթի քանակութիւնը աւելացնել: Կարելի է նոյնպէս դեռ

կաթ չը տալ, այլ սկսել կաթի շճուկը կամ շիթը (Տօլէ, «Ին-
քօփ») տալ և ապա մի քանի ժամանակից յետոյ սկսել կաթ տալ:

Կաթի շճուկը կամ շիթը տանն էլ դիտեն պատրաստել. բայց
կարելի է զորա համար զեղատանը դնել հարկաւոր նիւթը, այն է՝
տրօխիսցի սերիպարի: Մի հատը մէկ և կէս բաժակ եռացող կաթի
մէջ լուծում են. երբ բնասպանիրը բաժանում է, քամում են բա-
րակ կտաւի միջով և ապա փոքր փոքր քանակութիւնով հեղու-
կը տալիս են երեխային: Եթէ երեխայի փորը կապ է, այն ժամանակ պա-
հանջում են տրօխիսցի սերիպարի տամարին դատի, իսկ ե-
թէ աւելորդ է լուծում, այն ժամանակ վեր են առնում տրօխիսցի
սերիպարի ալիւմինատի:

(Վը շարունակի)

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

«ԴԱԻԻԹ և ՄՀԵՐ». Ժողովրդական զիւցագնական վէպ. գրի առաւ Մ. ԱՅԵՂԵԱՆ. Շուշի, Միրզաջան Մահաբեհ-Յակովբեանցի տպ. 1889 թ., Ժ-4-51 եր. փոքր քառածալ, տառ № 12, գինն է 35 կ.:

Այս գիրքը բաղկացած է մի չառաջարանից և երեք հատածներից՝ Դաւիթ 37 երես, Մհեր 11 երես և Թուրան Դաւիթ 2 երես: Առաջին երկու հատածները վարիանտներ են հ. Սրուանձտեանցի «Գրոց-Բրոց» գրքում բերած «Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ»¹⁾ չափնի ժողովրդական զիւցագնական վէպի, իսկ վերջինը մի բոլորովին նոր կտոր է:

Պ. Մ. Աբեղեանը պատահամբ լսել է էջմիածնում մի մոկացուց այդ վէպը և գրի է առել, աշխատելով տողերի բաժանել և ոտանաւորի ձևով հրատարակել: «Այդ տողատու թիւնը տեղ կազ շատ չաջող է, տեղ կազ թույլ է. թուլութիւնը չառաջացած պիտի լինի անշուշտ նորանից, որ պատմողը՝ ոտանաւորը մտացած լինելով՝ խառնել է»: Դորան էլ եթէ աւելացնենք, որ պ. Աբեղեանը դժարացել է ճշտութեամբ արտայայտել

մոկացու հնչիւնների բարբառաւիճ առողանութիւնը իւր սուղ և երկար ձայնաւորներով հասկանալի կը լինի թէ ինչո՞ւ այդ տողատուը տեղ տեղ անչաջող է: Օրինակ, այս կտորում չափ չի նկատուում.

Կնիկ խարդրեց, ասաց.

—Մարամելիք, տիւ ինչո՞ւ էսօր
չես խօսայ:

Ասաց—Յի՞նչ տը խօսամ.

Քեո տղէն ձի շատ ամօթով էրաւ
մընչ խալխին:

Կնիկ ասաց.—Յի՞նչ էրաւ:—

—Ես իմ գետրդ որ չարղեցի (չգեցի)
Ձեո հոուր, զիմ գետրդ բռնեց:

—Բան չը կայ, աղայ է, ասաց,
իսիք բան չը կտրի. և այլն:

Սակայն որ վէպի սկզբնական աղբիւրը ամբողջապէս չափ ունի՝ այդ ակնչայտնի է, օրինակ, ոչ միայն էպօսի մէջ պատահող երգերից, այլ և հետեւեալ կտորներին.

Բերենք, մէկ սէնի ոսկի դնենք էռջև,
Մէկ սէնի լի կրակ դնենք էռջև...

¹⁾ Թարգմանւած է ռուսերէն պ. Գ. Խալաթեանից:

Մէկ սէնի կրակ, մէկ սէնի ոսկի,
 Բերին զրին ցեղև Դաւթին.

 Կըկեայ, Սասմայ քաղաք աւրի,
 տանի,
 Մսրայ քաղքի քամակ նոր քաղաք
 ըմ շինիւ

 Ասաց, ժողվեց, զըմեն թօփ էրաւ,
 Ասքեար կապեց, էկաւ վար Սաս-
 մայ քաղքին՝
 Մընչ դաշտին զիւր չաղը՛ր—խեաթ
 (Վրահեք) եղար,
 Ձուհապ խրկեց Ձէնով—Յովանին:
 Կամ՝
 Չուր խլիսուն, քանի մ'աստղ եր-
 կինք կայ,
 Ընցկուն չաղը՛ր—խեաթ բուլուր
 քեռ քաղքին զարնեն
 Յըմեն քեռ խօր գլխու զուշման էլ
 նեն...
 Չուր խլիսուն, քանի մ'աստղ եր-
 կինք կայ,
 Ընցկուն չաղը՛ր—խեաթ բունեցին
 Բուլուր Խանդութ խաթնի խօր
 քաղքին,
 Յըմեն Խանդութ խաթնի խօր
 զուշման. և ալն:

Պ. Արեղեանցի բերած վարիանտը
 աւելի ընդարձակ և մօտ լինելով
 սկզբնականին քան Սրուանձտեանի-
 նը, աւելի լուս է սփռում մեր ժողո-
 վըրդական բանաւոր ստեղծագործու-
 թեան զեղարեւոտական կողմի վե-
 րայ: Ժողովրդի սիրած հերոսը՝ «սի-
 բուն—խօրօտ», «թուխ—մօրուս» թը-
 լօր Դաւիթը՝ բելիէֆ կերպով է
 հանդիսանում մեր առջև, հեծած իւր
 «Քուռկիկ—Ձալալին», կապած «քա-
 մարն ի մէջքին», թուր—կէծակին»

զրած «գլխու գեօտին», հաղած «կա-
 պէն—խաբուկին», «վար աջ թևին
 ունենալով «խաչ—պատարազին». նա
 կուռւմ է իւր հայրենի քաղաքի հա-
 մար Մսրամելքի, փէհլիւանների
 և իւր սիրունու՝ Խանդութ խաթնի՝
 հօր թշնամիների դէմ: Սասնոյ ժո-
 ղովուրդը իւր հերոսին ներկայաց-
 նում է բարի, պարզ, միամիտ, ուխ-
 տասպահ, ողջախոհ, քաջ, գերբնա-
 կան ուժ ունեցող և վեհանձն: Ժողո-
 վըրդի պաշտած Դաւիթը չի ուզում
 թշնամու վերայ ծածուկ լարձակել:
 —Ի՞նչխ անեմ, թը գեաղտիկ էր-
 թամ,
 Տ'ասեն Դաւիթ գեող էկաւ, գեող
 գնաց...
 Եւ զիմելով թշնամիների բանա-
 կը կանչեց.—
 Վով քներ էք՝ չարթուն կացէք:
 Վով չարթուն էք՝ ելէք, կաշնեցէք:
 Վով կաշներ էք՝ ձի (ջէք) ճակեր
 (զրահեք) կապեցէք,
 Վով ձի ճակեր կապեր էք՝ ձի ձի-
 անք թամբեցէք:
 Վով ձի ձիանք թամբեր էք՝ ելէք,
 խեծեցէք,
 Չ'ասէք՝ Դաւիթ գեող էկաւ, գեող
 գնաց:
 Ահա ինչ բանաստեղծական հա-
 մեմատութիւններ է անում ժողովուր-
 դը. Մսրամելքը խաբելով միամիտ
 Դաւթին ձգում է հորը: Սասնոյ մէջ
 աչք ժամանակ նորա հօրեղբայր՝
 Ձէնով—Յովան գչեր էրաղ տեսաւ,
 Մսրայ աստղ պաշտաւ էր,
 Սասմայ աստղ մժղաւիր (Մահաւաւ) էր:
 Քնուց էլաւ վիր, ասաց.—
 Կնիկ, իլի վիր. ես տեսայ
 Մսրայ աստղ պաշտաւ էր,

Սասմայ աստղ մծղաւիր էր—
 Դաւիթ ձեռաց զնաց:
 Չէնով—Յովան էլ ըմ քնաւ,
 Դոր էրազ տեսաւ՝
 Մարայ աստղ էկաւ,
 Սասմայ աստղ ետու կուլ և ալն:
 Կամ՝ Դաւիթ տեսնելով թշնամիների
 անթիւ վրանները՝ անա ինչ է ասում.
 «Էնոնք էլնեն բամբակ,
 Ես լէ էլնեմ կրակ,
 Չեմ կարալ էրեցըցի.
 Էնոնք էլնեն գարնան մատղաշ
 դառներ,
 Ես լէ էլնեմ գարնան մատղաշ գէ-
 լեր,
 Չեմ կարալ զանոնք կտրեցըցի»:
 Անն և բիրտ սասունցու պարզ,
 Ինքնուրոյն նկարագրութիւնը երկու
 սիրահարների քնքշութիւններին.
 Դաւիթ զիւր ձին խեծաւ,
 Քշեց, զնաց Վուջի Խանդութ խաթ-
 նի փանջարին,
 Խանդութ խաթուն՝ որ աչք ընկաւ,
 ՉԴաւիթ տեսաւ՝ ուրախացաւ.
 Ուրախութեմէն խնձոր մ'եղար Դաւ-
 թին,
 Դաւիթ զխնձոր բունեց վար ձիուն.
 Խնդացաւ վար խնձորին:
 Դաւիթ գչեր էլաւ, զնաց Խանդութ
 խաթնի տուն,
 Էնոր կշտին պառկաւ չուր խլիտուն:
 Խլիտուն էլաւ վիր տ'երթէր, լուաց-
 ուէր.
 Խանդութ խաթուն ձիւր տարաւ,
 Ըլից Դաւիթի ձեռաց.
 Դաւիթ զրկեց զԽանդութ խաթուն՝
 տը պագնէր,
 Խանդուն խաթուն չեթող պագնէր.

Բունցըրի մ'եղար Դաւիթի բերան
 Արուն—արնձիւր բերնէն կթալ տիւս:
 Վէպում նկարագրած Մհերի բո-
 լոր կեանքը ցուց է տալիս թէ ժո-
 ղովուրդը որքան մահացու մեղք է
 համարում ծնողներին անպատուելը:
 —Մհեր, որ տիւ խետ ձի կուլ և ա-
 ըրի,
 Չի ամանչըցրի մընչ խալխին,
 Կանչիր եմ քաղցրիկ Ատուած,
 Քեռ մօտէն ժառանգ չընկնի տիւրս,
 Քե մախ չըլնի, չուր Բրիստոս
 կեաց դատաստան:
 Անա թէ ինչպէս է անիծում Դաւի-
 թը իւր որդուն նորա իւր գէմ ձեռք
 բարձրացնելու համար:
 Դաւիթի մահից ցետոյ՝
 Մհեր մնաց հեթըմ:
 Չէնով—Յովան զՄհեր տփեց,
 Էլ չը պախեց, ասաց.
 —Մհեր, կոնդ ես,
 Խեռ քեռ խէր կուլ արիւր,
 Իլի՛, գնն մ'իւր քաղքէն,
 Մը դաղրի մեր քաղաք:
 Մհեր էլաւ, զնաց,
 Վար խոր գերեզմին կաջնաւ
 Ելաց, ասաց.
 «Խէրի՛կ, վի՞նչիս անեմ,
 Խէրի՛կ, վի՞նչիս անեմ,
 Ասօր ձի Սասմայ քաղքէն
 Բեհբա՛ր (****) ի խանած»:
 Գերեզմից ձէն էլաւ, ասաց.
 «Որդի՛, վի՞նչիս անեմ,
 Գացիր մէջալն ի ձեռնէս.
 Գացիր մէջալն ի ձեռնէս,
 Թափիր մաղերն երեսէս:
 Գնն Հալարտ, քաղաք» և ալն:
 Ո՛րքան վիշտ, թախիծ ալդ մի
 քանի տողերի մէջ:
 Եւ անիծւած անժառանգ ու ան-

մահ Մհերը, որի «յեռջև գետին թու-
լացիր էր, խող չէր դադրի յեռջև»,
վերջը զղւած կեանքից աղօթք է ա-
նում:

«Ով Տէր Ասուած,
Իմ խօր անէծք ձի խասիր ի,
Իմ միջաց էրակ քաշիր ի,
Իմ մօտէն ժառանգ չ'ընկաւ մըչ
աշխարքին.

Ձի էլ մախ չը կաչ չուր Քրիստոս
կեալ դատաստան:

Ո'վ Տէր Ասուած, զքեզ եմ կանչիր.
Տիւ ընցկուն էնես, ձի ձգես վա-
նալ քար,

Ձուր Քրիստոս կեալ դատաստան.
Իմ խողու ճարը էնի»:

Ասուած հրամանք էրաւ,
Ձէնիկ մարմնաւոր եթալ վանալ
քար,

Ձուր Քրիստոս կեալ դատաստան:

Աչս մի քանի նմուշները բաւա-
կան են՝ ցոյց տալու համար որքան
հրաշալի պէտք է լինի սասունցիներ
րի էպօսի սկզբնատիպը իւր ամբող-
ջութեամբ: Աչք էպօսը պարունա-
կում է Սասնոց տէրերի ցեղի չլատ-
մութիւնը, սկսած Աբամելիք Սանա-
տարի ժամանակներից, աչխնքն մի
քանի դար Քրիստոսից առաջ, մինչև
համեմատաբար նորագոյն ժամանակ-
ները: Ի հարկէ, ժողովրդի բերանում
սերունդից սերունդ և դարից դար
անցնելով աչք էպօսը կրում է փո-
փոխութիւններ և բաւելածներ, մըտ-
նում են նորա մէջ զանազան անա-
խըրօնիղմներ, բայց պատմական հիմ-
քը աչնու ամենաչնիւ պահպանւում
է, ինչպէս և էպօսի բուն նիւթը, ո-
րը Սասնոց դիւցաղն տէրերի անընդ-
հատ պատերազմներն է նկարագրում

Մարամելիքների հետ, աչխնքն՝ հա-
ւաքական մտքով՝ Սասնոց զանազան
թշնամիները զէմ: Հ. Գ. Սրուանձատանի
վարիանտը սկսում է սասունցիների
նախահայր Աբամելիքի և Սանասա-
րի պատմութիւնով և վերջանում է
Աբամելիքի որդի Դաւթով և սորա
որդի Մհերով: Պ. Աբեղեանի վարի-
անաը ուղղակի սկսում է Դաւթից,
Մհերի մասին աւելի երկար է պատ-
մըւում և զիւցաղներգութեան մի
դեռ անպատ ձիւղից՝ Թուան Դաւ-
թից՝ մի փոքրիկ կտոր է բերւում:
Իսկ «Թլօր Դաւթի» զրուխը աչնքան
ամփոփ է, որ թողնում է մի վերջաց-
րած և զեղարեւստական կողմից մի-
ապաղաղ տպաւորութիւն:

Մինչև աչժամ գրականութեան մէջ
լուս տեսած նմուշները ցոյց են տա-
լիս, որ սասունցիների աչք հրաշալի
էպօսը բաւական ընդարձակ է: Նթէ
մեր տեղ աւելի կրթւած աչք լինէր,
տեսնելով իւր ժողովրդական հանձա-
րի ստեղծագործութեան աչպիսի
նմուշներ՝ եթէ ոչ մի գիտնական էքըս-
պելիցիալի, գոնեա մի երկու ձեռնհաս
անձանց միջոց կը տար զնալ և տեղն ու
տեղը հաւաքել ու կորստից ազատել
ժողովրդի բանաւոր գրականութեան
աչպիսի գոնձերը: Բայց մենք՝ հա-
լերս շատ անտարբեր ենք, սեպհա-
կան հանդատութիւնը սիրող և պա-
ռաւած, որ աչպիսի գործերի հա-
մար մտածէինք... Նթէ աչք իրա-
գործէր, աչն ժամանակ մեր անդոյն,
թող բանաստեղծները, և առհասա-
րակ ժողովրդական տարրից զուրկ
գրականութիւնը, խմելով ժողովրդա-
կան բանահիւսութեան սլարդ, թարմ,
ուժեղացնող և կենդանարար աղբիւ-

րից, ահպէս կը կերպարանափոխուէին, ինչպէս փոխուեց Քլօր Դաւիթը՝ խմելով իւր հօր «կաթնաղբիւրից»:

Մէկ սնաթ քնաւ, էլաւ
Տեսաւ էնպէսն ի լցւի
էնպէսն ի խաստացի,
էնպէսն ի զօրութիւն, ողժ աւրի,
Որ չափաւամիշ ի եղի:

Ապպէս ուրեմն, պ. Աբեղեանի հրատարակած «Դաւիթ և Մհեր» ժողո-

վորդական դիւցազնական վէպը, չը նաչած իւր թերատութեան, մի շատ նշանաւոր երևութ է մեր գրականութեան մէջ և ցանկալի է, որ աչտուհետև ոչ թէ պատահական կերպով անկատարութիւնից լոյս աշխարհ ընկնէին մեր ժողովրդի փառաւոր դիւցազներգութեան բեկորները, այլ կազմակերպւած հետադասութեան և ուսումնասիրութեան արդիւնք լինէին նոքա:

Լ. Ս.

ՌՈՒՇԱՆ և ՀԻԻՐԻՁԱՒ, վէպ (Ղարաբաղի անցեալից). հեղինակութիւն ՄԻՐՁԱ ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՅԻ. տպ. Մ. Մահտեսի-Յակոբեանցի, Նուշի, 1889 թ., քառածալ, Գ+148 էրես, տառ № 12, գինն է 40 կ.:

Պ. Միրզա Տէր-Սարգսեանցի վէպը, որպէս հեղինակը մէկ շտաղարանով լալտնում է ընթերցողին, պատմական վէպ է: Համառօտակի պատմենք վէպի բովանդակութիւնը:

Լինում է չի լինում Ղարաբաղում մէկ Մ. գիւղ. այդ գիւղի մէջ ևս լինում են մէկ երիտասարդ՝ Ռուշան անունով և մէկ աղջիկ՝ Հիւրիզադ անունով. այդ երկուսը միմեանց սիրում են: Ղարաբաղի խաները սովորութիւն են ունեցել տարին մէկ անգամ հաջ գիւղերից գիւղերիկ աղջիկ ընտրել և բռնութեամբ տանել իրանց հարեմը: Ղարաբաղի խանը մարդիկ է ուղարկում Հիւրիզադին հարեմը բերելու. Ռուշանը իւր համազրկացի մէկ քանի երիտասարդներով կարճակելով Հիւրիզադին խանի մօտ տանող թուրքերի վերայ՝ նո-

ցա սպանում են և Հիւրիզադին ազատում: Խանը բարկանում է այդ դէպքի վերայ և Մ. գիւղը քարուքանդ անում, գիւղացիներից բաւականին մարդիկ սպանում: Վերջ ի վերջոյ Հիւրիզադը բռնւելով ընկնում է խանի հարեմը, բայց չը կամենալով մահմեղական լինել և խանի կամքը կատարել, մանաւանդ թէ իւր սիրեցեալի երգի ձայնը լսելով, ապարանքի բարձրութիւնից իրան ցած է ձգում Ռուշանի նոտների տակ ու մեռնում, ուր և Ռուշանն ևս անձնապանութեամբ վերջ է տալիս իւր կեանքին:

Ինչպէս լալտնի է, պատմական վէպ դրել շատ անգամ չէ լաջողում նոյն խոկ տաղանդաւոր վիպասաններին, որովհետև այդ սեղ, բացի տաղանդից, վիպասանը պէտք է ուսում-

Նասիրած լինի և գիտենալ նկարագրած ժամանակի անցքերը, երկրի տեղադրութիւնը, նոյն ժամանակի ժողովրդի սովորութիւնները, նորա զարգացման չտիւր, կենցաղավարութիւնը, արդ ու դարդը և որ գլխաւորն է՝ վիպասանը պէտք է ճանաչէ աչք պատմական շրջանի մարդու հոգեբանական կողմը և այլն և այլն: Եւ որովհետեւ վիշեալ պայմանները պիտի ըլլան Տէր-Սարգսեանցի համար գոյութիւն չունին, պատմական վէպ գրելը ուրիմն և դիւրին է: Հեղինակը, իւր գրածքի մէջ մտցնելով մէկ քանի շատ սովորական պարսկական անուններ, ինչպէս է՝ իւզրաշի, աղսալուկալ, գիշքիրասի, խան, կարծում է, աչքն է պատմական վէպ եղաւ. նա չի էլ որոշում վէպի մէջ նկարագրած անցքի ժամանակը: Այն գիւղի անունը, որտեղ կատարուած է ամբողջ վէպը՝ պիտի ըլլայ Տէր-Սարգսեանցը Մ. տառով է նշանակուած, փոխանակ կամ գիւղի իսկական անունը նշանակելու կամ՝ եթէ չը գիտէր, որ և հաւանական է, Ղարաբաղի գիւղերից մէկի անունը դնէր: Նկարագրելով Ղարաբաղի խանի բռնութիւնները, նորա ապարանքը՝ հեղինակը չէ սղոյնում որ քաղաքում կամ որ գիւղումն էր նստում աչք խանը. չէ որ Ղարաբաղը մէկ երկրի անուն է, և ոչ մէկ քաղաքի կամ գիւղի. նոյն իսկ աչք խանի (որ վէպի գլխաւոր շարժառիթն է) անունը նշանակուած է Շ տառով:

Ռուշան և Հիւրիդաղ վէպը ոչ միայն պատմական չէ, այլ և ժամանակակից չէ. դա «ոչ հալի խունկ է և ոչ թուրքի ուղաւորով», այսինքն՝ մէկ

անգոյն, անբնական և աղէտ դրածք է, որտեղ Ղարաբաղի պատմական գիւղացիք ճամարտակում են ալթմեան լրագրական գաղափարներով և բառերով և աչք ճամարտակութիւնները բռնում են զրքի կէս մասը: «Ռուշանը հասկանում էր թէ ինչ ասել է ամուսնութիւն, ինչ ասել է ընտանիք. նա (Ռուշանը) ատում և պախարակում էր ուրիշներին, որ գլուխները կախ գցած, անբան կենդանու նման կապը բռնած տարւում էին աղջկաչ տուն և նշանուում: Շատ տղերք էլ իրանց տանը մնում էին նստած և քահանան ու ծնողները մտտանին տանում էին աղջկաչ տունը: Ի՞նչ գաղափար կարող էին ունենալ աղջկաչի տղաք ամուսնութեան վերաբերեալ...»: (Ալտերն հեղինակի դրածն է. երևի դորանով մէկ գաղտնիք է կամենում հասկացնել): Մէկ ուրիշ տեղ. «Ռուշանը ոչ թէ չափշտակուած էր Հիւրիդաղի հարբոտութեամբ կամ ճոխ օժիտով, ինչպէս լինում են շատերը (աչք Յրք և որտեղ), այլ սիրում էր ապաղաչում խաղաղ ընտանիքի համետ անդամներ լինելու նպատակով— ամուսնանալու նպատակով»: Հեղինակի գրչի տակ Ղարաբաղի պատմական գիւղացիք միմեանց հետ դուրս գալ են խօսում, ինչպէս Ռուշանի քեռի Յհանը և իւզրաշի Սարգիսը:

Հարկաւոր է նկատել, որ վէպի բոլոր անձնաւորութիւնները՝ սկսած հերոսից և հերոսուհուց՝ որոշ բնաւորութեան տիպարներ չեն, այլ հեղինակի քմայց համաձայն պատահական, շինծու խրաւիւղակներ են, որոնք

իրանց դատողութեան ձեռով և զոր-
 ծերով նման են աւելի այժմեան քա-
 ղաքակրթութեան արդեցութեան ներ-
 քոյ բարոյապէս փչացած քաղաքա-
 ցոց, քան թէ Ղարաբաղի պատմա-
 կան գիւղացոց. այդպէս են Ռուշանի
 քեռի Յհանը, իւզբաշի Սարգիսը,
 Ռուշանի մայրը, Խաթալի պառաւը:
 Ինչ ասել կուզի, որ հեղինակը չէ
 բացատրում թէ ինչո՞ւ այդ մարդիկ
 բարոյապէս փչացած են. ինչ հիման
 վերաջ Ռուշանի մայրը մէկ կուշտ ու
 կուպիտ, զգացում և դուժ չ'ունեցող
 գիւղացի կին է, իսկ նորա որդի
 Ռուշանը՝ սնւած ու մեծացած նոյն
 գիւղական շրջանումը՝ 19-րդ դարու
 լրագրական լեզուով ճամբարտակող մէկ
 երիտասարդ է. և վերջապէս ինչ
 պատմական փաստի վերաջ հիմնելով
 հեղինակը մէկ խեղճ գիւղացի կնոջ
 բերան է դնում օժիտի մասին աջակիտի
 խօսքեր, որոնք չատուկ են Տփիսիսի
 մօցիքուլներին: Հաջ գիւղացիին, լինի
 նա այդ թէ կին, ոչ միայն անցեա-
 լումէ, այլ և ներկայումս՝ իրան սահ-
 մանափակ գլխով, նախապաշարում-
 ներով և աւանդական սովորութիւննե-
 րով հանդերձ՝ աւելի ճիշդ և բարոյա-
 կան գաղափար ունի ամուսնութեան
 վերաջ թէ տնտեսական և թէ գե-
 ղեցկութեան ճաշակի կողմից, քան
 թէ պ. Միրզա Տէր-Սարգսեանցը մեկ
 ներկայացնում է: Յայտնի է, որ տղայի

տէրն է աղջկայ տիրոջը բաշչել տա-
 լիս, որ լինում է ձի, ոչխար, շոր և
 այլն, որովհետեւ աղջիկը հարս դնա-
 րով՝ փեսայի տանը մէկ գլխաւոր
 աշխատաւոր ձեռք է աւելանում. ու-
 բեմն ինքն ըստ ինքեան շատ հաս-
 կանալի է, որ Ռուշանի մայրը չէր
 կարող ցանկանալ որ իւզբաշու «վի-
 մար, գիժ, խելազար և սգեղ» աղ-
 ջիկը իւր հարսն լինի, և վերջապէս
 ճիւղ մայրը կը ցանկաջ աղջկիսի չատկու-
 թիւնների տէր հարսն ունենալ: Գիւ-
 ղացու ամուսնութեան համար անհրա-
 ժեշտ պայմաններից մէկն է և կնոջ
 գեղեցկութիւնը. մանաւանդ իւր հար-
 սի գեղեցկութեանը բծախնդիր է
 փեսայի մայրը: Հաջ գիւղերում և
 մինչև անգամ քաղաքներում որ և իցէ
 կերպով մայրը չի համաձայնիլ, որ
 իւր տղայի կինը սգեղ լինի: Ժողո-
 վուրդը տղայ ունեցող մօրը բարե-
 մաղթութիւններ արած ժամանակ,
 կամենալով նորա սրտին և հոգուն մօտ
 բարիք ցանկալ, ասում է. Աստուած
 քեզ մի սիրուն և հնազանդ հարսի տէր
 անէ: Այդ է հաջ մօր իւր որդու հա-
 մար նորա մանկութիւնից փառաբան
 իրէալներից մէկը. իսկ պ. Միրզա
 Տէր-Սարգսեանցն իւր թքով կայցրած
 և կիսազրազէտ վէպով կամենում է
 ապացուցանել, որ Ղարաբաղի Մ.
 գիւղում հակառակն է եղել:

Մ. Աս.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ՝ «ՓԵՒ-ԿԱՐԱՊԵՏ»։ Վէպ հայ-կաթօլիկների կեանքից։ Հրատարակութիւն «Մուրճ» ամսագրի, Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, գինն է 1 ռուբլի։

ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆՅ՝ «ՏԱՆՏԻԿԻՆ և ԽՈՀԱՆՈՅ»։ Մասն առաջին։ 400-ի շափ տեղական և եւրոպական աժան, համեղ և անփնաս կերակուրներ պատրաստելու եղանակ։ Թիֆլիս, տպար. Մարտիրոսեանցի, 1889 թ. գինն է 1 ռ. 50 կոպ.։

РАФФИ, въ переводѣ И. Вермишева, изданіе Якова Самойлова—«БИ-БИ—ШАРАБАНИ». Этюдъ изъ жизни огнепоклонниковъ въ Персіи. Тиф-лисѣ. Тип. Вартанянцѣ; 1889 г. Цѣна 15 к.

ՏԵՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ Ն.՝ «ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄՍԿԱՆԻ»։ Հրատարակու-թիւն «Աղբիւր» մանկական ամսագրի։ Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1889 թ., գինն է 30 կոպ.։

ՓԻԼՅԵԱՆ Ս.՝ «ԶՐՈՅՅՆԵՐ»։ II մասն, (5-րդ տարւայ դասընթաց) Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1889 թ., գինն է 60 կոպ.։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Կովկասը, ամբողջ Կովկասը պատրաստում է իւր արդիւնաբերական հանճարով փալլել Թիֆլիսի Արդիւնաբերական և Գիւղատնտեսական հանդէսի դաշտում: «Մուրճ»-ը, իւր առաջին իսկ համարից, պարտք համարեց չորդոր կարգալ տեղական ազգաբնակութեան՝ սիրով ընդունել Արդիւնահանդէսի մասնաժողովի հրաւերքը՝ հանդէսին մասնակցելու: Աւելի մեծ պրօպագանդի համար, մեր ամսագիրը, մի քանի համարում շարունակ հրատարակեց Արդիւնահանդէսի ծրագիրը և մասնակցելու պայմանները, դեռ աւելի էլ վաղ, քան վիշեալ մասնաժողովը հրատարակել էր պաշտօնական կերպով:

Աճապարելու պատճառ ունէինք մենք: Այդ մասնաժողովը, որի հոգսը պէտք է լինէր տեղական բոլոր բազմալեզու ազգաբնակութեան ծանօթացնել ծրագրի հետ, չորդորներ կարգալ, զօրեղ պրօպագանդ անել, մի խօսքով, տաքացնել ժողովուրդը, արդիւնաբեր ժողովուրդը առաջադրած մեծ դործի համար, այդ մասնաժողովը իւր, աչսպէս ասած, չաչտարարական դործը կատարած համարեց, տպագրելով ծրագիրը և կանոնները ուսուերէն լեզուով, աչսինքն աչն լեզուով, որը ամենից քիչն են հասկանում երկրիս արդիւնաբեր ազգաբնակութեան ամենամեծ մասը: Միւս լեզուների համար մասնաժողովը բարեհաճել էր չատկացնել մի որոշ գումար, որպէս ղի թարգմանութիւն տպողը ներկայացնէ մասնաժողովին աչսքան ու աչսքան օրինակ և ստանալ ամեն մի օրինակի համար աչսքան ու աչսքան կոպէկ: Նւ դեռ աչդ որոշումն էլ արել էր մասնաժողովը իւր մէջ, առանց չաչտարարելու: Նւ ահա թէ ինչպէս կարող էր պատահել, որ երկրիս հալական ազգաբնակութիւնը, աչսինքն երեկ թէ երկրիս ամենաարդիւնաբեր և ամենալաճառաչահ ազգաբնակութիւնը, չ'ունեցաւ ծրագրի և կանոնների հալերէն թարգմանութիւնը առանձին հրատարակութեամբ՝ մասնաժողովից մատակարարւած: Ուրեմն կարգալից մասնաժողովը չի կարելի անել՝ թէ մի առանձին և մինչև իսկ սովորական հաճելութիւն ցոյց

տւած լինէր և նոյն խօսի հասարակ քաղաքապարտութիւն բանեցրած լինէր հալ արդիւնաբերողների վերաբերութեամբ: Այլ հանգամանքը, որքան էլ չնչին երևալ կամ չնչին ուղեման երևացնել, արժանաւորութիւն ունի վկաւելլու կարգադրիչ մասնաժողովի ձեռնհասութեան աստիճանը մի արդիւնահանդէս սարքելու գործում:

Բայց այս հանգամանքը ես չը լիշատակեցի նորա համար, որ իբր թէ ես դուշակում եմ նորաբաց Արդիւնահանդէսի անչաջողութիւնը: Ամենին ոչ: Նա բոլորովին չոյս ունիմ, որ բոլոր այցելուները պէտք է վկայեն, որ ներկալ թւականի Աովկասեան Արդիւնահանդէսը ղեռ աւելի էլ բան է ներկայացնում, քան ինչ կարելի էր սպասել: Մենք լաւ առիթ կ'ունենանք աչքով տեսնելու Աովկասեան քաջ ժողովուրդների քրտինքով վաստակածը առհասարակ և մի պատուական առիթ՝ տեսնելու հալ ժողովուրդի արդիւնաբերական հանճարը—համեմատաբար ալլազգիների հետ:

Օգոստոսի 1-ից, Անդրկովկասեան երկաթուղին, այլ երկաթուղու ընկերութեան ձեռքից անցաւ տէրութեան ձեռքը: Պետական դանձարանը դնեց ընկերութիւնից երկաթուղին: Ըստ երևութիւն, հասարակութեանը ինչ, թէ երկաթուղին ունի է պատկանում՝ կապիտալիստների մի ընկերութեան, թէ պետական դանձարանին: Նրկու գէպքերումն էլ շոգեքարչը դնալ-գալու է և նոյն պաշտօններն է կատարելու, ինչ որ մինչ այժմ նա կատարել է: Բայց իրապէս երկաթուղիների ում ձեռքում լինելու խնդիրը մի մեծ խնդիր է: Նա նա մի շատ մեծ տեղ է բռնում բոլոր լուսաւորւած երկիրների մամուլի մէջ, այն մամուլի, որը կոչւած է հասարակաց շահերը պաշտպանելու: Որպէս շատ ուրիշ խնդիրներ, նաև երկաթուղակին գործը ունի կատուկ գրականութիւն և այն էլ շատ ընդարձակ գրականութիւն: Նա չեմ խօսում երկաթուղի շինելու արհեստի մասին, որը տեխնիկի գործ է. ես խօսում եմ խնդրի հասարակական նշանակութեան մասին, որի շնորհիւ նա տէրութիւնների ներքին քաղաքականութեան խնդիրներից մէկն է կազմում և, որպէս այլպիսին, պետական գիտութիւնների, քաղաքականութեան և քաղաքա-տնտեսութեան գիտութիւնների առարկաներից մէկն է:

Երկաթուղիների շինում է և կառավարում կամ ինքը տէրութիւնը և կամ մասնաւոր անձերի մի ընկերութիւն: Այս վերջին գէպքում, ընկերութիւնը կամ վերցնում է բոլոր Ֆինանսական պատասխանատուութիւնը իւր վերալ և կամ պալմանաւորում է տէրութեան հետ, որ սա երաշխաւորէ ընկերութեանը մինչ մի որոշ սահմանի զուտ արդիւնքը, գործադրած դրամազլխի որոշ տոկոսը, օրինակ՝ 5 կամ 6 տոկոսը:

Անգլիայում, որը ի բնէ մասնաւոր ձեռնարկութիւնների հայրենիքն

է, երկաթուղիները մասնաւոր ընկերութիւնների ձեռքումն են. Փրանսիական երկաթուղիների ամենակարևոր և մեծ գծերը շինւել են և կառավարում են նմանապէս մասնաւոր ընկերութիւնների ձեռքով, բայց տէրութեան երաշխաւորութիւնով. Գերմանիայում, չառկապէս Պրուսիայում, երկաթուղային գործը եղել է և է գլխաւորապէս տէրութեան գործ և ոչ մասնաւոր ընկերութիւնների, կապիտալիստների. Ռուսիայում երկաթուղիները մեծ մասով մասնաւոր ընկերութիւններն են կառուցել՝ տէրութեան երաշխաւորութիւնով:

Գարուս այն թւականներում, երբ կապիտալը նոր-նոր սկսեց ուժ տառնալ և երբ նա հասցրեց իւր ուժը մինչ այն աստիճանի, որի առջև կառավարութիւնները գլուխ էին խոնարհում, այդ թւականներում երկաթուղային վերին աստիճանի արդիւնաւէտ գործը դժւար էր կորզել կապիտալիստ դասակարգի, բուրժուազիայի ձեռքից: Որովհետև կապիտալը հրաշքներ էր գործում և բոլոր լուսաւորած երկիրները իրանց կերպարանքը հիմնովին փոխեցին նոր ծնունդ առած ինդուստրիալիզմով, այդ երկիրներում նաև քաղաքական ուժը կենդրոնացաւ այն դասակարգի ձեռքում, որը իւր ձեռքումն ունէր ինդուստրիան կամ գործարանականութիւնը: Երբ զանազան երկիրներ, մէկը միւսի վետեից, ստացան սահմանադրութիւններ, ամեն բան պէտք է ըղիւէր ազգից ընտրւած պատգամաւորների ժողովից և կամ անցնէր ստրա միջով՝ ինչ խօսք, որ նաև երկրի օրէնսդրութիւնը ընկաւ ուժեղ կապիտալիստ դասակարգի ձեռքը: Երկաթուղային գործը, որը պահանջում էր ոչ միայն միլիոններ, այլ և միլիարդներ՝ ընկաւ կապիտալիստների ձեռքը: Տէրութիւնները պահպանեցին իրանց բարձրագոյն իրաւունքները՝ հսկողութիւն անելու, տակաւներ նշանակելու. որոշ պայմաններով և այլն, բայց ստիպւեցին, որքան հնարաւոր է, զիջանել կապիտալիստ ընկերութիւնների օգտին:

Իրողութեան և պատմական անհրաժեշտութեան ծանրութիւնը զգացին նաև այն գիտութիւնները, որոնց սֆերի մէջ մտնում է երկաթուղային ինդիւրը: Հազար ու մէկ արգումենտներ բերին չօգուտ այն թեզի սի, թէ այդ գործը աւելի ձեռնտու է և աւելի լաւ է տալ մասնաւոր մարդկանց ձեռքը՝ իբր թէ դոքա աւելի լաւ են շինում ամեն բան, քան ինքը տէրութիւնը:

Մասնաւոր ընկերութիւնները, մինչ վերջին տասնեակ տարին, դեռ ամենակարող էին: Բայց երբ երկաթուղային գծերի ամենակարևոր մասերը շինւած վերջացած էին, տէրութիւնները օգուտ քաղեցին՝ իրանց իրաւունքները աւելի զօրեղ կերպով բանացնելու, տէրութիւնների միջամտութիւնը աւելի շօշափելի կերպարանք ստացաւ: Ընկերութիւնները իրանց զգացին կապւած երկու ձեռքերով և աչքան ընդդիմադրութիւն չը կարողացան գործ դնել, որպէս առաջ: Տէրութիւնը սկսեց միջամտել տակաւները իջեցնելու համար. նա նշանակեց երթևեկների վերաջ հարկեր և այլն և, որ գլխա-

ւորն է, ընկերութիւնների հաշիւների վերայ աւելի մեծ հսկողութիւն մտցրեց. չէ որ տէրութիւնն էր պատասխանատու որոշ զուտ արդիւնքի համար:

Այս բոլորը բնականապէս դժարացրեց մասնաւոր ընկերութիւնների գործը. իսկ միւս կողմից այն գաղափարը, թէ տէրութիւնը ինքը կարող է երկաթուղային գծերը թէ շինել և թէ կառավարել, — աւելի ու աւելի քաղթող հանդիսացաւ: Թէօրիալից աւելի ուժեղ կերպով ազդեց օրինակը և այդ օրինակը տւեց մանաւանդ Պրուսիան, ուր երկաթուղիները մեծ մասով տէրութեան ձեռքով և՛ շինւած են և՛ կառավարւում են: Բայց նոքա շինւած են ու կառավարւում են ամեն կողմից օրինակելի կերպով: Այն ժամանակից, երբ մանաւանդ իշխան Բիսմարկը մտցրեց՝ այսպէս կոչւած՝ «պետական սօցիալիզմը» երկրի ներքին քաղաքականութեան մէջ և ստիպեց միւս տէրութիւններին էլ հետեւել իւր տւած օրինակին, ջախջախելով արդէն փոտութեան հասնող բուրժուազական սոցիալիզմը, որի ներկայացուցիչներն են այսպէս կոչւած «ազատամիտ կուսակցութիւնը» — այդ ժամանակից ի վեր նաև երկաթուղային գործում պրուսական երկաթուղային քաղաքականութիւնը տարածեց Եւրոպայում: Ռուսիան այն եւրոպական երկիրներէն է, ուր ոչ մի կուսակցութիւն դեռ ևս խոր արմատներ չ'ունի պատմութեան մէջ: Եւ այդ է պատճառը, որ ամեն մի տէրութիւն և նոր վարդապետութիւն, որ քարոզւում է մնացեալ Եւրոպայում, շուտով և շատ շուտով ընդունւում է Ռուսիայում: Բիսմարկի պետական սօցիալիզմը, օրինակ, օրէնքները բանւորների վերաբերեալ՝ դժբաղդութիւնների դէպքում, բանւոր ինւալիդների վերաբերեալ և այլն, աւելի մեծ շանս ունեցաւ արձագանք գտնելու ռուսաց օրէնսդրութեան մէջ, քան, օրինակ, Ֆրանսիայում: Նոյնը կարելի է ասել երկաթուղիների մասին: Տէրութիւնը աշխատում է այժմ նորերը շինել իւր հաշուով, դեներալ Աճնենկովը, շինելով Անդրկովկասեան երկաթուղին, մեծապէս նպաստեց չօգուտ տէրունական երկաթուղիների: Տէրութիւնը առնելով Անդրկովկասեան երկաթուղին, առաջնորդւում է նոյն գաղափարով:

Մեր երկրում ինքնաօգնութեան ամեն մի դէպքը հասարակական ինքնաճանաչութեան նշան է: Թիֆլիս քաղաքի ինքնավարութեան նախաձեռնութեամբ, այս վերջին ամիսներս կազմեց կրակից ապահովող մի փոխադարձ ընկերութիւն: Մինչ այժմ Թիֆլիսում և ուրիշ քաղաքներում, որտեղ սոցիալութիւն է մտել աները ապահովել կրակից, բոլորը ապահովւած էին Ռուսիայի ընկերութիւնների մօտ, որոնք գլխաւորապէս Թիֆլիսում ունին իրանց ագենտուրները: Տան արժէքի ամեն մի 1000 ռուբլուն տալով 6—7—8 ռուբլի ապահովութեան համար, տարեկան ահապին

գումարներ էին դուրս գնում մեր երկրի շրջանառութիւնից և մտնում մեր երկրի ինտերեսներէրց հեռու կանգնած մարդկանց զբաղանքերը: Մեր աեղացիների մաքումը էլ չէր անցնում տեղացիներից ընկերութիւններ կազմել՝ օտարներին հարկ տալու անհրաժեշտութիւնից ազատելու համար: Գործից հեռու կանգնելուն նպաստում էր այն հանգամանքը, որ կրակից ապահուող ընկերութիւնները մեծաքանակ միլիոններ ունին որպէս զբամազուխ: Մի՞թէ մեր խելքի և զբաղանի գործն է, մտածում էին մերոնք, 5—10—20 միլիոններով զբամազուխ կազմել՝ մի ալցալսի ընկերութիւն գլուխ բերելու համար:

Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամներից մի քանիսը գեռաւելի էլ խելօք բան առաջարկեցին, քան կազմել տեղական կապիտալիստներից մի ընկերութիւն: Նոքա առաջարկեցին, որ, նախաձեռնութեամբ քաղաքային վարչութեան, կազմել փոխադարձ ապահովութեան մի ընկերութիւն, որի կապիտալը կազմէր ապահովութեան համար տւած փողերից: Ննթադրենք, թէ Թիֆլիսի տները ներկայացնում են հարիւր միլիոն բուբլու արժէք: Ապահովութեան համար եթէ 1000 բուբլուն տան դիցուք 6 բուբլի, ընկերութիւնը կ'ունենա՞ տարեկան 600.000 բուբլի զբամազուխ: Եթէ Թիֆլիսում ալուած տները տարեկան ներկայացնեն 600.000 բուբլու արժէք, կը նշանակէ թէ ընկերութեան զբամազուխը բաւական է իրանց տները ապահովացրած տանտէրերին բաւականութիւն տալու համար:

Իսկ եթէ, ասում էին փոխադարձ ընկերութեան հակառակորդները, ալուած տների արժէքը աւելի լինի, քան ընկերութեան ալը համեմատապէս չնչին զբամազուխը, այն ժամանակ ո՞վ պիտի վճարէ մլասը: Գորա պատասխանը սա է, որ այն, ինչ վեր կը լինի ընկերութեան կարողութիւնից, ալը կը վճարէ մի որ և իցէ ուրիշ, աւելի հարուստ ընկերութիւն, որի հետ Թիֆլիսի ընկերութիւնը նպատակաւարմար պայման կը կապէ: Բանը սա է, որ նոյն իսկ Մօսկուայի, Պետերբուրգի ընկերութիւնները, որոնց զբամազուխները գործին անտեղեակներին աչքերը չլացնում են, այնքան հարուստ չեն, որ կարողանան, դժբաղդ դէպքում, իրանց վերաջ առած սարտաւորութիւնները կատարել: Նոցանից ապահովացրած տների արժէքը անհամեմատ աւելի մեծ է, քան նոցա զբամազուխը: Ալը զբամազուխը հաղիւ հազ հասնում է ապահովացրած տների արժէքի չնչին տոկոսին: Ալը պատճառով, նոյն իսկ հարուստ համարւած ուռս ընկերութիւնները ստիպւած են իրանց մօտ ապահովացրած տները կրկին ապահովացնել մի որ և է աւելի հարուստ և աւելի հաստատ արտասահմանեան ընկերութեան մօտ, որին վճարում են մի որոշ տոկոս իրանց ստացած ապահովական պրեմիաներից: Ուրեմն, մտածեցին Թիֆլիսի փոխադարձ ապահովութեան ընկերութեան ինիցիատօրները, և թէ նոյն իսկ ուռսաց մալաքաղաքները մեծ կապիտալիստական ընկերութիւնները հարկ

են տեսնում մի սրտչ հարկ վճարել արտասահմանեան ընկերութիւններին, ինչո՞ւ թիֆլիսի փոխադարձ ապահովացման ընկերութիւնը չի կարող դիմել մի ուրիշ իրանից աւելի հարուստ, ընկերութեան, լինի այդ ընկերութիւնը՝ մի ուստական թէ մի արտասահմանեան ընկերութիւն:

Բայց սա էլ մի մեծ խնդիր է, թէ արդեօք նախատեսնում է, որ թիֆլիսի ընկերութիւնը միանգամայն անհրաժեշտ կերպով պարտաւորւած է մի ուրիշ ընկերութեան օգնութեան դիմել թէ ոչ:

Ստատիստիկապէս հաստատւած է, որ թիֆլիս քաղաքի այլւած տների արժէքը շատ աւելի պակաս է, քան այն գումարը, որ վճարած են թիֆլիսի տանտէրերը ապահովացման ընկերութիւններին:

Ուրեմն, եթէ թիֆլիսի բոլոր տները ապահովեն փոխադարձաբար, պէտք է որ դրացած գումարը շատ դերազանցէ թիֆլիսում ալրւելիք տների արժէքին:

Այս գաղափարը, սակայն, փոխադարձաբար իրար տները ապահովել թիֆլիսում չէ ծնւել. Ռուսաստանի շատ քաղաքներում նա արդէն դործադրել է: Աստիտալիտական մեծ ընկերութիւնները, այդ նորութեան մէջ իրանց գոյութեան համար փոանգ նշմարելով, խօսք կապեցին թըշ նամաբար վարւել փոխադարձ ապահովացման ընկերութիւններին դէմ: Նոքա վճռեցին չ'ընդունել փոխադարձ ապահովացման ընկերութիւններին առաջարկութիւնը՝ վերաապահովացնել նոցա մօտ քաղաքային տները: Բայց նրանց չը չաջողեց արդելք լինել համակրելի և առողջ գաղափարի իրադործման. փոխադարձ ընկերութիւնները վճռեցին չը դիմել մեծ ընկերութիւններին և սոքա, տեսնելով մօտալուտ մեծ վտանգը, լետոյ իրանք սկսեցին գրեթէ աղաչել, որ իրանց մօտ վերաապահովացնեն: Յօս ունենանք, որ թիֆլիսի տանտէրերը իրանց հասարակաց օգուտը կը հասկանան և դորանով մեր միւս քաղաքներին լաւ օրինակ տւած կը լինին: Եւ մեր այդ միւս քաղաքները կը շտապեն օգուտել տւած օրինակից: Յուսով ենք: Թերևս «Մուրճ»-ը այդ խնդրով մօտ ապագայում աւելի լուրջ կերպով զբաղւի, նւիրելով այդ խնդրին մի առանձին չօղւած, որի մէջ գուրս բերւած կը լինին խնդրին վերաբերելի թէ թւանշանները և թէ կանոնները:

Ներկայ տարւայ ամառը Անդրկովկասը երեք նշանաւոր հիւրեր ունեցաւ. մի թագաւոր, մի բանատեղծ, մի քաղաքական թղթակից՝ Նասր-էզզին Շահը, Ռաֆայէլ Պատկանեանը, Ֆիլիք-Ջերալդը—թղթակիցը անգլիական ազատամիտ կուսակցութեան գլխաւոր օրդան «Դէլլի-Նիւս»-ի: Այդ երեք ճանապարհորդներին ներկայութիւնը մեր երկրում թողեց լաւ սպաւորութիւն մեր ժողովուրդի վերայ: Նասր-էզզին Շահին ամեն տեղ ուղեկցում էին ոչ միայն նորա հպատակները, այլ գրականապէս բոլոր ազգութիւնները բարի ցանկութիւնները և սրտանց ողջոյնները. Այս երրորդ ան-

դամն է, որ պարսկց թագաւորը սուր է դնում իւր երկրից դուրս: Անկա-
կած է, որ ամեն անգամ նա իւր հետ տարել է Եւրոպայից մի որ և իցէ
նոր դիտաւորութիւն, մի դադարիար, մի զգացմունք: Այն ընդունելութիւն-
ները, որ Շահը գտաւ թէ Ռուսիայի և թէ Արտասահմանի մայրաքաղաք-
ներում, վրաւի նշանաւոր էին: Հերթով ամենափերջին ընդունելութիւնը՝
հալկականն էր, Վահախառ Կաթուղիկաւի մօտ, Էջմիածնում, որ ներկայ
Շահը երկրորդ անգամն է ալցելում:

Ռաֆայէլ Պատկանեանը այս անգամ, պէտք է անած, շատ աւելի
նւազ նկատելի եղաւ, դոնէ թիֆլիսում, քան 1887 թւականին: Բաւց բա-
նաստեղծի մեզ մօտ երեւալը թէ այն և թէ այս անգամ երևուլթ էր՝ իւր
նշանակութիւնով սովորականից դուրս: Նորա անունը, կից նորա վերին
աստիճանի արտապաշտիչ զէմքի պծազրութիւնների և առհասարակ արտա-
քինի հետ, զօրեղ տպաւորութիւն են գործում մանաւանդ հասարակաց
տեղերում: Այն երեկոն, երբ նա թիֆլիսի ժողովարանումն էր, կարելի էր
ամենայն իրաւամբ Պատկանեանի երեկոյ անուանել. նա անում էր ընդհա-
նուրի վերաջ մի մեծ հիւրի ապաւորութիւնը: Պատկանեանը ամեն անգամ,
երբ մեզ մօտ է գալլիս, Էջմիածնի ուխտաւոր է: Նա երբէք ոչ դատարկ
գնում է և ոչ դատարկ դուրս գալլիս: Անցեալ 1887-ին նա աչնտեղի թան-
գարանին տարաւ նւիրեց, կարծեմ, իւր մի ալբոմը, չօրէլեանին ստացած,
իսկ այս անգամ իմացուց, որ Վահախառից հաճութիւն է ստացել ստորա-
գրութիւն բանալու, որ ազգովին մի նոր սան (մեռօն ելիկու կաթսա)
պարգևի էջմիածնին:

Իսկ ինչ վերաբերում է մեր անգլիական հիւր Ֆից-Ջերալդին, չափ-
նի է թէ ինչ պատմական նշանակութիւն ստացան նորա մերկացումները.
Բօլզարիացում կատարած տաճկական բարբարոսութիւնների 1877 թւա-
կանին անգլիական «Իէլլի-Նիւս» թերթի էջերում: Ֆից-Ջերալդը այս անգամ,
ուրեմն առաջինից 13 տարի փտոյ, դնաց ոչ թէ Բօլզարիա, այլ Տաճկա-
Հալաստան: Նա վերադարձաւ Ալէքսանդրօպօլի և թիֆլիսի միջով, Կ. Պօ-
լլիս գնալու համար, ուր նա պէտք է սպասէ Մուսա-բէլի և ընկերութեան
գործի վախճանին:

ԼՈՒՍԻՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւրոպայի քաղաքական դրութիւնը խաղաղ չէ: Եռապետեան միութիւնը Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի և Ռուսիայի մէջ դառել է այժմ մի նոր Փակտոր եւրոպական միջազգային քաղաքականութեան: Բիւսմարկը, գերմանական մեծ ու փոքր տէրութիւնները ի մի ձուլելուց և գերմանական կայսերութիւնը ստեղծելուց յետոյ, յաջողեց նոյն այդ գերմանական կայսերութեան արտաքին քաղաքականութեանը ենթարկել Աւստրո-Ունգարիային և Ռուսիային, զինւորական դաշինքներ կապելով այդ երկու պետութիւնների հետ: Եւ որովհետև այդ երեք պետութիւններից զօրեղագոյնը Գերմանիան է, կատարած սխրագործութիւնների պրեստիժը նոյն Գերմանիայինն է, և քաղաքական հանճարը պատկանում է նոյն այդ գերմանական կայսերութեան ստեղծող Բիւսմարկին, ուստի հաստատ պէտք է ընդունել, որ քաղաքական խնդիրներում տօն տալը վերապահած է Բիւսմարկին, որի անձնաւորութիւնը ինքը մի գրաւական է կապած դաշինքների հաստատութեան և գործնական բնաւորութեան:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ, շնորհիւ Բիւսմարկի քաղաքական հանճարի, Եւրոպայի սրտում կազմւել է մի տեսակ նոր պետութիւն՝ բաղկացած երեք մարմիններից, բայց որոնց արտաքին քաղաքականութեան ղեկավարը հանդիսանում է մի միակ անձնաւորութիւն:

Այդ իրողութեան ծանրութիւնը իրան զգացնել է տալիս ամեն մի խնդրում, ամեն քայլափոխում: Զր պէտք է կարծել, թէ այդ եռապետեան միութիւնը նշանակութիւն պիտի ստանայ միմիայն պատերազմի դէպքում: Ոչ: Երբ երեք մեծ պետութիւններ իրար հետ պատերազմական միութիւններ են կապում, պէտք է ենթադրել, որ

միութիւնը կայացնելուց առաջ, նոքա հաշուել են դաշնակիցների ձգտումների և ղիտաւորութիւնների հետ առհասարակ և որ նոքա խօսք են տւել չը կատարել ոչ մի բան, որ կարող լինի դաշնակցին փնասել թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ: Նոքա, այդ երեք պետութիւնները, կապւելով իրար հետ պատերազմի ժամանակ իրար օգնելու համար, անկարելի է որ խաղաղ ժամանակներում թոյլ տան իրանց այնպիսի վարմունք, որը որ և է կերպով սառեցնէր դաշնակցին: Մի՞թէ, օրինակ, Գերմանիան իրան թոյլ կը տայ այնքան մօտենալ Պապին, որ դորանից նեղանայ իտալական կառավարութիւնը, եթէ մինչև անգամ Ետալիայի և Գերմանիայի մէջ կապած դաշինքի մէջ ոչ մի խօսք չը լինի Պապի մասին:

Ասելը այն է, որ կապած դաշինքների պարագրաֆները ղեռ ևս չեն սահմանում այդ երեք պետութիւնների մէջ կապած համաձայնութեան չափը և որ նոցա ձեռք ձեռքի տալու սահմանը աւելի հեռու է, աւելի ընդարձակ, քան դաշինքների բնազիրը թոյլ է տալիս ենթադրելու:

Ուրեմն, եթէ այդ այդպէս է, եթէ այդ երեք պետութիւնների մէջ կայ ոչ միայն պատերազմական դաշինք, այլ և բարեկամութիւն, մի՞թէ նոցանից իւրաքանչիւրը չը պիտի աշխատէ այդ բարեկամութիւնից օգուտներ քաղել խաղաղութեան ժամանակ: Պարզ է և շատ պարզ, որ այժմ ոչ մի պետութեան համար պատերազմը նպատակ չի կարող լինել և որ, եթէ պատերազմական դաշինքներ են կապւում, այդ անում է ոչ թէ նորա համար, որ իբր թէ վճռւած է պատերազմ սկսելու, այլ նորա համար, որ իրանց ցանկացածը առաջ տանեն խաղաղ միջոցներով. երբ իրանց նպատակին չը հասնեն խաղաղ միջոցներով, այն ժամանակ միայն նոքա ձեռք կը մեկնեն զէնքի եւրոպական որ և է մեծ պետութեան դէմ:

Նստապետեան միութեան գործնական նշանակութիւնը կայանում նորանում, որ դաշնակիցներից իւրաքանչիւրը, իւր արտաքին քաղաքական ձեռնարկութիւնների մէջ, աւելի վստահ կարող է զործել և աւելի քիչ տեղիք կ'ունենայ վախենալու մի ուրիշ տէրութեան ընդդիմադրութիւնից, քան առաջ, երբ այդ միութիւնը չը կար նոցա մէջ:

Մի ուրիշ գործնական նշանակութիւնը այդ միութեան կայս-

նում է նորանում, որ դաշնակիցներից իւրաքանչիւրը կը հետեի արտաքին քաղաքականութեան մէջ այնպիսի նպատակների, որոնք կարող են վնասել միութեանը չը մասնակցող պետութեան շահերին, մինչդեռ իրանք իրար չեն վնասիլ:

Ինչ է դուրս գալիս դորանից. այն, որ, դիցուք Աւստրո-Ունգարիան, իւր քաղաքականութեան մէջ Բալկանեան թերակղզում ապահոված է Գերմանիայի և Ռուսիայի կողմերից՝ շնորհիւ փոխադարձ բարեկամութեան, և ապահոված է, որ մի ուրիշ տէրութիւն առաջնայ չափով ընդդիմադրութիւն չի անիլ իրան շնորհիւ իւր ոյժի. ոյժ, որը ոչ միայն Աւստրո-Ունգարիայինն է, այլ այդ ոյժի հետ միացրած նաև Գերմանիայի և Ռուսիայի ոյժերը:

Այդ հանգամանքի մէջն է, որ կայանում է սպառնալիքը եռապետեան դաշնակցութեան կողմից: Մենք բոլորովին հաւատացած ենք, որ այդ եռապետեան դաշնակցութիւնը, որ ժառանգութեան լիզայիս (միութեան) անունն է կրում, իսկ որ պատերազմ չի որոնում. որովհետև այդ եռապետեան ոյժով դաշնակիցներից իւրաքանչիւրը կարող է այնպիսի հետեանքների հասնել, որ յաջող պատերազմով անգամ ձեռք բերել դժւարին է: Բայց այդ խաղաղ քաղաքականութիւնը միմիայն նորանից է, որ նա ծանրակշիռ է, ճշնող է, իւր դիմաց հաւասար ոյժ չի տեսնում:

Մենք վկայում ենք այն, ինչ կայ և ոչ թէ այն, ինչ մեզ հաճելի է: Արդ, ցաւելով պէտք է վկայենք և այս, որ եռապետեան դաշնակցութեան ամենամեծ ծանրութիւնը զգում են ոչ թէ այդ դաշնակցութիւններից դուրս պետութիւնները, այլ ամենից առաջ Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի մանր ազգութիւնները՝ չէտերը և Սլաւեան ազգերը առհասարակ, լեհերը, Ելզաս-Լոթրինգացիք, դանիացիք, Աւստրիայի իտալական ազգաբնակիչութիւնը և այլն:

Իսկ մի վերջին աստիճանի նկատելու արժանի կէտ է, որը ունի նաև այն ընդհանուր նշանակութիւնը, որ եռապետեան դաշնակցութիւնը մենք ոչ մի կերպով նպաստաւոր չենք կարող համարել ոչ միայն Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի մանր ազգութիւնների քաղաքական զարգացման, այլ նպաստաւոր չենք համարում առհասարակ բոլոր մանր ազգութիւնների քաղաքական զարգացման, դոցա թւում նաև յոյներին: Մենք այս վերջիններիս առանձնապէս ենք

յիշատակում ան պատճառով, որ յոյների համար նորերումն ծագեց կրէտական խնդիրը: Եւ այդ խնդրի բնական ընթացքի վերայ ոչ երկրորդական դեր է խաղում եռասպետեան դաշնակցութեան բնաւորութիւնը և բռնած զիրքը զէպի ճանց ազգութիւնները առհասարակ:

Դոցանից մենք կարող ենք շոշափել միայն կրէտականը, բայց նախ տեսնենք թէ հպատակ մանր ազգութիւնների քաղաքական դրութիւնը ինչով է ճնշւած Գերմանիայում ու Աւստրո-Ունգարիայում՝ շնորհիւ եռասպետեան դաշնակցութեան: Աւստրիայի իտալական սահմանին կից կայ իտալական ազգաբնակութիւն, որի կենդրոնը Տրիէստ քաղաքն է: Այդ կտոր հողը Իտալիայի հետ միացնելը կազմում է իտալական հայրենասէրների և նոյն իսկ տէրութեան ձրգտումներից մէկը: Փանի Աւստրո-Ունգարիան դաշնակից չէր Գերմանիային, Իտալիան միշտ ցոյցեր էր անում յօգուտ այդ իտալացիների. բայց երբ դաշնակցութիւնը կատարւեց և մանաւանդ երբ Իտալիան ինքը մտաւ այդ դաշնակցութեան մէջ, բնական է, որ Իտալիայի քաղաքական ղեկավարների ծրագրից պիտի դուրս զցւէր այդ կէտը:

Ելլաս-Լօթրինգացիք, անկասկած է, որ ունին Փրանսիական հայրենասիրութիւն: Երբ Փրանսիայի դիմաց միմիայն Գերմանիան էր, անգաղար ցոյցեր էին անում այդ երկու նահանգները կրկին յետ դարձնելու գաղափարի համար: Բայց երբ կապւեց Գերմանական-Աւստրո-Ունգարական դաշնակցութիւնը, Գերմանիան դառաւ Փրանսիայի համար աւելի հարկու. իսկ երբ այդ դաշնակցութեան մէջ մտաւ Իտալիան էլ, Փրանսիան, իւր զէմն ունենալով Գերմանիային, բայց արդէն դաշնակիցներով, սկսեց աւելի զգոյշ վարւել Ելլաս-Լօթրինգի նկատմամբ: Իսկ Գերմանիան, իրան աւելի ուժեղ զգալով, սկսեց մտցնել այդ երկրում անպիսի խտութիւններ և հակաֆրանսիական կարգ ու կանոններ, որ առաջ չէր մտցնում, վախենալով որ դորանով կը բորբոքի Փրանսիացիներին և քաղաքական մեծ դեմոնստրացիաների տեղիք կը տայ: Այժմ Գերմանիան անչափով չի վախենում Փրանսիական դեմոնստրացիաներից, որովհետև ինքը Փրանսիան վախենում է առաջւայ պէս ցոյցեր անել ընդդէմ Գերմանիայի: Այդպիսով Ելլաս-Լօթրինգացիք աւելի են մասնւած գերմանական ճնշումին, քան առաջ: Իսկ Գերմանիան օգուտում է

դորանից, որ, երկիրը գերմանացնելու մտքով, կարգ ու կանոններ մտցնէ այդ երկիրը: Ի միջի այլոց, Գերմանիան մոցրեց անցաթուղթի սիստեմը, որով Ֆրանսիացիների ազատ մուտքը Էլզաս-Լոթրինգիա վերին աստիճանի դժւարացրած է:

Չէխերի դուռթիւնը Աւստրիայում աւելի դժւարացել է, քան մի քանի տարի առաջ: Աւստրիայի գերմանացիների ձայնը չէխերի դէմ աւելի զօրեղացել է Գերմանական-Աւստրիական-Ունգարական դաշնակցութիւն կապելուց դէսը, մանաւանդ այս վերջին տարին: Հէնց նորերումս փակեց Պրագայում չէխական ընթերցարանը՝ իւր մասնակցութեան համար Պարիզում կատարած ուսանողական հանդէսին: Մի խօսքով, Աւստրո-Ունգարական առաջին մինիստր Կոմս Տաաֆէի քաղաքականութիւնը, որ սկսել է 10 տարուց առաջ, այժմ տկար պէտք է զգայ այն ազդեցութեան շնորհիւ, որ ունի Գերմանիան Աւստրիայում, շնորհիւ «խաղաղութեան լիգայի» կազմակերպւելուն:

Այսպիսով ուրեմն մենք տեսնում ենք, որ եռապետեան դաշնակցութեան հետեւանքների ծանրութիւնը ամենից առաջ ընկնում է նոյն այդ դաշնակից երկիրների մանր ազգութիւնների վերայ: Եւ այդ ծանրութիւնը, ըստ մեզ, պէտք է զգան բոլոր մանր ազգութիւնները առհասարակ, հէնց նոյն իսկ եռապետեան միութեան այդ առանձնաչատկութեան պատճառով:

Բայց միւս մանր ազգութիւնների համար դորա վերայ աւելանում են նաև ընդհանուր քաղաքական հանգամանքներ՝ աննպաստ այդ ազգերի համար: Մեր խօսքը Կրէտա կղզու յոյների խնդրի մասին է: Աշխատենք Կրէտայի դէպքը լուսաբանել:

Կրէտա կղզին Յունաստանի դիմաց Միջերկրական ծովի մեծ կղզիներից մէկն է և պատկանում է Թիւրքիային: Յոյների ձգտումը այդ կղզում ոչնչով չի զանազանւում միւս տեղերի յունական ձգտումներից. նոքա, այդ տեղի յոյները, միշտ ձգտել են միանալ Յունաստանի հետ, բայց ամենից առաջ աշխատել են ինքնավարութիւն ստանալ Թիւրքիայից:

Կղզին ունի 255 կիլոմետր (կիլոմետրը հաւասար է մօտ մի վերստի) երկարութիւն և միայն 12—15 կիլոմետր լայնութիւն: Ազգաբնակչութիւնը մեծ մասամբ յոյներ են, որոնց մէջ ազատութիւն սիրող Սֆա-

կեցիք, կղզու հարաւ-արեւմտեան մասում են բնակուում: 67 թւակա-
նին Քրիստոսից յետոյ այդ կղզին դառաւ հռովմէական, իսկ յետոյ
մէկը միւսից յետոյ ընդունեց յունական, արաբական (823 թ.), կրկին
յունական (961 թ.), ջենովական, վենեցիական իշխանութիւն. 1668
թւականից դէսը նա տաճկական է: 1858 թւականից, բայց մանա-
ւանդ 1866—1868 թւականներին, կղզու յոյները վարեցին Օսմա-
նեան կայսերութեան դէմ ազատութեան կատաղի կռիւ, օգնութիւն
ստանալով ցամաքային յոյներից: Տաճկաց կառավարութիւնը կա-
րողացաւ խաղաղացնել միմիայն զիջումներ անելով: Երկրին
արեւց ինքնավարութիւն, մի տեսակ պատգամաւորի ժողով,
թուրք և յոյն պատգամաւորներից բաղկացած. կղզու գեներ-
ալ-նահանգապետը պիտի նշանակէր քրիստոնեաներից, տաճկաց
ծառայութեան մէջ քրիստոնեաները ստացան մի քանի արտօնու-
թիւններ և այլն:

Կրէտա կղզու յոյները, չընայած իւր արտօնութիւններին, արգէն
այն պատճառով, որ թիւրքերի իշխանութեան ներքոյ են, թիւրք
ազգաբնակութեան կողմից ապահովւած չեն: Թիւրքերի ազգաբնա-
կութիւնը նեղում է յոյներին, յարձակելով գիւղերի վերայ, կողպ-
տելով ժողովուրդը և այլն:

Ահա, այգպիսի արարմունքների դէմ բողոքելու համար է, որ
Կրէտայի մէջ վերջին ամիսները յուզմունք է տիրում, յուզմունք,
որ ստացաւ իսկական ապստամբութեան բնաւորութիւն:

Մենք մինչև այժմ հաստատ չը կարողացանք իմանալ,
թէ ո՛ր աստիճանի ճիշդ են այն փաստերը, որ բեր-
ւում են յոյների կողմից թիւրքերի դէմ: Բայց զլիւարը սա
է, որ տեղական յոյն ազգաբնակութիւնը դրական ձգտում ունի
միանալու ցամաքային Յունաստանի հետ և որ նա չի ուզում մնալ
թիւրքական իշխանութեան ներքոյ: Արգէն բաւական է ասել, որ
Կրէտա կղզում, տեղական իշխանութեան ներքոյ, տեղացիք ոչ մի
առաջադիմութիւն չեն անում, յետ են մնում լուսաւորութեան բա-
րիքներից, արհեստները և աւելուրը ընկած դրութեան մէջ են և
որ տեղացիներին տւած ինքնավարական արտօնութիւնները բաւակա-
նութիւն չեն տալիս ժողովրդի պահանջներին:

Որպէս քաղաքական ազատութեան և իւր մայր հայրենիքի

հետ միանալու ձգտող—Կրէտացի յոյն ազգաբնակութիւնը ընդհանրապէս չ'ունի իւր դէմ թշնամիներ Եւրոպացուս: Միւս կողմից Բարձր Դուան ջանքերը՝ ջրել յոյների կողմից առաջ բերած իրողութիւնները՝ գտնոււմ են Եւրոպացի հասարակաց կարծիքի մէջ անտարբերութիւն. որովհետև ամենքը համոզուած են, որ այստեղ լինելիքը մի քանի դէպքերի եղած կամ չ'եղած լինելու մէջը չէ: Թիւրքիացի անցեալը շատ և շատ վատ է, այնպէս որ նորա խօսքերը, լինեն նոքա մինչև անգամ շատ ճշմարիտ,—բայց այդ էլ անսպասելի է,—իրան չեն արդարացնում ոչ ոքի աչքում:

Բայց ընդհանուր կարծիքը և համակրութիւնը կամ հակակրութիւնը Եւրոպացի կողմից դէպի մի ժողովուրդ և դէպի մի պետութիւն՝ դեռ ևս միակ որոշող ֆակտորը չեն եւրոպական քաղաքականութեան: Եւրոպան չը խրախուսեց Կրէտացի յոյների ապստամբական շարժումը. նա չը պաշտպանեց յոյների դատը, չը յարգեց Յունաստանի կառավարութեան բողոքը և ընդունեց թիւրք կառավարութեան տեսակէտը: Եւրոպան, մի խօսքով, չ'ուզեց զորանից «խնդիր» շինել:

Ինչո՞ւ:—Որովհետև դա առիթ կը տար պատերազմի, նախ Թիւրքիացի և Յունաստանի մէջ, յետոյ առհասարակ Բալկանեան թերակղզում կը լինէին շիթթութիւններ, իսկ այստեղից բոցը կը բռնկէր Եւրոպացի վերայ տարածելու սպառնալիքով:

Բայց քանի որ ներկայումս խաղաղութիւն պահպանելը և պատերազմ ծագեցնելը գլխաւորապէս կախուած է եռապետեան դաշնակցութիւնից (Գերմանիա, Աւստրո-Ունգարիա, Իտալիա), ուրեմն Կրէտացիների ապստամբական շարժման պաշտպանութիւնը կամ ոչ պաշտպանութիւնը կախուած է, կարճ ասեմք, Բիսմարկի ցանկութիւնից՝ խաղաղութիւն պահպանել կամ պատերազմի ձգտել, քանի որ Բիսմարկն է եռապետեան դաշնակցութեան ողին:

Արդ, մենք արդէն վերը ասացինք և կրկնում ենք այստեղ, որ Բիսմարկի համար բոլորովին հաշիւ չէ ընդհանուր եւրոպական պատերազմ ծագեցնել այս ամենահասարակ պատճառով, որ շնորհիւ եռապետեան դաշնակցութեան, Գերմանիան այս րոպէիս բռնում է վերին աստիճանի յաջող դիրք թէ դէպի գերմանական ներքին կուսակցութիւնները, թէ դէպի Գերմանիայի մանր ազգու-

Թիւնները, թէ ղէպի Ծրանսիան և ուրիշ տէրութիւններ և թէ վերջապէս այն պատճառով, որ այդ բոլորի շնորհիւ կօլօնիական քաղաքականութեան մէջ օրէցօր յաջողութիւններ է անում, մի տեսակ եօլա գնալով Անգլիայի հետ:

Իաշնակցական երեք պետութիւնների աննպաստ զիրքը ղէպի Կրէտայի յոյները, ուրեմն, հասկանալի է: Իոցանից յետոյ, այդ խընդրում, ամենից կարևոր խօսքը պատկանում էր Անգլիային, որին խընդիրը աւելի էլ մօտ է, քան որ և է ուրիշ մեծ պետութեան: Բայց Անգլիայի այժմեան տօրիական մինիստրութիւնը, լօրդ Սալսբերի՛ի ղեկավարութեամբ, նոյն կերպ վարեց: Ինչո՞ւ: — Անգլիան, բացի ընդհանուր պատերազմի ահից, ունէր մի քանի յատուկ պատճառներ: Կրէտական նորագոյն ապստամբութեան սկզբում կրէտական կոմիտեոը բանակցութիւններ սկսեց Պօլսի բրիտանական դեսպանի հետ. Անգլիան յոյս տածեց, որ Կրէտայի յոյները կը հայցեն Անգլիայի հովանաւորութիւնը (պրօթէկթօրաթ): Բայց հէնց որ Յունաստանի հետ միանալու ձայնը հնչեց, Անգլիան իւր յարաբերութիւնները կտրեց կրէտական կոմիտեոի հետ:

Բայց Անգլիան լրջօրէն չէր մտածում Կրէտայի վերայ հովանաւորութիւն ձեռք բերելու մասին: Նա յիշեց ոչ շատ հեռու ժամանակները, երբ Յոնիական կղզիները նորա հովանաւորութեան ներքոյ էին և որոնց նա ստիպւած զիջանեց Յունաստանին 1863 թ.: «Քայմա» անգլիական թերթը ուղղակի յայտնեց հետևեալը. «Անգլիան չը պիտի զրաւէ Կրէտան. դորանով նա աւելի էլ կը բորբոքէր Ծրանսիայի նախանձը. և ի՞նչ վաստակեց Անգլիան Յոնիական կղզիներից, բացի յոյների անշընորհակալութիւնից»:

Լօրդ Սալսբերին մի ճառում, որտեղ նա աշխատում էր հերքել Քլադստօնի իրլանդական քաղաքականութիւնը, Կրէտացիների շարժումը բերեց իբր օրինակ, թէ ինչպէս մի ժողովուրդ ինքնավարութիւն ստանալով, ձգտում է ղէպի անկախութիւն: Ինչ խօսք, որ մի մինիստր, որը Կրէտայի առիթով Իրլանդիայի մասին է մտածում, այն Իրլանդիայի, որին նա ճնշւած պահել է ուզում, Կրէտայի ազատական շարժման էլ ղէմ կը կենայ:

Այդպիսով, ուրեմն, Անգլիան էլ յետ քաշեց ինդրից և պաշտ-

պանեց Կրէտայի համար status quo, այսինքն առաջւայ եղածը, առաջւայ կարգ ու կանոնը:

Կրէտայի յոյների դատը աւելի սրտի մօտիկ առան Ռուսիան և Ֆրանսիան, որոնց ձեռք ձեռքի տւած զնալը պարտաւորում է եռապետեան դաշնակցութեան զոյութիւնը: Որքան յայտնի է, Ռուսիան, առանց ցանկանալու Կրէտական խնդիր յարուցանել, առաջարկեց ընթացիկներ մտցնել այդ կղզու կառավարչութեան մէջ, իբր պատասխան թուրքական նօտային՝ ուղղած մեծ պետութիւններին: Նման պատասխան տւեց նաև Աւստրիան:

Կղզին դեռ ևս հանդստացած չէ. յուզումը դեռ ևս շարունակուում է, բայց մօտենում է իւր վախճանին, քանի որ Եւրոպան չ'ուզեց Կրէտայի յոյների դատը իւր ձեռքին առնել: Յունաստանի բողոքը մնաց առանց մեծ հետևանքների. բայց այդ բողոքը միանգամայն ապարդիւն չէր, քանի որ այդ բողոքի շնորհիւն է, որ Քիւրքիան ստիպւեց պաշտպանել Եւրոպայի հասարակաց կարծիքի առջև: Քիւրքիան աշխատեց, որ Կրէտայի ապստամբութեան ձայնը բողոքովին Եւրոպա չը հասնի. ամբողջ երեք ամիս շարունակ նա արգելեց Պօլսի թերթերին՝ Կրէտա կղզու անունն անգամ տալ և յանկարծ, տեսնելով որ դորանից բան չի դուրս գալիս, նա ինքը ստիպւեց իւր պաշտօնական թերթում պատասխանել Յունաստանի նօտային, իւր տեսակէտից լուսաբանելով Կրէտայի անցքերը: Եւ այդ լուսաբանութեան մէջ թիւրքերը դուրս են գալիս ի հարկէ գառներ, յոյները — գայլեր, որոնց անվտանգ դարձնելու համար հարկաւոր է աստմները հանել: — Կղզին խաղաղացնելու համար՝ կղզու նահանգապետը փոխեց. Պետերբուրգից կանչւեց թիւրքաց ղեսպան Շաքիր փաշան, որին յաջողեց ապստամբների առաջնորդներին տեղիք տալ բանակցութիւններ սկսելու իւր հետ. իսկ թիւրք ուլեմները, ի մի դումարւած, վճռեցին քարոզել, որ յոյների վերայ յարձակումները դադարեն և նրանց խնայեն: Բայց մի և նոյն ժամանակ, իմանալով որ Սուլթանը տրամադիր է քրիստոնեաներին զիջումներ անել, նոյն թիւրք առաջնորդները բողոքեցին Սուլթանին քրիստոնեաներից պահանջած արտօնութիւնների շնորհման դէմ:

Այն հանդամանքներում, որոնց մէջ գտանուում է թիւրքաց

պետութիւնը մի հարիւր տարիից ի վեր, մի այդպիսի փոփոխութիւն կարելի է սպասել միմիայն այն դէպքում՝ եթէ խնդրի լուծումը իւր վերայ առնէ Եւրոպան:

Մի ուրիշ երկրում մի խնդիր կարող է չարուցել և լուծել՝ առանց որ և է միջամտութեան օտար պետութեան: Այն պահանջումները, որ անում են Սլաւօնական ազգերը Աստորիա-Ունգարիայում, առաջացնում են քաղաքական խնդիրներ, բայց այդ խնդիրները մնում են ներքին քաղաքական և ոչ միջազգային խնդիրներ: Քիւրքիայում այդ անկարելի է այն պատճառով, որ այդ երկրում կան բազմաթիւ հարցեր, որոնք կամաց-կամաց լուծուում են եւրոպական պետութիւնների ձեռքով, յօգուտ թէ իրանց և թէ այդ երկրի մանր ազգութիւնների:

Այդ հանգամանքը չափազանց կարեւոր է Քիւրքիայի մասին քաղաքական ճիշտ համոզմունք և գաղափար ունենալու համար: Մեզանում դուք կը տեսնէք մարդիկ իրար հետ վիճելիս, թէ արդե՞օք քրիստոնեաները իրանց փրկութիւնը պէտք է սպասեն Քիւրքիայի կառավարիչների բարեհաճութիւնից, թէ Եւրոպայի միջամտութիւնից: Աերը տւած բացատրութիւնը վճռում է այդ վէճը:

Այս մեր եզրակացութիւնները ուղղակի կերպով բըղխում են Քիւրքիայի գոյութեան պայմանների ծանօթութիւնից: Այդ պայմանները գաղտնիքներ չեն. և որովհետև գաղտնիքներ չեն, պէտք է որ յոցս մասին մեզանում վէճ չը լինի:

Ներկայ սեպտեմբերի 22-ին, նոր տոմարով (իսկ մեր տոմարով 10-ին), ամբողջ Ֆրանսիայում կատարւեցին նոր ընտրութիւններ օրինական 4 տարին լրացրած Պատգամաւորների ժողովի համար: Այդ և ոչ ուրիշ ընտրութիւններովն է վճռուում հանրապետութեան վիճակը և ապագայ գործունէութիւնը: Իրանց բնաւորութիւնով ներկայ ընտրութիւնները նման են 1877 թւականի ընտրութիւններին այն զանազանութեամբ, որ 12 տարի առաջ դրութիւնը աւելի վատանգաւոր էր, քան այժմ: Այն ժամանակ հանրապետութիւնը յաղթող հանդիսացաւ. նոյնը, որպէս երևում է և՛ որպէս սպասուում էր, լինելու է այժմ: Յայժմ ստացւած դեռ ևս թերի տեղեկութիւններ

րից երևում է, որ բուլանժէականութիւնը կրել է մի պարտութիւն, որը այդ կուսակցութիւնը ծաղրալի է դարձնում: Եթէ ճիշտ են ներքին գործերի մինիստրի հաշիւները, Պատգամաւորների նոր ժողովում լինելու են 369 հանրապետականներ և 201 հոգի հանրապետութեան ամեն կարգի հակառակորդներ: Դա մեծ յաղթութիւն է հանրապետութեան համար. բայց կարգին և հաստատ գործունէութեան համար պէտք է, որ 369 հանրապետականների մէջ արմատականները լինին ոչ աւելի, քան յիսուն հոգի: Բայց դոքա աւելի են լինելու: Գալ անդամ մենք, ի միջի այլոց, մի հաշիւ կը տանք, թէ ինչ է արել հանրապետութիւնը վերջին 19 տարում:

Z.

„ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈՒ. պ. Տէր-Ստեփանեանցին: Ստացանք 70 կոպէկի մարկաները և ուղարկեցինք երկու գրքովները:

ԹԻՖԼԻՍ. պ. Գուրգէնին: Ձեր ոտանաւորը չի տպւելու:

«ՄՈՒՐՃ»-Ի ԱՊԱՌԻԿՆՆԵՐ. Մեր բաժանորդներից նոցա, որոնց վերաջ մընում են ապառիկներ, խնդրում ենք բաժանորդագինը հասցնել խմբագրութեանս, առանց սպասելու երկրորդ ազդարարութեան:

ՆՐՆԵԱՆ. պ. Տ.Ս.-ին: Ձեր աշխատակցութեան խնդրի առիթով մենք ստացանք մի նամակ Ալէքսանդրօպօլից՝ պ. Ա. Ք.-ից և Թիֆլիսում լրսեցինք պ. Տ.-Ս.-ից ինչ ւանձնարարած էք եղել մեզ հաղորդելու: Բոլորը կախւած է գրւածքից: Փորձեցէք: Կանխօրէն խօսք չենք կարող տալ:

ԲԱՔՈՒ. պ. Մել.-Դադ.-ին: Ստացանք 9 բուբլին: Ուղարկած կտորները չեն դիմանում «Մուրճ»-ի պահանջներին:

ՆՆԱ. պ. Տիանդրին: Ուղարկւածի տպագրութիւնը դեռ ևս չի վճուած: Այն, ինչ խոստանում էք նամակում՝ Գերմանական դպրոցների դրութիւնը և նպատակները—չատ հետաքրքրական է: Յոս ունինք, որ չօղւածի մէջ դուրս բերւած կը լինին, ի միջի ալոց, նաև գերմանական նշանաւոր գործիչների մտքերը:

ԳԱՆՁԱԿ. պ. Նիկ.-ին: Խորհուրդ ենք տալիս ոտանաւորներ գրելով չը զբաղւէք: Ոտանաւոր ուղարկելուց առաջ, Գուր պէտք է լաւ թերթէիք «Մուրճ»-ի անցած համարները:

ԹԻՖԼԻՍ. պ. Բուհանին: Կարգացէք նախընթաց տողերը:

ՇՈՒՂԱԻՆԵՐ. պ. Բ.-ին: Ձեր ուղարկածը առանց կարդալու ստիպւած ենք չեա ուղարկել: Եթէ այն ընդունէինք տպագրելու, մեր ընթերցողների զալ տարւաջ միակ հաճութիւն կը լինէր կարդալ «համառօտ» նկարագիրը կրթութեան և ուսման, միջին դարերում,

ամբողջ տարի շարունակ — ացնքան մեծ է Ձեր զրևածքը: Է՛հ, դէ սա կարելի բան է արդեօք: Եւ վերջապէս ինչն է ստիպում մեզ այս բոսէին զբաղել միջին դարերի կրթութեան և ուսման եղանակներով, քանի որ մենք մեծապէս կարօտութիւն ունինք նորագուն կրթութեան և ուսման սկզբունքների հետ ծանօթանալու և կեանքի մէջ մտցնելու նոցա: «Բնապատմութիւնը» «Մուրճ»-ում ղետեղելու բան չէ, իսկ «Պօլիօւնիկ Ֆրից» մանկական «Աղբիւր» ամսագրի համար թերևս չարմար լինի և ոչ «Մուրճ»-ի համար:

ԹԻՖԼԻՍ. պ. վ.-ին: «Որէպը» չի սպաղրուելու:

Ա.Լ.ԲՍՍԱՆԻՐՕՊՈԼ. Հոգաբարձութեան սբ. Փրկիչ ուսումնարանի: Ձեզնից ստացուեց 30 բուբու մի ծրար ացն օրը, երբ պ. Տ.-Մ. թողել էր Թիֆլիսը: Վերադառնալուն պէս, ծրարը չանձնեցինք իրան:

ԽԱՐԿՈՎ. Հայ ուսանողներին: Համաձայն պ. Շահվերդեանի կողմից պ. Տ. Նաւասարդեանցին չարանած ցանկութեան, ի հաշիւ երկու բուբու, ուղարկեցինք ձեզ մի-մի օրինակ «Յեցեր» և «Խե-կարապետ»:

ԿԱՐՍ. պ. բժ. Ղ.-ին: Ստացանք 40 բուբուին:

«Գաւիթ և Մհեր» նորերումս հրատարակած վէպի մասին խմբագրութիւնս ստացած է մի ընդարձակ քննադատութիւն այդ ժողովրդական վէպը գրի առնող պ. Աբեղեանից: Յօդւածը կը տպւի եկող 10-րդ համարում: Գուցէ տեղի սղութիւնը հարկադրէ մեզ չօղւածը երկու Ռե-նեում ղետեղել: Ի նկատի առած վէպի մեծ գրական նշանակութիւնը, պ. Աբեղեանի քննադատութիւնը ներկայացնում է մեծ գրական ինտերես: Յօդւածը միանգամայն բաւականութիւն է տալիս «Մուրճ»-ի պահանջներին:

Նոյն վէպի աւիթով պ. Աէօն պատրաստած ունի նոյնպէս մի ընդարձակ գրութիւն, որին ղեռ. ևս սպասում է «Մուրճ»-ի խմբագրութիւնը:

Գալ Ռե-ների համար, ի միջի պլոց, պատրաստում են չօղւածներ—պ. Գրիգոր Վարդանեան՝ Հարկերի մասին Անդրկովկասում, իսկ մի ուրիշը, որը մի քանի ամիս առաջ ստացել էր առաջարկ խմբագրութեան կողմից, պատրաստում է մի չօղւած Պանդխտութեան խնդրի մասին:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ. Ներկայ 9-րդ Ռե-ը լոյս է տեսնում աւելի ևս մեծ ծաւալով, քան «Մուրճ»-ի անցած համարներից ամենամեծը: Մեր բոլոր բաժանորդներին արդէն չապոնի պէտք է լինի, որ անցած համարներից և ոչ մէկը չի ունեցել ացն փոքր ծաւալը, որ պէտք է կազմէր մեր հրատարակութեան փոքրագուն չափը:

Մեր «Հրաւերք»-ում խոստացել էինք «Մուրճ»-ը հրատարակել 128-ից մինչև 160 երես տետրակներով: Մինչդեռ մինչ այժմ մենք չենք հրատարակել և ոչ մի համար 128 երեսով, այլ անցած համարներից ամենափոքրը ունեցել է 144 երես, այսինքն այնքան, որքան պէտք է ունենար մեր խոստացածի միջինը: Գորա համուստ, «Մուրճ»-ի ամենամեծ համարը որ պէտք է ունենար ոչ աւել, քան 160 երես, ունեցել է ոչ թէ այնքան, այլ դորանից շատ աւել, այն է՝ 196 երես, չը հաշւած չափաւորութիւնները: Ներկայ համարը այդ չափից էլ անցնում է:

ԷՋՄԻԱՄԻՆ. պ. Յ. Յովհաննիսեանին: Յանձնեցինք պ. Ս.-ին 20 բուրլու ծրարը:

«Խ և Կ ա ռ ա պ ե տ» վէպը այս համարում վերջանում է և լոյս տեսնում առանձին գրքով: Գրքի երեսները «Մուրճ»-ի երեսների ծաւալն ունին: Գինը նշանակւած է 1 բուրլու: Տպագրւած է 800 օրինակ: Այդ գիրքը կազմում է «Մուրճ»-ի երկրորդ հրատարակութիւնը:

Հեղինակը, Սարգիս Ատրպետեան (ծածկանուն), պատրաստել է «Մուրճ»-ի համար մի երկրորդ մեծ բովանդակ «Ալմաստ» անունով: Կարծում ենք, որ այդ գրւածքը կը սկսենք հրատարակել նոյեմբեր ամսից, փոխանակ «Նինա» անունով բովանդակի, որի տպագրութիւնը դժւարութիւնների հանդիպեց:

ԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ-ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՈՒՐԻՇ ՄԱՍՆԱԳԷՑ ԱՆՁԵՐԻ

երկրորդ տարի

ԸՆԴԱՐՁԱԿԻԱԾ ԾՐԱԳՐՈՎ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ (մի տարի): Հաշւապահութիւն, առևտրական թւաբանութիւն, առևտրական աշխարհագրութիւն և լեզուներ՝ ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ (յատուկ կուրս, մի տարի), ուր անցնում են առարկաներ՝ վերաբերեալ Անդրկովկասի արդիւնաբերութեան և առևտուրին, որպէս՝ նաւթային գործ, հանքային գործ, բամբակի գործ, շերամի և թելի գործ, բուրդի գործ և այլն և այլն, ընդամենը 14 առարկայ:

ԿՈՒՐՍԵՐԸ վերակսելու են 25-ին սեպտեմբերի և տեւելու են մինչ մայիս 1890 թ.

Ծրագիրը և պայմանները առանձին բրոշուրով ուղարկւում են բոլոր ցանկացողներին ձրիապէս:

Դիմել՝ Промышленно-торговые курсы А. Арасханянцъ. Тифлисъ. Гановская ул., д. бывш. Иоаннисіани.

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՐԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԳԵՐԸ.

| | Բ. | Կ. |
|--|----|----|
| «ՄՈՒՐՃ» ամսագիր, առաջին քառամեակ՝ № 1. 2. 3. | | 6 |
| 4—Փառակազմ | 6 | — |
| «ՄՈՒՐՃ» » երկրորդ քառամեակ՝ № 5. 6. 7. | | 6 |
| 8—Փառակազմ | 6 | — |
| «ՄՈՒՐՃ» » առաջին կիսամեակ՝ № 1. 2. 3. | | 8 |
| 4. 5. 6—Փառակազմ | 8 | — |
| ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻ.— «Աղբարնակութիւնը և ազգաբնակչական շարժումները» | — | 40 |
| ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ.— «Հողատիրութիւնը և հասարակութիւնը» | — | 40 |
| ԲՕԿ բժիշկ.— «Ֆիզիքական և մտաւոր զարգացման մասին» | — | 30 |
| АРАСХАНИАНЦЪ А.— «Закавказская хлебная торговля» | — | 75 |
| » » — «Закавказские шелкометалльные заводы» | — | 80 |
| ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ.— «Ժողովրդական հէքիաթներ», 4-րդ գիրք | — | 50 |
| » » «Ժողովրդական հէքիաթներ», 5-րդ գիրք | — | 50 |
| ՊՈՕՇԵԱՆՅ ՊԵՐՃ.— «ՅԵՅԵՐ»—(վէպ) | 1 | — |
| ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղլլարցի)՝ Մանկատաճութիւն | — | 50 |
| ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ.— «ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ»—վէպ հայկաթօլիկների կեանքից | 1 | — |
| Ճանապարհածախսը խմբագրութեան վերայ է: Դրամի տեղ կարելի է ուղարկել պօստի մարկաներ: | | |

ՄՈՒՐՃ՝ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուսուցիչների, վարժուհիների և բարձրագույն դպրոցների ուսանողների համար:

ԹԻՖԼԻՍՈՒՄ վճարում են կամ միանուագ 8 րուբլի տարևալ սկզբին և կամ տարեկան 10 րուբլի այսպէս՝

| | |
|----------------------------|------|
| Յուշուարի 1-ին | 2 ր. |
| Փետրուարի 1-ին | 2 |
| Մարտի 1-ին | 2 |
| Մայիսի 1-ին | 2 |
| Սեպտեմբերի 20-ին | 2 |

ԳԱՒԱՌՆԵՐԻՅ ռեզարկում են տարեկան 9 րուբլի այսպէս՝

| | |
|--------------------------|------|
| Յուշուարի 1-ին | 3 ր. |
| Փետրուարի 1-ին | 3 |
| Մարտի 1-ին | 3 |

Բարձրագույն դպրոցներում ուսանողները վճարում են տարեկան 8 րուբլի այսպէս՝

| | |
|--------------------------|------|
| Յուշուարի 1-ին | 3 ր. |
| Փետրուարի 1-ին | 3 |
| Մարտի 1-ին | 2 |

Հասցէ՝ Թիֆլիս. Редакция журн. МУРЧЪ.

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

Տ Ա Ն Տ Ի Կ Ի Ն

ԵՒ

Խ Ո Հ Ա Ն Ո Ց

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԳԻՐՔԸ

մասն առաջին

400-ի չափ տեղական և եւրոպական՝ աժան, համեղ
և անժնաս կերակուրներ պատրաստելու եղանակ:

մասն երկրորդ

200-ից աւելի տնտեսական գիտելիք՝ քաղցրաւենիք,
թթուեղէն, պտուղների, բանջարեղէնի և կանանչեղէնի
պահպանելը և չորացնելը, կաթնատնտեսութիւն և զա-
նազան գիտելիք:

Կազմեց Յ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆՑ

ԳԻՆՆ Է 1 Բ. 50 Կ.

Վաճառուում է բոլոր չափերի գրավաճառանոցներում և Մարտիրո-
սեանի տպարանում: Վերջնոյս մօտ 10-ից աւելի գնողին 10 տոկոս
զիջումն կը լինի:

Ի Ս Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ր Ե Մ Ե Ք Ե Ն Ա Ն Ե Ր
 „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒԵՐԿՈՒՄ

Ա Ր Ժ Ա Ն Ա Ց Ա Ն

աշխարհի մէջ կարեմեքեաների բոլոր ցուցանանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՉՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարևոր ընկերներ տան տիկիներին և աղջիկ ողնականներ
 բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում: Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գո-
 լովնսկի պրոսպեկտի վերայ, Միլիանովի տան և նրա բաժանմունք-
 ների մէջ:

Բաղում: Միքայելեան փողոցում,
 Մերգա Աւագեանի ա.
 Քումայիսում: Բուլվարի դէմ,
 Չերեկովի ա.

Բաթումում: Պոլիցիական փողո-
 ցում, Թէրզի օղլու ա.
 Թէկրանում: Մարշ-Մէյդանի
 դէմ, բուլվարի վերայ:

և նրանց Ճանապարհորդող գործաշուկայի Տօր

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍՎԱՍՏԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.
 ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ



արտօնութիւն ստացած



աւետարական գրոշմը.

Գ. Ն Է Յ Գ Լ Ի Ն Գ Ե Ր

Գնողները կարող են, եթէ կամենում են, դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է՝ շաբաթով կամ
 ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ զրաւակաճով դրամը վճարելու համար:
 Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս ևն.
 ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով:





[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

Մ Ո Ւ Ր Ճ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

| | |
|---------------------------------|------------|
| Տարեկան բաժանորդագինը | 10 ռ. |
| Կէս տարւանը | 6 ռ. |
| Երեք ամսւանը | 4 ռ. |
| Մի գրքուկը | 1 ռ. 50 կ. |

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

Մուրճի ամեն մի համարը, որպէս առաջին «Հրաւեր»-ի մէջ աււած էր, ունենալու է 8—10 տպագրական թերթ, կամ որ նոյնն է՝ 128 մինչ 160 երես: Մուրճը ցայժմ աււած է 196 երես աւելի, քան միջին թւով խոստացածը: Ամբողջ տարին Մուրճը կազմելու է 12 զիրք, երեք մեծ հատորներ, շուրջ 1800 երեսով:

Նոր բաժանորդները կը ստանան նախորդ համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

| | |
|-----------------------------------|-------|
| Ամսուկան մի երեսի համար | 10 ռ. |
| „ կէս երեսի համար | 6 ռ. |
| „ քուռորդ երեսի համար | 4 ռ. |

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել 1 սև յայտարարւած գրքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала «МУРՇԵ». Խմբագրութիւնը գտանւում է՝ Գանձօվեան փողոց, սուրն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ Іоаннисіани). բոլորովին մօտ Երևանեան հրատարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTJ».